



« Ն Ո Ր Ա Վ Ա Ն Ք »
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Երևան – 2005

ՀՏԴ 33
ԳՄԴ 65
Մ 371

Մարկուայան Ա.

Մ 371

Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները.
մեթոդաբանություն և արդյունքներ. — Եր.:
«Նորավանք» ԳԿՀ, 2005. - 250 էջ

Աշխատությունը վերաբերում է տնտեսական անվտանգության հիմնախնդիրների ամբողջ սպեկտրին և հնարավորություն է տալիս մտորել այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ ՀՀ տնտեսական անվտանգության ռազմավարությունը, տնտեսական անվտանգության գնահատումը, ապահովման ուղղություններն ու մեխանիզմները, երկրի տնտեսական շահերի ապահովումը տարածաշրջանում:

Տեսական մոտեցումներից և անվտանգության ժամանակակից մեկնաբանություններից բացի, գրքում ներկայացվել է տնտեսական անվտանգության որոշակի ընտրված ցուցանիշների (տնտեսական, սոցիալական, քաղաքական) և ամբողջ համակարգի վիճակը Հայաստանի Հանրապետությունում և Հարավկովկասյան տարածաշրջանում:

Նախատեսված է անցումային փուլի, հատկապես՝ տնտեսական անվտանգության հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների, պետական կառավարման ապարատի տարբեր օղակների աշխատողների, գիտաշխատողների, ուսումնական հաստատությունների բարձր կուրսերի ուսանողների, ասպիրանտների, հայցորդների և այլոց համար:

ԳՄԴ 65

ISBN 99941-961-3-8

© «Նորավանք» ԳԿՀ, 2005

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Զարգացման արդի փուլում գլոբալացման գործընթացը յուրաքանչյուր երկրի առջև ոչ միայն նոր հնարավորություններ և հետանկարներ է բացում, այլ նաև կարող է նոր վտանգներ, ռիսկեր և ճնշումներ առաջացնել: Միջազգային իրադարձությունների մասշտաբները, դրանց արմատական, հաճախ նաև անկանխատեսելի, քառասային բնույթը և կանխատեսման ու հետագա կառավարման մեխանիզմների անբավարարությունը (հատկապես 2001 թվականի «սև սեպտեմբերի» դեպքից հետո) հանգեցրին նրան, որ տնտեսական անվտանգության (այսուհետ՝ ՏԱ) հիմնախնդիրը միջազգային հասարակական մտքի և քաղաքականության մեջ մղվեց առաջնային դիրքեր:

Փորձը ցույց է տալիս, որ ՏԱ ապահովման հուսալի և արդյունավետ համակարգը կարող է երաշխիք դառնալ երկրի անկախության և ինքնիշխանության պահպանման, կայուն սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Ժամանակակից աշխարհում ազգային անվտանգության խնդիրը ազգային քաղաքականության կերտման և ազգային զարգացման համար դառնում է հիմնարար: Բազմաթիվ երկրներ, ղեկավարելով իրենց քաղաքական համակարգը, առավել մեծ ուշադրություն են դարձնում այդ համակարգի անվտանգությանը՝ վերջինս դիտարկելով որպես անվտանգություն - կայունություն - զարգացում եռմիասնական համակարգի հիմքային բաղկացուցիչ:

Երկրի պետական անվտանգության և պաշտպանունակության ապահովումը զարգացման բոլոր ժամանակներում մեծապես կախված է եղել զարգացած և կայուն տնտեսություն ունենալուց: Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, երբ երկրները պատերազմներում պարտություն են կրել զարգացած տնտեսություն չունենալու պատճառով: Այսօր պատմություն են դարձել այն ժամանակները, երբ ռազմականը, եթե ոչ միակ, ապա ամենավճռորոշ ուժն էր երկրի անվտանգության ապահովման, ազդեցության նոր ոլորտներ ձեռք բերելու կամ եղածը պահպանելու գործում: Այժմ

երկրների համար հիմնական զենք են դառնում տնտեսության կառավարման տնտեսական մեթոդները: Շատ երկրներ, չունենալով մրցունակ գիտատեխնիկական ներուժ, ամբողջությամբ կախվածության մեջ են զարգացած երկրների տեխնիկայից և տեխնոլոգիաներից, միջազգային ֆինանսական կառույցներից, տնտեսությունները դարձել են մրցակցության կարևորագույն ասպարեզներ:

Հետամբողջատիրական երկրներում 1990-ական թթ. անցումը շուկայական տնտեսության ուղեկցվեց բնականոն զարգացումը խաթարող ճգնաժամերով (կատակլիզմներով): Նշված երևույթները դրսևորվեցին հատկապես տնտեսական հարաբերությունների ոլորտում՝ այստեղից բխող սոցիալական լուրջ, երբեմն անդառնալի հետևանքներով: Ստեղծված իրավիճակում հայտնված երկրները, որոնք միջազգային հանրության կողմից որակվեցին որպես անցումային, դեռևս գտնվում են բարդ և դժվարին զարգացման պայմաններում, և դրանց մի մասում չեն բացառվում համակարգային ճգնաժամն ու սպառնալիքը երկրի համար: Հենց այդպիսի իրավիճակում է Հայաստանի Հանրապետությունը. նախորդ դարի վերջին տասնամյակի ամենախոշոր համակարգային վերափոխումները ընդգրկեցին հասարակական կյանքի բոլոր կողմերը՝ տնտեսությունը, քաղաքականությունը և գաղափարախոսությունը: Սոցիալ-տնտեսական բնագավառում ընթացող արմատական գործընթացները, կապված տնտեսական համակարգի հետ, առաջին պլան մղեցին տնտեսական անվտանգության հիմնախնդիրը, որի սրությունը պայմանավորված է մի խումբ պատճառներով, հատկապես՝ գործարարության տարբեր կազմակերպական կառույցների ձևավորմանն ուղեկցող և սեփականության բազմաձևության վրա ազդող բացասական գործոնների ազդեցությամբ (տնտեսության մենաշնորհացման բարձր աստիճանը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցածր մակարդակը, գործազրկության և աղքատության բարձր աստիճանը, ներդրումների փոքր ծավալները, տնտեսության ցածր մրցունակությունը և այլն), շուկայական ենթակառուցվածքների թույլ զարգացածությամբ, պետության կողմից շուկայական տնտեսության կարգավորման փորձի, նոր պայմաններում տնտեսությունը կառավարելու և գիտելիքների պակասով և այլն:

Բավականին տևական ժամանակ, երբ Հայաստանը գտնվում էր նախկին ԽՍՀՄ կազմում, որտեղ գործում էր կառավարման կենտրոնացված վարչահրամայական համակարգը, պետական, ռազմական, տնտեսական և այլ բնույթի անվտանգության ապահովման խնդիրները սույն կենտրոնական մարմինների իրավասությանն էին վերաբերում և դրանք համապատասխան կենտրոնական գերատեսչությունների գործառույթներն էին:

ԽՍՀՄ կազմալուծումից հետո, բնականաբար, այդ գործառույթները պետք է անցնեին անկախություն ստացած նորաստեղծ պետություններին, որոնք էլ ինքնուրույն պետք է հոգային իրենց անվտանգության հիմնահարցերը: Վերջինս ենթադրում է երկրի անվտանգության հստակ համակարգի ստեղծում՝ ներառյալ անվտանգության և անկախության սպառնալիքների հնարավոր դրսևորումների կանխատեսումը, անվտանգության գերակայությունների որոշումը, ինչպես նաև վտանգավորության աստիճանի որոշման ու գնահատման կառուցվածքի մշակումն ու կիրառումը:

Նշենք նաև, որ անվտանգության, այդ թվում՝ տնտեսական սպառնալիքների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է ոչ միայն խիստ մասնագիտական և քաղաքական միջոցառումների իրականացում, այլև հասարակության մեջ տիրող սոցիալ-հոգեբանական վիճակի փոփոխում և վերակառուցում:

1991թ. օգոստոսի 23-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի անկախության հռչակագրի ընդունումով և նույն թվականի սեպտեմբերի 21-ի համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով կազմավորվեց Հայաստանի երրորդ Հանրապետությունը: Հայ ժողովրդի հետագա կենսագործունեության ու զարգացման համար բախտորոշ այդ իրադարձության արդյունքում նորանկախ ՀՀ-ն նվաճեց իր ապագան ինքնուրույնաբար տնօրինելու իրավունքը: Դա իր հերթին ենթադրեց արտաքին ու ներքին քաղաքականությունների (այդ թվում՝ անվտանգության) ինքնուրույն մշակման և իրականացման ոչ միայն հնարավորությունը, այլ նաև անհրաժեշտությունը:

Հայաստանի անկախության հռչակումից հետո անցած տարիների ընթացքում ոչ միայն չի ստեղծվել նման համակարգ, այլև չեն մշակվել ազգային անվտանգության հայեցակարգն ու հիմնա-

դրույթները, որոնք այդ համակարգի ձևավորման հիմքն են: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում արդեն 1996 թվականից ինչպես նախագահի և կառավարության, այնպես էլ Պետական դումայի և Դաշնության խորհրդի մակարդակով ընդունվել են որոշումներ և հրամանագրեր, որոնք ներառում են ՏԱ հայեցակարգի, պետական ռազմավարության մշակման, օրենսդրական ապահովման, ճգնաժամային իրավիճակների հաղթահարման հիմնահարցերը:

Այնուամենայնիվ, սա չի նշանակում, թե մեր երկրում անվտանգության հարցերը չեն կառավարվում ու կարգավորվում և եղած ու նոր ծագող սպառնալիքները չեն վերահսկվում ու չեզոքացվում: Պարզապես այս դեպքում համակարգված մոտեցումն անվտանգության տարբեր բնագավառների խնդիրների լուծման նկատմամբ բացակայում է, որը չի ապահովում և չի էլ կարող ապահովել դրանց արդյունավետ լուծումը, քանի որ տարբեր բնագավառների անվտանգության ապահովման հիմնախնդիրները սերտորեն փոխկապակցված և պայմանավորված են միմյանցով, ինչպես նաև ներթափանցված են մեկը մյուսի մեջ, և միայն համակարգային մոտեցումը կարող է բերել տեսանելի արդյունքների:

Նման պայմաններում առաջնային խնդիր է հանրապետությունում դեռ բացակայող ՏԱ ապահովման հայեցակարգի մշակումը, որտեղ հստակ պետք է սահմանվեն Հայաստանի ՏԱ ապահովման խնդիրներն ու դրանց լուծման մեխանիզմները և մեթոդները:

Հայաստանի Հանրապետության տնտեսությունը, ներկայումս գտնվելով վերափոխումների շրջանում, ՏԱ սպառնալիքների առջև հայտնվել է առավել խոցելի վիճակում: Այս պայմաններում սրվում է հանրապետության ՏԱ ապահովման խնդիրը, որի համար սպառնալիքներ են ոչ միայն բնական աղետները, այլև էներգիայի և հումքի կանոնավոր մատակարարումների և աղբյուրների սպառումը, գործընկեր երկրների տնտեսությունների զարգացման ցիկլային բնույթը և հատկապես դրանց անկումները, արժույթային ցնցումները, հիմնական ապրանքների գների թռիչքային աճը և այլն:

Համաշխարհային տնտեսության գլոբալացումը և տնտեսական ինտեգրումը նոր մարտահրավերներ են առաջադրում հատ-

կապես զարգացող և նախկին համայնավարական երկրներին՝ դիմակայելու տնտեսապես գերհզոր պետությունների կցորդ դառնալու և «կուլ չգնալու» վտանգին: Նման պայմաններում ազգային անվտանգության ապահովման խնդիրը մեծապես կախված է երկրի տնտեսության զարգացածության աստիճանից և տնտեսական աճի տեմպից:

Նախկին խորհրդային կայսրության կազմալուծումից հետո նորանկախ պետությունները պետք է ինքնուրույն լուծեն իրենց տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, ինչը անցման և լայնածավալ կառուցվածքային վերափոխումների ժամանակահատվածում մղվեց երկրորդ պլան: Հայաստանի տնտեսական անվտանգության ապահովման խնդիրը դեռևս կարիք ունի գիտական հիմնավորման, այն պետք է դառնա հետազոտողների և մասնագետների ուսումնասիրության առարկա: Ըստ որում, տվյալ խնդրի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները պետք է պարունակեն տարածաշրջանային, գիտատեխնիկական, սոցիալական, բնապահպանական և մի շարք այլ ասպեկտներ:

SU ապահովումը երկրի անկախության, ինքնիշխանության գլխավոր երաշխիքն է, հասարակության և անձի կայուն ու արդյունավետ գործունեության պայմանը: Այդ պատճառով SU ապահովումն ազգային տնտեսության հիմնական գերակայություններից մեկն է:

Աշխատությունում ներկայացված են ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչի՝ SU հասկացությունը և բովանդակությունը, դրա դերն ու նշանակությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և առաջընթացի ապահովման գործում, յուրովի և նոր մոտեցում է ցուցաբերվել SU ցուցանիշների ընտրությանն ու դրանց մեծությունների հաշվարկման մեթոդաբանության մշակմանը: Ելնելով հարավկովկասյան երեք հանրապետությունների SU գնահատման ցուցանիշների վերլուծությունից՝ բացահայտվել են դրանց ընդհանրությունները, առանձնահատկությունները և վտանգվածության աստիճանները: Որպես այդպիսի ընդհանուր գիծ, որը բնորոշ է բոլոր երեք հանրապետություններին, առանձնացված են աղքատության ցուցանիշների փաստացի մակարդակ-

ները, որոնք բազմակի գերազանցում են դրանց «բնական» մակարդակը (բնակչության 9%-ից ոչ ավելի): Այդ ցուցանիշով բոլոր երեք հանրապետությունները գտնվում են վտանգավորության ամենաբարձր՝ 9-րդ մակարդակի վրա: Հարավկովկասյան առանձին հանրապետությունների ՏՄ ցուցանիշները դասակարգված և խմբավորված են ըստ վտանգավորության աստիճանի:

Կարևոր տեղ է հատկացվել վտանգավորության ամենաբարձր մակարդակում գտնվող Հայաստանի Հանրապետության այնպիսի ցուցանիշների ուսումնասիրմանը, ինչպիսիք են բնակչության աղքատությունը և ժողովրդագրական խնդիրները, բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումն ըստ դեցիլային խմբերի, բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 տեսակ ապրանքների ռեսուրսները, բնակչության բնական տեղաշարժի ցուցանիշները, բնակչության միգրացիոն աճը, հանրապետության արտաքին պարտքի ցուցանիշները և դրանց սահմանային մակարդակները, տնտեսության դոլարացման մակարդակը, ներմուծման և արտահանման ծավալները, տնտեսության վնասաբերության աստիճանը, պարտավորությունների աճը և այլն:

Շուկայական տնտեսությանն անցման ժամանակահատվածում (1990-ական թթ. սկզբին) ՀՀ-ում ձևավորվեց ճգնաժամային իրավիճակ, որը բնութագրվեց արտադրության աննախադեպ անկմամբ, ինֆլյացիայի շատ բարձր տեմպերով, գործազրկության մակարդակի աճով, սպառման մակարդակի զգալի նվազմամբ, շուկայական ենթակառուցվածքների բացակայությամբ կամ ոչ լիարժեք ձևավորված լինելով, ոչ կայուն ֆինանսական շուկայով և որպես այս ամենի հետևանք՝ բնակչության կենսամակարդակի կտրուկ անկմամբ: Այս ամենը ոչ միայն և ոչ այնքան շուկայական վերափոխումների արդյունք էր, որը պայմանավորված էր, շատ հաճախ, համապատասխան մեխանիզմների գործելու համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի թերի լինելով կամ որոշակի ոլորտներում ընդհանրապես չլինելով, այլև տարածաշրջանում ստեղծված բարդ և, ամենից առաջ, քաղաքական միջավայրի, ինչպես նաև անցյալից եկած մի շարք պատճառների հետևանք: Եվ

Եթե հաշվի առնենք երկրաշարժից և Ղարաբաղյան հակամարտությունից քայքայված տնտեսությունում վերականգնողական աշխատանքների ծավալումը, ապա պատահական չէ, որ սկզբնական շրջանում նախկին խորհրդային երկրների նման Հայաստանում ևս ՏՄ գրեթե բոլոր համամասնությունները խաթարված էին: Հետագա տարիներին կայունության պահպանման և տնտեսական աճի ապահովման պարագայում հաջողվեց հասնել ՏՄ որոշակի մակարդակի, որը վտանգավորության սահմանում չէ, բայց բավականին հեռու է անվտանգ վիճակի սահմանագծից:

Ցանկացած պետության ՏՄ համակարգի ձևավորումը նպատակ ունի ապահովել զարգացման ինքնուրույնությունը և անկախությունը, ինչպես նաև ստեղծել համապատասխան մեխանիզմներ՝ չեզոքացնելու կամ նվազեցնելու երկրին սպառնացող ներքին և արտաքին վտանգները: ՏՄ գնահատման ցուցանիշներով հնարավոր է դառնում երևույթի այս կամ այն կողմին վերաբերող քանակական կապվածության միջոցով կարևորել տնտեսական անվտանգության կառավարումը: Այդ գործընթացի արդյունավետության բարձրացման և ամբողջականացման առումով անհրաժեշտ է, ելնելով ՏՄ ցուցանիշների վտանգվածության աստիճանից, իրականացնել դրանց առողջացում և ցանկալի մակարդակի ապահովում: Կախված ցուցանիշի ռիսկայնության խորությունից և դրա մեծությունից, բնականաբար, տարբեր ժամանակահատված և միջոցներ կպահանջվեն այդպիսի նպատակամետ քաղաքականության իրականացման համար: Հանրապետության, որոշ ցուցանիշների համար՝ նաև տարածաշրջանային վերլուծություններով հանդերձ, ՏՄ առավել վտանգավոր գոտում գտնվող առանձին ցուցանիշների բարելավման ուղիների շարադրումը ներկայումս ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն:

Եվ, վերջապես, որո՞նք են ՀՀ ՏՄ ռազմավարության հիմնադրույթները, ինչպե՞ս է այն գնահատվում, ո՞ր ուղղություններով և ի՞նչ մեխանիզմներով է այն ապահովվելու, և ինչպե՞ս ենք հաշվի առնելու երկրի տնտեսական շահերը տարածաշրջանում: Այս հարցերին է նվիրված ներկայացվող նյութը:

SU ապահովման ռազմավարության մշակումը Հայաստանի համար կարևորվում է նաև այն պատճառով, որ միջազգային տնտեսական հարաբերություններում մեր երկիրը ևս զերծ չէ տարբեր տեսակի ճնշումներից և զգում է իր խոցելիությունը կանխամտածված գործողություններից, որոնք սահմանափակում են երկրի տնտեսական ինքնուրույնությունն ու ինքնիշխանությունը:

Վերը շարադրվածի տեսանկյունից հրատապ են դարձել SU հասկացության, հայեցակարգային հիմնադրույթների քննարկումը, SU բնութագրումը ազգային անվտանգության համակարգում, SU գնահատման ցուցանիշների համակարգի մշակումը և մոնիթորինգը: Առաջնային հիմնախնդիր է հանրապետությունում դեռ բացակայող SU ապահովման հայեցակարգի մշակումը, որտեղ հստակ պետք է սահմանվեն Հայաստանի Հանրապետության SU նպատակը, հիմնախնդիրները և դրանց լուծման մեխանիզմներն ու մեթոդները, ինչպես նաև մեր երկրի և Հարավկովկասյան տարածաշրջանի մյուս երկրների տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը, համեմատական վերլուծությունն ու սպառնալիքների հայտնաբերումը և դրանց չեզոքացումը:

ԳԼՈՒԽ I. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1.1. Անվտանգության հասկացությունը, դրա սահմանումները, օրյեկտներն ու սուբյեկտները, նպատակներն ու գործառույթները

Անցանկալի արտաքին ազդեցություններից և ներքին ցնցումներից պաշտպանվելու պահանջը հիմնական պահանջմունք է ինչպես առանձին մարդու, ընտանիքի, այնպես էլ մարդկանց տարբեր խմբերի, հասարակության և պետության համար: Շուկայական տնտեսության ձևավորման պայմաններում անվտանգ ապրելու ոլորտն այնքան է նեղացել, որ այդ պահանջմունքի մշտական և զանգվածային անբավարարությունը բացասաբար է անդրադառնում բոլորի կենսագործունեության վրա:

Ազգային անվտանգության և նրա օրգանական բաղադրիչի՝ ՏԱ հիմնահարցի գիտական ըմբռնման համար, նախնառաջ, անհրաժեշտ է բացահայտել *անվտանգություն* եզրը:

Հնում անվտանգության ըմբռնումը դուրս չէր գալիս ամենօրյա պատկերացումների սահմաններից և մեկնաբանվում էր որպես մարդու համար վտանգի կամ չարիքի բացակայություն: Այսպիսի բացատրություն հանդիպում ենք Պլատոնի աշխատություններում:

Արիստոտելը հասարակության կառավարման մեթոդների վերաբերյալ իր գաղափարների հիմքում օգտագործում էր քաղաքացիների անվտանգության չափանիշը¹:

Բնականաբար, անվտանգության հասկացությունը որոշակի զարգացում, զենեզիս է ապրել, սակայն հիմքում անվտանգության երևույթի ընկալումը մնում է նույնը, այն է՝ ինքնապաշտպանության և սպառնալիքի բացակայություն:

¹ Лесков М.А., Гомеостатические процессы и теория безопасности, Безопасность, N4, М., 1994, с. 66.

Միջնադարում անվտանգություն ասելով հասկացվում էր ցանկացած վտանգից իրեն պաշտպանված համարող մարդու ոգու հանգստությունը: Արևմտաեվրոպական պետությունների գիտական և քաղաքական շրջանակներում «անվտանգություն» հասկացությունը լայն տարածում գտավ Ջ.Լոկի, Ժ.Շ.Ռուսոյի, Թ.Հոբսի փիլիսոփայական հայեցակարգերի շնորհիվ՝ նշանակելով հանգստության վիճակ, դրություն, որն առաջանում է իրական վտանգի (ինչպես ֆիզիկական, այնպես էլ բարոյական) բացակայության դեպքում:

Թոմաս Հոբսն իր աշխատություններում պետության և պետական քաղաքականության հիմնական խնդիր համարում էր պետության, հասարակության և անձի անվտանգությունը միաժամանակ¹:

Առաջին աշխարհամարտը հարուստ պաշար տվեց պետություններին ազգային անվտանգությունը կարևորելու իմաստով, սակայն երկրորդ և նրան հաջորդած սառը պատերազմներն էին, որ պարտադրեցին երկրներին ստեղծել ազգային անվտանգության կուռ համակարգեր՝ իրենց օրենսդրությամբ և հատուկ մարմիններով: Առաջին անգամ ազգային անվտանգության մասին օրենքն ընդունվել է Միացյալ Նահանգներում 1947թ., որով ստեղծվել է Ազգային անվտանգության խորհուրդը: ԱՄՆ անվտանգության համակարգը կամ գոնե նրա արտաքին կադապարը օրինակելի է դարձել բազմաթիվ, այդ թվում նախկին ԽՍՀՄ երկրների համար: Սակայն միշտ չէ, որ կադապարը նաև նույն բովանդակությունն է պարունակում: ԱՄՆ-ի և Հայաստանի նման փոքր երկրների հանգամանքները, հետևաբար նաև անվտանգության խնդիրները էապես տարբերվում են և պահանջում համապատասխան լուծումներ, ինչը անհնար է դարձնում այս երկրների ազգային անվտանգության համակարգերի համեմատության չափանիշներ գտնելը²:

Ազգային անվտանգության խնդրին առաջին անգամ մեծ ուշադրություն սկսեցին դարձնել արևմտյան գիտնականները Երկ-

¹ Trager F., Simone F., An Introduction to the Study of National Security // National Security and American Society: Theory, Process and Policy. Ed by Trager F., Kronenberg P., Lawrence, University of Kansas Press, 1973, p. 36.

² Ա.Աղայան, Ազգային անվտանգություն. հասկացությունները, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 4:

րորդ համաշխարհային պատերազմի ավարտին մոտ: ԱՄՆ-ի կողմից ատոմային զենք ստեղծելը և կիրառելը լուրջ ահազանգ հանդիսացան մյուս երկրների համար և ստիպեցին մտահոգվել սեփական ազգային անվտանգության և գոյատևման խնդիրներով: ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև ատոմային զենքի գծով մրցակցությունում հավասարակշռության գալուց հետո գերտերությունների միջև մրցակցությունը ձեռք բերեց նոր որակ: Եվրոպական հետազոտողների կողմից կարևորվեցին ազգային անվտանգության ապահովման ոչ ռազմական գործոնները և, հատկապես, դրանց տնտեսական տարրը: Սա դարձավ ՏԱ գաղափարի զարգացման հիմնական ուղղությունը: Համարվում էր, որ տնտեսական ներուժն է որոշում ռազմական հզորության աստիճանը, որը հատկապես կարևոր էր գերտերությունների համար, քանի որ փոքր պետությունները կամ «խաղից դուրս» էին, կամ զինվում էին գերտերությունների հաշվին՝ կախված նրանց հանդեպ իրենց դիրքորոշումից: Բացի դրանից, ազգային տնտեսության հիմնական ճյուղերի անհամաչափ զարգացումն անուղղակի բացասական ազդեցություն էր ունենում ռազմական հատվածի վրա՝ ռազմական և քաղաքացիական տնտեսությունների միջև բազմաթիվ կապերի (հումքային, էներգետիկ, ենթակառուցվածքային և այլն) առկայության պատճառով:

Մասնավորապես, քիչ հայտնի է այն փաստը, որ ԱՄՆ նախկին նախագահ Քլինթոնը ստեղծել է, այսպես կոչված՝ ազգային տնտեսական խորհուրդ, որը տնտեսական ոլորտում ունի նույն դերը, ինչ ազգային անվտանգության խորհուրդը՝ արտաքին քաղաքականության մեջ: Հետաքրքիր է, որ ազգային տնտեսական խորհրդի շատ աշխատակիցներ աշխատում են նաև ազգային անվտանգության խորհրդում:

Ֆրանսիայում միաժամանակ գործում են մի շարք կառույցներ, որոնք պատասխանատու են ներքին անվտանգության խնդիրների համար՝ քաղաքացիական անվտանգություն և պաշտպանություն, հանրային անվտանգություն և պաշտպանություն, տնտեսական պաշտպանություն և այլն¹:

Խորհրդային շրջանում «պետական անվտանգություն» հաս-

¹ Մ.Շահգելյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 30:

կացությունը մտցվեց 1934թ., ընդ որում, այս հասկացությունն արտահայտում էր ամբողջ հասարակության և անհատի շահերի հանդեպ պրոլետարիատի դիկտատուրայի՝ պետության շահերի առաջնայնության մասին պաշտոնական տեսակետը: Եվ միայն 1950-ական թթ. մինչև 1980-ականների վերջը իրավագիտական և հատուկ գրականության մեջ նշված հիմնախնդրի խոր վերլուծության փորձեր կատարվեցին և մշակվեցին այդ հասկացությանը բնորոշ մի քանի մոտեցումներ: Մի խումբ հեղինակներ պետական անվտանգությունը դիտում են որպես պետականության և երկրում հասարակական կարգի ամրության, տարածքային ամբողջականության անխախտելիության և արտաքին ու ներքին քաղաքականության որոշման հարցում անկախության վիճակ¹: Գիտնականների մյուս խումբը պետական անվտանգությունը ներկայացնում է որպես հակառակորդի քայքայիչ գործունեությունից պաշտպանվածության վիճակ²: Մյուսները պնդում են, որ պետական անվտանգությունը թշնամական ուժերին հակադրվելու պետության ընդունակությունն է և ժողովրդի շահերի պաշտպանությունը³:

1980-ականների վերջին աշխարհում քաղաքական և տնտեսական իրադրության արմատական փոփոխությունները, Արևելքի և Արևմուտքի միջև առճակատման ավարտը պահանջեցին պետության անվտանգության ապահովման գոյություն ունեցող հայեցակարգի լուրջ վերանայում: Անվտանգության հիմնախնդիրներին նվիրված գիտական գրականության վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ անվտանգության ըմբռնման սահմաններն էականորեն ընդլայնվեցին, և եթե նախկինում անվտանգությունը դիտվում էր միայն պետության, այնուհետև և հասարակության նկատմամբ, ապա այսօր այն ավելի հաճախ դիտվում է եռամիասնության՝ անհատի, հասարակության և պետության նկատմամբ:

Ազգային զարգացումը հասարակության (ազգի) էվոյուցիոն, բնականոն արդիականացումն է: Ազգային զարգացման հետ են կապ-

¹ Архипов А., Городецкий А., Михайлов Б., Экономическая безопасность: оценки, проблемы, способы обеспечения, Вопросы экономики, N 12, 1994, с. 36-44.

² Там же.

³ Основы экономической безопасности, под ред. Е.А. Олейникова, Москва, 1997.

ված այն հիմնական արժեքները, որոնց սպառնալիքից ազատ վիճակը, առաջընթացն ու անվտանգությունն էլ պետք է ապահովվեն:

Ինչպես վերը նշվեց, ՀՀ քաղաքական համակարգի հիմքում ընկած է Արևմուտքի արդիականացված հասարակությունների արժեքային համակարգը: Այն ենթադրում է պահանջմունքների, շահերի, արժեքների ձևավորում գերազանցապես «ներքևից»՝ անհատներից ու քաղաքացիական հասարակությունից: Դա վերաբերում է նաև անվտանգության պահանջմունքներին, շահերին ու արժեքներին: Ուստի համառոտ ներկայացնենք զարգացման այն միտումները, որոնք իրենց մեջ կրում են այդ արժեքային համակարգերը, որոնք այսօր դիտվում են արևմտյան հասարակություններում, և որոնք սպասելի են նաև հայ իրականության մեջ:

Այսպիսի արժեքային համակարգ ունեցող հասարակություններում պահանջմունքների ձևավորումն ընթանում է «պակասության հայեցակարգի» տրամաբանությամբ՝ հենվելով երկու նախադրյալների վրա¹: Առաջին՝ հասարակության մեջ առաջնահերթությունները ձևավորվում են դեպի ինչ-որ բանի «պակասությունը» կողմնորոշվելուն համապատասխան՝ մարդիկ մեծ արժեք են տալիս նրան, ինչը հասարակության մեջ համեմատաբար քիչ է²: Եվ երկրորդ՝ մարդու (այդ թվում և այլ սոցիալական միավորների) անհատական արժեքային կողմնորոշումներն ու առաջնայնություններն արտացոլում են այն պայմանները, որոնցում ընթացել է նրա սոցիալականացումը: Այս համատեքստում անբարենպաստ սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում սոցիալականացած մարդիկ սովորաբար շեշտում են հասարակության այնպիսի ավանդական «նյութական» նպատակների արժեքը, ինչպիսիք են տնտեսական բարեկեցությունը, հասարակական անվտանգությունը, օրինականությունը և կարգը, կրոնական արժեքները և ուժեղ ազգային պաշտպանությունը:

Երբ հասարակությունը ձեռք է բերում ավանդական նպա-

¹ Ingleheart R., *Culture shift in advanced industrial society*, Princeton (N.J.), Princeton University Press, 1990.

² Ingleheart R., *Modernization and postmodernization*, Ann Arbor, University of Michigan, forthcoming.

տակները, երիտասարդ սերունդն ուշադրություն է դարձնում «պոստ-նյութական» նպատակներին՝ ինքնարտահայտում, անձնական ազատություն, սոցիալական հավասարություն, ինքնաիրացում և կյանքի որակի պահպանում:

Այս բոլոր արժեքները, պահանջմունքները կապված են անվտանգության հետ և միասնաբար կազմավորում են անվտանգության արժեքային համակարգը: Որպես ն՛ բնական, և՛ սոցիալական պահանջմունք՝ անվտանգությունը դառնում է անքակտելի իրավունք, ինչն էլ պայմանավորում է համարժեք շահեր կառուցվածքային տարբեր մակարդակներում և կենսագործունեության տարբեր ոլորտներում: Նրանց կազմակերպված ամբողջությունն էլ դառնում է անվտանգության (քաղաքականության) արժեքաշահային հիմքը: Այսպիսին է արևմտյան արժեքային համակարգի զարգացման ընդհանուր միտումը¹:

Զարգացած երկրների տնտեսությունների արդյունավետության տարբերությունը դարձավ այդ հարաբերությունների լարվածության միջուկը: Պատճառն այն է, որ ՏՄ-ն հարաբերական կատեգորիա է, և այս տեսանկյունից որևէ երկրի անվտանգությունը գնահատվում է՝ հաշվի առնելով նաև հակառակորդների և գործընկերների տնտեսական հզորությունը: Հետևաբար, մի երկրի տնտեսության աճի տեմպերի գերազանցությունը մյուս երկրի հանդեպ արդեն առաջացնում է տնտեսական վտանգ դանդաղ զարգացող երկրի համար:

Այսպիսի վտանգ կանխազգալու դեպքում զարգացած երկրներն արագորեն արձագանքում են՝ կիրառելով ամենաբազմազան միջոցառումներ և վեր դասելով սեփական ազգային շահերը մյուսներից՝ լինի այլ երկիր, թե միջազգային ֆինանսական կազմակերպություն:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններն իրենց հերթին, ըստ հայտարարվող նպատակների, կոչված են նպաստելու զարգացող երկրների տնտեսական վերելքին և համաշխարհային տնտեսության մեջ միավորվելուն: Մակայն իրականում, ինչպես

¹ Ս.Սաֆարյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 39-40:

ցույց է տալիս համաշխարհային փորձը, հաճախ դրանք իրենց գործունեությունը ծավալում են ի շահ գերտերությունների՝ կործանիչ բացասական ազդեցություն թողնելով «աջակցություն» ստացող երկրի վրա: Այսպես, զարգացող երկրների տեսանկյունից ոչ ճիշտ ոլորտների զարգացման նպատակով ստացված վարկերը մի քանի անգամ հանգեցրել են համաշխարհային ֆինանսական ճգնաժամերի¹:

Երկրի SU ապահովման տեսանկյունից աստիճանաբար իրենց դերը՝ որպես գործոն, մեծացնում են վերազգային կորպորացիաները (ՎԱԿ): Արդյունքում՝ ՎԱԿ և ազգային տնտեսության շահերի բախման դեպքում սովորաբար հաղթում է ՎԱԿ-ը, ընդ որում, ՎԱԿ-ի կողմից հաղթված երկրի տնտեսությունը հաճախ կրում է կենսամակարդակի էական անկում: Հարցի լուծման համար կարևոր նշանակություն ունի նաև կառավարությունների վճռական դիրքորոշումը: Ակնհայտորեն առաջ է գալիս տարածաշրջանային և գլոբալ համագործակցության պահանջ, որի հիմքում պետք է դրվեն քաղաքական և տնտեսական սկզբունքներ:

Այս բոլոր գործընթացների հետ մեկտեղ անընդհատ խորանում է համաշխարհային տնտեսական միավորման գործընթացը: Հետևաբար, երկրների միջև փոխկախվածության աճն իրար է կապում ազգային SU և տարածաշրջանային ու գլոբալ խնդիրների լուծման շահերը: Սա վերաբերում է ոչ միայն տնտեսությանն առանձին վերցրած, այլ նաև հիմքեր է ստեղծում շրջակա միջավայրի, համաշխարհային օվկիանոսի և տիեզերքի խնդիրների լուծման համար, որոնց նշանակությունը դուրս է գալիս նշված ոլորտների ազգային ինստիտուտների գործունեության շրջանակներից: Այսպիսով, համամարդկային խնդիրների լուծումը ևս մեկ գործոն է, որը կարող է իր ազդեցությունն ունենալ առանձին երկրների SU վրա: Սակայն, ընդհանուր առմամբ, այն ավելի շատ միտված է համընդհանուր անվտանգության գաղափարի զարգացմանը և գերակայությանը ազգայինի նկատմամբ:

¹ Ավելի մանրամասն տե՛ս Աշոտ Մարկոսյան, Դավիթ Հախվերդյան, Գրիգոր Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., «ԱՌՏ», 2002, «Գլոխ 10. Վերազգայնացումը՝ որպես համաշխարհային տնտեսության զարգացման միտում», էջ 166-201:

Հատուկ ուշադրության են արժանի ՏԱ գաղափարի զարգացումը և դերը 1990-ական թթ. հետո: Գերտերությունների մոտ սկսում է ընդգծվել տնտեսական ռազմավարության և անվտանգության քաղաքականության միավորման միտումը մի կողմից և ռազմական ուժի դերի մեծացմանն ուղղված քաղաքականությունը՝ մյուս կողմից: Ռազմավարական քաղաքականությունն առանց համակողմանի ազգային անվտանգության ապահովման՝ դառնում է անիմաստ:

Գերտերությունները գյոբալ անվտանգության խնդիրներին մոտենում են սեփական ՏԱ ապահովման տեսանկյունից: Դա արտահայտվում է նրանով, որ գերտերությունները ձգտում են իրենց սեփական արժանիքներն ապահովել մյուս երկրներում: Անտեսվում են նաև առանձին ազգերի ազգային առանձնահատկությունները: Այս հարցերը հակասություններ են առաջացնում նույնիսկ զարգացած կապիտալիստական երկրների միջև՝ դրսևորվում է տարակարծություն կապիտալիզմի մասին պատկերացումների հարցում:

ՏԱ տեսանկյունից այստեղ կարևոր է նշել, որ փոխկախված աշխարհում փոխշահավետ տնտեսական համագործակցությունը կարող է ամրացնել բոլոր կողմերի անվտանգությունը, սակայն ռեսուրսային սահմանափակումը թույլ չի տալիս անշեղորեն շարժվել այդ ուղղությամբ: Բացի այդ, տարբեր տարածաշրջանների միջև առկա է արդյունաբերական նոր ճյուղերի զարգացումը կարգավորող օրենքների տարբերություն, մասնավորապես, էլեկտրոնային առևտրի և ռիսկային (վենչուրային) կապիտալի մասով: Այստեղ նույնպես կա մոտեցումների տարբերություն տարբեր երկրների միջև:

Երկրի անվտանգության ընդհանուր ըմբռնումը որպես հասարակական հարաբերությունների վիճակ, և՛ տեսական, և՛ գործնական առումով անհրաժեշտ է դարձնում այդ հարաբերությունների ամբողջ համակարգում առանձնացնել քաղաքական, տնտեսական, ռազմական, գիտատեխնիկական, սոցիալական, բնապահպանական և այլ անվտանգություններ, որոնք կարող են հանդես գալ որպես երկրի անվտանգության տարբեր տեսակներ:

Երկիրը միասնական հասարակական օրգանիզմ է, որը բաղկացած է մի շարք ենթահամակարգերից (քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր և այլն), որոնցից յուրաքանչյուրում

առաջանում և զարգանում են հակասություններ: Հենց այդ հակասություններն են, որոնց սրման դեպքում վտանգի աղբյուր է ձևավորվում ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան հարաբերությունների այդ ոլորտի համար, որքան երկրի անվտանգության, հասարակության կենսական շահերի ամբողջության համար: Գործընթացների առաջացման և հակասությունների զարգացման հետազոտման հնարավորություն ունենալու, այդ գործընթացներն արդյունավետ կառավարելու և դրանց վրա ներգործելու համար հասարակությունը, պետությունը ստիպված են անվտանգության ոլորտի բոլոր հարաբերությունները դասակարգել ըստ առանձին տեսակների:

Անվտանգության հիմնախնդիրների հետազոտողները տալիս են դրա հետևյալ բնութագրերը. անվտանգությունը համակարգի որոշիչ հատկությունն է, որը բնութագրում է նրա կողմից ամբողջականության, կայունության, հարաբերական ինքնուրույնության պահպանումը և ինքնագարգացման հնարավորությունը՝ որպես ապակառուցողական ներգործություններից համակարգի պաշտպանվածության արդյունք: Այդ հատկանիշներից որևէ մեկի կորուստը բերում է համակարգի կործանման, իսկ արտահայտման աստիճանը թույլ է տալիս դատել անվտանգության ապահովման մակարդակի մասին¹:

Անվտանգությունը կարելի է ներկայացնել նաև որպես ռիսկերից, վտանգներից, սպառնալիքներից և մարտահրավերներից պաշտպանվածություն կամ օբյեկտի կայուն գոյության (զարգացման) վիճակ, որի դեպքում նրա կենսագործունեության որևէ բնութագրի անցանկալի փոփոխման հնարավորությունը հասցված է նվազագույնի:

Ըստ անվտանգության նեղ սահմանման, ազգային անվտանգությունը ներառում է տարածքի պաշտպանություն, արտաքին քաղաքականություն, հետախուզություն և հակահետախուզություն: Ինչպես տեսնում ենք, ազգային անվտանգության նեղ սահմանումը կենտրոնացված է համակարգի և արտաքին աշխարհի հարաբերությունների ոլորտում:

¹ Основы экономической безопасности, под ред. Е.А. Олейникова, Москва, 1997.

Մենք կարծում ենք, որ բարդ և զարգացող աշխարհում ազգային անվտանգությունն երևույթն անհրաժեշտ է դիտարկել լայն տեսանկյունից, քանի որ անվտանգության համալիր բնութագիրը համապատասխանում է քաղաքական համակարգերի բարդ և զարգացող բնույթին (խոսելով քաղաքական համակարգերի մասին՝ տվյալ դեպքում նկատի չունենք պետությունները)¹:

Ազգային անվտանգության համակարգի օբյեկտը ազգային վտանգներն են: Այլ կերպ ասած՝ դրանք ազգի գոյության դեմ ուղղված և (կամ) նրա նորմալ կենսագործունեությունը, առաջընթաց զարգացումը սահմանափակող վտանգներն են: Եթե դիտարկենք միայն վտանգի աղբյուրները, ապա դրանք կարող են լինել այլ համակցության սուբյեկտների գործողություններ, այդ թվում՝ դիտավորությամբ կատարվածները, կամ օբյեկտիվ, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործընթացները: Ազգային վտանգները և, հետևաբար, ազգային անվտանգության համակարգային խնդիրը ծագում են, որովհետև առկա են երկու պայման:

Ազգը տարբեր համակցությունների շրջանակներում բազմաբնույթ հարաբերություններ ունի այլ սուբյեկտների հետ: (Սուբյեկտ ասելով հասկանում ենք ազգեր, ազգերի դաշինքներ և որոշակի առաքելությամբ օժտված վերազգային կազմակերպություններ, որոնք ունեն նպատակ և այն իրականացնելու համար կատարում են գործողություններ):

Ազգերն ունեն նպատակ, կենսական շահեր կամ իրավունքներ, որոնք նրանք գիտակցում են և ձգտում իրականացնել:

Եվ իսկապես, բոլոր մեծ ու փոքր, հեռու ու մոտիկ սուբյեկտները, իրենց շահերից ելնելով, գիտակցված կամ ինքնաբերաբար կատարում են գործողություններ, որոնք կարող են տվյալ ազգի շահերի տեսանկյունից բացասական ազդեցություն ունենալ իրադրության վրա²:

¹ Մ.Շահգելդյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 8-9:

² Ա.Աղայան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 9:

Արտաքին և ներքին վտանգների ամբողջությունը հանդիսանում է ազգային անվտանգության օբյեկտը:

Լայն իմաստով ազգային անվտանգության սուբյեկտ է ողջ ազգը՝ իր բոլոր ներքին սուբյեկտներով, սակայն դրանցից հիմնականները ազգային այն հաստատություններն են, որոնք ներգրավված են ազգային անվտանգության համակարգում: Ընդ որում, անվտանգության խնդրի բարդությունից կախված՝ ցանկալի է բոլոր հաստատությունների ներգրավվածությունը ազգային անվտանգության համակարգում:

Ամփոփելով անվտանգության համակարգային ասպեկտը՝ հարկ է նշել, որ անվտանգությունը օբյեկտի սպառնալիքից ազատ վիճակն է, ինչպես նաև՝ սուբյեկտի կողմից այդ վիճակի ձեռքբերման, պահպանման ու ամրապնդման նպատակով օբյեկտի վրա ներգործության որոշակի մեթոդներով իրականացվող գործառույթ, այդ գործառույթ(ներ)ի իրականացումն ապահովող ու անվտանգության ձեռքբերման գործընթացն ուղղորդող համակարգ: Փաստորեն, ազգային անվտանգության համակարգում առաջնայինը արժեքները և նորմերն են, որոնք սահմանում, նախանշում են որոշակի պարտավորություններ, պարտականություններ և իրավունքներ՝ պայմանավորելով համարժեք դերակատարումների՝ գործառույթների, ինչպես նաև ինստիտուտների, փոխազդեցության և ներգործության եղանակների, մեթոդների ու մասնագիտացված հանրայինի բնույթը¹:

Անվտանգության ապահովման միջոցները կարելի է դասակարգել ըստ անվտանգության բաղադրամասերի: Կարող ենք առանձնացնել քաղաքական (դրա շրջանակներում՝ նաև ռազմական), տնտեսական, սոցիալական և մշակութային միջոցները:

Եթե վերը շարադրվեցին այն պահանջները, որոնք պետք է բավարարի ազգային անվտանգության հայեցակարգը, ապա մեթոդաբանական առումով խնդիր է առաջանում՝ անվտանգության բաղադրամասերից ո՞րը պետք է կազմի հայեցակարգի առանցքը,

¹ Ս.Սաֆարյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 9-10:

և որոնք պետք է համալրեն այն: Ինչպես տարբեր երկրների անվտանգության հայեցակարգերն են ցույց տալիս, առանցքը, այնուամենայնիվ, ռազմաքաղաքական բաղադրամասն է: Մյուսները դասավորվում են այդ առանցքի շուրջը և սպասարկում նրան: Անշուշտ, խոսքը չի վերաբերում ռազմատենչ անվտանգության հայեցակարգի մշակմանը, այլ, ինչպես նշվեց, անվտանգության ապահովման միջոցները ռազմաքաղաքական անվտանգության բաղադրիչին նրբորեն ծառայեցնելուն:

Օրինակ՝ 1999թ. մշակված «ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարությունը նոր հարյուրամյակի համար» փաստաթղթում, ինչպես նախկինում, առաջ են քաշված երեք գլխավոր նպատակներ՝ անվտանգության ամրապնդում, որը հասկացվում է իբրև բանակի մարտունակություն, Ամերիկայի տնտեսական ծաղկման օժանդակում և այլ երկրներում ժողովրդավարության աջակցություն ու պահպանում¹: Միննույն ժամանակ, ԱՄՆ նախագահի սահմանադրական պարտականությունը և գլխավոր խնդիրն է ազգային անվտանգության պաշտպանությունը: Ընդ որում, այդ պաշտպանության օբյեկտ են համարվում ժողովուրդը, տարածքը և կենսակերպը, իսկ պաշտպանություն պահանջից բարձրագույն արժեք է ճանաչված ամերիկյան ժողովուրդը: Այսինքն՝ առաջնային օբյեկտ են համարվում սոցիալական համակարգի տարածքային, սոցիալական հիմքերը:

Ռուսաստանի փորձը բավականաչափ հետաքրքիր է անցումային մյուս հասարակարգերի համար: Տարբեր տարիների ընթացքում Ռուսաստանի Դաշնությունում ընդունվել են ազգային ան-

¹ 2001թ. սեպտեմբերյան հայտնի դեպքերից հետո նշված ռազմավարությունն առանձնացնում է ԱՄՆ ներկայիս կարևորագույն շահերը, որոնք համապատասխանում են երկրի գլոբալ նպատակներին.

1. ԱՄՆ գոյապահպանությունը որպես ազատ, անկախ ազգի՝ իր հիմնարար արժեքներով և ժողովրդի ու հաստատությունների անվտանգությամբ:
2. ԱՄՆ առողջ և զարգացող տնտեսություն, որը պետք է ապահովի մարդկանց բարեկեցությունը և ազգային ռեսուրսների աճը:
3. Առողջ գործընկերային և քաղաքականապես ակտիվ հարաբերություններ դաշնակիցների և բարեկամ ազգերի հետ:
4. Կայուն և անվտանգ աշխարհ, որտեղ ամրապնդվում են տնտեսական և քաղաքական ազատությունները, մարդու իրավունքները, ժողովրդավարական հաստատությունները (Մ.Շահգեղյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Լո-րավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 38):

վտանգությանը վերաբերող մի շարք իրավական ակտեր: Այդ թվում՝

1. Ռուսաստանի Դաշնության օրենքը անվտանգության վերաբերյալ (1993թ.),
2. Հրաման ՌԴ ազգային անվտանգության հայեցակարգի մասին (2000թ.),
3. Հրաման ՌԴ անվտանգության խորհրդի կարգավիճակի հաստատման մասին (1993թ.),
4. Օրենք պաշտպանության մասին (1999թ.),
5. Հրաման ՌԴ տնտեսական անվտանգության պետական ռազմավարության մասին¹:

Ռուսաստանի ազգային անվտանգության հայեցակարգում ազգային անվտանգությունը հասկացվում է որպես քաղաքացիների, հասարակության և պետության՝ կենսականորեն կարևոր շահերի, ինչպես նաև ազգային արժեքների և կենսակերպի պաշտպանվածությունն ներքին ու արտաքին սպառնալիքների ընդարձակ սպեկտրից, որոնք իրենց բնույթով տարբեր են (քաղաքական, ռազմական, տնտեսական, ինֆորմացիոն, էկոլոգիական և այլն):

ԱՄՆ դեպքում ակնհայտ է ռազմաքաղաքական բաղադրամասի առանցքային, առաջնային լինելը, ինչպես նաև տնտեսական անվտանգության կարևորումը, քանզի, ինչպես նշվել է, տնտեսությունը բազիսային նշանակություն ունի քաղաքական համակարգի համար: Կարևորվում է նաև «այլ երկրներում դեմոկրատիային աջակցելը»՝ որպես սեփական քաղաքական համակարգի արտաքին շրջակայքի վերահսկողությունը, տնտեսական նոր ռեսուրսների ձեռքբերումն ապահովող նպատակ²:

ՀՀ Ազգային ժողովի առաջին ընթերցմանը ներկայացված «ՀՀ անվտանգության մասին» օրենքի նախագծում անվտանգության հասկացությունը ներկայացվում է որպես արտաքին և ներքին

¹ Մ.Շահգեղյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 33:

² Մ.Սաֆարյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 120-121:

սպառնալիքներից անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակ: Կենսականորեն կարևոր շահերը պահանջմունքների ամբողջությունն է, որոնց բավարարումն ապահովում է անձի, հասարակության և պետության գոյության և առաջընթաց զարգացման հնարավորությունները:

Համաձայն վերոնշյալ օրենքի նախագծի՝ անվտանգության օբյեկտ են.

1. անձը, նրա իրավունքներն ու ազատությունները,
2. հասարակությունը, նրա հոգևոր և նյութական արժեքները,
3. պետությունը, նրա սահմանադրական կարգը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը:

Անվտանգության ապահովման հիմնական սուբյեկտ է պետությունը՝ իր օրենսդիր, գործադիր և դատական մարմիններով, նաև քաղաքացիները, կուսակցությունները, հասարակական միավորումները և կազմակերպությունները, եթե ՀՀ օրենսդրությանը համաձայն՝ ունեն անվտանգության ապահովմանը մասնակցելու իրավունքներ և կրում են պարտականություններ:

Անվտանգության ապահովման սկզբունքներն են.

- ա) օրինականությունը,
- բ) անձի, հասարակության և պետության անվտանգության հաշվեկշռվածության ապահովումը,
- գ) անձի, հասարակության և պետության անվտանգության փոխադարձ պատասխանատվությունը,
- դ) միջազգային անվտանգության համակարգերի հետ համագործակցությունը:

Անվտանգության համակարգի հիմնական գործառույթներն են.

- ա) անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի դեմ ուղղված արտաքին և ներքին սպառնալիքների հայտնաբերումն ու կանխորոշումը, դրանց վնասազերծմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
- բ) անվտանգության ապահովման ուժերի և միջոցների ստեղծումը, պատրաստականության ապահովումը և դրանց կառավարումը,

գ) արտակարգ իրավիճակի հետևանքով տուժած տարածքներում անվտանգության ապահովման օբյեկտների բնականոն գործունեության վերականգնման համալիր միջոցառումների իրականացումը,

դ) ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում ՀՀ սահմաններից դուրս անվտանգության ապահովման միջոցառումներին մասնակցությունը:

«Անվտանգություն» հասկացությունը սերտորեն կապված է «ազգային շահեր» կատեգորիայի հետ: Ավելին, առաջինը բխում է երկրորդից: Ազգային անվտանգությունը կոչված է նախևառաջ ապահովել կենսականորեն կարևոր հիմնական շահերի՝ ազգային ինքնիշխանության, պետության տարածքային ամբողջականության, նրա բնակչության պաշտպանության, անխոցելիության երաշխիքները, այսինքն՝ այնպիսի շահերի, որոնց ապահովման համար պետությունն ավելի շուտ կհամաձայնի պատերազմել, քան կգնա երկխոսության: Այլ կերպ ասած՝ ազգային անվտանգությունը պետության՝ ազգի կենսականորեն կարևոր շահերի ապահովմանն ուղղված ռազմավարություն է:

Երբեմն ազգային անվտանգությունը սահմանում են որպես ազգային կենսակերպի և գոյապահպանության, ինչպես նաև զարգացման նկատմամբ սպառնալիքների բացակայություն¹:

Անվտանգության համակարգն ունի իր տարածաաշխարհագրական կառուցվածքը: Տարածաաշխարհագրական տարբեր մակարդակների անվտանգության համակարգը կարելի է տարատեսակել հարաբերականորեն ինքնուրույն երկրաքաղաքական հետևյալ մակարդակների միջազգային գլոբալ անվտանգություն, միջազգային տարածաշրջանային անվտանգություն, ազգային անվտանգություն: Ազգային անվտանգությունն իր հերթին տարանջատվում է պետության, հասարակության և անձի անվտանգությունների (տե՛ս *գծանկար 1.1*):


Տարածաշրջանային քաղաքական անվտանգության և զարգացման համակարգում ՀՀ դերը պետք է լինի այնպիսին, որ ՀՀ շա-

¹ Մ.Շահգելոյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 3:

հերի ոտնահարմանն ուղղված յուրաքանչյուր գործողություն կամ ՀՀ թուլացումը սպառնալիքներ առաջացնի տարածաշրջանի մյուս պետությունների կենսական շահերի իրականացման համար:

Գծանկար 1.1

Անվտանգության տարածաշխարհագրական կառուցվածքը



Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է լինելու ստեղծել մի համակարգ, երբ ցանկացած հարված հանրապետությանը առաջացնի ոչ միայն Հայաստանի, Սփյուռքի ու միջազգային կազմակերպությունների հակադարձությունը, այլև ապակայունացնի և ապակազմակերպի տարածաշրջանային անվտանգության ու զարգացման ամբողջ համակարգը՝ մեր հարևան երկրների համար ստեղծելով կենսական սպառնալիքներ:

Մրանք հիմնական սկզբունքային կետերն են, որոնց իրականացումը դեռևս նախապայմաններ կստեղծի միայն ազգային անվտանգության և զարգացման համալիրի ստեղծման համար:

Առավել ընդհանուր ռազմավարական հիմնարար փաստաթղթերը, ինչպիսիք են ազգային անվտանգության դոկտրինը, ազգային անվտանգության ռազմավարությունը, արտաքին քաղաքականության դոկտրինը, ազգային զարգացման ռազմավարությունը և դոկտրինը, տնտեսական անվտանգության դոկտրինը, ըստ էության, մինչ այժմ մշակված չեն:

Առանձին փորձեր են կատարվում որոշակի առաջընթաց ապահովելու համար, սակայն հիմնախնդիրը հրատապ է մնում մինչև այժմ: Պատճառները կարող են բազմաթիվ լինել: Օրինակ՝

1. Հայաստանում ռազմավարական մշակույթի բացակայությունը, որն անդրադառնում է ռազմավարական պլանավորման արժեքավորման վրա:
2. Քաղաքական ընտրանու հակվածությունը իրավիճակային լուծումների և մարտավարական գործողությունների պլանների միջոցով պետության կառավարումն իրացնելու հակումը:
3. Մեր երկրի թուլությունը և փոքր չափերը, ինչը Հայաստանն առավել մեծ կախվածության մեջ է դնում արտաքին աշխարհի ազդեցությունից՝ պարտադրելով արձագանքել միջազգային քաղաքական համակարգի պահանջներին:
4. Երկրի ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը և հասարակական լայն խավերի մտահոգությունը բացառապես հանապազօրյա հաց ձեռք բերելու հիմնախնդրով:
5. Քաղաքական ինստիտուտների, մասնավորապես՝ կուսակցությունների թույլ կայացումը, ինչը քաղաքական համակարգում «հոսունություն» է առաջացնում և այլն:

Սակայն նշված հիմնախնդիրների առկայությունը չի պակասեցնում ազգային անվտանգության և զարգացման ոլորտի ռազմավարական պլանավորման և կառավարման հրամայականը¹:

Միջազգային (գլոբալ և տարածաշրջանային) անվտանգություն. - Միջազգային ասպարեզում, բնականաբար, կան երկրներ, որոնց շահերը տարբեր բնագավառներում հակադրվում կամ համընկնում են, և այդ պատճառով ստեղծվում են միանման շահեր ունեցող երկրների խմբավորումներ, որոնց չհամընկնող շահերն իրենց հերթին ստեղծում են տարբեր բնույթի միջազգային ընդհարումներ, ճգնաժամեր: Բայց միջազգային հասարակության համար

¹ Մ.Շահգեղյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 52-54:

կան նաև ավելի բարձր շահեր, ինչպես, օրինակ, մարդկային քաղաքակրթության զարգացումը: Վերջինս, իր հերթին, թելադրում է միջազգային գլոբալ անվտանգության կառույցների ձևավորման անհրաժեշտությունը:

Միջազգային անվտանգությունը միջազգային հարաբերությունների այնպիսի վիճակ է, երբ երաշխավորված են յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության արտաքին բաղադրիչները, և գործնականորեն միջազգային հակասությունների լուծման ժամանակ բացառվում է պատերազմների կամ ռազմական ընդհարումների սպառնալիքը:

Միջազգային անվտանգության ապահովման կառույցների ձևերը կարող են տարբեր լինել, ինչը պայմանավորված է այդ կառույցների երկրաքաղաքական տարածվածությամբ, մասնակից երկրների զարգացման աստիճանով, կառույցների գործունեության ուղղվածությամբ (քաղաքական, տնտեսական, ռազմական և այլն):

Իհարկե, անվտանգության ցանկացած կոլեկտիվ համակարգ ունի իր առաջնորդ անդամը (կամ մի քանիսը), որի առաջատարությունն ապահովվում է երկրի ռազմաքաղաքական կամ տնտեսական հզորության շնորհիվ:

Միջազգային կազմակերպության անդամ այն երկիրը, որն իր մասնակցությամբ ձգտում է ապահովել ազգային անվտանգությունը, հաճախ հարկադրված է երկրի քաղաքականության բոլոր բնագավառները համապատասխանեցնել տվյալ կազմակերպության առաջատար երկրի ազգային շահերին:

Պետական անվտանգությունը որպես երևույթ ընդլայնված է, և քանի որ ներկայումս ու դեռ երկար ժամանակ ազգերը կազմակերպվում են պետության ձևով, պետական անվտանգությունը ևս լինելու է անվտանգության կարևորագույն բաղկացուցիչներից մեկը: Պետական անվտանգությունը ներառում է քաղաքականությունը, մշակույթը, սոցիալական ոլորտը, ընդերքը, բնությունը և գյուղատնտեսությունը, ինֆորմացիոն և էներգետիկ դաշտերը և այլն¹:

Այս կապակցությամբ Հայաստանը պետք է մասնակցություն

¹ Նշվ. աշխ., էջ 12:

ունենա այն տարածաշրջանային միջազգային անվտանգության ապահովման կազմակերպություններում, որոնց առաջատար երկրների շահերն առավելագույն չափով բարենպաստ են Հայաստանի ազգային շահերի իրացման համար:

Ազգային անվտանգության բաղադրիչները. - Ազգային անվտանգությունը համակարգ է, որտեղ անընդհատ փոխհարաբերության մեջ են գտնվում անձի, հասարակության և պետության շահերն ու դրանց ներքին և արտաքին սպառնալիքները: Այս համակարգի նպատակային գործառույթը տվյալ շահերի պաշտպանվածության գոնե բավարար մակարդակի ապահովումն է սպառնալիքներից:

Եթե փորձենք լայն ձևով ձևակերպել ազգային նպատակը բոլոր ազգերի համար, ապա հենց զարգացման ձգտումը և դրա համար նպաստավոր ազգային ինքնատիպությունը կարելի է ընդունել որպես այդպիսին: Ավելի ճիշտ՝ ազգային նպատակը հոգևոր-մշակութային ինքնության զարգացող վերարտադրությունն է:

Ազգային զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունից որոշվում է ազգային անվտանգության խնդրի տարողությունը: Եթե դրանք բավարար չափով առկա չեն կամ մասնակի կորստի վտանգ կա, պետք է որդեգրվի ազգային անվտանգության այնպիսի հայեցակարգ, որը հնարավորություն կտա եղածը պահել և պակասը վերականգնել: Դրանց առկայության և կորստի վտանգի անհավանականության դեպքում, երբ նախադրյալներ են ստեղծվում մշակութային ազդեցությունը տարածելու համար, ազգային անվտանգության հայեցակարգն էլ պետք է լինի այնպիսին, որպեսզի սպասարկի այդ տարածումը¹:

Ազգային անվտանգության համակարգում պետք է նաև որոշվեն այն ուժերն ու միջոցները, որոնք պետք է ապահովեն ազգային անվտանգությունը: Քանի որ ազգային անվտանգության ապահովման գործառույթը դրված է պետական մարմինների վրա, ապա ազգային անվտանգության ապահովման համակարգում պետք է

¹ Ա.Աղայան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 28-29:

ընդգրկվեն այնպիսի կառույցներ, ինչպիսիք են անվտանգության խորհուրդը, ուժային կառույցները, օրենսդրական մարմինները, պետական իշխանության այլ մարմինները: Իսկ քանի որ խոսքը վերաբերում է ազգային անվտանգությանը, ապա դրա ապահովման համակարգում պետք է ընդգրկվեն նաև հասարակական կազմակերպությունները և քաղաքացիները:

Վերին մակարդակում պետք է լինեն անվտանգության քաղաքականությունը տնօրինող մարմինը կամ մարմինները, որոնք իրականացնում են ռազմավարական կառավարում: Երբ պետությունը դիտարկվում է որպես ազգային անվտանգությունն ապահովող միակ սուբյեկտ, նման մարմին է դիտարկվում ազգային անվտանգության խորհուրդը գործադիր իշխանության կազմում, որը գործում է օրենսդիր մարմնի ընդունած անվտանգության հայեցակարգի հիման վրա: Եթե ուշադրություն դարձնենք նման խորհուրդների կազմերին, ապա կարելի է նկատել հետևյալ միտումները:

Խորհուրդները լինում են ներկայացուցչական: Նրանցում, որպես կանոն, ներկայացված են լինում պետական մեքենայի քիչ թե շատ ինստիտուցիոնալ ինքնուրույնություն ունեցող ոլորտները, քաղաքական համակարգում զգալի ազդեցության հասած քաղաքական ուժերը:

Մարմինը հենց խորհուրդ (կոլեգիա) է, այլ ոչ, ասենք, վարչություն կամ նախարարություն, հաճախ՝ խորհրդակցական ձայնով, սակայն կարևորագույն որոշումների կայացման ժամանակ վճռական դեր է խաղում:

Խորհուրդները չունեն իրենց որոշումները գործադրելու իրական լծակներ, և նրանց որոշումները գործադրվում են հիմնականում պետության միջոցներով:

Համաձայն օրենսդրության, բոլոր պետությունների կազմում միշտ կա ևս մեկ մարմին (որպես կանոն՝ նախագահը), որին վերագրվում է անվտանգության երաշխավորի պարտականությունը: Անվտանգության խորհուրդները գործում են նրա մանդատով միայն: Խորհուրդների ներկայացուցչական բնույթը, սակայն, հնարավորություն է տալիս ինչ-որ չափով ապահովել պետության ներքին և պետությունից դուրս հաստատությունների ներկայացվածությունը: Դրանով իսկ ազգային անվտանգության խորհուրդը վերածվում է

ազգային հաստատությունների (որոնք միաժամանակ նաև ազգային անվտանգության քիչ թե շատ ինքնուրույն սուբյեկտներ են) գործունեությունը համադրող կամ համաձայնեցման մարմնի¹:

ՀՀ ազգային անվտանգության և զարգացման գերակայությունները փոխկապակցված են: Կարելի է ասել, որ ՀՀ-ի համար ազգային զարգացումը հանդես է գալիս որպես ազգային անվտանգության հիմք: Եվ այս տեսանկյունից ազգային անվտանգության ու ազգային զարգացման մի շարք գերակայություններ համանման են:

Ազգային անվտանգության գերակայություններն են՝

- ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծումը և պաշտպանական համակարգի գերակայությունը (բանակի անընդհատ զարգացում և արդիականացում, ռազմական ինֆրակառուցվածք, ռազմական գիտելիքի զարգացում, արտադրական հզորությունների մեծացում և այլն),
- հզոր և գործունակ դիվանագիտական համակարգ, որի ռեսուրսները պետք է կենտրոնացվեն ռազմական անվտանգության մակարդակի բարձրացման, ՀՀ քաղաքական աջակցության և ռազմավարական ներդրողների ներգրավման ուղղությամբ, ինչպես նաև աշխարհի ուժային կենտրոններում տեղեկատվության հավաքում-վերլուծություն-ազդեցություն մեխանիզմի ստեղծում և «աշխատեցում»,
- արտաքին հետախուզության հզոր համակարգի ստեղծում,
- գործունակ քաղաքական ընտրանու ձևավորում և ռեկրուտավորման մեխանիզմների ստեղծում,
- ամուր և գործուն քաղաքական ինստիտուտներ,
- ժողովրդավարության իրական և երկարաժամկետ մեխանիզմների ստեղծում,
- ներքին համաձայնության մթնոլորտի կերտում և հանրության ներսում ճեղքվածքի հնարավորինս վերացում,
- սոցիալական և տնտեսական զարգացման մեխանիզմների ստեղծում,
- պերմանենտ զարգացման ապահովում²:

¹ Նշվ. աշխ., էջ 43-44:

² Մ.Շահգեղյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 51-52:

Ազգային անվտանգությունը դիտարկում են որպես սպառնալիքները կանխարգելող մեխանիզմ: Այլ կերպ ասած՝ անվտանգությունը ենթադրում է նաև կանխարգելիչ գործողություններ: Այս մոտեցման հիման վրա է նաև մշակվում պաշտպանության և ազգային անվտանգության համակարգերի տարբերությունը:

Հավանաբար կարելի է, վերոնշյալը հաշվի առնելով, անվտանգությունը դիտարկել որպես հանրային համակարգի գերակայություն, որը դրդում է վերջինիս իրականացնել ակտիվ գործողություններ՝ ապահովելու համար իր պաշտպանությունը և զարգացման հնարավորությունները՝ ի դեմս արտաքին և ներքին սպառնալիքների:

Անվտանգության սահմանման հիմնախնդիրը լուծելու նպատակով «...անվտանգությունը կարելի է դիտարկել որպես մի երևույթ, որը նույնական է համակարգի հոմոստազին, որն ասելով հասկանում ենք դինամիկ հավասարակշռության տարատեսակ, ինչը հատուկ է բարդ ինքնակարգավորվող համակարգերին և համակարգի գոյապահպանության համար անհրաժեշտ չափորոշիչների ապահովում թույլատրելի սահմաններում»¹: Այս սահմանման մեջ, փաստորեն, շեշտվում են անվտանգության դինամիկ և կանխարգելիչ հատկանիշները, որոնց հիման վրա կարելի է ասել, որ անվտանգության երևույթը սպառնալիքների դեմ ակտիվ պայքարն է: Այդ ակտիվությունը ենթադրում է սպառնալիքների՝ վերհանում, կանխարգելում, հակադարձում և վերացում:

«Անվտանգություն» հասկացությունը առանձին վերցրած նշանակում է օբյեկտի գոյությանը և բնականոն կենսագործունեությանն ուղղված վտանգների չեզոքացում: Ավելի բարդ է սահմանել «ազգայինը»: Այս բառը մեզանում, վերջին շրջանում գործածվում է նաև անգլերեն *national* իմաստով: Տարբեր երկրներում խոսելով ազգային անվտանգության մասին, հենց այդ՝ համերկրային կամ համապետական իմաստն են օգտագործում: Միջազգային հանրությունը, որպես կանոն, համաշխարհային համակցության սուբյեկտ է դիտարկում ոչ թե էթնիկ կազմավորումները՝ ազգերը, այլ պե-

¹ Т.Гоббе, Сочинения в 2 т. М., 1991, т. 2, с. 129.

տություններն՝ իրենց ժողովուրդներով, որոնք կարող են լինել միատարր կամ խառը, ներառել որևէ ազգի հիմնական հատվածը կամ մի փոքր մասը միայն: Մյուս կողմից՝ անվտանգության ապահովումը դիտարկվում է բացառապես որպես պետության գործառույթ, որը պետությունները պետք է փորձեն իրականացնել որպես իրենց տարածքում ապրող բոլոր ազգերի ներկայացուցիչ¹:

Այսպիսով, անվտանգությունը դինամիկ երևույթ է՝ անհրաժեշտ համակարգի գոյապահպանության և զարգացման համար²:

Ազգային անվտանգության բաղկացուցիչների առանձնացումն անհրաժեշտ է իրականացնել մարդ - հասարակություն - պետություն - միջազգային հանրություն քառմիասնական մեխանիզմի հիման վրա, չնայած մինչև այժմ առանձնացնում են մարդ - հասարակություն - պետություն եռմիասնական համակարգը, ինչը, սակայն, գլոբալացման գնացող աշխարհում չի կարող արտացոլել ազգային անվտանգության բոլոր կողմերը:

Ազգային անվտանգության բաղկացուցիչներն են՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական, մշակութային, տեխնոլոգիական, բնապահպանական, տեղեկատվական:

Ազգային անվտանգության հիմնախնդիրը դիտարկելիս անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ մակարդակները՝ աշխարհաքաղաքական (աշխարհառազմավարական, աշխարհատնտեսական), տարածաշրջանային, պետական, տարածքային, խմբային, անհատական³:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001թ. դեկտեմբերի 28-ին) սահմանվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հասկացությունը, ազգային անվտանգության մարմինների տեղն ու դերը ազգային անվտանգության ապահովման

¹ Ա.Աղայան, Ազգային անվտանգություն. հասկացությունները, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 5- 6:

² Մ.Շահգեղյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 4:

³ Նշվ. աշխ., էջ 9-10:

համակարգում, դրանց գործունեության իրավական հիմքերը, սկզբունքները, ուղղությունները, լիազորությունները, ուժերն ու միջոցները, աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության ապահովման, ինչպես նաև նրանց գործունեության նկատմամբ վերահսկողության կարգը:

Նշված օրենքի հոդված 1-ի համաձայն, «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգություն» հասկացությունը տրվում է այսպես. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված են անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից»:

Ազգային անվտանգության ապահովման գործառույթները, իրենց իրավասությունների սահմաններում, իրականացնում են պետական կառավարման համապատասխան մարմինները: Ազգային անվտանգության մարմինները ՀՀ անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անձի, հասարակության ու պետության անվտանգությունը:

ՀՀ ազգային անվտանգության մարմինների միասնական համակարգը կազմված է ՀՀ ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնից (այսուհետ՝ լիազորված մարմին), նրան ենթակա մարզային մարմիններից, սահմանապահ զորքերից, ուսումնական կենտրոններից, հատուկ նշանակության և այլ ստորաբաժանումներից:

Լիազորված մարմնի գործունեության ընդհանուր դեկլարումը, իրենց իրավասության սահմաններում, իրականացնում են Հայաստանի Հանրապետության նախագահը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության վարչապետը:

Լիազորված մարմինը հանրապետական գործադիր մարմին է, որի ղեկավարին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Լիազորված մարմնի համակարգում սահմանված կարգով գործում են հետախուզական, հակահետախուզական և ռազմական հակահետախուզական մարմիններ:

Լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է ազգային անվտանգության խնդիրներին առնչվող հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների և ստորաբաժանումների աշխատանքի օպերատիվ ղեկավարումը:

Ազգային անվտանգության մարմինների գործունեությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով. ա) հետախուզական գործունեություն, բ) հակահետախուզական գործունեություն, գ) ռազմական հակահետախուզական գործունեություն, դ) պետական սահմանի պահպանություն, ե) պայքար հանցագործությունների դեմ:

Ազգային անվտանգության մարմինների գործունեության այլ ուղղությունները որոշվում են օրենքով¹:

Հայաստանում անվտանգության ոլորտի ապահովման կոորդինացիոն հիմնական մարմին է հանդես գալիս նախագահին կից գործող անվտանգության խորհուրդը: Ի տարբերություն այլ երկրների, նույնիսկ Իսրայելի, վերջինիս գործունեությունը բավականաչափ փակ է, ինչը հնարավորություն չի ընձեռում բավականաչափ տեղեկատվություն ունենալ վերլուծության համար:

Փաստը, որ ներկայումս անվտանգության խորհրդի քարտուղար է հանդես գալիս պաշտպանության նախարարը, որոշակիորեն ելնում է նաև ՀՀ ազգային անվտանգության գերակայությունների հիերարխիայում ռազմական անվտանգության առավել կարևոր նշանակությունից:

¹ Տե՛ս «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001թ. դեկտեմբերի 28-ին (Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր N 6 (181), 5 փետրվարի 2002, էջ 3-6):

Բաց տվյալների վերլուծության հիման վրա (մամուլ) այն տպավորությունն է ստեղծվում, թե անվտանգության այնպիսի խոշորագույն բաղկացուցիչ, ինչպիսին արտաքին, ռազմական, քաղաքական և տնտեսական հետազոտությունն է, բավարար ուշադրության չի արժանանում ՀՀ պետական իշխանության մարմինների կողմից: Ներքին անվտանգության համակարգի ամրապնդումը կարևորագույն խնդիր է, սակայն Հայաստանի Հանրապետության համար արտաքին ռազմական և քաղաքական սպառնալիքներն այսօր գերակայող են, ինչը պարտադրում է ուղղակիորեն հզորացնել ռազմական, քաղաքական և տնտեսական հետախուզության մեխանիզմները: Ինստիտուցիոնալ տեսանկյունից սրանք կարող են լինել համապատասխան գերատեսչության ներսում, սակայն անվտանգության խորհրդի կողմից նրանց գործունեությունը պետք է կոորդինացվի ռեսուրսների խնայողական օգտագործման համար, իսկ մրցակցությունը պետք է պահպանվի ռացիոնալ բավարարության մակարդակի վրա¹:

Այսպիսով՝ անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակական մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական ներուժի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է²:

1.2. Տնտեսական անվտանգությունը ազգային անվտանգության համակարգում

Ազգային անվտանգության հայեցակարգը հնարավոր է ներկայացնել որպես ազգային զարգացման հեռանկարային ծրագիր կամ դրա մի մաս: Եվ դա իսկապես այդպես է: Սակայն չի կարելի այն ներկայացնել պարզապես որպես տնտեսական զարգացում կամ ժողովրդի կենսամակարդակի աճ: Այս դեպքում շատ ավելի կարևոր է զարգացման հենց ազգային բաղադրիչը, որը բնորոշվում է հոգևոր-մշակութային արժեքներով: Տնտեսական հարաբերական

¹ Մ.Շահգելյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 58:

² Նշվ. աշխ., էջ 64:

զարգացումը հնարավոր է նաև առանց և նույնիսկ ի հաշիվ ազգային զարգացման, հատկապես երբ խոսքը տնտեսապես հետամնաց երկրի մասին է: Սակայն նույն տնտեսական մրցապայքարում այլ ազգերի հնարավոր է հաղթել միայն հոգևոր-բարոյական զարգացման և միայն որպես դրա անխուսափելի հետևանք՝ տնտեսական զարգացման պայմաններում:

Ազգերը պայքարում են հարևան և մրցակից այլ ազգերի համեմատ զարգացման ավելի մեծ տեմպեր արձանագրելու համար: Ազդեցության ընդարձակումը մեծապես ծառայում է այս նպատակին, քանի որ զարգացումն ունի ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին՝ այլոց հաշվին, դրսևորում¹:

Քաղաքականության համակարգը հասարակության երրորդ կարևորագույն ենթահամակարգն է (այլոց դեպքում՝ քաղաքական համակարգ), որի հիմնական գործառույթը կենսագործունեության տարբեր ոլորտներում հոչակված նպատակների ձեռքբերումն է: Քաղաքականության համակարգի կառուցվածքային բաղադրիչ են հանդես գալիս կոլեկտիվները, իսկ զարգացման գործընթացի ասպեկտը դիֆերենցումն է: Անվտանգության քաղաքականությունը, ինչպես և մյուս քաղաքականությունները, հարում է հասարակության այս համակարգին, քանի որ նպատակի ձեռքբերումը սույն համակարգի գործառույթն է:

Քաղաքականության համակարգն իր համընդհանրացված գործառույթների (1. սվյալ հանրույթի, երկրի որոշակի սոցիալական խմբի կամ անդամների մեծամասնության քաղաքական իշխանության ապահովումը, 2. կառավարումը, 3. հասարակության սոցիալական խմբերի և շերտերի որոշակի միասնությունը՝ ինտեգրացիան, 4. տնտեսության գործառման և առաջընթացի համար քաղաքական պայմանների ստեղծումը, 5. հասարակության ու նրա անդամների պաշտպանությունը ներքին և արտաքին կործանարար ազդեցություններից²) միջոցով սերտորեն կապված է այլ համակարգերի հետ և փոխներթափանցված է նրանց մեջ: Այդ գործառույթներ-

¹ Ա. Աղայան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 30:

² Зеркин Д.П., Основы политологии, Курс лекций, 2-е изд., доп. Ростов на Дону, Феникс, 1999, с. 576.

րի շրջանակներում է քաղաքական համակարգը կենսագործունեության տարբեր ոլորտների համար առաջադրվող նպատակների շարքում սահմանում նաև տվյալ ոլորտի կամ համակարգի անվտանգության նպատակները և հետամտում դրանց¹:

Տնտեսության ենթահամակարգը սոցիալական համակարգում չորրորդն է, որի հիմնական գործառույթը ադապտացիան է, կառուցվածքային բաղադրիչը՝ դերերը, իսկ զարգացման գործընթացների ասպեկտը՝ ադապտատիվ ներուժի ավելացումը: Եթե տնտեսության համակարգի այդ գործառույթները սերտորեն կապված են անվտանգության հետ, իսկ դրանք իրականացնողները հանդես են գալիս իբրև անվտանգության սուբյեկտներ, ապա մյուս կողմից էլ նրանք, և ընդհանրապես՝ ողջ տնտեսության համակարգը, հանդես են գալիս որպես անվտանգության ապահովման օբյեկտ:

Սոցիալ նորմատիվ կարգի այս չորրորդ բաղադրիչը կապված է պրակտիկ ոլորտի հետ և կերպավերարտադրության համակարգի նման լայն հասկացություն է ու ընդգրկում է կենսագործունեության բոլոր ոլորտները, ընդհուպ՝ մշակույթը, կրթությունը, քաղաքականությունը (քաղաքական դաշտը՝ որպես որոշակի տնտեսական օրենքներով գործառող միջավայր): Նրա կիրառման առավել ակնհայտ ոլորտներ են համարվում առօրյա ընկալման տնտեսությունը և տեխնոլոգիան:

Ողջ այս համակարգի ղեկավարող սկզբունքը ռեսուրսների արդյունավետ կառավարման ցանկալիությունն է: Ընդ որում, որոշ տեսակի ռեսուրսների, օրինակ՝ իշխանության նկատմամբ վստահություն-ռեսուրսը, երկրի մարդկային, ինտելեկտուալ, ընդերքի, ֆինանսական, նյութական, ֆիզիկական և այլ ռեսուրսների՝ առանց անհրաժեշտության վատնողաբար, շոայլ կամ ոչ խնայողաբար օգտագործումը, որը նույնիսկ չի առնչվում լոյալությանը, պարտադիր որոշումների ու վճիռների կատարմանը կամ էլ բարոյականության հարցերին, հանգեցնում է դրանք տնօրինող անհատ(ներ)ի կամ կոլեկտիվ(ներ)ի գործողությունների քննադատությանը: Այսպես, ՀՀ

¹ Ս.Սաֆարյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 54-55:

իշխանությունները տարիներ շարունակ մեղադրվում են թալանի, վարկերը վատնելու, արտագաղթը, ուղեղների արտահոսքը «խթանելու» (մարդկային ռեսուրսի վատնում) կամ այսօր էլ, օրինակ, Ռուսաստանին ունեցած պարտքը գույքով մարելու և այլնի մեջ: Բոլոր դեպքերում տնտեսության համակարգի այս «կանոնի» խաթարումը արդեն իսկ վտանգվածության վիճակ է ստեղծել:

Տնտեսության համակարգի բնականոն գործառնությունը կամ, որ նույնն է՝ անվտանգությունը, պահանջում է նաև աշխատանքային ռեսուրսների (որպես արտադրության գործոն՝ այդ բանի տնտեսական իմաստով) հստակություն կարգավորման առումով (լոյալությունների կարգավորվածության նման): Աշխատուժի մեջ անհատի գիտակցված ներառվելը (որպես արժեք, ռեսուրս) ենթադրում է վարձման լեգիտիմ (տեղին է հիշել ՀՀ Սահմանադրության համապատասխան նորմերն աշխատանքի պայմանների մասին) պայմաններին համապատասխան արդյունավետ աշխատելու պարտավորություն: Ինչպես Մ.Վեբերն է նշել, անհատի այդ պարտավորության մեջ առկա է բարոյական վճռորոշ տարր (օրինակ՝ գործը բարեխիղճ կատարելը): Սակայն առանց բարոյականության բաղադրիչի էլ օպտիմալ է համարվում ռացիոնալ տնտեսական և տեխնոլոգիական գործառնությունը, իսկ ռացիոնալության համապատասխան ստանդարտներից շեղումը խրախուսելի չէ¹:

Պրոֆեսոր Հ.Ղուշյանի կարծիքով, երկրի զարգացման բնականոն վիճակի խախտումը ենթադրում է քաղաքական, պաշտպանական, բնապահպանական, տնտեսական, սոցիալական վտանգավոր իրավիճակների ձևավորում, որոնցից յուրաքանչյուրի ծայրահեղ դրսևորման դեպքում երկիրը կարող է կորցնել անկախությունը կամ հայտնվել այնպիսի վիճակում, որից դուրս գալու համար կպահանջվի հարյուրամյակ: Թվարկված վտանգավոր իրավիճակներից ամենաբարդն ու առաջնային լուծում պահանջողը տնտեսականն է, քանի որ այն խիստ կաշկանդում է մյուս հիմնախնդիրների լուծման հնարավորությունները²:

¹ Նշվ. աշխ., էջ 59-61:

² Հ.Բ. Ղուշյան, ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը, Բանբեր Երևանի համալսարանի, 2000, N 3, էջ 16:

Տնտեսության ոլորտում անվտանգության յուրահատուկ օբյեկտ է դառնում շուկայական տնտեսության հետ համակցված ֆինանսների (ընդհանրական դրամական փոխանակությունը) շրջանառությունը հատկապես ինքնավար կառուցվածքների տարբերակման պայմաններում: Փողերը և շուկան գործում են այնտեղ, որտեղ գոյություն ունի աշխատանքի բավական լայն բաժանում և նպատակահարմար է, որպեսզի տնտեսական գործունեության ոլորտը բավականին առանձնացված լինի քաղաքական, համայնքային և բարոյական հրամայականներից: Հակառակ դեպքում ձևավորվում է շուկա, որտեղ մենաշնորհային իրավունքներ ունեն և վերահսկողություն են իրականացնում կոռումպացված, կլանացված խմբերը, կոլեկտիվները և անձինք: Սոցիետալ փոխանակության բոլոր ընդհանրացված մեխանիզմներից (ազդեցություն, իշխանություն) փողերը և շուկաները ամենից քիչ են կապված սոցիետալ հանրությամբ առարկայացած նորմատիվ կարգի հետ: Ավելի հստակ՝ ամենին էլ պարտադիր չէ, որ, օրինակ, հասարակության շրջանում ազդեցություն ունեցողը պետք է նաև ազդեցություն, իշխանություն ունենա նաև շուկայում, կամ փող ունեցողը քաղաքական իշխանություն ունենա: Իսկ պրակտիկ ռացիոնալությունը կարգավորվում է գլխավորապես ինստիտուցիոնալ նորմերով, նախևառաջ սեփականության և պայմանագրի ինստիտուտներով, որոնք այլ հիմքեր ունեն պատժամիջոցների համար¹:

Ներկայումս առավել հիմնախնդրային են ռազմական, տնտեսական, սոցիալական, քաղաքական և տեղեկատվական սպառնալիքները: Սրանք մասամբ ունեն արտաքին, մասամբ՝ ներքին բնույթ²:

Ազգային անվտանգության ապահովման գործում կարևոր դերակատարում ունեն տնտեսական գործոնները: Տնտեսական անվտանգությունը ներկայումս դարձել է ցանկացած հասարակության կենսագործունեության, նրա սոցիալ-քաղաքական և ազ-

¹ Сенчагов В.К., Экономическая безопасность: геополитика, глобализация, самосохранение и развитие (книга четвертая), Институт экономики РАН, М., ЗАО «Финстатинформ», 2002, с.128.

² Մ.Շահգելդյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 43:

գային կայունության հիմքը: Մի կողմից՝ միջազգային հարաբերություններում տնտեսական գործոնի օրեցօր աճող դերը ազգային ՏԱ ստեղծման խնդիր է առաջադրում, մյուս կողմից՝ տնտեսական գործոնը վճռորոշ է դառնում նաև երկրի ներսում ձևավորվող տնտեսական հարաբերություններում: Ինչպես գիտենք, երկրի ներսում տնտեսական գործընթացները բարդ և համակողմանի կապվածության մեջ են միմյանց հետ, և տնտեսության զարգացման համամասնությունների խախտման խորացման ու տնտեսական անվտանգության սպառնալիքների առկայության և անընդհատ փոփոխման պայմաններում դրանք կարող են շղթայական կապով ազդել այլ տնտեսական գործընթացների վրա:

Ազգային անվտանգությունը ՏԱ նախապայմանն ու երաշխիքն է, և հակառակը: Այս երկու գործընթացները փոխկապված են, մեկը մյուսով պայմանավորված, այդ իսկ պատճառով պետք է դիտարկվեն ամբողջության մեջ: Նման պարագայում հաղթահարվում է տնտեսական և պետական քաղաքականությունների նկատմամբ մեկուսի մոտեցումը:

Պետության ՏԱ-ն բարդ և բազմագործոն համակարգ է: Լինելով ազգային անվտանգության համակարգի բաղադրիչ մասը՝ այն միաժամանակ հիմք է հանդիսանում ազգային անվտանգության կառուցվածքի մեջ մտնող տարրերի՝ ռազմական, տեղեկատվական, սոցիալ-քաղաքական, պարենային, բնապահպանական անվտանգության և այլնի ձևավորման համար:

Ազգային անվտանգությունն այնպիսի վիճակ է, երբ պետությունում պաշտպանված են երկրի ազգային շահերը՝ սոցիալական, տնտեսական, ռազմական, բնապահպանական և այլ բնագավառների անվտանգության սպառնալիքների կանխարգելման տեսանկյունից:

Այս իրողությամբ է պայմանավորված նաև «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվել են երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

- ա) հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում,
- բ) ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ:

«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.

- ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,
- հոգևոր-բարոյական անվտանգության հիմնադրույթները,
- մշակութային անվտանգության հիմնադրույթները,
- կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթները,
- գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթները,
- տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթները,
- կոմունիկացիոն անվտանգության հիմնադրույթները,
- տեղեկատվական անվտանգության հիմնադրույթները,
- բնապահպանական անվտանգության հիմնադրույթները,
- ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթները,
- առողջապահական անվտանգության հիմնադրույթները,
- սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթները¹:

Ինչպես երևում է բերված դասակարգումից, ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգի բաղկացուցիչ մասն են կազմում «տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնախնդիրները» (թեև չի կարելի համաձայնել «տնտեսական» և «ֆինանսական» հասկացությունների նույնացման հետ, քանի որ առաջինն ավելի լայն ու ընդգրկուն է, քան երկրորդը): Եվ եթե «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի միջոցներով վերը նշված հիմնադրույթների մեծ մասը մշակված և հրապարակված է, ապա նույնը չի կարելի ասել տնտեսական անվտանգության մասին, և այն ներկայումս նկատելի բացթողում է, որն այս հրապարակմամբ լրացվում է:

Ազգային անվտանգությունը սերտորեն կապված է երկրի ազգային շահերի հետ, որոնք պետք է լինեն հստակ որոշված և համակարգված: Ազգային շահերի հստակ որոշման և համակարգ-

¹ Նշվ. աշխ., էջ 68-69:

ման, ինչպես նաև այդ շահերի ապահովման համար անհրաժեշտ է մշակել ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգ, որը պաշտոնական հայացքների համախմբություն է ազգային շահերի, գերակայությունների, սկզբունքների, նրանց իրականացման ձևերի և միջոցների, արտաքին և ներքին սպառնալիքներից պաշտպանվելու վերաբերյալ:

Հայեցակարգը ազգային անվտանգության ապահովմանն ուղղված քաղաքական ռազմավարության հիմքում դրված հայացքների, գաղափարների և սկզբունքների ամբողջությունն է:

Ելնելով ազգային անվտանգության հայեցակարգի դրույթներից՝ հնարավոր է մշակել հայեցակարգեր անվտանգության այլ տեսակների համար՝ տնտեսական, բնապահպանական, տեղեկատվական և այլն: Եթե ազգային անվտանգության հայեցակարգի քաղաքականությունն իրականացնող և վերահսկող մարմինը ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհուրդն է լինելու, ապա հայեցակարգի (ծրագրերի) մշակման, ՏՄ համապատասխան չափորոշիչների սահմանման և վերահսկման մեխանիզմների առումով գլխադաս մարմին ենք տեսնում ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը:

Պետության զարգացման ամեն փուլի համար պետք է որոշվեն ազգային շահերի գերակայությունները: Հայաստանի ազգային անվտանգության համար գերակայող շահերը վերջին տասը տարվա ընթացքում մնացել են հասարակության ուշադրության երկրորդական տեղում:

Հայաստանի համար տվյալ ժամանակահատվածում այդպիսի գերակայություններից են՝

- անկախության, ինքնորոշման և երկրի տարածքային ամբողջականության պահպանությունը,
- ազգային հոգևոր և մշակութային արժեքների ձևավորումը, որոնք հիմնված կլինեն պատմության դասերի և ավանդույթների վրա,
- քաղաքացիների ազատության և իրավունքների պաշտպանությունը, նրանց անվտանգությունը և բարձր կենսամակարդակի ապահովումը՝ ոչ թե որպես վերացական գաղափար, այլ որպես պետության պարտականություն,

- ազգային տնտեսության վերածննդի և զարգացման, հասարակական կայունության ամրապնդումը, հայրենական արտադրողի պաշտպանությունը,
- արտաքին տնտեսական կապերի վերականգնումը և փոխշահավետ համագործակցությունների ծավալների մեծացումը,
- արտաքին շուկաների, ռեսուրսների աղբյուրների վրա դուրս գալու հնարավորությունների ստեղծումը,
- տնտեսական հանցագործությունների վերացումը,
- կրթության, գիտության և մշակույթի զարգացումը՝ որպես Հայաստանի ապագա զարգացման հիմք,
- ՏԱ ապահովումը, որը պետք է ուղղված լինի գիտատար արտադրությունների, հայրենական տեխնոլոգիաների, հանքահումքային բազայի զարգացմանը,
- ազգային անվտանգության հուսալի համակարգի ստեղծումը, որը թույլ կտա հնարավորությունների սահմաններում առավելագույն չափով պաշտպանել Հայաստանի ազգային շահերը,
- զինված ուժերի այնպիսի մակարդակի ապահովումը, որը պետք է համապատասխանի ազգային շահերի իրական սպառնալիքներին և անհրաժեշտության դեպքում պետք է ընդունակ լինի պաշտպանել դրանք ռազմական միջոցներով:

Գծանկար 1.2-ում ներկայացված է ազգային անվտանգության համակարգի սխեմատիկ կառուցվածքը:


Ռազմական անվտանգություն: Ռազմական անվտանգությունը դեռևս մնում է ազգային անվտանգության ամենակարևոր բաղադրիչներից մեկը: Պահպանվում և առանձին դեպքերում ուժեղացել են ազգային, տարածքային, կրոնական և այլ հակասությունների հետևանքով զինված ընդհարումների, լուրջ պատերազմների վտանգները:

Ժամանակակից մեկնաբանությամբ ռազմական անվտանգությունն անձի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանությունն է ռազմական միջոցներով, եթե անհնար է այն ապահովել դիվանագիտական, քաղաքական և այլ խաղաղ միջոցներով:

Խաղաղ պայմաններում պետության ռազմական անվտանգության խնդիրը պետք է լուծվի երկրի պաշտպանական ներուժի բավարար մակարդակի ապահովման ուղիով՝ հաշվի առնելով հնարավոր սպառնալիքները, տնտեսական հնարավորությունները և համապատասխան ռեսուրսների առկայությունը:

Գծանկար 1.2

Ազգային անվտանգության համակարգի կառուցվածքը



Մոցիալ-քաղաքական անվտանգություն: Ազգային անվտանգության խնդիրն համակարգային մոտեցումը անձին՝ որպես ազգային անվտանգության սուբյեկտի և օբյեկտի, որակապես նոր դեր է հատկացնում: Ըստ որում, անձի անվտանգությունը չի դիտարկվում միայն որպես անձի ֆիզիկական անվտանգություն:

Անձի անվտանգությունը յուրաքանչյուր անձի իրավունքների և ազատության պաշտպանության ապահովումն է: Մարդկանց անձնական շահերի անտեսման փորձը ցույց է տալիս, որ այն հասարակության մեջ ծնում է սոցիալական լարվածություն և տարբեր ընդհարումային իրավիճակներ: Հետևաբար, յուրաքանչյուր անձի անվտանգությունը ենթադրում է ն՛ հասարակության, ն՛ պետության անվտանգություն:

Բնապահպանական անվտանգությունը հասարակության ապրելու և գործունեության այնպիսի վիճակ է, երբ չեն խախտվում բնապահպանական ռիսկի սահմանային չափերը (ասիմիլացիոն պոտենցիալը):

Պետք է նշել, որ անվտանգության մնացած բոլոր տեսակներից բնապահպանականը առավել գլոբալ բնույթ է կրում: Իհարկե, բնապահպանության հետ կապված որոշ խնդիրներ կարելի է և պետք է լուծել առանձին երկրի սահմաններում, սակայն բնապահպանական անվտանգության գլոբալ նպատակները հիմնականում կարող են լուծվել միայն ամբողջ մարդկության ուժերով:

Տեղեկատվական անվտանգությունը: Եթե դիտարկենք տնտեսական զարգացման գործընթացը դարերի ընթացքում, ապա կտեսնենք, որ պետության տնտեսական հզորությունը սկզբում կախված է եղել նրա բնական ռեսուրսների հարստություններից: Հետագայում պետության տնտեսական հզորությունը որոշող հիմնական գործոնն արդյունաբերության զարգացածության մակարդակն էր: Ներկայումս տնտեսական ներուժն ավելի մեծ չափով կախվածության մեջ է գտնվում երկրի տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացածությունից:

Եվ իրոք, պետական իշխանության մարմինների ճիշտ և ժամանակին տեղեկատվությամբ ապահովման ցածր մակարդակը դժվարացնում է ճիշտ և հիմնավոր որոշումների ընդունումը: Գործարարության ոլորտում տեղեկատվության թերզարգացածությունը խանգարում է արդյունավետ շուկայի կայացմանը և լուրջ վնասներ հասցնում տնտեսավարող սուբյեկտներին:

Տեղեկատվական անվտանգությունը վիճակ է, երբ պաշտպանված է հասարակության տեղեկատվական միջավայրը, որը

կապահովի հասարակության ձևավորումը քաղաքացիների և պետության շահերին համապատասխան:

Հասարակության տեղեկատվական միջավայրը տեղեկատվական ռեսուրսների համախմբություն է (տեղեկատվության ձևավորման, տարածման և օգտագործման համակարգ):

Անձի տեղեկատվական անվտանգությունը՝ անձի գիտակցության և հոգեբանության պաշտպանվածությունն է դրանց վրա վտանգավոր ազդեցություն ունեցող տեղեկատվությունից:

Տնտեսական անվտանգությունը ենթադրում է տնտեսական համակարգի անխափան գործունեություն, ռեսուրսների մատակարարման և կոմունիկացիայի հստակ գործառնություն, հավասարակշռություն շուկայի ազատականացման և տնտեսական խաղի կանոնների կանոնակարգման միջև, պետության դերի և նշանակության հստակեցում, տնտեսական դինամիզմի գերակայություն ազգային մշակույթում:

1990-ական թթ. հետո գլոբալ անվտանգության ապահովման նպատակով ավելի ու ավելի հաճախակի է դառնում միջազգային հանրության կողմից ճնշման ոչ ռազմական միջոցների կիրառումը, և այդ միջոցներից առավել կարևոր են տնտեսական լծակները: Նշվածը երբեմն անվանում են տնտեսական պետականակերտում: Տնտեսական հիմնական միջոցներ են առևտրային քաղաքականությունը, ֆինանսական և մակրոտնտեսական քաղաքականությունը:

Բարդությունն այն է, որ ներկայումս գլոբալացման ընթացքում նույնիսկ դժվար է դառնում խոսել ազգային տնտեսության մասին: Նույնիսկ մեծ երկրներն են խոցելի, իսկ փոքր երկրները՝ առավել ևս: Այդ է ապացուցում հետևյալ փաստը. 1990-ականների կեսերին հայտնի ֆինանսիստ և բարերար Ջորջ Սորոսի կողմից ֆինանսական էքսպանսիա իրականացվեց բրիտանական ֆունտ ստեռլինգի նկատմամբ՝ նպատակ հետապնդելով բորսայական խաղի ընթացքում խոշոր շահույթներ ձեռք բերել: Էքսպանսիայի արդյունքում ֆունտ ստեռլինգի, որը Եվրոպայի ամենակայուն դրամն է եղել դարեր շարունակ, դիրքերը թուլացան, և այն մեկուկես տարով դադարեց ակտիվ «խաղացող» հանդիսանալ Եվրոպա-

կան դրամական տարածքում¹:

Նախքան ՏՄ մյուս հիմնական տարրի՝ սպառնալիքի մասին խոսելը, կարևոր է դիտարկել «փոխկախվածություն» և «կախվածություն» հասկացությունները:

Փոխկախվածությունն առաջանում է երկրների միջև մշտապես կրկնվող փոխադարձ հարաբերությունների արդյունքում և կարող է բնութագրվել որպես փոփոխությունների և դրանց անցանկալի դրսևորումների դիմակայմանն ուղղված գործողությունների միջև բազմակողմանի կապ:

Կախվածությունն առաջանում է փոխկախվածության խախտման դեպքում:

Տնտեսական փոխկախվածությունը բարդ երևույթ է և ներառում է տնտեսական, քաղաքական ու սոցիալական կողմեր: Փոխկախվածությունը ՏՄ խնդրի հետազոտությունների հանգուցային հասկացությունն է:

Սպառնալիքը ՏՄ երկրորդ հիմնական տարրն է, ըստ որի՝ հասկացվում է կապիտալին, տեխնոլոգիաներին, հումքին, աշխատուժին, շուկաներին և մյուս կենսականորեն կարևոր գործոններին հասու լինելու սահմանափակումը:

Անհրաժեշտ է տարբերել սպառնալիքի երկու տեսակ՝ ուժի սպառնալիք և տնտեսական բարեկեցության սպառնալիք: Այս սպառնալիքներն ըստ ծագման կարող են լինել ներքին և արտաքին: Ներքին սպառնալիքներն առաջանում են պետության անարդյունավետ տնտեսական քաղաքականության արդյունքում: Արտաքին սպառնալիքները ձևավորվում են երկրի սահմաններից դուրս և չեն գտնվում իշխանությունների ուղղակի ազդեցության ոլորտներում:

ՏՄ սպառնալիքներին հակազդող մարտավարական միջոցներից է հարմարվողականությունը: Հարմարվողական միջոցառումներից հատուկ առանձնացնում են՝ առևտրային հարաբերությունների դիվերսիֆիկացիայի քաղաքականությունը, բազմակողմանի համագործակցության ամրապնդումը և խորացումը, միջազգային տնտեսական կառույցներին անդամակցությունը, սպառման

¹ Նշվ. աշխ., էջ 14:

որոշ մասի խնայողությունը և պաշարների ձևավորումը, շուկաներում ստեղծված իրավիճակների ճկուն օգտագործումը, ինչպես նաև արտահանմանն ուղղված արտադրությունների ձևավորումը և զարգացումը: Որոշ դեպքերում հարմարվողական միջոցառումների շարքում երկրները կիրառում են տնտեսական կամ ռազմական ճնշում:

ՀՀ ՏՄ խնդիրների բացահայտման գործում ՏՄ հիմնական տարրերը կոչված են օգնելու ցուցանիշների և չափանիշների համակարգի մշակման, ինչպես նաև դրանց սահմանային արժեքների որոշման կարևորագույն հարցում: Այնուհետև, ՏՄ ցուցանիշների սահմանային և փաստացի արժեքների համեմատության և համապատասխան վերլուծության միջոցով որոշվում են տնտեսության տարբեր հատվածներում խոցելիության և սպառնալիքի աստիճանները, դրանց միաժամանակ հանդես գալու հնարավորությունը և կանխարգելիչ միջոցառումները:

Գծանկար 1.2-ից երևում է, որ ազգային անվտանգության մակարդակը որոշող գործոնները բազմաթիվ են և բարդ: Բոլոր նշված գործոնները քաղաքական, տնտեսական, ռազմական և այլն, փոխկապված են, և դրանցից բխող խնդիրները համակարգային լուծման կարիք ունեն:

Որպես իրավական հիմք, որը թույլ կտա կառուցել ազգային անվտանգության համար արդյունավետ համակարգ, կարող է հանդիսանալ «Ազգային անվտանգության մասին» օրենքը: Այդ օրենքը կամրագրի ազգային անվտանգության համար գերակա շահերը մնացած շահերի նկատմամբ, կորոշի անձի, հասարակության և պետության անվտանգությունն ապահովելու իրավական հիմքերը, կկազմավորի պետության անվտանգության համակարգը և նրա գործառույթները:

Քանի որ ազգային անվտանգությունն ընդգրկում է խնդիրների լայն շրջանակ, որոնց լուծումը պետք է դրվի համապատասխան պետական կառույցների վրա, «Ազգային անվտանգության մասին» օրենքը նպատակահարմար է մշակել միասնական պետական քաղաքականության իրականացման շրջանակներում:

Նշվեց, որ ազգային անվտանգությունը, որը ներառում է

պաշտպանական, սոցիալական, բնապահպանական և այլ բնագավառներ, ավելի լայն հասկացություն է, քան ՏԱ-ն, սակայն այս բոլոր բնագավառներում հնարավոր չէ անտեսել զգալի կշիռ ունեցող տնտեսական դրույթները: Ավելին, ոչ միայն հնարավոր չէ անտեսել, այլև ազգի անվտանգ գոյության և գործունեության համար առանցքայինը՝ անվտանգ տնտեսության անհրաժեշտությունն է:

ՏԱ խնդիրն ավելի սրվեց, երբ հանրապետության տնտեսությունը մտավ անցումային շրջան, որին բնորոշ են հասարակության բևեռացումը, հանցագործությունների ծավալների մեծացումը և այլն, որոնք ազգային անվտանգության ներքին սպառնալիքներ են: Վտանգ ներկայացնող այս գործոնների հիմքում ընկած են տնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած հասարակության սոցիալական վիճակի կտրուկ անկումը և վատթարացումը: Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ ազգային անվտանգության համար սպառնալիք հանդիսացող գործոնների հիմքում հիմնականում ընկած են տնտեսական պատճառները:

1.2.1. Պարենային անվտանգությունը՝ որպես տնտեսական անվտանգության բաղադրիչ

Պարենային անվտանգությունն ընդունված հասկացություն է համաշխարհային պրակտիկայում, օգտագործվում է՝ բնութագրելու երկրի պարենային շուկայի վիճակը: Այն ունի սոցիալ-տնտեսական բնութագիր ու արտահայտվում է իր քաղաքացիներին հիմնական սննդամթերքով ապահովելու պետության ունակությամբ՝ ըստ սահմանված ու ընդունված նորմերի: Իսկ քաղաքատնտեսականը պետության հնարավորությունն է՝ հավաքելու, կենտրոնացնելու ներքին ռեսուրսները և ագրոկլիմայական պայմանները, որպեսզի կազմակերպվի բնակչության մատակարարումը պարենամթերքով՝ գերազանցապես ի հաշիվ սեփական արտադրության:

Առանց սեփական պարենամթերքի՝ ազգային անվտանգության մյուս բոլոր բաղկացուցիչներն էապես կորցնում են իրենց նշանակությունը: Ընդ որում, գյուղատնտեսական արտադրության կայուն և հաստատուն զարգացումը կազմում է պարենային ան-

վտանգության հիմքը¹:

«Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է ՀՀ պարենային անվտանգության ապահովման ոլորտի հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է այդ ոլորտի կարգավորման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները:

Պարենային անվտանգության ապահովման ոլորտի պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

ա) կենսապես կարևորագույն պարենային հումքի և սննդամթերքի (այսուհետև՝ սննդամթերք) տեղական արտադրության խթանումը,

բ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան սննդամթերքի որակական հատկանիշների ապահովումը,

գ) ՀՀ մակրոտնտեսական վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը և դրա հիման վրա բնակչության գնողունակության մակարդակի բարձրացումը,

դ) ՀՀ պետական պահուստում պարենային պաշարների կուտակումը և դրանց արդյունավետ օգտագործումը,

ե) պարենային շուկայի կարգավորմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

զ) նվազագույն պարենային զամբյուղի կառուցվածքում ընդգրկված սննդամթերքի տեղական արտադրության և ներմուծման հաշվեկշռի կազմումը և դրա վերաբերյալ տեղեկատվության հավաքման և վերլուծության ապահովումը:

Պարենային անվտանգության ապահովման մասին օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

- պետության պարենային անվտանգության ապահովում. պետության տնտեսության այնպիսի վիճակ, որն ապահովում է երկրի պարենային անկախությունը և երաշխավորում բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխան սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը,
- պարենային անվտանգության ապահովման երաշխիքներ.

¹ Նշված հիմնախնդրի մասին տե՛ս Ս.Գևորգյան, Ագրարային քաղաքականությունը անցումային շրջանում և ՀՀ պարենային անվտանգությունը, «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», N 6 (41), հունիս 2004, էջ 56-60:

տնտեսական, կազմակերպական և այլ բնույթի միջոցառումների մշակում և իրականացում, որոնք ուղղված են պարենային ճգնաժամի կանխատեսմանը և կանխարգելմանը, իսկ դրանց առաջացման դեպքում՝ հետևանքների վերացմանը,

- պարենային ճգնաժամ. իրավիճակ, երբ պետության ամբողջ տարածքում կամ դրա գերակշռող մասում բնակչության ապահովումը սննդամթերքով վտանգված է, և որի կանխման համար օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կառավարման լիազոր մարմինները կիրառում են հատուկ միջոցառումներ,
- սնվելու ֆիզիոլոգիական նորմեր. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմում ընդգրկված սննդամթերքի սպառման միջազգայնորեն ընդունված ֆիզիոլոգիական, առողջապահական և սոցիալական չափանիշներ,
- կենսապես կարևորագույն սննդամթերք. սնվելու ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան և կենսագործունեության նվազագույն մակարդակի ապահովման համար պարտադիր սպառվող սննդամթերք,
- պետության պարենային անկախություն. կենսապես կարևորագույն սննդամթերքների ներմուծման անհնարինության կամ անբավարարության դեպքում և պարենային ճգնաժամի կանխարգելման նպատակով սննդամթերքի տեղական արտադրության անհրաժեշտ մակարդակ՝ կենսապես կարևորագույն սննդամթերքի գծով տեղական արտադրության մակարդակ,
- սննդամթերքի ֆիզիկական մատչելիություն. բնակչության գնողունակ պահանջարկը բավարարող ծավալներով սննդամթերքի առաջարկի ապահովում,
- սննդամթերքի տնտեսական մատչելիություն. բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակ, որն ապահովում է բնակչության կողմից սննդամթերքի ձեռքբերման հնարավորություն՝ ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան,
- պետական պարենային պահուստ. ՀՀ պետական պահուստի բաղկացուցիչ, որը նախատեսված է օգտագործել պարենային ճգնաժամի կանխարգելման կամ դրա հետևանքների վերացման նպատակով:

Պարենային անվտանգության ապահովման ոլորտում ՀՀ տնտեսական քաղաքականության հիմքն է հանդիսանում միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ քաղաքացիների լիարժեք սնվելու և սովից զերծ լինելու իրավունքի ապահովումը:

Պարենային անվտանգության ապահովման ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության հիմնական խնդիրներն են՝

ա) սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովումը,

բ) բնակչության սպառման համար մատակարարվող սննդամթերքի անվտանգության ապահովումը,

գ) պետական պարենային պահուստի ստեղծումը, պահպանումը և համալրումը:

Սննդամթերքի որակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին և այլ պահանջներին:

Պարենային ճգնաժամի կամ դրա վտանգի դեպքում կառավարությունը սահմանում է պարենային անվտանգության ապահովման հատուկ ռեժիմներ, ընդհուպ՝ սննդամթերքի նորմավորված բաշխում:

Պետության պարենային անկախությունը համարվում է ապահովված, եթե կենսապես կարևորագույն սննդամթերքների տեղական արտադրության և պետական պարենային պահուստի ծավալներն ապահովում են պարենային ճգնաժամի կանխարգելումը: Պարենային անկախության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման համար պատասխանատվությունը կրում է կառավարությունը:

ՀՀ կառավարությունը պարենային անվտանգության ապահովման նպատակով իրականացնում է հետևյալ լիազորությունները.

ա) ապահովում է պարենային անվտանգության ապահովման ոլորտում միասնական պետական քաղաքականության իրագործումը,

բ) ապահովում է սննդամթերքի արտադրության խթանման և կարգավորման ոլորտում տարվող աշխատանքների համակարգումը,

գ) իր լիազորած մարմնի միջոցով մշակում և իրագործում է

պարենային անվտանգության ապահովման պետական նպատակային ծրագրեր,

դ) սահմանում է պետական պարենային պահուստի անվանացանկը, կուտակման ծավալները և ժամկետները,

ե) իրականացնում է պետական պարենային պահուստի կառավարումը, պատասխանատվություն է կրում դրա ստեղծման, պահպանման, նպատակային օգտագործման և համալրման համար,

զ) սահմանում է իր լիազորած պետական մարմինների նպատակները, խնդիրները և գործառույթները պարենային անվտանգության ապահովման ոլորտում,

է) իրականացնում է բնակչությանը կենսապես կարևորագույն սննդամթերքի մատակարարման վերաբերյալ տեղեկատվության հավաքում և վերլուծություն, ինչպես նաև պարենային անվտանգության ապահովման ոլորտում իրավիճակի կանխատեսում և պարենային ճգնաժամի կանխարգելման միջոցառումների իրականացում, իսկ վերջինիս առաջացման դեպքում՝ նաև հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներ,

ը) իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորություններ:

Պարենային անվտանգության ապահովման վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է՝

ա) պարենային անվտանգությունը բնութագրող սննդամթերքի տեսակների արտադրության ներմուծման, արտահանման և սպառման ցուցանիշները,

բ) սննդամթերքի արտադրության անհրաժեշտ և փաստացի մակարդակների պետական հաշվեկշիռը,

գ) սննդամթերքի շուկայի վիճակը և զարգացման միտումները,

դ) պետական նպատակային ծրագրերով նախատեսված պարենային անվտանգության միջոցառումները,

ե) պարենային անվտանգության ապահովման ոլորտում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտների նորմերի ու նորմատիվների կատարման մակարդակը:

Սննդամթերքի արտադրության անհրաժեշտ և փաստացի

մակարդակների հաշվեկշիռը պետության պարենային անվտանգության ապահովման մակարդակի կանխատեսման հաշվարկների համակարգի հիմքն է, ինչպես նաև կենսապես կարևորագույն սննդամթերքի տեղական արտադրության ծավալների գնահատման բազան:

Սննդամթերքի անհրաժեշտ և փաստացի մակարդակների յուրաքանչյուր տարվա հաշվեկշիռը կառավարությունը հաստատում է մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը:

Պարենային շուկայի պետական հսկողությունն իրականացնում է կառավարությունը՝ սննդամթերքի արտադրության անհրաժեշտ և փաստացի մակարդակների հաշվեկշռի հիման վրա:

Պարենային շուկայի պետական հսկողությունը ներառում է՝
ա) սննդամթերքի արտադրության, մատակարարման և ապրանքային պաշարների գնահատումը,

բ) պարենային անվտանգության ապահովման հատուկ ռեժիմների պայմաններում սննդամթերքի խոշոր խմբաքանակների շարժի հսկողությունը՝ արտադրությունից կամ ներմուծումից մինչև դրանց իրացումը,

գ) սննդամթերքի (այդ թվում՝ ներմուծված) որակի գնահատումը՝ էկոլոգիական և սանիտարահամաճարակաբանական պահանջներին համապատասխան,

դ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումների իրականացումը¹:

2005թ. հունվարի 25-ին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ ընդունվեց Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության քաղաքականությունը: Նշված փաստաթղթի կազմման տրամաբանության մեջ դրված է մակրոտնտեսական, ագրոարդյունաբերական համակարգի զարգացման, գործարարության աջակցման, սնուցման լիարժեքության և սննդամթերքի անվտանգության, սոցիալական, բնական պաշարների օգտագործման

¹ Տե՛ս «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002թ. մայիսի 7-ին (ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N19 (194), 19 հունիսի 2002, էջ 23-26):

ու կայուն ջրամատակարարման ապահովման քաղաքականությունների ներդաշնակ իրականացման անհրաժեշտությունը:

Պարենային ապահովության քաղաքականության հիմնական նպատակն է աշխատանքային, ֆինանսական, բնական, նյութատեխնիկական, կենսաբանական ռեսուրսների նպատակամետ ու արդյունավետ օգտագործման միջոցով ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ բնակչության բոլոր խմբերին առողջապահական նորմերին համապատասխանող պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովման համար:

Պարենային ապահովության քաղաքականության բնագավառում հիմնական խնդիրներն են.

- երկրի սոցիալ-տնտեսական համաչափ զարգացումը,
- ագրոարդյունաբերական համակարգի ներուժի արդյունավետ օգտագործումը, երկրի պարենային անկախության անհրաժեշտ մակարդակի ապահովումը,
- գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը, պարենամթերքի ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի պաշտպանությունը,
- սնուցման լիարժեքության ու սպառողների առողջության համար պարենամթերքի անվտանգության մակարդակի բարձրացումը,
- սոցիալական բևեռացման մեղմումը հասցեական օգնության ընդլայնման շնորհիվ և արդյունքում հասարակության խոցելի խմբերի կենսապայմանների բարելավումը,
- բնական պաշարների արդյունավետ օգտագործումը,
- հողաշինարարության, հողօգտագործման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև կայուն ջրամատակարարման և ջրահեռացման ապահովումը¹:

Երկրի պարենային անկախության անհրաժեշտ մակարդակի ապահովման համար (բավական է նշել, որ ներկայումս տեղական արտադրության հաշվին բավարարվում է պարենային պահանջի միայն 55%-ը) պահանջվում է լուծում տալ տեղական արտադրու-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության քաղաքականությունը» ընդունված ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 25-ի նիստում:

թյան պարենամթերքի ծավալների էական ավելացմանը, որի համար պահանջվելու է ֆինանսական, նյութատեխնիկական և այլ ռեսուրսների լրացուցիչ ներգրավում, ինչպես նաև մի շարք միջոցառումների իրագործում՝ ուղղված պարենամթերքի արտադրության բնագավառում բարենպաստ իրավատնտեսական դաշտի ձևավորմանը: ՀՀ 2001-2003թթ. ազգային պարենային հաշվեկշիռները բերված են *աղյուսակներ 1.1-1.3-ում*:

Նշենք, որ բերված պարենային հաշվեկշիռներում՝

- ցորենի ցուցանիշը ներառում է ցորենի, ինչպես նաև այլուրի, մակարոնեղենի, էթիլային սպիրտի և այլ հացամթերքի տվյալները՝ պայմանականորեն վերածած ցորենի,
- բանջարեղենի ցուցանիշը ներառում է թարմ, չորացված և պահածոյացված բանջարեղենի (կաղամբ՝ բոլոր տեսակի, վարունգ, լոլիկ, սեղանի ճակնդեղ, գլուխ սոխ, սխտոր և այլն) տվյալները,
- մրգի ցուցանիշը ներառում է թարմ, չորացված և պահածոյացված մրգի (հնդավորներ, կորիզավորներ, մերձարևադարձային, արևադարձային և այլն) տվյալները,
- հատիկաբնդեղենային մշակաբույսերի ցուցանիշը ներառում է լոբու, ոսպի և այլ լոբազգիների տվյալները,
- բուսական յուղի ցուցանիշը ներառում է սոյայի, գետնընկույզի, ձիթապտղի, արմավենու, արևածաղկի և այլ ձեթերի տվյալները,
- ձվի ցուցանիշը ներառում է կճեպով ձվի, ինչպես նաև ձվի փոշու տվյալները՝ պայմանականորեն վերածած ձվի,
- կաթի ցուցանիշը ներառում է թարմ կաթի, ինչպես նաև կաթի փոշու, մածունի, թթվասերի, կաթնաշոռի, պանրի և այլ կաթնամթերքի տվյալները՝ պայմանականորեն վերածած թարմ կաթի,
- տավարի, խոզի, ոչխարի և այծի, հավի մսի ցուցանիշները ներառում են սպանդային քաշով մսի, ինչպես նաև երշիկեղենի, պահածոյացված մսի և այլ մսամթերքի տվյալները՝ պայմանականորեն վերածած սպանդային քաշով մսի,
- խաղողի ցուցանիշը ներառում է խաղողի, ինչպես նաև չամիչի տվյալները՝ պայմանականորեն վերածած խաղողի:

Աղյուսակ 1.1

Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ, 2001թ.¹

հազ. տոննա

	Պահուստներ տարվա սկզբում	Արտադրություն	Ներմուծում	Ստորջնական արտադրվել	Մինդի օգտագործում	Անասնակեր	Կորյուստներ	Սերմացու	Արտահանում	Այլ օգտագործում	Պահուստներ տարվա վերջում	Օգտագործում	Ինքնաբավության աստիճան, %	Սպառումը մեկ շնչի հաշվով			
														կգ/տարի	գր/օր	կկալ/օր	
Ցորեն	55.0	242.0	329.0	626.0	456.0	73.0	10.0	33.0	0.0	0.0	54.0	626.0	42.4	151.9	416.2	1331.7	
Կարտոֆիլ	60.0	364.0	2.0	426.0	144.9	47.1	31.0	127.0	0.0	0.0	76.0	426.0	95.5	48.3	132.2	99.2	
Բանջարեղեն	19.8	510.8	6.4	537.0	457.8	10.7	23.7	0.8	21.8	0.0	22.2	537.0	103.1	152.5	417.8	125.8	
Միրգ (բացի խաղողից)	9.0	102.4	8.3	119.7	98.4	0.0	9.5	-	5.8	0.0	6.0	119.7	97.6	32.8	89.8	136.1	
Հատիկաբնդեղանային մշակաբույսեր	0.7	3.3	4.1	8.1	6.8	0.0	0.3	0.2	0.0	0.0	0.8	8.1	44.6	2.3	6.2	17.3	
Բուսական յուղ	1.0	0.3	13.1	14.4	13.1	-	0.2	-	0.0	0.0	1.1	14.4	2.2	4.4	12.0	78.9	
Շաքար	3.0	0.0	74.7	77.7	72.2	-	1.1	-	0.9	0.0	3.2	77.7	0.0	24.2	66.2	255.4	
Ձու	0.2	24.6	0.7	25.5	22.4	0.0	1.3	0.8	0.7	0.0	0.3	25.5	100.0	7.5	20.4	20.8	
Կաթ (բացի կարագից)	31.6	465.3	7.6	504.5	391.6	46.5	20.2	-	0.3	0.0	45.9	504.5	98.5	103.4	357.4	142.9	
Տավարի միս	0.7	29.4	8.2	38.3	37.0	0.0	0.5	-	0.0	0.0	0.8	38.3	78.2	12.3	33.8	60.8	
Խոզի միս	0.2	8.5	3.7	12.4	12.1	0.0	0.1	-	0.0	0.0	0.2	12.4	69.4	4.0	11.1	23.2	
Ոչխար և այծ	0.1	6.8	0.0	6.9	6.7	0.0	0.1	-	0.0	0.0	0.1	6.9	100.0	2.2	6.1	9.8	
Հավի միս	0.4	3.6	13.8	17.8	17.3	0.0	0.1	-	0.0	0.0	0.4	17.8	20.7	5.8	15.8	16.9	
Խաղող	7.3	116.5	3.9	127.7	118.9	0.0	5.7	-	0.9	0.0	2.2	127.7	97.5	3.6	9.9	6.6	
Ընդամենը																	2315.4

¹ Պարենային ապահովություն և աղքատություն. 2004 թվականի հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, 2005, էջ 34:

Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ, 2002թ.¹

հազ. տոննա

	Պահուստներ տարվա սկզբում	Արտադրություն	Ներմուծում	Սմբողջական առաջարկ	Սննդի օգտագործում	Անասնակեր	Կորուստներ	Մերմացու	Արտահանում	Այլ օգտագործում	Պահուստներ տարվա վերջում	Օգտագործում	Ինքնարավորության աստիճան, %	Սպառումը մեկ շնչի հաշվով		
														կգ/տարի	գր/օր	կկալ/օր
Ցորեն	54.0	284.7	347.7	686.4	453.9	80.4	10.3	36.0	2.1	0.0	103.7	686.4	45.2	151.2	414.2	1325.6
Կարտոֆիլ	76.0	374.3	1.9	452.2	135.0	50.3	34.0	121.9	0.0	0.0	111.0	452.2	99.5	45.0	123.2	92.4
Բանջարեղեն	21.9	555.7	7.1	584.7	476.8	11.3	25.1	0.7	22.5	0.0	48.3	584.7	102.8	158.8	435.1	130.5
Միրգ (բացի խաղողից)	6.0	82.6	9.4	98.0	79.9	0.0	8.7	-	4.7	0.0	5.6	98.0	94.6	26.6	72.9	109.4
Հատիկաբնդեղանային մշակաբույսեր	0.8	3.5	4.0	8.3	6.9	0.0	0.4	0.2	0.0	0.0	0.8	8.3	46.7	2.3	6.6	18.2
Բուսական յուղ	1.1	1.2	12.4	14.7	13.4	-	0.2	-	0.0	0.0	1.1	14.7	8.8	4.5	12.2	80.7
Շաքար	3.2	0.0	69.9	73.1	68.4	-	1.1	-	0.6	0.0	3.0	73.1	0.0	22.8	62.4	141.0
Ձու	0.3	26.3	0.1	26.7	23.3	0.0	1.4	0.9	0.8	0.0	0.3	26.7	102.7	7.7	21.3	11.3
Կաթ (բացի կարագից)	45.9	489.5	10.6	546.0	434.4	49.0	21.8	-	0.8	0.0	40.0	546.0	98.0	144.7	396.4	158.6
Տավարի միս	0.8	29.6	8.8	39.2	37.8	0.0	0.5	-	0.1	0.0	0.8	39.2	77.3	12.6	34.5	62.1
Խոզի միս	0.2	10.3	3.8	14.3	13.8	0.0	0.2	-	0.0	0.0	0.3	14.3	63.1	4.6	12.6	26.4
Ոչխար և այծ	0.1	5.9	0.0	6.0	5.8	0.0	0.1	-	0.0	0.0	0.1	6.0	100.0	1.9	5.3	8.5
Հավի միս	0.4	4.4	12.8	17.6	17.1	0.0	0.1	-	0.0	0.0	0.4	17.6	25.6	5.7	15.6	16.7
Խաղող	2.2	104.0	3.6	109.8	101.5	0.0	5.0	-	0.6	0.0	2.7	109.8	97.2	2.3	6.3	4.2
Ընդամենը																2285.6

¹ Նույն տեղում, էջ 35:

Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ, 2003թ.¹

հազ. տոննա

	Պահուստներ տարվա սկզբում	Արտադրություն	Ներմուծում	Ամբողջական առաջարկ	Մինտի օգտագործում	Անասակեր	Կորուստներ	Մերմացու	Արտահանում	Այլ օգտագործում	Պահուստներ տարվա վերջում	Օգտագործում	Բնօրգտությունն աստիճան, %	Սպառումը մեկ շնչի հաշվով		
														կգ/տարի	գր/օր	կկալ/օր
Ցորեն	103.7	216.7	316.3	636.7	469.9	80.8	9.6	38.2	0.3	0.0	37.9	636.7	40.7	156.5	428.8	1372.3
Կարտոֆիլ	111.0	507.5	2.9	621.4	144.5	98.0	47.3	129.2	0.0	0.0	202.4	621.4	99.4	48.1	131.9	98.9
Բանջարեղեն	48.3	684.8	11.9	745.0	654.9	13.3	29.7	0.8	28.7	0.0	17.6	745.0	102.5	218.1	597.7	179.3
Միրգ (բացի խաղողից)	5.6	103.1	14.0	122.7	100.5	0.0	9.4	-	7.4	0.0	5.4	122.7	94.0	33.4	91.7	134.0
Հատիկաղնդեղային մշակաբույսեր	0.8	4.7	3.1	8.6	7.1	0.0	0.4	0.2	0.0	0.0	0.9	8.6	60.2	2.3	6.4	11.2
Բուսական յուղ	1.1	2.1	18.6	21.8	19.4	-	0.3	-	0.4	0.0	1.7	21.8	10.3	6.5	17.7	116.8
Շաքար	3.0	0.0	91.6	94.6	88.5	-	1.4	-	1.6	0.0	3.8	94.6	0.0	29.5	80.8	311.8
Ձու	0.3	27.6	0.1	28.0	24.2	0.0	1.4	0.9	1.2	0.0	0.3	28.0	104.2	8.1	22.1	11.7
Կաթ (բացի կարագից)	40.0	513.7	16.7	570.4	453.6	51.4	22.8	-	8.5	0.0	34.1	570.4	98.4	151.1	414.0	165.6
Տավարի միս	0.8	29.9	10.4	41.1	39.2	0.0	0.5	-	0.7	0.0	0.7	41.1	75.5	13.1	35.8	64.4
Խոզի միս	0.3	11.5	6.2	18.0	17.4	0.0	0.2	-	0.1	0.0	0.3	18.0	65.3	5.8	16.0	33.4
Ոչխար և այծ	0.1	6.2	0.0	6.3	6.1	0.0	0.1	-	0.0	0.0	0.1	6.3	100.0	2.0	5.6	8.9
Հավի միս	0.4	5.0	13.0	18.4	17.9	0.0	0.1	-	0.1	0.0	0.3	18.4	27.9	6.0	16.3	17.5
Խաղող	4.7	81.6	4.8	91.1	83.0	0.0	4.1	-	1.0	0.0	3.0	91.1	95.5	2.5	6.8	4.6
Ընդամենը																2530.4

¹ Նույն տեղում, էջ 36:

Ցանկացած երկրի պարենի ֆիզիկական առկայությունը նախ բնութագրվում է գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ:


2004թ. հանրապետությունում արձանագրվել է գյուղատնտեսական մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունների աճ (2003թ. համեմատ ավելացել են 8.2 հազ. հեկտարով և կազմել 322.8 հազ. հեկտար): Մասնավորապես, հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի ցանքատարածությունները աճել են 2-8%-ով՝ կազմելով 206.4 հազ. հեկտար (այդ թվում ցորենինը՝ 0.6%-ով և 128.7 հազ. հեկտար), կարտոֆիլինը՝ 10.5%-ով և 35.7 հազ. հեկտար, պտղինը՝ և հատապտղինը՝ 35.0%-ով և 34.7 հազ. հեկտար, իսկ խաղողինը՝ 14.6%-ով և 14.9 հազ. հեկտար: Փոխարենը նվազել են բանջարանոցային և բոստանային մշակաբույսերի ցանքային տարածությունները, համապատասխանաբար 3.5% և 2.4%-ով՝ կազմելով 22.3 և 4.0 հազ. հեկտար:

2004թ. աննախադեպ բերքառատ է եղել, և գրանցվել է հիմնական մշակաբույսերի համախառն բերքի նկատելի աճ՝ բացառությամբ բոստանային մշակաբույսերի (2003թ. համեմատ նվազել է 2.3 հազ. տոննայով): Այսպես, հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի համախառն բերքն ավելացել է 146.2 հազ. տոննայով (այդ թվում ցորենինը՝ 74.2 հազ. տոննայով), կարտոֆիլինը՝ 68.9 հազ. տոննայով, բանջարեղենինը՝ 31.3, պտղինը և հատապտղինը՝ 10.5, խաղողինը՝ 67.3 հազ. տոննայով (*զժանկար 1.3*):

Վերը նշված մշակաբույսերի արտադրության ծավալների աճը (բացառությամբ բոստանային մշակաբույսերի և պտղի ու հատապտղի) զուգորդվել է նաև բերքատվության ցուցանիշի ավելացմամբ: 2004թ. նախորդ տարվա համեմատ 6.3 գ/հեկտարով ավելացել է հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի, 4.3 գ/հեկտարով՝ կարտոֆիլի, 23.7 գ/հեկտարով՝ բանջարանոցային մշակաբույսերի, 28.3 գ/հեկտարով՝ խաղողի բերքատվության ցուցանիշը:

2004թ. նախորդ տարվա համեմատ ավելացել են նաև կենդանական ծագման գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները: Այսպես, 2004թ. իրացվել է 94.6 հազ. տոննա կենդանի քաշով միս, ինչը 2.8%-ով ավելի է 2003թ. նույն ցուցանիշից: Կաթի արտադրության ծավալներն ավելացել են 8.1%-ով և կազմել 555.2 հազ. տոննա, ձվի արտադրության ծավալները՝ 12.1%-ով և կազմել 563.0 մլն հատ:

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի արտադրությունը, հազ. տոննա



Պարենի ֆիզիկական առկայությունը կախված է նաև պարենամթերքի արտահանման ու ներմուծման ծավալներից:

Ըստ բեռնամաքսային հայտարարագրերի և քաղաքացիների կողմից կազմակերպված առևտրի տվյալների, 2004թ. հանրապետություն ներմուծված ապրանքների 20.6%-ը բաժին է ընկել պարենամթերքին (2003թ.՝ 17.5%), իսկ արտահանման ծավալներում՝ 11.6% (2003թ.՝ 11.8%): Ուշագրավ է, որ 2004թ. պարենամթերքի արտաքին առևտրաշրջանառության ծավալն ընթացիկ գներով նախորդ տարվա համեմատ ավելացել է 9.2%-ով և կազմել է \$361.4 մլն, այդ թվում պարենամթերքի ներմուծումը՝ \$278.2 մլն և արտահանումը՝ \$83.2 մլն:

Ընդ որում, ավելացել են գրեթե բոլոր հիմնական պարենային ապրանքատեսակների ներմուծման ծավալները, բացառությամբ բրնձի, շաքարի, բուսական յուղի և թռչնի մսի: Այսպես, բրնձի ներմուծման ծավալը նվազել է 14.2%-ով՝ կազմելով 13.5 հազ. տոննա, շաքարինը՝ 13.9%-ով և 74.9 հազ. տոննա, թռչնի մսինը՝ 12.8%-ով՝ կազմելով 10.8 հազ. տոննա, բուսական յուղինը՝ 32.3%-ով և 12.4 հազ. տոննա, բանջարեղենինը՝ 45.7 %-ով և 6.0 հազ. տոննա: Ներ-

մուծված ցորենի ծավալներն ավելացել են 26.5%-ով և կազմել 384.6 հազ. տոննա, այլուրիներ՝ մոտ 2.3 անգամ և կազմել 14.4 հազ. տոննա, մակարոնեղեններ՝ 33.7%-ով և կազմել 13.5 հազ. տոննա, խոզի մսինը՝ մոտ 2.2 անգամ և կազմել 2.1 հազ. տոննա, տավարի մսինը՝ 12.5%-ով և կազմել 10.9 հազ. տոննա, կաթինը՝ 3.9%-ով և կազմել 3.7 հազ. տոննա, կարագինը՝ 40.2 %-ով և կազմել 5.1 հազ. տոննա, պանրինը՝ 94.2%-ով և կազմել 0.5 հազ. տոննա, մրգերը՝ 11.1%-ով և կազմել 13.9 հազ. տոննա և այլն (տե՛ս *աղյուսակ 1.4*):

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2004թ. պարենամթերքի արտահանման ծավալներում գերակշռում են կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր ապրանքային ենթախմբում ընդգրկված ակոնոլային խմիչքները: Առանց քաղաքացիների կողմից իրականացվող առևտրի 2004թ. արտահանվել է 12.9 հազ. տոննա կոնյակ, ինչը 10.7%-ով պակաս է, քան նախորդ տարվա ցուցանիշը: 2004թ. նախորդ տարվա համեմատ 11.6%-ով ավելացել են բնական, հանքային ջրերի, 42.5%՝ մրգի, այդ թվում՝ 74.6%-ով խաղողի արտահանման ծավալները: 2004թ. նախորդ տարվա համեմատ արտահանվել է մոտ 1.3 անգամ ավելի ձու և 2.8 %-ով ավելի գինի: Սկսած 2003թ. բավականին ավելացել է պանրի արտահանման ծավալը: 2004թ. այն կազմել է 1.0 հազ. տոննա (տե՛ս *աղյուսակ 1.5*):

Որոշակի նշանակություն ունի նաև մարդասիրական օգնությունը, որի կազմում զգալի բաժին է կազմում բուսական ծագման արտադրանքը (տե՛ս *աղյուսակ 1.6*):

Մյուս կարևոր ուղղությունը պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովումն է: ՀՀ գործող օրենսդրությամբ ֆիզիկական մատչելիությունը սահմանվում է որպես սպառման վայրում պարենամթերքի գնողունակ պահանջարկը բավարարող առաջարկի համապատասխան մակարդակ: Իսկ տնտեսական մատչելիությունը բնակչության գնողունակ պահանջարկի այն մակարդակն է, որն ապահովում է բնակչության համար պարենամթերքի ձեռքբերման հնարավորություն՝ ֆիզիոլոգիական նորմերին համապատասխանող քանակությամբ: Պարենամթերքի առևտրային հաշվեկշիռը ներկայիս դրությամբ խիստ բացասական է, որը բացասաբար է անդրադառնում ոչ միայն երկրի մակրոտնտեսական ցուցանիշների վրա, այլ նաև վատթարացնում է երկրի գյուղական բնակչության վիճակը:

ՀՀ պարենամթերքի ներմուծումը ¹

տոննա

	2000	2001	2002	2003	2004				2004
					I եռամ- սյակ	II եռամ- սյակ	III եռամ- սյակ	IV եռամ- սյակ	
Ցորեն	375220.8	295877.6	326784.8	303946.8	104785.2	48139.4	92910.0	138773.3	384607.9
Այլուր	36156.8	24663.6	14180.9	6096.7	919.5	7165.9	420.3	5908.2	14413.9
Բրինձ	11843.3	11078	14310.6	15685.7	2085.6	3115.3	4939.7	3316.0	13456.6
Մակարոնեղեն	7789.3	1494.8	1255.3	2021.6	712.7	705.8	643.3	640.7	2702.5
Շաքար	69422.6	73485.8	68400.2	86963.1	19652.6	15717.0	22111.2	17393.2	74874
Բուսական յուղ	11648.5	13050.2	12152.8	18309.3	2861.0	2572.7	3214.7	3750.4	12398.8
Ձու	1899.2	529	88.8	8.6	0.2	0.5	0.1	43.8	44.6
Թռչնի միս	13893.5	13043.4	11897.8	12377.9	1719.8	2307.9	4191.9	2577.4	10797.0
Տավարի միս	6560.3	7319.4	7789.5	9658.4	3439.1	1967.3	2357	3099.8	10863.2
Խոզի միս	844.3	596.8	705.4	694.5	255.4	674.5	566.9	638.1	2134.9
Կաթ (բոլոր տեսակները)	1886.1	1467.3	2077.9	3575.9	306.0	952.0	1506.2	947.5	3711.9
Կարագ	3778.5	3829.8	3303.4	3644.6	1070.9	197606	1535.7	526.2	5109.4
Պանիր	190.6	158.6	180.2	253.5	48.1	146.4	174.8	123.4	429.7
Բանջարեղեն	3976.2	7511.4	7121.1	8669.1	1981.0	2683.9	568.4	785.7	6019.0
որից կարտոֆիլ	390.0	2289.6	1927.0	2858.7	162.5	1390.8	-	-	1553.3
Միրգ (ներառյալ ընկուզապտուղներ)	7520.1	8436.6	9193.7	12584.5	2792.9	1965.8	1198.9	7970.6	13928.2
որից խաղող	851.1	1023.9	930.1	1256.2	14.0	35.0	154.5	564.1	767.6
բոստանային մշակաբույսեր	221	171.3	225.7	267.2	-	16.1	10.0	-	26.1

¹ Նույն տեղում, էջ 33:

Աղյուսակ 1.5

ՀՀ պարենամթերքի արտահանումը¹

	2000	2001	2002	2003	2004				տոննա
					I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	2004
Կոնյակ*	4072.5	7367.2	10024.0	12118	2377.4	2550.6	3039.6	2858.0	10825.6
Գինի	487	1581.4	605.6	362.3	118.5	95.6	46.5	111.9	372.5
Հանքային ջուր	917.3	2124.3	2339.5	3816.1	1176.6	1512.6	824.8	744.2	4258.2
Միրգ (ներառյալ ընկուզապտուղները)	5005.3	981.9	3307.9	3978.0	65.0	246.8	1707.4	279.8	2299
որից խաղող	1288	873.8	560.9	1003.7	-	-	57.3	197.5	254.8
Պանիր	0.1	41.1	96.2	1002.6	147.0	267.9	395.8	195	1005.7
Ձու	155.1	711.6	781.4	1196.9	537.5	1000.6	755.7	409.4	2703.2

* Մինչև 2004թ. տվյալները ներկայացված են առանց քաղաքացիների կողմից իրականացվող առևտրի:

Աղյուսակ 1.6

ՀՀ մարդասիրական օգնությունը²

	2000	2001	2002	2003	2004				տոննա
					I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	2004
Կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	837	36.7	14.3	98.7	0.0	0.9	9.0	0.7	10.6
Բուսական ծագման արտադրանք	66196	43327.6	2379.8	443.3	16.6	41.2	332.4	5002.5	5392.7
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	2019	181.7	2.4	1.5	3.1	0.0	0.0	1.7	4.8
Պատրաստի սննդի արտադրանք	1409	526.9	56.2	166.0	23.5	43.8	29.3	39.9	136.5

ՀՀ-ում սննդամթերքի վրա կատարված ծախսերը տնային տնտեսության մեկ անդամի հաշվով, ըստ մարզերի, քվանտիլային խմբերի, բնակավայրի տեսակի և խոցելի խմբերի, ինչպես նաև ընթացիկ ծախսերի մեջ սննդամթերքի (առանց ակոհոլային խմիչքների) վրա կատարված ծախսերի մասնաբաժինը բերված են հավելվածներ 1 և 2-ում:

Պարենամթերքի արտաքին ապրանքաշրջանառության մակարդակը չի կարելի համարել բավարար: Ներկայումս ներմուծ-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

վում են մի շարք պարենային ապրանքներ, որոնց պահանջարկը նախկինում բավարարվում էր տեղական արտադրության հաշվին և, մյուս կողմից, զգալիորեն կրճատվել են մի շարք գյուղմթերքների (թարմ վիճակով) և սննդամթերքի արտահանման ծավալները (տե՛ս աղյուսակ 1.7):

Աղյուսակ 1.7

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը և պարենամթերքի արտահանումն ու ներմուծումը 2000-2004թթ., \$ մլն¹

Ցուցանիշները	2000	2001	2002	2003	2004				2004
					I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
Արտաքին առևտուր									
Ապրանքների արտահանում (ՖՕԲ գներով)	300.5	341.8	505.2	685.6	151.9	188.1	171.1	203.9	715.0
որից՝ պարենամթերք	29.3	49.3	71.3	81.2	17.8	19.8	22.1	23.5	83.2
բաժինը արտահանման մեջ, %	9.8	14.4	14.1	11.8	11.7	10.5	12.9	11.5	11.6
Ապրանքների ներմուծում (ՄԻՖ գներով)	-884.7	-877.4	-987.2	-1279.5	-281.2	-343.9	-340.4	-385.5	-1351.0
որից՝ պարենամթերք	-191.7	-173.9	-175.2	-223.8	-59.3	-63.8	-69.2	-85.9	-278.2
բաժինը ներմուծման մեջ, %	21.7	19.8	17.7	17.5	21.1	18.6	20.3	22.3	20.6
Ապրանքների ներմուծում (ՖՕԲ գներով)	-759.5	-735.9	-863.6	-1115.9	-244.6	-298.8	-303.2	-386.6	-1232.6
Արտաքին առևտրի հաշվեկշիռ									
ըստ ներմուծման ՄԻՖ գների	-584.2	-535.6	-482.0	-593.9	-129.4	-155.8	-169.3	-181.5	-636.0
ըստ ներմուծման ՖՕԲ գների	-459.0	-412.1	-358.4	-430.3	-92.7	-110.7	-132.1	-182.1	-517.6
Պարենամթերքի արտաքին առևտրի հաշվեկշիռ	-162.4	-124.6	-103.9	-142.6	-41.5	-44.0	-47.1	-62.4	-195.0

¹ Աղյուսակը կազմված է «Պարենային ապահովություն և աղքատություն. 2004թ. հունվար-դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ, 2005, էջ 7-8-ի տվյալների հիման վրա:

Երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացման, պարենամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիության բարձրացման նպատակով իրագործվող քաղաքականությունն անհրաժեշտ է նպատակաուղղել.

- ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի պաշտպանությանը,
- պարենամթերքի առևտրաշրջանառության հաշվեկշռի բարելավմանը,
- հասարակության խոցելի խմբերին պետական աջակցության ընդլայնմանը,
- տեղական պարենամթերքի արտադրության խթանմանը,
- ներմուծվող պարենամթերքի սակագնային կարգավորման կատարելագործմանը,
- ագրարային ոլորտի ներուժի իրատեսական գնահատմանն ու արդյունավետ օգտագործմանը,
- ԱՀԿ-ին անդամակցության շրջանակներում վարվող հարկաբյուջետային քաղաքականության հստակեցմանը,
- արտադրողից դեպի սպառողը պարենամթերքի ապրանքային ազատ շարժին նպաստող կառույցների ձևավորմանը,
- ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը:

Բնակչության պարենային ապահովությանը և երկրի պարենային անվտանգությանն առնչվող քաղաքականության ուղղություններն ըստ ոլորտների կանխորոշվել են՝ ելնելով իրավիճակի համապարփակ ուսումնասիրությունից, խոչընդոտող գործոնների բացահայտման և զարգացման հեռանկարային գնահատման արդյունքներից:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 14-ի N682-Ն որոշմամբ հաստատված ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությամբ սահմանված պարենամթերքի կանխատեսումային ծավալները՝ հաշվարկվել են ՀՀ պարենային հաշվեկշիռները 2010 և 2015թթ. համար (արդյունքները ներկայացված են *հավելված 3-ում*): Պարենային հաշվեկշիռների հիման վրա կատարված հաշվարկների արդյունքներով, նշված տարեթվերին

պարենամթերքի ինքնաբավության ընդհանուր մակարդակը (հաշվարկվում է Արտադրություն / [Արտադրություն + Ներմուծում – Արտահանում], արտահայտված տոկոսներով, բանաձևով) համապատասխանաբար կկազմի 65,0 և 72,1%: Այսպիսով, պարենային անկախության տեսակետից իրատեսական է ինքնաբավության բարձր մակարդակի ապահովումը, որը հնարավորություն է ընձեռում ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ կանխարգելելու արտակարգ իրավիճակներում պարենային ճգնաժամերը:

Ակնկալվում է նաև, որ քաղաքականության նշված ուղղությունները կարող են հիմք հանդիսանալ ՀՀ-ում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի՝ սահմանված կարգով 2005թ. նախատեսվող ճշգրտման ժամանակ, ինչպես մեթոդաբանական, այնպես էլ ճյուղային (ոլորտային) զարգացման գերակայությունների սահմանման, ուստի՝ մակրոտնտեսական կանխատեսումների ճշգրտման առումով:

1.3. Տնտեսական անվտանգության հայեցակարգային հիմնադրույթները, բնորոշումը և կառուցվածքը

Ներկայումս արտասահմանյան բազմաթիվ երկրներում ակտիվ ուսումնասիրություններ են կատարվում ՏԱ ինչպես տեսական-մեթոդաբանական, այնպես էլ գործնական հարցերի շուրջ: Նշված հիմնախնդրի հետազոտումը լայն տարածում գտավ նաև հետխորհրդային երկրներում:

Հայ տնտեսագիտական գրականության մեջ, հատկապես վերջին տարիներին, տեսական և ծրագրային հիմնախնդիրների բազմակողմ հետազոտության ասպարեզում, կապված տնտեսության անցումային շրջանի և տնտեսական անվտանգության առանձին հարցերի հետ, որոշակի ավանդ ունեն Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի անդամները, ինչպես նաև մի շարք երիտասարդ հեղինակներ¹: Նրանց կողմից հրապարակված աշխատություններում գիտական բավարար մակարդակով հետազոտվել են ՏԱ կարևորագույն կողմերը (դրանք, հիմնականում, թեկ-

¹ Տե՛ս գրականության ցանկը:

նաժուական ատենախոսություններ և հրապարակված առանձին հոդվածներ են): Մակայն ՏԱ բազմաշերտ և բազմեզր հիմնախնդիրը դեռևս համակարգված ձևով ուսումնասիրված չէ, մշակված չէ ՏԱ հայեցակարգը, որի հիմնական նպատակները պետք է դառնան՝

- երկրի ՏԱ մեխանիզմի տեսական-մեթոդաբանական կողմերի հետազոտությունն ու այդ ոլորտում գոյություն ունեցող փորձի ուսումնասիրությունը,
- հետազոտության արդյունքների հիման վրա եզրակացությունների, առաջարկությունների ձևավորումը և Հայաստանի տնտեսության բարեփոխումների այնպիսի ընթացքի երաշխավորումը, որը կապահովի նրա տնտեսական անխափան առաջընթացը,
- ՏԱ տեսական-մեթոդաբանական տեսանկյունների դիտարկումը,
- տնտեսական աճի և երկրի ՏԱ կայուն զարգացման դերի բացահայտումը,
- Հայաստանի ֆինանսական անվտանգության վերլուծությունը՝ հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից, որպես ՏԱ ռազմավարության հիմք,
- Հայաստանի ՏԱ գնահատման, մյուս երկրների հետ համեմատության բազմասպեկտ հիմնախնդրի լուծման վերաբերյալ համապատասխան եզրակացությունների և հանձնարարությունների, երաշխավորությունների մշակումը և գործնական առաջարկությունների առաջադրումը:

ՏԱ գոյություն ունեցող բնորոշումներին՝ տնտեսական անկախություն, կայուն տնտեսական զարգացում, անհրաժեշտ է ավելացնել այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են տնտեսության սոցիալական կողմնորոշվածությունը և նրա առաջատար ոլորտների համաշխարհային շուկայում մրցունակության բարձրացումը:

Սոցիալական կողմնորոշում ունեցող պետության տնտեսական քաղաքականությունն, ընդգրկուն լինելով հանդերձ, ունի մի առանցքային կողմնորոշիչ, որը վերաբերում է արդար հասարակարգի կազմավորմանը: Մարդկային հասարակության անցած

պատմությունը վկայում է, որ դասակարգային պայքարի և հակասությունների առանցքը, կենսագործունեության դրսևորումների առումով, վերջ ի վերջո, արդարության հաստատումն է: Արդար հասարակության չափանիշներ կարող են լինել՝ ա) եկամուտների բաշխման այնպիսի սկզբունքների կիրառումը, որոնք հնարավորություն կտան նվազագույնի հասցնել առավել հարուստների և առավել աղքատների եկամուտների միջև տարբերությունը, բ) սեփականության արդար բաշխումը սոցիալական տարբեր խմբերի միջև, գ) կրթություն ստանալու հնարավորությունները, դ) բնական ընտրության սկզբունքի կիրառումը գործունեության բոլոր ասպարեզներում, ե) անհատի ազատության կամ կամքի ազատ դրսևորման մակարդակը, զ) օրենքի գերակայությունը և այլն:

SU-ն՝ որպես երկրի կայուն զարգացման պայման և ազգային անվտանգության կարևոր գրավական, ենթադրում է տնտեսության պաշտպանությունն այնպիսի արտաքին և ներքին գործունեներից, սպառնալիքներից կամ ռիսկերից, որոնք խախտում են տնտեսության բնականոն գործունեությունը, սպառնալիք են ստեղծում երկրի ռեսուրսների և գիտատեխնոլոգիական ներուժի, զարգացման տնտեսության սոցիալական կողմնորոշվածության համար, թուլացնում են տնտեսական աճը և խոչընդոտում պետության նյութական ամրապնդմանը: Մեր կարծիքով, SU՝ որպես տնտեսական անկախության, կայունության և տնտեսության հաստատուն զարգացման հետ կապված կարևոր բաղադրատարր, հանդես է գալիս տնտեսության սոցիալական կողմնորոշվածությունը և համաշխարհային շուկայում ազգային տնտեսության առաջատար ոլորտների մրցունակության ապահովումը:

SU ռազմավարությունը, որպես կայուն և մշտապես զարգացող տնտեսությամբ պետության տնտեսական քաղաքականության հիմք, ռազմավարություն է, որը նախատեսում է երկրի մշակութային, պատմական ինքնուրույնության, ավանդույթների և սովորույթների, ինչպես նաև երկրի տնտեսական ամբողջականության և տնտեսական անկախության պահպանում, անձի ներդաշնակ զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծում: Դրա հիմնական ուղղություններն են. տնտեսության զարգացմանն ուղղ-

ված կառուցվածքային քաղաքականության իրականացումը, տնտեսության գերակա ճյուղերի առանձնացումը և պետության կողմից դրանց հովանավորումը, ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրումը և տեխնոլոգիական անվտանգության ապահովումը, մտավոր սեփականության պահպանումը, ազգային արժույթի կայունության ապահովումը: Դրանցից յուրաքանչյուրն արտահայտվում է ավելի նեղ իմաստով՝ ՏԱ արտակարգ իրավիճակի, տնտեսական աճի բարձր և ցածր տեմպերի, ներտնտեսական հարաբերությունների կտրուկ սահմանափակման պայմաններում և այլն:

ՏԱ վրա ներգործում են այնպիսի ներքին և արտաքին գործոններ, ինչպիսիք են երկրի բնական ռեսուրսներով ապահովված լինելու մակարդակը, կառուցվածքային, գիտատեխնոլոգիական, ֆինանսավարկային, կազմակերպչական-կառավարչական գործոնները, աշխատանքային ռեսուրսների օգտագործման մակարդակը, արտասահմանյան ներդրումների ներգրավվածությունը, արտաքին տնտեսական գործընթացների կառավարումը և այլն:

ՏԱ գնահատումն իրականացվում է չափանիշների և ցուցանիշների միջոցով: Չափանիշները կապված են տնտեսության իրավիճակի գնահատման հետ, որը ենթադրում է տնտեսական սպառնալիքների հայտնաբերում և դրանց մակարդակի գնահատում:

ՏԱ չափանիշների սահմանման նպատակն է, որպեսզի թույլ չտրվի այս կամ այն ցուցանիշի մոտենալը տնտեսական սպառնալիքի սահմանային թույլատրելի մեծությանը, կորուստները և ռիսկերը հասցնելով նվազագույնի, բարձրանա երկրի սոցիալ-տնտեսական արդյունավետությունը, ավելացվի մրցունակ ապրանքների արտադրությունը, բարելավվի բնակչության կյանքի որակը, կենսամակարդակը և այլն:

ՏԱ բարձրագույն մակարդակին կարելի է հասնել այն պարագայում, եթե բնական ռեսուրսների և տեխնոլոգիաների ռիսկի երկարաժամկետ գործոնները և տնտեսական անկայունության առավելագույն նշանակության, ծախսերի մեծության ցուցանիշների ամբողջ համակարգը գտնվեն իրենց թույլատրելի շեմային մեծությունների սահմաններում:

Տնտեսական անվտանգության հայեցակարգային հիմնադրույթները: ՏՄ ապահովմանն ուղղված տնտեսական ռազմավարության հիմքում դրված հայացքների, գաղափարների և սկզբունքների ամբողջությունից ձևավորվում է այդ երևույթի հայեցակարգը: Ընդ որում, սոցիալ-տնտեսական զարգացման ուղու և նպատակի սահմանումից բխում է ՏՄ հայեցակարգի բովանդակությունը, նրա հիմքում դրված փիլիսոփայությունը:

Ֆինանսական և գործարար աշխարհը պետության վրա ամենամեծ ազդեցությունն է թողնում և պետության համար համեմատաբար դժվար կառավարելի է: Մակայն օրենսդրական դաշտը, որում գործում են ֆինանսական և գործարար հաստատությունները, և մակրոտնտեսական լծակներն ունեն ոչ պակաս հակառակ ազդեցություն, ինչը հնարավորություն է տալիս պետությանը ազդել նրանց վրա նաև ուղղակի՝ առաջատար անձերի մակարդակով:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը և կապիտալի կենտրոնացվածության աստիճանը, եկամուտների բաշխման կառուցվածքը և կոռուպցիայի չափերը, օրենսդրական դաշտը և սովերային տնտեսության չափերն ազդում են գործարար-ֆինանսական ոլորտում յուրօրինակ իշխանության և տնտեսավարողների որոշակի վարքագծի ձևավորմանը, որոնց նպատակները, ազգային անվտանգության ապահովման տեսակետից, կարող են չբավարարել հասարակությանը (պետությանը): Քաղաքական իշխանության ձևավորման մթնոլորտից և մեխանիզմներից կախված՝ կարող են ընտրվել մարդիկ, որոնք առավել կամ պակաս չափով են իրենց գործունեության մեջ ղեկավարվում ազգային շահերով: Կրթական-դաստիարակչական համակարգում տիրապետող ծրագրերով որոշվող ապագա սերունդների վարքագիծը նույնպես կարող է չհամապատասխանել ազգային անվտանգության պահանջներին¹:

Ներկայումս «տնտեսական անվտանգություն» հասկացությունը հաճախ կիրառվում է ինչպես առանձին դիրքորոշումների ճշմարտացիությունը հիմնավորելու, այնպես էլ տնտեսությունում դրսևորվող ռիսկերը մատնանշելու համար, որոնք սպառնում են

¹ Ա.Աղայան, Ազգային անվտանգություն. հասկացությունները, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 51, 56:

պետության անվտանգությանը: Հասկանալի է, որ նոր հասկացության հաճախակի կիրառումը անհրաժեշտություն է առաջացնում բացահայտելու դրա առաջացման պատճառները և տալու դրա գիտական սահմանումները:

Ինչպես հայտնի է, պետությունը որոշակի տարածքում ապրող մարդկանց քաղաքական կազմակերպություն է: Գործնականում պետությունն իրականացնում է այնպիսի քաղաքականություն, որն արտահայտում է գերիշխող սոցիալական խմբի շահերը կամ հանդիսանում է այդ խմբերի շահերի փոխզիջումային տարբերակ, եթե այդպիսի խմբերը մի քանիսն են: Ելնելով քաղաքական կազմակերպության դերակատարումն իրականացնելու պահանջից՝ պետությունն, ինչ-որ իմաստով, կատարում է բարոյական օրենքի դեր և պահպանում է հասարակական կարգը, կարգավորում քաղաքացիների գործունեությունը, պայմաններ է ստեղծում անձնական նախաձեռնության համար, պահպանում է յուրաքանչյուրի անվտանգությունը, օրենսդրական ազատությունը և սեփականությունը:

Անցել են այն ժամանակները, երբ հնագանդ ժողովուրդն անխոս հետևում էր աստվածացված առաջնորդներին, որոնք ի վիճակի էին գրավել երկրներ և տիրել աշխարհին: Պատմությունը մատնանշում է տնտեսության դերի մեծացումը քաղաքականության նկատմամբ, «երբ քաղաքական, աշխարհագրական և ռազմական կառույցներն արգելում են ազգին հավատալ աշխարհի քարտեզները փոխելու հնարավորությանը, որպեսզի ստեղծվի Հռոմեական կայսրության կամ Նապոլեոնի գերիշխանության համարժեքը, երբ ուշադրությունն ազգային սահմաններից շեղվում է ազգային ռեսուրսների լավագույնս օգտագործման վրա»¹: Այժմ կարելի է պարզորոշ ասել, որ միայն առանձին պետությունների միջև է, որ հակամարտությունը կրում է ռազմական հակադրությունների բնույթ: Այդ դեպքերում էլ նրանց դիրքերն ամբողջովին որոշվում են մասնակից կողմերի տնտեսական ներուժով: Նույնիսկ ամենաօրթոդոքսալ քաղաքական գործիչները հանգում են այն եզրակացությանը, որ տնտեսությունը վեր է ամեն ինչից և զարգացման հնարավորությունները պայմանավորված են տնտեսության դինամիկությամբ և արդյունավետությամբ:

¹ Ведута Н.И., Государственная экономическая стратегия, Минск, 2001.

Պետության SU հասկացության ներմուծումը նշանակում է տնտեսության գերակայության ընդունում պետության ներքին և արտաքին անվտանգության ապահովման գործում և, հետևաբար, զարգացման ազգային ռազմավարության ստեղծման և իրականացման խնդրի նկատմամբ ամենալուրջ ուշադրության անհրաժեշտություն:

Տնտեսության նկատմամբ պետության միջամտության նպատակների և միջոցների համալիրը ձևավորում է տնտեսական քաղաքականության բովանդակությունը: Տնտեսական քաղաքականության խնդիրը բարիքների արտադրության և բաշխման կապակցությամբ հասարակությունում և պետության մեջ դրսևորվող հարաբերությունների գործնական կարգավորումն է: Դեռևս XX դարի սկզբին տնտեսական միտքը ձևավորեց տնտեսական քաղաքականության այնպիսի կարևոր երկու սկզբունքներ, ինչպիսիք են արտադրության արդյունավետությունը և բարիքների արդար բաշխումը:

Արտադրության արդյունավետության սկզբունքը պետության քաղաքացիներին, ծախսերի տրված մեծության պայմաններում, առավելագույն արդյունքով ապահովումն է, կամ որ նույնն է՝ տրված քանակությամբ արտադրանքի թողարկումը նվազագույն ծախսերով:

Պետության քաղաքացիների համար վերջնական արդյունքը կամ ոչ արտադրական նշանակության արտադրանքը բաղկացած է՝ սպառողական շուկայի, սոցիալական ենթակառուցվածքի (գիտության, մշակույթի, առողջապահության, կոմունալ-կենցաղային տնտեսության, կենցաղսպասարկման, երկաթուղային տրանսպորտի, կապի) և բնապահպանական հավասարակշռության համար նախատեսված, ինստիտուցիոնալ ենթակառուցյունների (պետական իշխանության և կառավարման մարմինների, դրամավարկային և ֆինանսական համակարգի) պահպանման և հասարակական կարգի պահպանության համար նախատեսված, պաշտպանական նշանակության, տարերային իրավիճակների համար նախատեսված պահուստային, արտաքին տնտեսական գործունեության համար նախատեսված արտադրանքից:

Ելնելով պետական առաջնահերթություններից՝ որոշվում են ոչ արտադրական նշանակության վերջնական արտադրանքի բաշխման համամասնությունները:

Արդյունավետության սկզբունքին համապատասխան ազգային ռեսուրսները նպատակահարմար է օգտագործել այնպես, որ ապահովվի սպառողների կողմից պատվիրված ոչ արտադրական նշանակության վերջնական արտադրանքի աճ՝ օպտիմալ կառուցվածքով: Միաժամանակ պետք է ապահովել, որպեսզի չխախտվի եկամուտների բաշխման արդարությունը և չթուլանա պետության կայունությունը:

Բարիքների արդար բաշխման սկզբունքը արտահայտվում է պետության քաղաքացիների եկամուտների անհավասարության հարթման և յուրաքանչյուրի՝ արտադրության արդյունավետության աճում ունեցած ներդրմանը համարժեք եկամուտների ավելացման միջոցով:


Առաջին հայացքից քաղաքացիների եկամուտների հավասարեցման ձգտումը ուտոպիստական է թվում: Մինչդեռ այն երկրները, որտեղ բարձր են տնտեսական աճի տեմպերը, բայց միաժամանակ հասարակության տարբեր շերտերում մեծանում է եկամուտների անհավասարությունը, ունեցել և ունենալու են սոցիալական ցնցումներ: Երկրի ներսում սոցիալական անհավասարության ուժեղացումը, որը խթանում է նաև տնտեսության ստվերայնությունը, վտանգ է ներկայացնում նրա տնտեսության անվտանգության համար: Այս պատճառով, արտադրության արդյունավետության աճում ունեցած ներդրումից կախված, քաղաքացիների տարբեր խմբերի եկամուտների աճի կոորդինացումը և երկրի քաղաքացիների եկամուտների հավասարեցումը դառնում են ոչ թե երկրի ՏԱ բաղկացուցիչ մասը, այլ նրա հիմքը:

Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրները շուկայական տնտեսության անցման գործընթացն սկսեցին՝ ունենալով աշխարհում անհավասարության ամենացածր մակարդակներից մեկը: Սկսած այդ ժամանակաշրջանից՝ անցումային տնտեսություն ունեցող բոլոր երկրներում անհավասարությունն անընդհատ աճում է, և մի շարք պետություններում անհավասարության աճը հասել է նշա-

նակալի ծավալների (տե՛ս *գծանկար 1.4*): Այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հայաստանը, Ղրղզստանը, Մոլդովան և Ռուսաստանը, մտել են աշխարհի այն երկրների շարքը, որոնցում նկատվել է անհավասարության ամենաբարձր մակարդակը: Հիշատակված երկրներում Ջինիի գործակիցը (անհավասարության ստանդարտ ցուցիչը) համարյա կրկնակի գերազանցել է այդ երկրներում մինչ անցումային ժամանակահատվածը գոյություն ունեցող մակարդակները¹:

Գծանկար 1.4

Անցումային տնտեսություն ունեցող առանձին երկրներում եկամտների անհավասարության փոփոխությունները²



Գոյություն ունի անհավասարության աճը ազատականացման գործընթացով և անցկացվող վերափոխումներով բացատրելու գայթակղություն: Սակայն նման բացատրությունը համապարփակ չի կարող լինել: Չնայած անհավասարությունն աճել է ամենուր,

¹ Ավելի մանրամասն տե՛ս Սամսոն Դավոյան, Աշոտ Մարկոսյան, Հայկ Սարգսյան, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Եր., «Տիգրան Մեծ», 2003, էջ 56-59:

² Աղբյուրը՝ World Bank, 2000b, Marketing Transition Work for Everyone: Poverty and Inequality in Europe and Central Asia, Washington, D.C.:

այն երկրները, որոնք առաջադիմել են վերափոխումների իրականացման մեջ, վերջին հաշվով ավելի հաճախ հասնում են հավասարության և ոչ թե անհավասարության, եթե համեմատենք նրանց արդյունքներն այն արդյունքների հետ, որոնց հասնում են վերափոխումների անցկացման գործընթացում պակաս հաջողությունների հասած երկրները: Նման տարբերությունները չի կարելի բացատրել միայն իրարից զանազանվող երկրներում անցման ժամանակաշրջանի սկզբում տարբեր պայմանների առկայությամբ:

Ինչպես ցույց են տալիս Համաշխարհային բանկի վերջին հետազոտությունների արդյունքները¹, Կենտրոնական և Հարավարևելյան ու Բալթյան (ԿՀԲ) երկրներում անհավասարության աճի պատճառը մեծ մասամբ իրադարձությունների դրական զարգացումն է, կրթության առկայության դեպքում ավելի շատ եկամտի ստացումը, աշխատավարձի չափի վրա դրվող առավել կոշտ սահմանափակումների վերացումը, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և ռիսկն իր վրա վերցնելու արդյունքում առավել մեծ եկամտի ստացման հնարավորության առաջացումը և այլն: Թեև անհավասարության աճին, նման ուժերի ազդեցությունը ողջունելի է, քանի որ դա վկայում է այն մասին, որ շուկայի պայմաններում խրախուսվում են աշխատելու ունակությունը և աշխատասիրությունը, ինչը հատկապես բացահայտվում է առավել հասուն շուկայական տնտեսությամբ երկրներում: Ավելին, ԿՀԲ երկրներում նշանակալի սոցիալական (անհատույց) վճարները և վերաբաշխման մեխանիզմների գործունեությունը նվազեցրին աշխատողի կրթական մակարդակի համար հավելավճարների (լրացուցիչ վճարներ) և աշխատավարձի չափի վրա դրված կոշտ սահմանափակումների վերացման ազդեցությունը այն պահանջներին համապատասխան, որոնք համանման միջոցառումների ընդունման կապակցությամբ այդ երկրների բնակիչները ներկայացրել են իրենց կառավարություններին:

ԱՊՀ երկրների փորձը կրում է բացարձակապես այլ բնույթ: Կրթական մակարդակից կախված աշխատանքի վարձատրության

¹ World Bank, 2000b, Making Transition Work for Everyone: Poverty and Inequality in Europe and Central Asia, Washington, D.C.

չափը և նրա վրա կոշտ սահմանափակումների վերացումը միայն շատ քիչ չափով է բացատրում անհավասարության նման աճը: Հայաստանում, Ղրղըզստանում, Վրաստանում, Մոլդովայում և Ռուսաստանում եկամուտների տարբերությունը՝ կապված կրթության առկայության հետ, 5%-ից պակաս անհավասարության պատճառ է, այն դեպքում, երբ այդ ցուցանիշը Սլովենիայում կազմել է 20%, իսկ Հունգարիայում և Լեհաստանում՝ 15%: Անհավասարության աննախադեպ աճի պատճառները հարկ է փնտրել այլ տեղերում: ԿՀԲ երկրներն աչքի են ընկնում կոռուպցիայի համընդհանուր տարածման ու չվաստակած եկամուտների ստացման և դրան ձգտելու գերակշռման երևույթներով: Այդ տարածաշրջանում առկա է կոռուպցիայի ծավալների մեծացման և անհավասարության աճի (ինչպես նաև աղքատության ծավալների աճի) միջև կայուն փոխադարձ կապ: Կոռուպցիան անհամաչափորեն մեծ ազդեցություն է թողնում աղքատների վրա¹: Տարածված է նաև առանձնահատուկ իրավունքներով և շահերով օժտված ազդեցիկ քաղաքական ու գործարար նեղ շրջանակների կողմից պետական իշխանության «գրավման» երևույթը: Նրանք քաղաքականությունը փոխում են այնպես, որպեսզի այն ծառայի իրենց շահերին, ինչը շատ հաճախ թանկ է նստում ամբողջ հասարակության վրա: Այդ նեղ շրջանակին հաջողվում է սահմանափակել մրցակցությունը և տնտեսական իշխանությունը սեփական ձեռքերում կենտրոնացնել այնպիսի մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են հատուկ թույլտվություններ տալը և սեփական մենաշնորհային վիճակի օգտագործումը: Հիշատակված շրջանակները խաթարում են պետական ինստիտուտները և կասեցնում հասարակության շահերին ծառայող վերափոխումների իրականացումը:

Անհավասարության պատճառ է նաև կոռուպցիայի և պետության «գրավման» արդյունքում տնտեսության օրինական (ֆորմալ) հատվածում աշխատավարձի վճարման համակարգի քայքայման ու նոր աշխատատեղերի ստեղծման և եկամուտների ստացման հնարավորությունների անհետացումը: Հին աշխատատեղերում

¹ World Bank, 2000c, Anticorruption in Transition: A Contribution to the Policy Debate, Washington, D.C.

աշխատավարձի վճարման համակարգը քայքայվել է կամ էլ աշխատավարձ ընդհանրապես չի վճարվում, իսկ աշխատանք ստանալու նոր ֆորմալ (ձևական) բարենպաստ պայմանները ի չիք են դարձվում մրցունակ շուկաների բացակայության և կոռուպցիայի համընդհանուր տարածման պատճառով: Բնակչության հիմնական զանգվածը, բացառությամբ արտոնյալ վիճակում գտնվող անձանց մի փոքր թվի, սովորաբար «գամված» է այս կամ այն աշխատատեղին, որտեղ վճարվում է ցածր աշխատավարձ (կամ շատ հաճախ տարիներ շարունակ ընդհանրապես չի վճարվում): Որպեսզի մի կերպ ծայրը ծայրին հասցնեն, մարդիկ լրացնում են իրենց եկամուտները ինքնուրույն զբաղվածության տարբեր ձևերով: Որպես մանր սեփականատեր նրանց զգալի մասն աշխատում է սեփական տնամերձ փոքրիկ հողակտորում՝ լույ նրա համար, որ ուտելիք հայթայթի: ԱՊՀ ամբողջ տարածքում եկամուտները, որոնք ստացվել են նման փոքր տնամերձ հողակտորներից և բանջարանոցներից, կազմել են տնային տնտեսությունների ընդհանուր եկամուտների 40-70%-ը: Անհրաժեշտ կապերի առկայությունը և ոչ ֆորմալ շրջանակներ ներթափանցելու, ինչպես նաև վճարելու հնարավորությունը աշխատանք ստանալու ու ծառայողական աստիճանով վեր բարձրանալու գրավականն են: Նման իրավիճակը բերեց անհավասարության նշանակալի աճի:

Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքների կազմում, բացի եկամուտների արդյունավետ և արդար բաշխման մոտեցումից, ավելացվում է նաև կայունության սկզբունքը, որի բաղկացուցիչներն են ինֆլյացիայի, գործազրկության և տնտեսական աճի կայուն տեմպերը:

Իրականում կայունությունը կարող է խաթարվել, եթե տնտեսական աճի բարձր տեմպերից հետո սկսվում է նրա տեմպերի դանդաղում, այնուհետև՝ արտադրության ճգնաժամ: Կայունության ապահովման համար անհրաժեշտ է ոչ թե արագ աճ, այլ տնտեսական աճի տեմպերի կայուն մեծացում, ինչն իր հերթին ենթադրում է ինչպես որոշ ճյուղերի տեխնիկական առաջընթաց, այնպես էլ տնտեսության հավասարակշռված աճ և, ելնելով վերջնական պահանջարկի կառուցվածքի դինամիկայից, լրիվ զբաղվածություն ապահովող ճյուղերի զարգացում: Հասկանալի է, որ դեպ-

քերի այսպիսի ընթացքի պարագայում կապահովվի նաև ազգային արժույթի կայունությունը:

Այսպիսով, սոցիալ-տնտեսական զարգացման կայունության արդյունավետ ազգային ռազմավարությունն այնպիսի միջոցառումների համակարգ է, որն ապահովում է վերջնական արդյունքի աճի տեմպերի կայուն զարգացում, քաղաքացիների համար սպառման օպտիմալ կառուցվածք, ցածր ինֆլյացիա և եկամուտների արդար բաշխում:

Կլիմայի, շրջակա միջավայրի, բնական ռեսուրսների տեղաբաշխման առանձնահատկությունները, որոնք սահմանափակում են արտադրության գործոնների շարժունությունը, որոշում են երկրի ներքին (ազգային) շուկայի և միջազգային փոխանակության միջև գոյություն ունեցող տարբերությունները:

Ցանկացած պետություն ձգտում է միջազգային փոխանակությունից ստանալ առավելագույն արդյունք: Պատմական փորձը վկայում է, որ տարբեր պետությունների անհամաչափ զարգացման պայմաններում տնտեսական կապերում առավել զարգացած երկիրը ձգտում է խոչընդոտել առավել թույլ գործընկերների առաջավոր ճյուղերի զարգացումը՝ դրանով պահպանելով իր էժան հումքի աղբյուրները և պատրաստի արտադրանքի իրացման շուկաները: Աշխատանքի միջազգային բաժանման գոյություն ունեցող կարգը պահպանելու համար տնտեսապես զարգացած երկիրը խրախուսում է առավել հետամնաց երկրներին հետևելու ազատ միջազգային առևտրի սկզբունքին, միաժամանակ մտածելով նաև ուժեղ մրցակիցներից սեփական շուկայի պաշտպանության մասին: Եվ ընդհակառակը, տնտեսապես թույլ զարգացած երկիրը, փորձելով պահպանել ոչ մրցունակ արտադրության ճյուղերը, որոնք ապահովում են արդյունավետ ազգային ռազմավարության իրականացում, հայտարարում է հովանավորչություն՝ միաժամանակ պահպանելով ազատ առևտրի սկզբունքը այն ապրանքների (ծառայությունների) համար, որոնց ներմուծումը նրա համար շահավետ է:

Ինչպես տեսնում ենք, ազգային շուկայի բացության կամ պաշտպանության խելամիտ մակարդակը կախված է ազգային ռազմավարությունից, մինչդեռ այսօր ազգային շահերի պաշտպանության ապահովումը հնարավոր է միայն քաղաքակիրթ ճանա-

պարհով՝ բանակցությունների միջոցով:

SU բնորոշումը և կառուցվածքը: Որպեսզի հնարավոր լինի իրականացնել և ապահովել ազգային շահերի պաշտպանությունը, այսինքն՝ լուծել ազգային անվտանգության հիմնախնդիրը, անհրաժեշտ է ունենալ «նյութական» ապահովվածություն: Եվ հենց այստեղ է, որ ընդգծվում է SU խնդրի կարևորությունը: Փաստորեն, SU-ն ազգային անվտանգության «նյութական» մասն է: Հետևաբար, ազգային անվտանգության հիմնախնդիր հանդիսացող ազգային շահերի մեջ զգալի տեղ են զբաղեցնում տնտեսական շահերը: Որպես վերջինիս վկայություն կարող ենք նշել ազգային և տնտեսաքաղաքական պայքարների հիմք հանդիսացող տնտեսական շարժառիթները: Այդպիսի շարժառիթներ են ռեսուրսների սահմանափակությունը և տարբեր երկրների՝ դրանցով ապահովվածության անհավասարությունը, արտադրության և սպառման բնագավառներում մրցակցության գործոնը. մի երկրի մրցունակության աճը մյուսների կողմից դիտարկվում է որպես իրական վտանգ իրենց ազգային շահերին:

Հաջորդ ներթափանցումը, որն անարգել կատարվում է դեպի ներպետական տարածություն, իրականացվում է ժողովրդավարության լոկոմոտիվի՝ ազատ շուկայի միջոցով: Այդ հարթությունում, Հայաստանի տնտեսությունը համաշխարհային տնտեսությանն ինտեգրելու և ինովացնելու անվան տակ, հաճախ «յուրացվում» են տնտեսական ռեսուրսները, ինչի արդյունքում էլ սահմանափակվում է պետության տնտեսական ազատության աստիճանը՝ անկախությունը: Որոշ դեպքերում տնտեսական վտանգի ազդեցիկությունը գերկարևորվում է ռազմաքաղաքականից: Եվ, միանգամայն իրավացիորեն, քանզի տնտեսական անկախության կորուստն արագորեն հանգեցնում է քաղաքական անկախության կորստին: Եվ դա այն պատճառով, որ ֆինանսական-տնտեսական ռեսուրսները քաղաքական իշխանության էական ռեսուրսներից են, ինչպես նաև՝ տնտեսական համակարգը քաղաքական համակարգի համար բազիսային նշանակություն ունի¹:

¹ Ս.Սաֆարյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 38:

Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական անվտանգությունը սահմանվում է որպես «տնտեսության և իշխանության ինստիտուտների իրավիճակ, որի դեպքում ապահովվում են ազգային շահերի երաշխավորված պաշտպանությունը, քաղաքականության սոցիալական ուղղվածությունը, բավականաչափ պաշտպանական ներուժ՝ նույնիսկ ներքին և արտաքին գործընթացների ոչ նպաստավոր զարգացման պայմաններում»¹:

Պրոֆեսոր Հ.Ղուշյանի կարծիքով, ՏԱ նման սահմանումը միակողմանի է մեկնաբանում տնտեսության զարգացման նպատակները և չի արտահայտում ընդլայնված վերարտադրության բոլոր կողմերը, խնդիրները: Տնտեսական զարգացման առաջնային խնդիրը ազգային շահերի ապահովումն է: Սակայն դա միակը չէ: Կարևոր նպատակ է հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի բնականոն գործունեության ապահովումը: Ուստի, ՏԱ-ն այն պայմանների առկայությունն է, որոնք ապահովում են հասարակության և նրա անդամների բնականոն գործունեությունը, նյութական և հոգևոր ապահովվածությունը, ֆիզիկական պաշտպանվածությունը և այդ ամենի անընդմեջ բարելավումը²:

ՏԱ հիմնախնդիրն ունի ուսումնասիրության իր առանձին օբյեկտը՝ երկրի տնտեսությունը, ինչպես նաև այնպիսի օբյեկտներ՝ ռազմական, սոցիալական, քաղաքական և այլն, որոնք կապվում են ՏԱ հիմնական օբյեկտի հետ: Այդ իսկ պատճառով ՏԱ-ն անհրաժեշտ է դիտարկել տնտեսական ոլորտում՝ արտաքին և ներքին խնդիրների, ինչպես նաև այնպիսի խնդիրների տեսանկյունից, որոնք հատվում են տնտեսական ոլորտի հետ: Այդպիսիք են ռազմատնտեսական ոլորտը, գիտատեխնիկական և մտավոր ներուժի պաշտպանությունը, հասարակական անվտանգության ոլորտը (սովետային տնտեսությունը, կաշառակերությունը և կազմակերպված հանցագործությունը տնտեսությունում, տնտեսական խաբեությունները և այլն), տնտեսության և բնության փոխազդեցության ոլորտը և այլն:

ՏԱ օբյեկտը ոչ միայն պետության տնտեսական համակարգն

¹ Экономическая безопасность (производство, финансы, банки), под ред. академика Б.К. Сенчагова, М., 1988г., стр. 12.

² Հ.Բ.Ղուշյան, ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը, Բանբեր Երևանի համալսարանի, 2000, N 3, էջ 17:

է, այլ նաև հասարակությունն իր կառույցներով, հաստատություններով, կազմակերպություններով և անձր:

SU սուբյեկտ են նախարարությունները, կոմիտեները, վարչությունները, մարզպետարանները, մաքսային և հարկային ծառայությունները, բանկերը, բորսաները, հիմնադրամներն ու ապահովագրական կազմակերպությունները և այն բոլոր կառույցները, որոնց գործունեության միջոցով ապահովվում է տնտեսական անվտանգությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազգային SU-ն բավական լայն հասկացություն է և հնարավոր չէ այն բնութագրել մեկ սահմանման միջոցով, նպատակահարմար է տալ դրա մի քանի սահմանումներ: SU-ն՝

- ուժերի և միջոցների համախմբություն է, որն ընդունակ է հակազդել պետության (որպես համակարգի) և նրա մասնակիցների տնտեսական շահերի սպառնալիքներին,
- գործընթաց է, որն ուղղված է պետության (որպես համակարգի) տնտեսական մեխանիզմի գործունեությունը՝ փոփոխվող պայմաններում, զարգացման հիմնական նպատակներին անընդհատ համապատասխանեցնելուն,
- տնտեսության ընդունակությունն է համապատասխան կերպով դիմակայել ներքին և արտաքին բացասական ազդեցություն ունեցող գործոններին՝ ինքնապահպանման և հետագա զարգացման նպատակով,
- որոշակի գործողությունների իրականացման հնարավորությունն է, որոնք ուղղված են կոնկրետ ժամանակահատվածի համար սահմանված նպատակներին հասնելուն,
- տնտեսական պաշտպանվածությունն է ներքին և արտաքին սպառնալիքներից, ինչը թույլ է տալիս հուսալիորեն պահպանել և արդյունավետ օգտագործել աշխատանքային, նյութական, բնական և ֆինանսական հնարավորությունները:

Ակադեմիկոս Լ.Աբալկինի սահմանմամբ՝ SU-ն պայմանների և գործոնների այնպիսի ամբողջություն է, որն ապահովում է ազգային տնտեսության անկախությունը, կայունությունը և մշտապես

նորացման ու կատարելագործման ունակությունը¹: Ե.Բուխվալդի համոզմամբ՝ ՏՄ-ն տնտեսության կողմից ազգային և միջազգային մակարդակներում հասարակության պահանջմունքների արդյունավետ բավարարման ապահովման կարողությունն է²:

Այսպիսով, **ՏՄ-ն պետության (որպես համակարգի) այն վիճակն է, երբ ձևավորվող ազգային տնտեսության համատեքստում ապահովված են անհատի, հասարակության և պետության նվազագույն տնտեսական շահերի և պահանջմունքների իրացումը և բավարարումը՝ անգամ բացասական գործոնների միաժամանակյա և միևնույն ուղղությամբ ազդեցության պայմաններում:**

ՏՄ գաղափարի զարգացման ընթացքում փոխվել են նաև դրա սահմանումները: Մեր օրինակում յուրաքանչյուր երկրի ՏՄ-ն սահմանվում է յուրաքանչյուր երկրի ազգային շահերից ելնելով և կախված է բազմաթիվ գործոններից: Դրանց մեջ կարևորվում են ամեն մի երկրի զարգացածության աստիճանը և հզորությունը: Մեր կողմից առաջարկվում է ՀՀ ՏՄ հետևյալ սահմանումը:

ՏՄ-ն երկրի տնտեսության այն վիճակն է, երբ ազգային շահերի իրականացումը երաշխավորող որոշակի թվով կենսականորեն կարևոր տնտեսական ոլորտներում ապահովվում է անհատի, պետության և հասարակության անընդմեջ, երկարատև ու նպատակաուղղված այնպիսի առաջընթաց, որի դեպքում ազգային տնտեսությանը սպառնալիքների առաջացման հավանականությունը և ազդեցության չափը դառնում են նվազագույն:

Նկատվում է օրինաչափություն. որքան բարձր է երկրի զարգացածության աստիճանը, այնքան ավելի մեծ է ՏՄ ապահովման նպատակով ռազմական ուժի կիրառման հակվածությունը մյուս երկրների հանդեպ: Այսպես, եթե զարգացող երկրներում ՏՄ-ն ապահովված է սոցիալական խնդիրների լուծման պարագայում, ապա գերտերություններում բացահայտորեն ընդգծվում է ռազմական ուժի կիրառման հնարավորությունը ՏՄ ապահովման նպատակով:

Անցումային տնտեսություն ունեցող երկրների ՏՄ-ն ունի

¹ Абалкин Л., Экономическая безопасность России: угрозы и их отражение, Вопросы экономики, N12, 1994, с. 8.

² Бухвальд Е., Головацкая К., Лазуренко С., Макроаспекты экономической безопасности: факторы, критерии, показатели, Вопросы экономики, N12, 1999, с. 27.

որոշակի առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են հետևյալ ուղղություններով՝ սպառող և սպասարկող երկրի վերածվելու վտանգը, նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրությունների կանխարգելումը, բնակչության և, հատկապես, մտավոր ներուժի արտահոսքը, բնական ռեսուրսների անխնա օգտագործումը, ՀՆԱ նկատմամբ արտաքին պարտքի տեսակարար կշռի մեծացումը, կցորդային տնտեսական համակարգի կարգավիճակի առկայությունը, գիտական և կրթական համակարգերի փլուզումը: Նշված վտանգներն առկա են նաև Հայաստանի համար:

Ազգային ՏՄ էությունը տնտեսության զարգացման այնպիսի ապահովման մեջ է, որը նպատակ ունի բնական, աշխատանքային և մյուս ռեսուրսների արդյունավետ օգտագործման պայմաններում առավելագույնս բավարարել հանրապետության քաղաքացիների սոցիալական և տնտեսական պահանջները:

ՏՄ-ն, իր հերթին, որպես հարաբերությունների համախմբություն, ունի բավական բարդ ներքին կառուցվածք, որի երեք հիմնական բաղադրատարրերն են.

- **տնտեսական անկայությունը**, որը, սակայն, արդի համաշխարհային տնտեսությունում բացարձակ բնույթ չի կրում: Աշխատանքի միջազգային բաժանումը ազգային տնտեսությունները դարձնում է միմյանցից փոխկախված¹: Այս պայմաններում ՏՄ-ն նշանակում է ազգային ռեսուրսների նկատմամբ պետության վերահսկողություն, արտադրության, արդյունավետության և որակի այնպիսի մակարդակի ձեռքբերում, որը կապահովի երկրի մրցունակությունը և հնարավորություն կտա դառնալ համաշխարհային առևտրի մասնակից,
- ազգային տնտեսության **կայունությունը**, որը ենթադրում է սեփականության բոլոր ձևերի պաշտպանվածություն, ձեռնարկատիրության ակտիվության համար կայուն պայմանների և երաշխիքների ստեղծում, եկամուտների բաշխման

¹ Ավելի մանրամասն տե՛ս Աշոտ Մարկոսյան, Դավիթ Հախվերդյան, Գրիգոր Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում գրքի (Եր., «ԱՌՏ», 2002) «Աշխատանքի միջազգային բաժանումը որպես միջազգային տնտեսական հարաբերությունների օբյեկտիվ հիմք» մասում, էջ 15-31:

խիստ անհամաչափությունների կանխում, որը սոցիալական ցնցումների պատճառ կարող է դառնալ,

- տնտեսության **ինքնազարգացման և առաջընթացի ընդունակությունը**, որն առավել կարևոր է ներկայիս դինամիկ զարգացող աշխարհում: Մա ենթադրում է ներդրումների և նորամուծությունների բարենպաստ մթնոլորտի ձևավորում, արտադրության անընդհատ արդիականացում, աշխատողների մասնագիտական կարողությունների շարունակական կատարելագործում և այլն:

Արդյունաբերական զարգացած երկրներում ՏՄ հասկացությունը ենթադրում է համաշխարհային շուկայում ազգային տնտեսության և նրա ճյուղերի մրցունակություն, որը համաշխարհային տնտեսության բազմաբնույթ դրսևորումներում կարևոր նախապայման է երկրի ազատ շուկայական տնտեսության գործունեության և զարգացման համար: Շուկայական մրցակցության պայմաններում գործող աշխատանքի միջազգային բաժանման մասնակից ազատական տնտեսությունների համար ՏՄ-ն, փաստորեն, հանգում է այդ մրցակցության ընթացիկ ռիսկերին և վտանգներին համապատասխան արձագանքներ գտնելու միջոցներին և եղանակներին:

Այս տեսանկյունից ՏՄ ռազմավարությունն ընդգրկում է ներքին և արտաքին սպառնալիքների բնութագրումը՝ որպես պայմանների և գործոնների համախումբ, որոնք վտանգ են առաջացնում պետության, հասարակության և անձի կենսականորեն կարևոր տնտեսական շահերի համար, տնտեսության վիճակը բնութագրող չափորոշիչների և չափանիշների սահմանումը, որոնք կապահովեն ՏՄ և երկրի կենսականորեն կարևոր շահերը, պետության ՏՄ-ն, նրա կենսականորեն կարևոր շահերի ապահովման այնպիսի մեխանիզմ, որը հիմնված է պետական իշխանության բոլոր մարմինների համագործակցության վրա:

Գործնականում ՏՄ պետական ռազմավարությունը պետք է իրագործվի կոնկրետ միջոցառումների, մեխանիզմների համակարգի միջոցով, որոնք սահմանվում են որակական և քանակական ցուցանիշների և չափանիշների հիման վրա: Այդպիսի համա-

կարգը կազմում է տնտեսական քաղաքականության հիմքը և հիմնական բովանդակությունը:

SU-ն ապահովվում է ինչպես զուտ տնտեսական մեթոդներով և մեխանիզմներով, այնպես էլ ոչ տնտեսական բնույթի մեթոդների միջոցով՝ քաղաքական, ռազմական, դիվանագիտական, գաղտնիքների պաշտպանության և այլն:

Նշվեց, որ SU-ն, լինելով ազգային անվտանգության բաղկացուցիչ մաս, կոչված է ապահովելու ազգային անվտանգության պաշտպանությունը: Այս ավելի գերակայելի նպատակին հասնելու համար սկզբում պետք է ապահովել SU խնդիր հանդիսացող տնտեսական նպատակների իրականացումը:

Որպես տնտեսական նպատակներ կարող են սահմանվել երկրի մրցունակության ապահովումը, տնտեսական աճը, լրիվ զբաղվածությունը, գների կայուն մակարդակը, եկամուտների արդարացի բաշխումն ու վերաբաշխումը, մենաշնորհային ոլորտի կառավարելիությունն ու արդյունավետությունը և այլն: Այլ կերպ՝ նշված տարբեր նպատակներն ուղղված են ապահովելու SU հիմնական նպատակը՝ կայուն և զարգացող տնտեսությունը: Սակայն այս նպատակի իրականացումը տեղի է ունենում արտաքին և ներքին, բնական կամ կանխամտածված հիմք ունեցող սպառնալիքների ուղեկցությամբ: Ուստի, պետության կողմից պետք է մշակվեն որոշակի մեթոդներ և մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան նշված սպառնալիքների առկայության պայմաններում իրականացնել SU հիմնական նպատակները:

SU էությունը բացահայտվում է անվտանգություն բառի միջոցով: Եթե կա անվտանգությունն ապահովելու խնդիր, ապա գոյություն ունեն առողջ տնտեսությանը վնաս հասցնող սպառնալիքներ կամ այդպիսի վիճակին հասնելու խոչընդոտներ: SU բովանդակությունը և էությունը այդ սպառնալիքների և խոչընդոտների վերացումն է կամ նրանց ազդեցության նվազեցումը:

SU-ն, ինչպես և անվտանգությունը՝ լայն հասկացությամբ, կարելի է բաժանել միջազգային (գլոբալ և տարածաշրջանային) և ազգային SU-ների:

Միջազգային SU-ն միջազգային կառույցների կողմից պայմանագրերով կամ այլ միջոցներով ստեղծված միջազգային այնպի-

սի իրավիճակ է, որի դեպքում յուրաքանչյուր երկրի համար ապահովված են սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավարության ազատ ընտրության հնարավորությունները, բացառվում է տնտեսական այս կամ այն արգելքների և սահմանափակումների կիրառումը:

Միջազգային ՏԱ լիակատար ապահովումը կարելի է իրականացնել զարգացման տարբեր մոտեցումների և մոդելների միջոցով: Հարկավոր է հրաժարվել այն սկզբունքից, երբ որևէ ազգի բարեկեցության լավացումը կատարվում է մեկ այլ ազգի սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացման հաշվին: Պետք է ընտրել զարգացման այն մոդելը, երբ արտասահմանյան երկրների հետ համագործակցության միջոցով երկար ժամկետում շահում է նաև յուրաքանչյուր ազգային տնտեսություն:

Միջազգային ՏԱ ապահովման, կայունության և տնտեսական զարգացման, կանխատեսելիության անհրաժեշտությունը, բնականաբար, ավելի կարևոր է տնտեսապես թույլ զարգացած երկրների համար: Այնուամենայնիվ, միջազգային ՏԱ հարցում հետաքրքրված են բոլոր երկրները, այդ թվում նաև ամենազարգացածները: Զարգացող երկրների համար միջազգային ՏԱ ապահովումը կարող է դառնալ տնտեսական հետամնացությունից դուրս գալու նյութական հիմք և երաշխիք:

Ազգային ՏԱ-ն տնտեսական կատեգորիա է, որը տնտեսությունը կառավարող պետական մարմինների կողմից մշակվող և իրականացվող քաղաքականության հիմնական բաղադրիչը պետք է լինի: Այս հասկացությունը, որը լավ ծանոթ է արևմտյան երկրների կառավարող մարմիններին, բավականին լայն մեկնաբանություն ունի: Այսպես, ազգային ՏԱ-ն կարելի է մեկնաբանել որպես տնտեսության այնպիսի վիճակ, երբ ազգը (պետության միջոցով) կարող է ինքնուրույն, առանց արտաքին ճնշման և ներգործության որոշել իր տնտեսական զարգացման ուղիները և ձևերը: ՏԱ-ն կարելի է մեկնաբանել որպես տնտեսագիտության և քաղաքագիտության սինթեզված ձև, որը սերտորեն կապված է տնտեսական անկախության, կայունության, տնտեսական ճնշման, ազդեցիկալի, տնտեսական քաղաքականության հասկացությունների հետ:

Եթե ավելի ընդհանրացնենք ազգային ՏԱ էությունը, ապա կարելի է ասել, որ **ազգային ՏԱ-ն** տնտեսության այնպիսի վիճակ է, երբ ներքին և արտաքին, բնական կամ կանխամտածված սպառնալիքները որոշակի մեթոդների և մեխանիզմների միջոցով հնարավոր է չեզոքացնել կամ կասեցնել՝ ապահովելով ազգային տնտեսության կայունությունն ու զարգացումը:

Պրոֆեսոր Հ.Ղուշյանի կարծիքով, տնտեսական անվտանգության հիմնական բաղադրիչների վերարտադրությանը հասցվեց այնպիսի հարված, որի արդյունքում երրորդ հազարամյակի շեմին ՀՀ տնտեսության մեջ ի հայտ եկան ծայրահեղ արատներ.

- տնտեսության կառուցվածքային ձևախեղման խորացում,
- ներդրումային և նորամուծական ակտիվության անկում,
- երկրում պահանջարկի բավարարման համար ներմուծման գերակայություն,
- արտաքին պարտքի ավելացում և այդ միջոցների օգտագործում ոչ իրական հատվածում,
- ստվերային տնտեսության մասշտաբների աննախադեպ աճ¹:

Մեր հանրապետությունում տնտեսական վերելքի և անվտանգության ապահովման հիմնական գործոնները կարելի է դասակարգել յոթ խմբերի.

1. տնտեսության պետական կարգավորման դերի ուժեղացման,
2. տնտեսական ակտիվության ապահովման,
3. արտադրության միջոցների մասնավորեցման համակարգի կատարելագործման,
4. ազգային խնայողության և իրական ներդրումների խթանման,
5. արտաքին հարաբերությունների խորացման և ուժեղացման,
6. բնակչության սոցիալական ապահովման,
7. բնական աղետների հաղթահարման գործոններ:

¹ Հ.Բ.Ղուշյան, ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը, Բանբեր Երևանի համալսարանի, 2000, N 3, էջ 23:

Անվտանգության հաղթահարման գործոնների ազդեցությունն իրական դարձնելու համար պահանջվում են համապետական համալիր միջոցառումներ, որոնք պետք է դառնան ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական ուղղությունները: Դրանք ներկայացված են *զժանկար 1.5-ում*¹:


SU համակարգի կազմակերպական կառուցվածքի էությունն ավելի լավ պատկերացնելու համար կազմենք բլոկ-սխեմա (տե՛ս *զժանկար 1.6*), որը կբացահայտի նրա ներքին բովանդակությունը:

Բլոկ-սխեման բաղկացած է երեք հիմնական մասերից: Եթե կա անվտանգության ապահովման խնդիր, ապա դա նշանակում է, որ գոյություն ունեն սպառնալիքներ, որոնք խախտում են տնտեսության անվտանգ վիճակը: Այդ պատճառով առաջին բլոկն ընդգրկում է սպառնալիքների հիմնական աղբյուրները: Երկրորդ բլոկում ցույց է տրված այն, որ եթե գոյություն ունեն սպառնալիքներ, որոնք խախտում են տնտեսության անվտանգ վիճակը, ապա անհրաժեշտ է ունենալ անվտանգությունն ապահովելու մեխանիզմներ:


Ազգային SU էությունն ավելի պարզ բնութագրելու համար ավելացնենք, որ այն բացահայտվում է որոշակի ցուցանիշների համակարգի միջոցով և SU ապահովման համար կարևոր է ոչ թե այդ ցուցանիշների առկայությունը, այլ նրանց շեմային մեծությունները, որոնք ընդունվում են որպես յուրատեսակ ինդիկատորներ: Այդ մեծությունները թույլատրելի սահմանների այն մակարդակներն են, որոնցից շեղվելու դեպքում լուրջ խոչընդոտներ են առաջանում վերարտադրության տարբեր բաղադրիչների նորմալ զարգացման համար և SU ասպարեզում հանգեցնում են բացասական, կործանարար միտումների ձևավորման: Ավելացնենք նաև, որ այդ չափանիշների թույլատրելի սահմանները հաստատուն մեծություններ չեն և կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում:

¹ Նույն տեղում, էջ 23:

Տնտեսական անվտանգության գործոնների կառուցվածքը



Տնտեսական անվտանգության կազմակերպական կառուցվածքը



ԳԼՈՒԽ II. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1. ՏԱ ցուցանիշների շեմային մեծությունները

Տնտեսագիտական գրականության մեջ ՏԱ ցուցանիշների առավելագույն սահմանները¹ խմբավորվում են ըստ տնտեսության ոլորտների:

Առաջին խումբը միավորում է ազգային արտադրության զարգացման մակարդակը, երկրորդ խումբը՝ ֆինանսական և դրամավարկային իրավիճակը բնութագրող ցուցանիշները:

ՏԱ ռազմավարության մշակման ժամանակ կարևոր է հաշվի առնել ՏԱ այնպիսի կազմակերպական մոտեցումներ, ինչպիսիք են տեղային և գլոբալ սկզբունքները: Տեղայնության սկզբունքը ենթադրում է այնպիսի տնտեսական պայմանների ստեղծում, որոնք կարող են հակազդել ծագող տնտեսական վտանգավոր գործընթացներին և խթանել նրանց զարգացումը, իսկ գլոբալության սկզբունքը գործածվում է լոկալության սկզբունքի խախտման ժամանակ և ենթադրում է հետևանքների դեմ պայքարի լայնածավալ կազմակերպական միջոցառումների ստեղծում և դրանց իրականացում:

Ֆունկցիոնալ կողմնորոշվածության տեսանկյունից ՏԱ-ն կարող է մասնատվել ներքին և արտաքին տնտեսական պաշտպանողական մեխանիզմների: Արտաքին տնտեսական մեխանիզմը, որը վերաբերում է աստիճանակարգման առավել բարձր մակարդակի, քան ներքին տնտեսական մեխանիզմը, ենթադրում է տնտեսական համակարգի անվտանգության պայմանների ստեղծում: Կապը ներքին տնտեսական մեխանիզմի հետ իրականացվում է պետական բյուջեի միջոցներով: Այն պատասխանատվություն է կրում կայուն տնտեսական իրավիճակի ապահովման համար:

¹ Հաճախ դրանց փոխարեն օգտագործվում են «շեմային» կամ «սահմանային» եզրերը, ուստի, հետագա շարադրանքում մենք դրանք կօգտագործենք որպես հոմանիշներ:

Հայաստանի Հանրապետությունը, ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն հռչակվելուց հետո, ինքնուրույն պետք է լուծեր գոյատևման, կայացման, զարգացման և մի շարք այլ կենսականորեն կարևոր խնդիրներ: Այս կարգի խնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել ազգային տնտեսական շահերից բխող նպատակաուղղված և հետևողական տնտեսական քաղաքականություն, որի հիմքը և հաջողության գրավականը որոշակի թվով կենսականորեն կարևոր ոլորտների անվերապահ ապահովումն է պետության կողմից: Նախկին խորհրդային հանրապետությունների շուկայական տնտեսությանն անցումը, թերևս, ամենաձանր ազդեցություններով է ընթանում նաև մեր հանրապետությունում, ինչը պայմանավորված է տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Սակայն ամենակարևոր փաստը և, թերևս, ՀՀ ՏԱ թիվ մեկ սպառնալիքը հանրապետության բնակչության թվաքանակի աննախադեպ նվազումն է վերափոխումների արդյունքում: Ըստ տարբեր հետազոտողների գնահատականների՝ անկախացումից հետո հանրապետությունից արտագաղթողների թիվը տատանվում է 600 հազ.-ից մինչև ավելի քան 1250 հազ. մարդ¹, իսկ 2001թ. մարդահամարի արդյունքներով ՀՀ-ում առկա բնակչությունը կազմել է 3003 հազ. մարդ², որը մինչ այդ ներկայացվող պաշտոնական տվյալներից փոքր է 800 հազարով: Ստացվում է, որ հանրապետության տնտեսությունն ի վիճակի չեղավ դիմակայել տարաբնույթ ներքին և արտաքին սպառնալիքներին, ինչի արդյունքում անհատի բարեկեցության բարելավման նպատակով իրականացվող վերափոխումները բնակչությանը ստիպեցին զանգվածաբար հեռանալ հանրապետությունից՝ նվազեցնելով երկրի հիմնական ռեսուրսի՝ որակյալ աշխատուժի ներուժը:

ՀՀ ՏԱ ապահովման բարդությունները սկսվում են աշխարհաքաղաքական անբարենպաստ դիրքից և ռազմավարական նշանա-

¹ Վ.Ե.Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX դ. շեմին, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, Եր., 2002, էջ 308, և Յու.Գրիգորյան, Ժողովրդագրական վիճակը Հայաստանում, «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», թիվ 2, 2001:

² ՀՀ 2001 թվականի մարդահամարի արդյունքները (ՀՀ ցուցանիշները), Եր., 2003, էջ 143:

կության բնական ռեսուրսներով ապահովվածության ցածր աստիճանից: Մակայն այս բարդությունները չպետք է պատճառ հանդիսանան, որ դարեր շարունակ գոյատևած հայ ժողովուրդը ներկայիս տնտեսական խնդիրների պատճառով նոր փորձության ենթարկվի:

Տեղի է ունենում բնակչության եկամուտների շատ արագ կենտրոնացում բարձր եկամուտներ ունեցող բնակչության ձեռքում: Այսպես, 1991թ. բարձր եկամուտներ ունեցող բնակչության 20%-ի եկամուտները գերազանցում էին ցածր եկամուտներ ունեցող բնակչության 20%-ի եկամուտները 6,4 անգամ, 1992թ.՝ 7,2, 1993թ.՝ 9,0, 1994թ.՝ 20,6, 1995թ.՝ 27 և 1999թ.՝ 32 անգամ: Նման պայմաններում բնակչության զգալի մասը սպառման ամենօրյա ապրանքների նկատմամբ պահանջարկ չի ցուցաբերում, ուստի գների կայունությունը ոչ թե սպառման առարկաների առաջարկի ավելացման, այլ բնակչության եկամուտների դեռևս խիստ ցածր մակարդակի արդյունք է¹:

Հենց այս բարդությունների հաղթահարման և հանրապետության բնակչության գոյատևման ու զարգացման խնդիրն է արդիական դարձնում ՀՀ ՏԱ ապահովման հնարավորությունների ուսումնասիրությունը, քանի որ յուրաքանչյուր խնդրի լուծումն ավելի դյուրին է լինում դրա տնտեսական բաղադրիչի ապահովվածության պայմաններում:

Մեր հետազոտության հիմնական նպատակն է՝ միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա և ՀՀ առանձնահատկություններից ելնելով՝ ՀՀ տնտեսության յուրաքանչյուր հատվածի կենսականորեն կարևոր ոլորտները բնութագրող որոշակի թվով ցուցանիշների միջոցով ՀՀ ՏԱ ցուցանիշների համակարգի ձևավորումը և դրանց սահմանային կամ շեմային արժեքների որոշումը: Դա հնարավորություն կտա այդ ցուցանիշների սահմանային (շեմային) և փաստացի արժեքների տարբերության վերլուծության միջոցով բացահայտել և գնահատել ՀՀ ՏԱ սպառնալիքները, դասակարգել դրանք և առաջարկել սպառնալիքների չեզոքացման կոնկրետ ուղիներ:

¹ Հ.Բ. Դուշյան, ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը, Բանբեր Երևանի համալսարանի, 2000, N 3, էջ 19:

Ի տարբերություն տնտեսական անվտանգության հարցի շուրջ կատարված դեռևս փոքրաթիվ հետազոտությունների, մեր ուսումնասիրությունն առանձնանում է գործնական կիրառության առավել լայն հնարավորություններով: ՏՄ առաջարկվող ցուցանիշները, մեր կարծիքով, ներառում են հանրապետության տնտեսության առանցքային, կենսականորեն կարևոր ոլորտները ՏՄ տեսանկյունից, ինչը որոշակիացնում է ՀՀ տնտեսական ռազմավարության մշակման առաջնահերթ և հիմնական խնդիրների շրջանակները, իսկ տնտեսական քաղաքականության իրականացման ժամանակ ցուցանիշների համար առաջարկվող սահմանային (շեմային) արժեքները հնարավորություն են տալիս, փաստացի արժեքների հետ համեմատելու միջոցով, գնահատել փոփոխությունները և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել: Հետազոտության ընթացքում մշակված մեթոդաբանության օգնությամբ բավականաչափ հստակությամբ կարելի է որոշել ՀՀ ՏՄ սպառնալիքները: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլին բնորոշ սպառնալիքների վերացման ուղղությամբ մեր կողմից կատարված առաջարկությունները և ուղիները կարող են գործնականում կիրառվել համապատասխան պետական կառույցների կողմից:

Հետազոտության մեջ օգտագործված մեթոդաբանության միջոցով հնարավոր է բացահայտել նաև այն նոր սպառնալիքները, որոնք կառաջանան հետագա տարիներին և որոշել դրանց սահմանային (շեմային) արժեքները ՀՀ ՏՄ տեսանկյունից:

Գործնական նպատակներով կարող են օգտագործվել նաև ուսումնասիրության տեսական մասն ընդհանրացնող ՏՄ հասկացության զարգացումների վերաբերյալ եզրակացությունները: Մա հասկապես կարևորվում է ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում երկարաժամկետ ծրագրերի մշակման տեսանկյունից:

Անհրաժեշտ է նշել, որ «տնտեսական անվտանգության» հիմնական տարրերի և հասկացությունների ուսումնասիրությունը մինչ այժմ ՀՀ-ում կատարված սակավաթիվ հետազոտություններում բավականաչափ խորությամբ չի ներկայացվել: Մասնավորապես, 2004թ. Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի կողմից իրականացվեց անվտանգության

հիմնախնդիրներին նվիրված հետազոտություն, որին մասնակցել են 50 փորձագետ և 2021 հարցվող Երևան քաղաքից ու տարբեր մարզերից (հետազոտության արդյունքները ներկայացված են *հաշվելված 4-ում*): Տվյալ ուսումնասիրության հիմնական ուղղվածությունը, սակայն, քաղաքական է, և մեր կողմից փորձ է արվում լրացնել ՏԱ-ին վերաբերող վերլուծությունների բացը:

ՏԱ ապահովումը պետության կարևորագույն գործառնություններից է: Հարցով զբաղվող գիտնականների մեծամասնությունը եզրակացնում է, որ ՏԱ-ն կապահովվի, եթե միաժամանակ և ճիշտ գնահատվեն դրա երկու հիմնական տարրերը՝ խոցելիության աստիճանը և սպառնալիքի իրականացման հնարավորությունը:

Խոցելիությունն անհրաժեշտ է հասկանալ որպես գործընկերների միջև այնպիսի կախվածություն, որի դեպքում արտաքին տնտեսական հարաբերությունների վատթարացումը առաջացնում է հարմարվելու հետ կապված այնպիսի ծախսեր, որոնք տվյալ երկրի տնտեսությունն ի վիճակի չէ կրել:

Նշվեց, որ ՏԱ հասկացությունը կառավարման և կարգավորման գործընթաց է «ներմուծվում» տնտեսական ցուցանիշների և չափանիշների համակարգի միջոցով:

Տնտեսագիտական գրականության մեջ ՏԱ գնահատման, նրա չափանիշների վերաբերյալ գոյություն ունեն էապես տարբերվող մոտեցումներ: Հատկապես մեծ տարածում են ստացել պրոֆեսոր Ս.Գլազևի առաջարկած ցուցանիշները¹: Համաձայն Ս.Գլազևի առաջարկած մեթոդի, որոշակի ժամանակահատվածի համար ՏԱ ցուցանիշները համեմատվում են իր կողմից առաջարկված ցուցանիշների շեմային մեծությունների հետ: Շեմային ցուցանիշների մակարդակը գերազանցելու (կամ դրանցից շեղվելու) դեպքում երկրի ՏԱ հիմնախնդիրների լուծումը դառնում է հրատապ: Այստեղ կարևոր դեր են խաղում վիճակագրական տվյալների առկայությունը և դրանց որակը: Սովորաբար, որպես ՏԱ շեմային մեծություններ կարելի է ընդունել միջին համաշխարհային ցուցանիշները: Օրինակ, ներմուծվող պարենային ապրանքների բաժինը չպետք է գե-

¹ Глазьев С.Ю., Основа обеспечения экономической безопасности России – альтернативный реформационный курс, Российский экономический журнал, N1, N2, 1997.

րազանցի երկրի ապրանքային շուկայի 25%-ը, վերամշակող արդյունաբերական արտադրանքի բաժինը արտահանման մեջ չպետք է պակաս լինի 40%-ից, բարձր տեխնոլոգիաների արտադրանքը՝ ոչ պակաս թողարկվող արտադրանքի 10-15%-ից, պետության կողմից գիտության ֆինանսավորումը՝ ՀՆԱ 2%-ից և այլն¹:

Պետք է նշել նաև, որ ՏԱ-ն առավելագույնս ապահովված է, եթե բավարարված են բոլոր ցուցանիշների շեմային մեծությունները: Ավելացնենք, որ բոլոր շեմային մեծությունները գործնականում միաժամանակ կարելի է ապահովել միայն տնտեսության բարձր զարգացածության պայմաններում:

Շեմային ցուցանիշների մեծությունները պետք է ուղղորդվեն, շտկվեն ժամանակի և վայրի (երկրի աշխարհագրական դիրքի) գործոններով, այլ խոսքով՝ ai ցուցանիշի i -րդ սահմանային մեծությունը ֆունկցիա է երկու փոփոխականներից՝ ժամանակից t և երկրի տարածքից՝ x , այսինքն՝ $ai = f_i(t, x)$:

Պետությունը, շեմային ցուցանիշների մեծությունները հիմնավորելուց հետո, պետք է ստեղծի մեխանիզմներ, որոնք կապահովեն երկրի ՏԱ-ն: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել օրենսդրափրավական, տնտեսական, վարչական բնույթի միջոցառումների համալիր, որի իրականացման վերջնական նպատակն այնպիսի իրավիճակների կանխումն է, երբ փաստացի և կանխատեսվող ցուցանիշ-ինդիկատորների մեծությունները շեղվում են դրանց շեմային մեծություններից անցանկալի ուղղությամբ և չափերով: Պարզ է, որ սա ահագանգ կհանդիսանա տնտեսության այս կամ այն ոլորտում կամ ճյուղում տեղի ունեցող անցանկալի երևույթները վերացնելու համար: Դրա համար անհրաժեշտ է կատարել համակարգված մոնիթորինգ՝ պարզելու համար, թե ՏԱ ցուցանիշներն ինչ որակական վիճակում են գտնվում:

ՏԱ ցուցանիշների մոնիթորինգ: Նպատակն է տնտեսական քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմիններին ժամանակին տեղեկացնել վտանգավոր իրավիճակի մասին, եթե տնտեսությունը գործում է անվտանգությանը բավարարող ցուցանիշների

¹ См. в Основы экономической безопасности, под ред. Е.А. Олейникова, Москва, 1997, с. 68-71:

շրջանակում: Իսկ եթե քաղաքականությունն ուղղված է այդ ցուցանիշներին հասնելուն, մոնիթորինգի նպատակն է վերահսկել անվտանգության ցուցանիշների տեմպերը և ուղղությունները:

Այսպիսով, կարելի է ասել, որ ՏԱ մոնիթորինգի նպատակն է արձանագրել իրական սպառնալիքների վերացումը կամ դրանց հավանականությունը և հակառակը:

Մոնիթորինգի կարևորությունը կարելի է նաև մեկնաբանել ժամանակային լագի տեսանկյունից: Ինչպես իրականացվող տնտեսական քաղաքականության արդյունքը երևում է որոշակի ժամանակ անց, այնպես էլ տնտեսական անկումային գործընթացները, որոնք անմիջապես արտացոլվում են տնտեսական անվտանգության ցուցանիշներում, անդրադառնում են հասարակության սոցիալական վիճակի վրա որոշակի ժամանակ հետո: Այսպիսով, մոնիթորինգը թույլ է տալիս ավելի արդյունավետ դարձնել տնտեսական քաղաքականությունը:

Զարգացող երկրների համար ընդունելի է ՏԱ և նրա ցուցանիշների հասկացությունը, որն առաջարկում է Ա.Էլարիոնովը¹, ըստ որի, երկրի ՏԱ-ն տնտեսական, քաղաքական և իրավական պայմանների այնպիսի համակցություն է, որն ապահովում է երկարաժամկետ հատվածում բնակչության մեկ շնչի հաշվով տնտեսական ռեսուրսների առավելագույն քանակության արտադրության կայուն տեմպեր՝ ամենաարդյունավետ միջոցներով:

Երկրի զարգացման տնտեսական ու սոցիալական բնութագրերը կանխորոշող կարևոր գործոն է նրա տնտեսական զարգացման մակարդակը, որը, որպես կանոն, որոշվում է բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվող ՀՆԱ մեծությամբ: Այս ցուցանիշի մեծությունից զգալիորեն կախված են բնակչության կենսամակարդակը, կյանքի որակը և տևողությունը, առողջության վիճակը, սնման որակը, կրթական մակարդակը, երկրի և հասարակության ֆինանսական հնարավորությունները՝ բնակչության սոցիալական պաշտպանվածությունն ապահովելու համար, գիտության, արվեստի, մշակույթի զարգացումը և այլն: Ուստի, տնտեսական զարգացման մակարդա-

¹ Се́ у Илларионов А., Попытки проведения политики финансовой стабилизации в СССР и в России, Вопросы экономики, 1999, N7, с. 27.

կը ՏԱ վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշներից մեկն է: Հայաստանը, ինչպես և տնտեսական զարգացման ցածր մակարդակ ունեցող մյուս երկրները, կարող է հաղթահարել զարգացած երկրներից հետ մնալու գործընթացը միայն մեկ միջոցով՝ երկարաժամկետ հատվածում զարգացման բարձր և կայուն տեմպերի ապահովմամբ: Ուստի, տնտեսական աճը, որը բնութագրվում է բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ հավելաճի (նվազման) տեմպերով, ՏԱ կարևորագույն ցուցանիշն է: Ցավոք, վերջին տարիներին մեր հանրապետության տնտեսական աճի բարձր տեմպերը չեն ուղեկցվել բնակչության կենսամակարդակի համարժեք բարձրացմամբ: Հարկ է նշել, որ առանձին երկրների տնտեսության զարգացման աստիճանից, սոցիալ-տնտեսական և, մասնավորապես, շուկայական հարաբերությունների խորացման մակարդակից, հասարակությունում ձևավորված ավանդույթներից, աշխարհագրական դիրքից ու աշխարհաքաղաքական իրավիճակից և այլ գործոնների տարբերություններից կախված՝ յուրաքանչյուր երկրի համար ՏԱ ցուցանիշների շեմային մեծությունները կլինեն տարբեր:

ՏԱ ցուցանիշների հիմնական խմբերը և յուրաքանչյուր խմբում ընդգրկված ցուցանիշների համակարգն ունեն հետևյալ բովանդակությունը՝

1. Ընդհանուր տնտեսական ներուժը բնութագրող ցուցանիշներ՝
ա) ՀՆԱ ծավալը՝ բացարձակ մեծությունը, մեկ շնչին ընկնող մեծությունը (հաշվարկված անհրաժեշտ նվազագույն մեծությունը)՝ սահմանակից երկրների, ռազմավարական մրցակիցների և գործընկեր երկրների, միջին համաշխարհային մակարդակի համեմատ,

բ) ՀՆԱ կառուցվածքը՝ սպառման, կուտակման և այլն,

գ) ստվերային տնտեսության ծավալների գնահատումը (չգրանցված ՀՆԱ ծավալները),

դ) ներդրումների ծավալները ՀՆԱ-ում (%) և դրանց անհրաժեշտ նվազագույն մեծությունը (ելնելով վերարտադրության գործընթացն ապահովելու պայմանից),

ե) արդյունաբերական արտադրության ծավալները՝ ընդհանուր և մեկ շնչին ընկնող ծավալները:

2. Պաշտպանունակության տնտեսական ապահովվածությունը բնութագրող ցուցանիշներ՝

ա) ռազմական ծախսերի բաժինը ՀՆԱ-ում՝ տոկոսային հարաբերությամբ և հիմնական, առաջին հերթին՝ հարևան երկրների, աշխարհաքաղաքական մրցակիցների ծախսերի համեմատ,

բ) ռազմաարդյունաբերական համալիրների հզորությունները,

գ) զինված ուժերի հագեցվածությունն առաջադեմ տեխնիկայով,

դ) ռազմական ներքին կարիքների բավարարման մասը ներմուծման հաշվին,

ե) ռազմական արդյունաբերության գիտական ապահովվածությունը, մասնավորապես՝ նվազագույն անհրաժեշտ ծախսերը և կատարվող ծախսերը, այդ թվում՝ հարևան երկրների, հիմնական աշխարհաքաղաքական հակառակորդների ծախսերի համեմատ¹:

3. Տնտեսության ինքնուրույն զարգանալու հնարավորությունները բնութագրող ցուցանիշներ՝

ա) պետական բյուջեի ծախսումները գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար՝ մեկ շնչին ընկնող մեծությունը և տոկոսներով ՀՆԱ նկատմամբ (ծախսերի նվազագույն չափը առաջատար երկրների նույնատիպ ցուցանիշների համեմատ),

բ) հիմնարար և կիրառական գիտությունների վիճակը բնութագրող ցուցանիշներ,

գ) մարդկային ներուժի վիճակը (զարգացող երկրների, միջին համաշխարհային ցուցանիշի, սահմանակից, ռազմավարական հակառակորդ և գործընկեր պետությունների ցուցանիշների համեմատ), այդ թվում՝ բնակչության թվի մեջ բարձրագույն կրթություն ունեցող անձանց տոկոսը և 1000 մարդու հաշվով ուսանողների թիվը,

դ) մրցունակության մակարդակը (հաշվարկված միջպետական համադրության մեթոդիկայով),

ե) կուտակման նորմը՝ արագ զարգացող երկրների նույնատիպ ցուցանիշների համեմատ,

զ) մտավոր ներուժի պաշտպանվածությունը՝ «ուղեղների»

¹ Տե՛ս, օրինակ, С.Минасян, Милитаризация Южного Кавказа и развитие вооруженных сил государств региона, 21-րդ ԴԱԸ, «Նորավանք», # 4, 2004, с. 27-62:

արտահոսքի ծավալները և արտոնագրային (լիցենզիոն) առևտրի հաշվեկշիռը,

է) կենսակարևոր արտադրատեսակների և ծառայությունների արտադրությունը թույլատրելի նվազագույն մակարդակի համեմատ (ելնելով պարզ վերարտադրության կարիքներից)՝ մեկ շնչին ընկնող պարենային ապրանքներ (սննդամթերքի 19 տեսակ), էներգակիրներ (ՀՆԱ հարաբերակցությամբ, մեկ շնչին ընկնող մեծությունը), տրանսպորտային միջոցներ, հեռակապի և այլ միջոցներ,

ը) պետական պահուստների չափը (օրերով) և նրանց անհրաժեշտ նվազագույն մեծությունը,

թ) արտադրական կարողությունների վիճակը՝ հիմնական միջոցների մաշվածության աստիճանը, արտադրվող արտադրանքի տեխնիկական մակարդակը, ռեսուրսախնայողականությունը (զարգացած երկրների համեմատ), հայտնագործությունների ընդհանուր թիվը, նոր տեսակի արտադրություններին բաժին ընկնող մասը ՀՆԱ-ում,

ժ) մեկ միավոր արժեքի հաշվով հարկային բեռը,

ժա) արտադրության ծավալի առաձգականությունը՝ կախված ուղղակի և անուղղակի հարկերից (վերջին տարիների համար),

ժբ) վերանորոգման և վերականգնման ծառայությունների կարողությունները,

ժգ) շինարարական կազմակերպությունների կարողությունները նվազագույն անհրաժեշտ մեծության համեմատ:

4. Բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներ՝

ա) բնակչության մեջ նվազագույն կենսամակարդակն ապահովող եկամտից ցածր ստացող մարդկանց տոկոսը,

բ) բնակչության 10% ամենաբարձր եկամուտ ստացող խմբի և 10% ամենացածր եկամուտ ստացող խմբի եկամուտների տարբերությունը (Ջինիի գործակիցը),

գ) սոցիալապես պայմանավորված հիվանդությունների դինամիկան,

դ) սոցիալական երաշխիքների տնտեսապես ապահովվածությունը (թույլատրելի նվազագույն մեծությունը)՝ ծախսերը

առողջապահության համար (մեկ շնչին ընկնող մեծությունը, ՀՆԱ նկատմամբ %-ով) և ծախսերը մշակույթի համար (%-ով պետական բյուջեի ծախսերի նկատմամբ),

ե) գործազրկությունը տնտեսությունում ամբողջովին և ըստ տարածաշրջանների (հասարակական կայունության սահմանագծի համեմատ),

զ) հիմնական պարենային և ոչ պարենային ապրանքների սպառումը, բնակարանով ապահովվածությունը,

է) կյանքի միջին տևողությունը (զարգացած երկրների ցուցանիշների համեմատ),

ը) մանկամահացությունը (զարգացած երկրների ցուցանիշների համեմատ),

թ) մեկ միավոր աշխատավարձին ընկնող հարկային բեռը:

5. Ֆինանսական համակարգի անվտանգությունը բնութագրող ցուցանիշներ՝

ա) ինֆլյացիայի մակարդակը (առավելագույն թույլատրելի մեծությունը),

բ) ներքին պարտքի ծավալներն ամբողջովին, ՀՆԱ համեմատ (%) և մեկ շնչին ընկնող մեծությունը,

գ) ոսկու և արտարժույթի պաշարների մեծության հարաբերակցությունն արտաքին առևտրի ծավալին (դրանց հարաբերակցության թույլատրելի մեծությունն՝ արտահայտված տոկոսներով),

դ) բյուջեի դեֆիցիտը ՀՆԱ համեմատ՝ արտահայտված տոկոսներով (թույլատրելի սահմանագծի մեծությունը),

ե) ՀՆԱ-ում դրամական զանգվածի (M2) չափաբաժինը (արտահայտված տոկոսներով),

զ) արտարժույթի զանգվածի հարաբերությունը դրամական զանգվածին (M2),

է) (M2) կանխիկ դրամի զանգվածի (M0) հարաբերությունը դրամական զանգվածին,

ը) անկանխիկ ձևով կատարված գործարքների ծավալն ընդհանուր գործարքների մեջ,

թ) ժամկետանց վճարումների ծավալը բյուջե և բյուջեից,

դրանց հարաբերությունը ՀՆԱ-ին՝ արտահայտված տոկոսներով,
ժ) անհուսալի վարկերի մասնաբաժինը բանկերի ակտիվներում,
ժա) տնտեսության իրական հատվածին տրամադրված վարկերի մասնաբաժինը բանկերի ակտիվներում:

6. Արտաքին տնտեսական անկախությունը բնութագրող ցուցանիշներ՝

ա) զուտ արտահանման դեֆիցիտի չափերը (առավելագույն թույլատրելի մեծությունը),

բ) կարևորագույն արտադրատեսակների սպառման մեջ ներմուծվող ապրանքների մասնաբաժինը (առավելագույն թույլատրելի չափը),

գ) հայրենական արտադրության հասարակական սպառման ապրանքների ծավալից արտահանվող արտադրանքի ծավալի չափը (թույլատրելի նվազագույն մեծությունը՝ ելնելով ներմուծման ծավալից),

դ) ներքին գների հարաբերությունը ապրանքների գնողունակության համարժեքին (PPP, հիմնական հումքային ապրանքների խմբի համար),

ե) արտահանվող կապիտալի ծավալի հարաբերությունը՝ ներքին ներդրումների ծավալներին և ՀՆԱ-ին,

զ) օտարերկրյա կազմակերպությունների կողմից վերահսկման ծավալները՝ ապրանքների և ծառայությունների արտադրության ճյուղերում և բնական ռեսուրսների արդյունահանման ոլորտում:

7. Տնտեսական անվտանգության կառավարչական դրույթները բնութագրող ցուցանիշներ՝

ա) տնտեսական գործընթացների կառավարելիությունը՝ սոցիալ-տնտեսական ծրագրերի տարեկան կանխատեսումների համապատասխանությունը իրական արդյունքներին, բյուջեի եկամտային մասի կատարումը, տնտեսական անվտանգության չափանիշների ապահովման մակարդակը,

բ) իշխանության գործադիր մարմինների աշխատանքի որակը՝ բյուջեի ծախսային մասի կատարումը և գնահատականը,

բնակչության և տնտեսավարող սուբյեկտների առջև ունեցած պետական պարտավորությունների կատարումը,

զ) պետության հսկողության մակարդակը համապատասխան տնտեսական գործունեության ոլորտներում՝ բնական մենաշնորհների, պետական հատվածի և անօրինական բիզնեսի նկատմամբ,

դ) տնտեսական ոլորտների և տնտեսական գործընթացների ցանկը, որոնք արտակարգ իրավիճակներում պահանջում են անմիջական պետական կառավարում ու կարգավորում և դրանց իրավական ու կազմակերպչական պայմանների առկայությունը,

ե) իշխանությունների օրենսդրական և կազմակերպչական հնարավորությունները:

SU մի քանի ցուցանիշների շեմային մեծությունները: Վերը նշված ցուցանիշների շեմային մեծությունները որոշվել են միջազգային փորձի հիման վրա: Դրանց մեծ մասը կիրառելի է բոլոր երկրների համար՝ անկախ նրանց զարգացման աստիճանից¹: SU որոշ ցուցանիշների շեմային մեծություններն այս կամ այն երկրի համար կարող են տարբեր լինել միայն բնակչության պայմանների, պատմական զարգացման, ժողովրդագրական ցուցանիշների և սովորույթների տարբերությունների պատճառով՝ այն էլ SU սահմանափակ թվով ցուցանիշների համար:

Ստորև ներկայացնենք SU մի շարք ցուցանիշների շեմային մեծությունները:

Մասնավորապես, կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներից դեցիլային գործակիցը (եկամուտների տարբերակվածությունը՝ 10% ամենահարուստ և 10% ամենաաղքատ ընտանիքների եկամուտների մեջ) չպետք է գերազանցի վեցապատիկը: Ջինիի գործակիցը² (եկամուտների կենտրոնացման գործակիցը) արդյունաբերական զարգացած երկրներում հավասար է 0,15-0,17-ի: Ինչքան այս գործակիցը մոտենում է 1-ին, այնքան մեծանում է անհավասարու-

¹ Տե՛ս Основы экономической безопасности, под ред. Е.А. Олейникова, Москва, 1997, с. 68-71:

² Ավելի մանրամասն տե՛ս «Ինչո՞ւ են կառուցում «Լորենցի կորը» և հաշվարկում «Ջինիի գործակիցը», Աշոտ Մարկոսյան, Տնտեսագիտություն բոլորի համար, Եր., «Տիգրան Մեծ», 2001 (էջ 130-132):

թյունը: Աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակն արդյունաբերական զարգացած երկրներում 8,7- 9% է կազմում:

Ինֆլյացիայի տարեկան նորմալ մակարդակ է համարվում 5-6%-ը: 6-10% տարեկան ինֆլյացիայի դեպքում մշակվում և իրականացվում են այն իջեցնելու հատուկ միջոցառումներ:

Միջազգային փորձը ցույց է տվել, որ տնտեսության արմատական բարեփոխումների ժամանակաշրջանում գործազրկության մակարդակը (նորմը) թույլատրելի է 15,7-20-ի չափով, սակայն այն կարող է պահպանվել 3-5 տարի: Իսկ ընդհանրապես բնականոն զարգացած երկրներում գործազրկությունը կազմում է շուրջ 6-10%:

Տնտեսական աճ: Իրական ՀՆԱ աճի տեմպերի բնականոն մեծություն է տարեկան 2,7- 4%-ը: Տնտեսության արմատական բարեփոխումների ժամանակաշրջանում թույլատրելի են բացասական նշանով ցուցանիշները կամ տարեկան 0,5-1,5%-ը, սակայն այն չպետք է պահպանվի 2-3 տարուց ավելի: Նման տեմպերի դեպքում անթույլատրելի է ՀՆԱ ծավալների 50%-ից ավելի իջեցումը:

Ապրանքների գնային զանգվածի և դրամով ապահովվածության հարաբերակցությունը: Փորձը ցույց է տալիս, որ այս բնագավառում նրանց շեմային մեծություն է 1:1,3 հարաբերակցությունը: Այս շեմային ցուցանիշից շեղվելը կրերի ձեռնարկությունների (առևտրային կազմակերպությունների) դրամական միջոցների անբավարարվածության և, դառնալով անվճարունակ, նրանք կկրճատեն արտադրության ծավալները՝ բարձրացնելով ապրանքների գները, ինչն իր հերթին կավելացնի ինֆլյացիայի տեմպերը և կհանգեցնի պահանջարկի նվազմանը: Արդյունքում՝ կառաջանան նոր անվճարունակ ձեռնարկություններ (առևտրային կազմակերպություններ), և տեղի կունենա արտադրության նոր անկում:

Գիտության և կրթության ծախսեր: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ եթե գիտության համար կատարված ծախսերը չեն գերազանցում ՀՆԱ 2%-ը, ապա հասարակությունը մեծապես տուժում է գիտության նվաճումները տնտեսության մեջ չներդնելու պատճառով: Իսկ եթե կրթության համար կատարված ծախսերը չեն գերազանցում ՀՆԱ 5%-ը, ապա ազգը դատապարտված է մտավոր ոչնչացման:

Տոկոսադրույքներն ընդհանրապես պետք է լինեն ավելի ցածր, քան տնտեսությունում գործող շահութաբերության ցուցանիշները: Աշխարհում վարկային տոկոսադրույքների չափն ընդունված է տարեկան 5-7%:

Որպես ՏՄ կարևորագույն ցուցանիշներ, որոնք հաճախ են օգտագործվում արտասահմանյան փորձագետների կողմից, կարելի է նշել հետևյալները՝

Տնտեսական.

1. ՀՆԱ ծավալի կրճատում բազային տարվա նկատմամբ (%),
2. պարենային կախվածություն (ներմուծվող մթերքի սպառման մասնաբաժինը, %),
3. արտահանման ծավալի մեջ բարձր տեխնոլոգիաների մասնաբաժինը (%),
4. գիտությանն ուղղված հատկացումները (%-ով ՀՆԱ նկատմամբ):

Մոնիթինգային.

1. նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցությունը,
2. դեցիլային գործակիցը (10% ամենահարուստ խավի եկամուտների հարաբերությունը 10% ամենաաղքատների եկամուտներին),
3. կենսաապահովման նվազագույնի և միջին եկամտի հարաբերությունը,
4. գործազրկության մակարդակը (% հաշվի առնված նախաձեռնված գործազրկությունը),
5. ծնվածների և մահացածների հարաբերակցությունը մեկ տարվա կտրվածքով:

Քաղաքական.

1. իշխանության օրինականության մակարդակը (քաղաքացիների այն տոկոսը, ովքեր չեն վստահում իշխանության մարմիններին):

SU բոլոր ցուցանիշները բաժանվում են երեք խմբի. համեմատվող, բացարձակ և համամասնական: Համեմատվող ցուցանիշների շեմային մեծությունները որոշվում են՝ համեմատության մեջ դրվելով տարածաշրջանային հիմնական մրցակիցների նույն ցուցանիշների մեծությունների հետ: Համամասնական ցուցանիշներն արտահայտում են SU համակարգի տարբեր բաղադրիչների համամասնությունները, որոնք ապահովում են համակարգի կայունությունը՝ անկախ տնտեսության զարգացման այս կամ այն վիճակից: Բացարձակ ցուցանիշների շեմային մեծությունները որոշվում են բնակչության կենսական բնական հատկանիշներով և կախված են հասարակության ներսում ձևավորված ավանդույթներից, սովորույթներից, ինչպես նաև բնակլիմայական պայմաններից:

2.2. SU մակարդակի գնահատումը

Ներկայումս առանձնապես կարևոր է ՀՀ SU գնահատման մեթոդաբանական հիմքերի սահմանումը, որի միջոցով որոշվում է ՀՀ SU ցուցանիշների կազմը և կատարվում է դրանց խմբավորում, այնուհետև յուրաքանչյուր ցուցանիշի համար կատարվում է մանրամասն վերլուծություն դրանց սահմանային (շեմային) արժեքների որոշման նպատակով: Այդ նպատակով ներկայացվում է նաև ՀՀ SU ցուցանիշների դասակարգման մատրիցն իր մեթոդական մշակումներով:

Պետության կողմից SU ապահովման գործառույթի իրականացման համար կարևորագույն գործիքներ են հանդիսանում SU ցուցանիշների համակարգի կազմավորումը և դրանց սահմանային (շեմային) արժեքների որոշումը: Սահմանային (շեմային) արժեքները քանակական պարամետրեր են, որոնց միջոցով հնարավոր է դառնում գնահատել տնտեսության որոշակի ոլորտներում ձևավորված դրության խոցելիության և սպառնալիքի չափը՝ SU տեսանկյունից: Այլ կերպ ասած՝ SU ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքների որոշման միջոցով պետության տնտեսական շահերին տրվում է քանակական որոշակիություն:

SU ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքների որոշ-

ման համար անհրաժեշտ է պետության տնտեսական շահերը սկզբունքորեն գնահատել և հիմնավորել: Քանի որ մեր հանրապետությունը մինչև այժմ չունի ազգային տնտեսական շահերի հիման վրա կազմված և հրապարակված երկարաժամկետ տնտեսական քաղաքականության ծրագիր, ապա տվյալ պահին որպես այդպիսիք կարելի է ընդունել սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքային ընդհանուր բնույթի դրույթները և նախագահի ելույթներում ու կառավարության գործունեության ծրագրում ներկայացված նպատակները:

ՀՀ ՏՄ ցուցանիշները, երկրի տնտեսական շահերին համապատասխան, նպատակահարմար է խմբավորել ըստ տնտեսության հատվածների. իրական, հարկաբյուջետային, ֆինանսական և արտաքին: Որպես ածանցյալ ցուցանիշներ հանդես են գալիս սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշները:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տնտեսական գրականության մեջ և պաշտոնական փաստաթղթերում առաջարկվում են ՏՄ սպառնալիքները բնութագրող ցուցանիշների կազմի տարբերակներ: Ընդ որում, այդ ցուցանիշների թվի անսահմանափակ ավելացման և դրանցում զուտ անցումային տնտեսությանը բնորոշ սովորական խնդիրների ներառման միտում է նկատվում: Այսպիսի մոտեցման դեպքում ՏՄ խնդիրը տարրալուծվում է երկրի տնտեսական զարգացման ընդհանրական բնութագրիչների մեջ, որը միայն բարդացնում է ՏՄ ապահովման խնդիրը: Թեմային առնչվող գրականության մեջ քիչ չեն նաև այնպիսի ցուցանիշների ներառման դեպքերը (օրինակ, սովերային տնտեսության չափը, շրջանառության մեջ կանխիկ արտարժույթի քանակը, արդյունաբերական արտադրանքի մեջ նոր արտադրատեսակների տեսակարար կշիռը, օտարերկրյա սեփականատերերի տեսակարար կշիռն ընդհանուր սեփականատերերի մեջ և այլն), որոնց քանակական չափումը կատարվում է փորձագիտական գնահատականների միջոցով և որոնք հաճախ էապես տարբերվում են միմյանցից:

ՀՀ ՏՄ-ն բնութագրելու նպատակով տնտեսության յուրաքանչյուր հատվածի կենսականորեն կարևոր ոլորտները բնութագրող հիմնական ցուցանիշների ընտրության արդյունքում կազմավորվում է ընդհանրական աղյուսակը՝ ցուցանիշների համապատաս-

խան դինամիկայով:

Անվտանգության գնահատման ժամանակ կարևոր են ինչպես որակական, այնպես էլ քանակական չափանիշները: Նախ անդրադառնանք որակական չափանիշներին:

Ազգային անվտանգության առաջին զույգ որակական չափանիշները բխում են Բարի Բուզանի հետևյալ սահմանումից. «Անվտանգության դեպքում քննարկումը սպառնալիքից ազատություն հետամտելու վերաբերյալ է: Երբ այդ քննարկումը միջազգային համակարգի համատեքստում է, ապա անվտանգությունը վերաբերում է պետությունների և հասարակությունների՝ սեփական անկախ ինքնությունը և ֆունկցիոնալ ամբողջականությունը ապահովելու ընդունակությանը»: Փաստորեն, այդ չափանիշները սահմանվում են ընդունակությունների և համակարգային ամբողջականության եզրերով՝

1. սպառնալիքից ձերբազատվելու քաղաքականություն հետամտելու հասարակության, պետության ընդունակությունը,
2. սեփական անկախ ինքնությունը և ֆունկցիոնալ ամբողջականությունը պահպանելու՝ պետությունների ու հասարակությունների ընդունակությունը:

Վալտեր Լիպմանի կարծիքով, «ազգն անվտանգ է այն չափով, որ չափով էական արժեքների գոհաբերություն ունենալու վտանգի տակ չէ, եթե ուզում է խուսափել պատերազմից, իսկ մարտահրավերի դեպքում ընդունակ է դրանք պահպանել այդպիսի պատերազմում հաղթանակ տանելու միջոցով»: Այս սահմանումից բխող հաջորդ երկու չափանիշներն են՝

1. պատերազմից խուսափելու դեպքում սեփական արժեքների պաշտպանվածության աստիճանը, դրանք պաշտպանելու ունակությունը,
2. մարտահրավերների դեպքում հաղթանակ տանելու միջոցով դրանք պաշտպանելու ունակությունը¹:

¹ Ս.Սաֆարյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 81:

Աղյուսակ 2.1

Հայաստանի ՏԱ-ն բնութագրող մի շարք ցուցանիշներ 1996-2003թթ.
(որպես բազիսային տարի վերցված է 1990թ.)¹

Ցուցանիշներն ըստ խոշորացված խմբերի	Շեմային նշանակությունը	փաստացի Հայաստանում		
		1996թ.	2000թ.	2003թ.
1. Տնտեսական				
ա) ՇՆԱ անկումը բազիսային մակարդակների նկատմամբ, %	30 - 40	-57,5	-34,0	+3,7
բ) պարենային կախվածության մակարդակը (սպառված ներմուծվող սննդամթերքի բաժինը), %	30 - 35	-	-	50,8
գ) արտահանման մեջ բարձր տեխնոլոգիական արտադրանքի բաժինը, %	10 - 15	-	-	-
դ) գիտության վրա կատարված հատկացումները ՇՆԱ նկատմամբ, %	2	0,26	0,15	0,18
2. Սոցիալական				
ա) նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցությունը	1 : 3	1 : 88	1 : 22	1 : 15,4
բ) դեցիլային գործակից (10% առավել հարուստների եկամուտների և 10% առավել աղքատների եկամուտների հարաբերակցությունը)	10 : 1	152,7 : 1	115,5 : 1 ¹	42 : 1 ²
գ) աղքատության շեմին գտնվող (աղքատ և շատ աղքատ) բնակչությունը, %	10	54,7	55,1 ¹	42,9 ¹
դ) գործազրկության մակարդակը, %	10	9,3	11,7	10,1
ե) 100 հազ. բնակչությանն ընկնող հանցագործության թիվը (հազարներով)	5	0,33	0,32	0,34
զ) ծնվողների և մահացողների հարաբերակցությունը	100 : 100	128 : 66	90 : 63	111 : 80
է) 100 հազ. բնակչությանն ընկնող հոգեկան շեղում, ՄԻԱՎ ունեցողների թիվը	284	933	860	1080 ³

¹ 1999թ. տվյալներով:

² 2003թ. տվյալներով ամենաաղքատ 10%-ի ընդհանուր եկամուտը մեկ շնչի հաշվով կազմել է 5,0%, իսկ ամենահարուստ 10%-ինը՝ 21,1%:

³ 2002թ. տվյալներով:

Կարևոր է նշել, որ տարբեր երկրների ՏԱ ցուցանիշների համակարգը և դրանց սահմանային (շեմային) արժեքները տարբերվում են միմյանցից: Դա պայմանավորված է ազգային շահերի և դրանք իրականացնելու ուղիների տարբերությամբ, ինչը հստակորեն երևում է տնտեսական զարգացածության տարբեր աստիճաններում գտնվող երկրների գիտնականների կողմից տրված ՏԱ սահմանումներից: Այս տարբերությունը հատկապես ցայտուն է

¹ Աղյուսակը կազմված է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատություն», ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 146-ի, «Պարենային ապահովություն և աղքատություն. 2004 թվականի հունվար-դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ, Եր., 2005, էջ 10, 48-ի, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004», ՀՀ ԱՎԾ, 2004, էջ 93-ի տվյալներով:

արտահայտվում առանձին, նույնիսկ փոքր պետությունների ազգային ու տնտեսական շահերի համեմատության դեպքում (տե՛ս աղյուսակներ 2.1 և 2.2):

Աղյուսակ 2.2

SU ցուցանիշները Վրաստանում, %-ով¹

Ցուցանիշները	Սահմանային արժեքները	Փաստացի արժեքները Վրաստանում (2002)
ՀՆԱ անկման մակարդակը	30	60
Արդյունաբերական արտադրանքի անկման մակարդակը	30	70
Աղքատության պարենային գծից ցածր եկամուտներ ունեցող բնակչության թիվը	10	52
Գործազրկության մակարդակը	7	14,7
Արտաքին պարտքը ՀՆԱ նկատմամբ	25	49,2
Բյուջեի դեֆիցիտը	5	30
Ներմուծման բաժինը ներքին սպառման մեջ	30	68
Դեցիլային գործակիցը (բնակչության 10%-ը)	10	49
Գիտության ծախսերը ՀՆԱ-ում	2	0,2
Առողջապահության ծախսերը ՀՆԱ-ում	7	0,6
Կյանքի միջին տևողությունը	70	65
Հանցագործության մակարդակը (100000 մարդու հաշվով)	500	1000

Հետևաբար, ոչ բոլոր ցուցանիշների և դրանց սահմանային (շեմային) արժեքների գծով կարելի է համեմատել ՀՀ SU աստիճանը այլ երկրների հետ, ըստ ՀՀ համար որոշված սահմանային արժեքների և հակառակը: Մինևույն ժամանակ, գոյություն ունեն որոշակի ցուցանիշներ, որոնց գծով բոլոր երկրներն էլ ձգտում են հետ չմնալ: Դրանք առաջին հերթին սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշներն են:

ՀՀ SU ցուցանիշների համակարգը կազմավորելուց հետո անհրաժեշտ է կատարել վերլուծություն՝ դրանց սահմանային (շեմային) արժեքների որոշման նպատակով: Մանրամասն վերլուծվել են մեր կողմից առաջարկվող ցուցանիշներից յուրաքանչյուրն առանձին-առանձին, որոշվել են դրանց սահմանային (շեմային) արժեքները ՀՀ SU ապահովման տեսանկյունից:

Բերված ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքների ստացման ներկայացումը կապված է ծավալային խնդիրների հետ, ուստի, մեր կողմից կներկայացվեն դրանց ստացման ընթացքում

¹ Маглакелидзе Т.Г., Стратегия экономической безопасности, Диссертация на соискание ученой степени доктора экономических наук по специальности 08.00.01-«Экономическая теория», Ереван, 2004, с. 49:

կիրառված մեթոդների որոշ մանրամասներ:

Յուրաքանչյուր առանձին ցուցանիշի սահմանային (շեմային) արժեքը որոշելուց առաջ կատարվել են դրանց դինամիկայի վերլուծություն և վարքագծի վրա ազդող գործոնների ուսումնասիրություն: Դրանից հետո ցուցանիշը համեմատվել է անմիջական հարևան երկրների, տարածաշրջանային երկրների, միջին համաշխարհային, ինչպես նաև երկրների խմբերի (դասակարգված ըստ եկամտի և տարածաշրջանի - ՀԲ դասակարգում) նույն ցուցանիշի հետ: Մա բոլոր ցուցանիշների գծով ընդհանրական մոտեցում է, որն արդեն բավական մեծ հնարավորություն է տալիս պարզելու ընդհանուր օրինաչափություններն այդ ցուցանիշի գծով երկարաժամկետ հատվածում՝ սովորաբար վերջին տասը տարիների ընթացքում: Այնուհետև հաշվի է առնվում, թե ՀՀ ազգային շահերի տեսանկյունից տվյալ ցուցանիշի ինչպիսի մակարդակ է անհրաժեշտ ապահովել և արդյոք պատմականորեն եղել են այնպիսի երկրներ, որոնց հաջողվել է լուծել այդպիսի խնդիրներ: Որոշ դեպքերում մեր կողմից են կազմվել երկրների խմբեր՝ ըստ որևէ չափանիշի, որպեսզի հնարավոր լինի ավելի մանրամասն վերլուծություն կատարել առանձին ցուցանիշների գծով: Հաշվի են առնվում նաև հեղինակավոր միջազգային, օտարերկրյա և հայրենական կազմակերպությունների փորձագետների կարծիքները և հետազոտությունների արդյունքները: Այս բոլոր ուսումնասիրությունների և դրանց արդյունքների համադրության արդյունքում միայն որոշվել է ՀՀ ՏԱ ցուցանիշի սահմանային արժեքը:

Անշուշտ, նշվածն իրականացնելու համար անհրաժեշտ է եղել օգտագործել տվյալների մեծ բազաներ: Ընդհանուր համադրելիության պահպանման նպատակով մեր կողմից օգտագործվել են Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հրապարակված տվյալների բազաները՝ հատուկ համակարգչային ծրագրերի տեսքով, որոնք համադրելի ժամանակային շարքեր են պարունակում աշխարհի բոլոր պետությունների վերաբերյալ վերջին քառասուն տարիների վիճակագրական տվյալների մասով: Դրանք նաև հնարավորություն են տալիս կատարել տվյալների ընտրություն և մշակում ըստ օգտագործողի պահանջի:

Տարածաշրջանային և այլ երկրների փորձի ու ցուցանիշների վրա ազդող գործոնների ուսումնասիրության նպատակով օգտագործվել են նաև այդ երկրների վերաբերյալ հատուկ վերլուծական հրապարակումները:

Սահմանային արժեքի որոշումից հետ կատարվել է ՀՀ ՏԱ փաստացի արժեքների համեմատություն սահմանային արժեքների հետ, որի արդյունքում որոշվել է ցուցանիշների փաստացի արժեքների շեղվածության աստիճանը:

Ընդունված է, որ ՏԱ բնութագրող ցուցանիշների գնահատականները տատանվում են 0-1 միջակայքում՝ կախված շեմային մեծությունից շեղվելու չափից: Ասվածը պատկերավոր ներկայացնելու համար բերենք հետևյալ օրինակը: Ենթադրենք, ինֆլյացիայի մակարդակի շեմային մեծությունը որոշված է տարեկան 5-6%: Դա նշանակում է, որ եթե տվյալ տնտեսությունում բավարարվում է այդ չափանիշը, ապա այս ցուցանիշը կարելի է գնահատել 1 միավորով: Ինֆլյացիայի մակարդակի բարձրացման հետ մեկտեղ համամասնորեն կնվազի նաև գնահատականը՝ մինչև 0, ինչը նշանակում է, որ ինֆլյացիայի մակարդակը հասել է անկառավարելի չափերի:

Որպես ՏԱ-ն բնորոշող գլխավոր հատկանիշ ընդունենք իրական և հավանական (պոտենցիալ) սպառնալիքների հարաբերական գնահատականը: Այն տվյալ տնտեսությունը բնութագրող ՏԱ ցուցանիշների գնահատականների կշռված միջինն է, որն էլ կընդունվի որպես գլխավոր հատկանիշ: Պարզ է, որ այն էլ կտատանվի 0-1 միջակայքում:

Ելնելով վերը նշված սկզբունքից՝ երկրները ՏԱ տեսանկյունից, ըստ գլխավոր հատկանիշի, կարող ենք դասակարգել չորս խմբի. բացարձակ անվտանգ, երբ գլխավոր հատկանիշը հավասար է 1-ի, անվտանգ՝ 0,7-0,9, բավարար անվտանգ՝ 0,5-0,6 և վտանգավոր՝ 0-0,4:

Այս համակարգի միջոցով փորձենք գնահատել 1995-2003թթ. հարավկովկասյան երեք հանրապետությունների տնտեսական անվտանգության մակարդակը՝ ըստ ՏԱ ընտրված 20 ցուցանիշների (տե՛ս *աղյուսակ 2.2*):

Պետք է նշել, որ աղյուսակում ընդգրկված բոլոր ցուցանիշների շեմային մեծությունները հաշվարկվել են՝ ելնելով միջազգային փորձից: Յուրաքանչյուր ՏԱ ցուցանիշի փաստացի մեծության շեղվածությունը շեմայինից որոշվում է հետևյալ կերպ. տվյալ տարվա փաստացի ցուցանիշը/տվյալ ցուցանիշի շեմային մեծությունը. 100 - 100: Ընդ որում, եթե շեղվածության չափը մեծ է 100%-ից, ապա տվյալ ցուցանիշին տրվում է 0 գնահատական: Շեղվածության չափը 0-ից 100% տատանվելու ժամանակ շեմային մեծությունից յուրաքանչյուր 10% շեղվածության համար գնահատականը նվազեցվում է 0,1-ով: Գնահատականները միջինացնելու արդյունքում որոշվել է յուրաքանչյուր երկրի ՏԱ համաթիվը (կամ գլխավոր հատկանիշը):

Համաձայն ստացված արդյունքների, 1995-2003թթ. Հարավ-կովկասյան տարածաշրջանի երկրների շարքում ՏԱ տեսանկյունից ամենաանվտանգը Ադրբեջանն է, որի ցուցանիշը, 1995թ. լինելով բավարար անվտանգ երկրի ցուցանիշին համապատասխան, 2003թ. աճել է, և երկիրը դասվել է անվտանգ երկրների խմբին: Տարածաշրջանի մյուս երկրները՝ Հայաստանն ու Վրաստանը, ներկայումս ունեն բավարար անվտանգ երկրներին համապատասխանող ցուցանիշներ: Մինչդեռ Հայաստանը 1995թ. տարածաշրջանի երկրների շարքում զբաղեցնելով վերջին տեղը՝ 2003թ. տեղափոխվել է երկրորդ հորիզոնական: Վրաստանի ցածր ցուցանիշների պատճառներից կարող են լինել վերջին տարիների քաղաքական իրադարձությունները, մասնավորապես հանցագործությունների թվի աճը, գիտության համար կատարված ծախսերի շեշտակի նվազումը և այլն:

Աղյուսակ 2.3-ում օգտագործվել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ շեմային մեծությունը (\$-ով արտահայտված)՝ ապահովելով այդ ցուցանիշի համադրելիությունը տարբեր երկրների համար և տարբեր ժամանակահատվածում: Մինչդեռ, եթե օգտագործելու լինեինք ՀՀ համար ՀՆԱ ընդունելի շեմային մեծությունը, ապա այն պետք է հաշվարկվեր *աղյուսակ 2.4-ի* միջոցով՝ մեկ շնչի հաշվով տնօրինվող եկամտի շեմային մեծության հաշվարկման հիման վրա:

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների ՏԱ մակարդակի գնահատումը 1995-2003թթ.¹

N	Տնտեսական անվտանգության ցուցանիշները (ՏԱՑ)	Ցուցանիշի շեմային մեծությունը	Փաստացի մեծությունը			Շեղվածության չափը շեմային մեծությունից, %			Գնահատականը (0-1)		
			1995թ.	2000թ.	2003թ.	1995թ.	2000թ.	2003թ.	1995թ.	2000թ.	2003թ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (\$)	2250									
	Հայաստան		342	503	871	84.8	77.6	61.3	0.2	0.3	0.4
	Ադրբեջան		319	665	715 ¹	85.8	70.4	68.2	0.2	0.3	0.4
	Վրաստան		529	654	682 ¹	76.5	70.9	69.7	0.3	0.3	0.4
2.	Ջինիի գործակիցը (եկամուտների կենտրոնացման գործակիցը)	0,15-0,17									
	Հայաստան	0,16	0.65	0.57	0.45	306.2	256.2	181.2	0	0	0
	Ադրբեջան	0,16	... ²	0.45	...	-	181.2	-	-	0	-
	Վրաստան	0,16	...	0.49	...	-	206.2	-	-	0	-
3.	Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	ոչ ավելի, քան 60%									
	Հայաստան		113.1	96.7	71.6	88.5	61.2	19.3	0.2	0.4	0.9
	Ադրբեջան		84.3	63.0	59.6 ¹	40.5	5.0	0	0.6	1	1
	Վրաստան		85.5	83.9	77.9 ¹	42.5	39.8	29.8	0.6	0.7	0.8
4.	Ինֆլյացիայի միջին մակարդակը, %	ոչ ավելի, քան 6-10%									

¹ Աղյուսակը կազմվել է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003», ՀՀ ԱՎԾ, էջ 14-99-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թվականի հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ, 2004, «Հայաստանի Հանրապետության պետական պարտքը. տարեկան հաշվետվություն 2003», Եր, 2004, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N 5 (40), մայիս, 2004, էջ 2-17-ի, Ս.Դավոյան, Պետական սեփականության կառավարում. մեթոդաբանական և ինստիտուցիոնալ հիմքեր, Եր., «Տիգրան Մեծ», 2003թ., «Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա», Եր., «ԱՌՏ», 2004, էջ 88-ի, Lost potential in the South Caucasus: Aspects of interstate trade, Yerevan – Baku – Tbilisi 2003, էջ 26, 27, 38, 39-ի, Статистический ежегодник Южно-Кавказских стран. Армения, Азербайджан, Грузия: 2000, Tacis, 2000, Статистический ежегодник Южно-Кавказских стран. Армения, Азербайджан, Грузия: 2002, Изд-во «САДА», 2002г., Маглакелидзе Т.Г., Стратегия экономической безопасности, автореферат диссертации на соискание ученой степени доктора экономических наук по специальности 08.00.01-«Экономическая теория», Եր., 2004, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների հիման վրա:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	Հայաստան	10%	175.5	-0.8	4.7	1655	0	0	0	1	1
	Ադրբեջան	10%	411.8	1.8	2.2	4018	0	0	0	1	1
	Վրաստան	10%	163.0	4.3	4.8	1530	0	0	0	1	1
5.	Գործազրկության մակարդակը (սորմը), %	ոչ ավելի, քան 10%									
	Հայաստան		8.2	11.7	10.1	0	17.0	1.0	1	0.9	1
	Ադրբեջան		0.8	1.2	...	0	0	-	1	1	-
	Վրաստան		2.9	10.8	14.3 ³	0	8.0	43.0	1	1	0.6
6.	Տնտեսական աճը, %	ոչ պակաս, քան 2-3%									
	Հայաստան	3%	6.9	5.9	13.9	0	0	0	1	1	1
	Ադրբեջան		-11.8	11.1	9.9 ¹	493.3	0	0	0	1	1
	Վրաստան		2.6	2.0	4.5 ¹	13.3	33.3	0	0.9	0.7	1
7.	Ներքին պետական պարտքը, % ՀՆԱ նկատմամբ,	ոչ ավելի, քան 20%									
	Հայաստան		0.04	2.8	2.7	0	0	0	1	1	1
	Ադրբեջան		-	-	-	-	-	-
	Վրաստան		21.3 ⁴	24.9 ²	21.2	6.5	24.5	6.2	1	0.8	1
8.	Աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակը, %	ոչ ավելի, քան 9%									
	Հայաստան		54.7	55.0	51.0	507.8	511.1	466.7	0	0	0
	Ադրբեջան		...	64.2	...	-	613.3	-	-	0	-
	Վրաստան		...	54.2	52.0 ²	-	502.2	477.8	-	0	0
9.	Կրթության և գիտության համար կատարված ծախսերը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ պակաս, քան 5%									
	Հայաստան		2.6	3.0	2.0	48.0	40.0	60.0	0.6	0.6	0.4
	Ադրբեջան		3.5	3.9	...	30.0	22.0	-	0.7	0.8	-
	Վրաստան		0.9	2.2	0.2 ²	82.0	56.0	96.0	0.2	0.5	0.1
10.	Արդյունաբերական արտադրության մեջ վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը, %	ոչ պակաս, քան 70%									
	Հայաստան		69.6 ²	64.5	66.8	0.6	7.8	4.6	1	1	1
	Ադրբեջան		60.1 ²	37.4	35.0 ¹	14.1	46.6	50.0	0.9	0.6	0.5
	Վրաստան		60.1 ²	54.7	56.1 ¹	14.1	21.8	19.8	0.9	0.8	0.9

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
11.	Արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության տեսակարար կշիռը, %	ոչ պակաս, քան 20%									
	Հայաստան		3.0 ^ա	2.3	1.4	85.0	88.5	93.0	0.2	0.2	0.1
	Ադրբեջան		1.8 ^ա	1.1	0.8 ^ա	91.0	94.5	96.0	0.1	0.1	0.1
	Վրաստան		0.5 ^ա	0.4	0.4 ^ա	97.5	98.0	98.0	0.1	0.1	0.1
12.	Ներդրումների ծավալը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ պակաս, քան 25%									
	Հայաստան		6.8	9.7	12.3	72.8	61.2	50.8	0.3	0.4	0.5
	Ադրբեջան		10.7	20.5	21.9 ^ա	57.2	18.0	12.4	0.5	0.9	0.9
	Վրաստան		3.5	5.8	5.5 ^ա	86.0	76.8	78.0	0.2	0.3	0.3
13.	Կյանքի սպասվելիք տևողությունը (տարի)	ոչ պակաս, քան 70 տարի									
	Հայաստան		72.5	72.5	73.1	0	0	0	1	1	1
	Ադրբեջան		69.1	71.8	...	1.3	0	-	1	1	-
	Վրաստան		65 ^ա	-	-	7.1	-	-	0.9
14.	Հանցագործության մակարդակը (հանցագործությունների թիվը 100 հազար մարդու հաշվով)	ոչ ավելի 500-ից									
	Հայաստան		270	317	344	0	0	0	1	1	1
	Ադրբեջան		260	173	...	0	0	-	1	1	-
	Վրաստան		292	303	1000 ^ա	0	0	100.0	1	1	0
15.	Արտաքին պարտքը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ ավելի, քան 25%									
	Հայաստան		30.1	45.0	39.3	20.4	80.0	57.2	0.8	0.2	0.5
	Ադրբեջան		17.6	24.5 ^ա	26.2 ^ա	0	0	4.8	1	1	1
	Վրաստան		63.7	53.0 ^ա	55.0 ^ա	154.8	112.0	120.0	0	0	0
16.	Բյուջեի պակասուրդը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ ավելի, քան 5%									
	Հայաստան		11.0	4.9	2.9	120.0	0	0	0	1	1
	Ադրբեջան		0.6	1.0	0.4 ^ա	0	0	0	1	1	1
	Վրաստան		5.4	3.0	2.5 ^ա	8.0	0	0	1	1	1
17.	Դրամական զանգվածը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ պակաս 50%-ից									
	Հայաստան		7.8	14.6	16.8	84.4	70.8	66.4	0.2	0.3	0.4
	Ադրբեջան		8.9	7.0	6.6 ^ա	82.2	86.0	86.8	0.2	0.2	0.2
	Վրաստան		3.6	10.3	11.2 ^ա	92.8	79.4	77.6	0.1	0.3	0.3

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
18.	Ներմուծված ապրանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	ոչ ավելի, քան 35%									
	Հայաստան		52.4	46.3	45.4	49.7	32.3	29.7	0.6	0.7	0.8
	Ադրբեջան		27.6	22.2	25.0 ¹	0	0	0	1	1	1
	Վրաստան		13.8	21.5	21.7 ²	0	0	0	1	1	1
19.	Ներմուծման տեսակարար կշիռը ներքին սպառման մեջ, %	ոչ ավելի, քան 30%									
	Հայաստան		44.6	42.5	47.2	48.6	41.6	58.0	0.6	0.6	0.5
	Ադրբեջան		28.4	27.9	34.3 ³	0	0	14.3	1	1	0.9
	Վրաստան		15.1	23.0	24.7 ⁴	0	0	0	1	1	1
20.	Ներմուծված սննդամթերքի տեսակարար կշիռը ներքին սպառման մեջ, %	ոչ ավելի, քան 25%									
	Հայաստան		33.5	24.8	17.5	34.0	0	0	0.7	1	1
	Ադրբեջան		29.7	15.9	13.5 ⁵	18.8	0	0	0.9	1	1
	Վրաստան		21.2	17.0	15.1 ⁵	0	0	0	1	1	1
	Միջինը										
	Հայաստան								0.52	0.63	0.67
	Ադրբեջան								0.66	0.73	0.76
	Վրաստան								0.61	0.60	0.60

¹ 2001թ. տվյալներով:

² Տվյալները բացակայում են:

³ 2002թ. տվյալներով:

⁴ 1996թ. տվյալներով:

⁵ 1997թ. տվյալներով:

Մեկ շնչի հաշվով տնօրինվող եկամտի շեմային մեծությունը հաշվարկելուց հետո այն բազմապատկելով ՀՀ բնակչության միջին թվով (3,2 մլն մարդ)՝ կստանանք Հայաստանի բնակչության իրական տնօրինվող եկամտի շեմային մեծությունը, որը կկազմի 2152500.8 մլն դրամ: Այնուհետև ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված ամորտիզացիոն, հարկային և ազգային հաշիվներում արտացոլվող այլ վճարումների միջին տոկոսադրույքներից ելնելով՝ կարելի է հաշվարկել Հայաստանի ՀՆԱ-ում տնօրինվող եկամտի բաժինը տոկոսային արտահայտությամբ, որը, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թվականի հունվար-դեկտեմբեր» տեղեկատվական-վերլուծական ամսական զեկույցի (էջ 7-8) տվյալների կազմում է 59,5%:

Վերջապես, ունենալով տնօրինվող եկամտի շեմային մեծությունը բացարձակ արտահայտությամբ և իմանալով դրա մասնաբաժինն ամբողջ ՀՆԱ ծավալի մեջ, կարող ենք ստանալ ՀՆԱ շեմային մեծությունը Հայաստանի համար, որը կկազմի 3617648,4 մլն դրամ: Կախված բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրության ծառայության ներկայացրած ցուցանիշի ստույգությունից (ըստ որոշ գնահատումների՝ այն չի հասնում 3 մլն-ի) մեր հաշվարկած ՀՆԱ շեմային մեծությունը կարող է փոքր լինել և, հետևաբար, կփոքրանա փաստացի ՀՆԱ շեղվածության չափը շեմային մեծությունից:

Կատարված վերլուծության արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ ՀՀ ՏԱ-ն, ըստ բերված ցուցանիշների, գտնվում է բավարար անվտանգ վիճակում և դրա ապահովման գործընթացում որպես առաջնահերթ գերակայություններ կարելի է առանձնացնել այն ցուցանիշները, որոնք առավել շատ են շեղված շեմային մեծություններից (եկամուտների տարբերակվածությունը 10% ամենահարուստ և 10% ամենաաղքատ ընտանիքների մեջ, աղքատության մակարդակը, եկամուտների կենտրոնացման գործակիցը, կանխիկ արտարժույթի ծավալը կանխիկ դրամի ծավալի նկատմամբ): Վտանգավոր մակարդակում է գտնվում նաև ՀՆԱ նկատմամբ ներդրումների ծավալի, արտաքին պարտքի դրամական զանգվածի, արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության տեսակարար կշիռը:

ՀՆԱ շեմային մեծության հաշվարկը

Հիմնական մթերքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Մեկ շնչի կողմից մեկ տարվա ընթացքում սպառման շեմային մեծությունը ¹	Միավորի գինը ² (դրամ)	Ընդհանուր արժեքը մեկ տարվա համար (դրամ)
1	2	3	4	5 = 3 x 4
Միս և մսամթերք	կգ	82	1352	110964
Կաթ և կաթնամթերք	կգ	405	811	328455
Ձուկ և ձկնամթերք	կգ	18.2	338	6152
Ձու	հատ	292	41	11972
Շաքար	կգ	40	258	10320
Չեթ	կգ	9	574	5166
Միրգ	կգ	113	598	79574
Բանջարաբուստանային մշակաբույսեր	կգ	146	153	22338
Կարտոֆիլ	կգ	97	154	14938
Հաց և հացամթերք	կգ	110	369	40590
Էլեկտրաէներգիայի վարձ	կվտ	1 200	25	30000
Հեռախոսի արձեռնարկի վճար	-	-	1024	12288
Մեկ շնչի հաշվով տարեկան տնօրինվող եկամտի շեմային մեծությունը	X	X	X	672656

¹ Շեմային մեծությունների վերաբերյալ տվյալների աղբյուրը, բացի էլեկտրաէներգիայի և հեռախոսավարձի տվյալներից՝ Основы экономической безопасности, под ред. Е.А. Олейникова, Москва, 1997, էջ 221:
² Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության «Գները և գների ինդեքսները ՀՀ-ում 1999-2002», ՀՀ ԱՎՇ, 2004, էջ 34-39:

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների ՏԱ վտանգների գնահատումը մեր կողմից կատարվել է նաև մեկ այլ մեթոդի կիրառմամբ, որը հնարավորություն է տալիս մատրիցի միջոցով բացահայտել ՏԱ սպառնալիքները և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները:

Ըստ առաջարկվող մեթոդի, ՏԱ ցուցանիշները դասակարգվում են հետևյալ չորս չափանիշով՝ 1) ցուցանիշի միջոցով բնութագրվող վտանգի առաջացման հավանականությունը, 2) դրա ազդեցության չափը, 3) տևողությունը և 4) անցանկալի դրսևորումների փոփոխման արագությունը:

Ցուցանիշների նման դասակարգման արդյունքում դրանք հնարավոր է դառնում տեղավորել ՏԱ վտանգվածության աստի-

ճանը բնութագրող ընդհանրական մատրիցում (տե՛ս նկարներ 2.1, 2.2 և 2.3): Մատրիցը հնարավորություն է տալիս որոշել ՏԱ այն սպառնալիքները, որոնք իրենց ազդեցության չափով և առաջացման հավանականությամբ այն աստիճանի են հասել, որ արդեն շտապ միջոցառումներ են պահանջվում դրության բարելավման համար:

Աղյուսակ 2.5-ում ներկայացված են հաշվարկների համար հիմք ծառայած ցուցանիշները (որոնք համընկնում են բալային գնահատականների մեթոդի կիրառմամբ օգտագործված ցուցանիշների հետ) և ՏԱ հաշվարկման արդյունքները՝ երեք հանրապետությունների համար:

Աղյուսակ 2.5

Հարավկովկասյան երկրների ՏԱ ցուցանիշների կազմը, սահմանային արժեքները և դասակարգումն ըստ վտանգավորության աստիճանի

N	Տնտեսական անվտանգության ցուցանիշները (ՏԱՑ)	Ցուցանիշի սահմանային մեծությունը	Փաստացի արժեքը			Միջին արժեքը 1995-2003թթ.	Միջին արժեք / սահմանային արժեք	Մատրիցի վանդակի համարը
			1995թ.	2000թ.	2003թ.			
1	2	3	4	5	6	7	8	9
1.	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (\$)	2250						
	Հայաստան		342	503	871	572.00	0.25	4
	Ադրբեջան		319	665	715 ¹	566.33	0.25	4
	Վրաստան		529	654	682 ¹	621.67	0.28	4
2.	Ջինիի գործակիցը	0,15-0,17						
	Հայաստան		0.65	0.57	0.45	0.56	3.48	9
	Ադրբեջան		... ²	0.45	...	0.45	2.81	8
	Վրաստան		...	0.49	...	0.49	3.06	9
3.	Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	ոչ ավելի, քան 60%						
	Հայաստան		113.1	96.7	71.6	93.80	1.56	8
	Ադրբեջան		84.3	63.0	59.6 ⁴	68.97	1.15	8
	Վրաստան		85.5	83.9	77.9 ¹	82.43	1.37	8
4.	Ինֆլյացիայի միջին մակարդակը, %	ոչ ավելի, քան 6-10%						
	Հայաստան		175.5	-0.8	4.7	59.80	5.98	9
	Ադրբեջան		411.8	1.8	2.2	138.60	13.86	9
	Վրաստան		163.0	4.3	4.8	57.37	5.74	9
5.	Գործազրկության մակարդակը, %	ոչ ավելի, քան 10%						
	Հայաստան		8.2	11.7	10.1	10.00	1.00	6
	Ադրբեջան		0.8	1.2	...	1.00	0.10	1
	Վրաստան		2.9	10.8	14.3 ³	9.33	0.93	6
6.	Տնտեսական աճը, %	ոչ պակաս, քան 2-3%						
	Հայաստան		6.9	5.9	13.9	8.90	2.97	8

Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները

1	2	3	4	5	6	7	8	9
	Աղբբեջան		-11.8	11.1	9.9 ¹	3.07	1.02	8
	Վրաստան		2.6	2.0	4.5 ¹	3.03	1.01	8
7.	Ներքին պետական պարտքը, % ՀՆԱ նկատմամբ,	ոչ ավելի, քան 20%						
	Հայաստան		0.04	2.8	2.7	1.86	0.09	1
	Աղբբեջան		-
	Վրաստան		21.34	24.93	21.2	22.48	1.12	8
8.	Աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակը, %	ոչ ավելի, քան 9%						
	Հայաստան		54.7	55.0	51.0	53.57	5.95	9
	Աղբբեջան		...	64.2	...	64.20	7.13	9
	Վրաստան		...	54.2	52.03	53.10	5.90	9
9.	Կրթության և գիտության համար կատարված ծախսերը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ պակաս, քան 5%						
	Հայաստան		2.6	3.0	2.0	2.53	0.51	5
	Աղբբեջան		3.5	3.9	...	3.70	0.74	6
	Վրաստան		0.9	2.2	0.2 ³	1.10	0.22	2
10	Արդյունաբերական արտադրության մեջ վերավաճող արդյունաբերության տեսակարար կշիռը, %	ոչ պակաս, քան 70%						
	Հայաստան		69.6 ⁴	64.5	66.8	66.97	0.96	6
	Աղբբեջան		60.1 ⁴	37.4	35.0 ¹	44.17	0.63	7
	Վրաստան		60.1 ⁴	54.7	56.1 ¹	56.97	0.81	6
11	Արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության տեսակարար կշիռը, %	ոչ պակաս, քան 20%						
	Հայաստան		3.0 ⁴	2.3	1.4	2.23	0.11	1
	Աղբբեջան		1.8 ⁴	1.1	0.8 ⁴	1.23	0.06	1
	Վրաստան		0.5 ⁴	0.4	0.4 ¹	0.43	0.02	1
12	Ներդրումների ծավալը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ պակաս, քան 25%						
	Հայաստան		6.8	9.7	12.3	9.60	0.38	3
	Աղբբեջան		10.7	20.5	21.9 ⁴	17.70	0.71	6
	Վրաստան		3.5	5.8	5.5 ¹	4.93	0.20	2
13	Կյանքի սպասվելիք տևողությունը (տարի)	ոչ պակաս, քան 70 տարի						
	Հայաստան		72.5	72.5	73.1	72.70	1.04	8
	Աղբբեջան		69.1	71.8	...	70.45	1.01	8
	Վրաստան		65.0 ³	65.0	0.93	6
14	Հանցագործության մակարդակը (հանցագործությունների թիվը 100 հազար մարդու հաշվով)	ոչ ավելի 500-ից						
	Հայաստան		270	317	344	310.33	0.06	1
	Աղբբեջան		260	173	...	216.50	0.04	1
	Վրաստան		292	303	1000 ³	531.67	0.11	1
15	Արտաքին պարտքը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ ավելի, քան 25%						
	Հայաստան		30.1	45.0	39.3	38.13	1.53	8
	Աղբբեջան		17.6	24.5 ¹	26.2 ³	22.77	0.91	6
	Վրաստան		63.7	53.0 ¹	55.0 ³	57.23	2.29	8

Տեսական անվտանգության հիմնախնդիրները

1	2	3	4	5	6	7	8	9
16	Բյուջեի պակասուրդը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ ավելի, քան 5%						
	Հայաստան		11.0	4.9	2.9	6.72	1.25	8
	Ադրբեջան		0.6	1.0	0.4 ¹	0.67	0.13	1
	Վրաստան		5.4	3.0	2.5 ¹	3.63	0.73	6
17	Դրամական գանգվածը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ պակաս 50%-ից						
	Հայաստան		7.8	14.6	16.8	13.07	0.26	4
	Ադրբեջան		8.9	7.0	6.6 ¹	7.50	0.15	2
	Վրաստան		3.6	10.3	11.2 ¹	8.37	0.17	2
18	Ներմուծված ապրանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	ոչ ավելի, քան 35%						
	Հայաստան		52.4	46.3	45.4	48.03	1.37	8
	Ադրբեջան		27.6	22.2	25.0 ¹	24.93	0.71	6
	Վրաստան		13.8	21.5	21.7 ¹	19.00	0.54	5
19	Ներմուծման տեսակարար կշիռը ներքին սպառման մեջ, %	ոչ ավելի, քան 30%						
	Հայաստան		44.6	42.5	47.2	44.83	1.49	8
	Ադրբեջան		28.4	27.9	34.3 ¹	30.20	1.01	8
	Վրաստան		15.1	23.0	24.7 ¹	20.93	0.70	6
20	Ներմուծված սննդամթերքի տեսակարար կշիռը ներքին սպառման մեջ, %	ոչ ավելի, քան 25%						
	Հայաստան		33.5	24.8	17.5	25.77	1.01	8
	Ադրբեջան		29.7	15.9	13.5 ¹	19.70	0.79	6
	Վրաստան		21.2	17.0	15.1 ¹	17.77	0.71	6

¹ 2001թ. տվյալներով:

² Տվյալները բացակայում են:

³ 2002թ. տվյալներով:

⁴ 1997թ. տվյալներով:

Մատրիցի օգտագործումը բարձրացնում է ՏԱ ցուցանիշների գնահատման համակարգի և կառավարման արդյունավետությունը՝ օգնելով ավելի ճշգրիտ գնահատել կոնկրետ ցուցանիշի գծով տնտեսության վտանգվածության աստիճանը: Որպես արդյունք՝ այն նպաստում է ռեսուրսների արդյունավետ կառավարմանը ընձեռնելով ոլորտը կարգավորող կառույցների աշխատանքը գնահատելու հնարավորություն և կողմնորոշիչ դեր ունենալով զարգացման հետագա քաղաքականության մշակման հարցում: Այս մեթոդը միաժամանակ օգնում է ՏԱ ցուցանիշների ամբողջական վերլուծության տեսանկյունից, քանի որ ապահովում է տարբեր ցուցանիշների միջև բազմակողմանի փոխադարձ կապի ուսումնասիրության հնարավորությունը, այսինքն՝ որևէ ցուցանիշի փոփոխությունն ինչպես է տեղի ունեցել և ինչպես այն կազդի մյուս ցուցանիշների վրա:

Նկար 2.1

Հ Ա Յ Ա Մ Տ Ա Ն

Մեծ, > 0,66	6 ՏԱՅ 5, ՏԱՅ 10	8 ՏԱՅ 3, ՏԱՅ 6, ՏԱՅ 13, ՏԱՅ 15, ՏԱՅ 16, ՏԱՅ 18, ՏԱՅ 19, ՏԱՅ 20	9 ՏԱՅ 2, ՏԱՅ 4, ՏԱՅ 8
<i>Առաջացման հավանականությունը</i>	3 ՏԱՅ 12	5 ՏԱՅ 9	7
Միջին, 0,33<X<0,66	1 ՏԱՅ 7, ՏԱՅ 11, ՏԱՅ 14	2	4 ՏԱՅ 1, ՏԱՅ 17
Փոքր, < 0,33			
	Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

Նկար 2.2

Ա Դ Բ Բ Ե Ջ Ա Ն

Մեծ, > 0,66	6 ՏԱՅ 9, ՏԱՅ 12, ՏԱՅ 15, ՏԱՅ 18, ՏԱՅ 20	8 ՏԱՅ 2, ՏԱՅ 3, ՏԱՅ 6, ՏԱՅ 13, ՏԱՅ 19	9 ՏԱՅ 4, ՏԱՅ 8
<i>Առաջացման հավանականությունը</i>	3	5	7 ՏԱՅ 10
Միջին, 0,33<X<0,66	1 ՏԱՅ 5, ՏԱՅ 11, ՏԱՅ 14, ՏԱՅ 16	2 ՏԱՅ 17	4 ՏԱՅ 1
Փոքր, < 0,33			
	Փոքր	Միջին	Մեծ

Ազդեցության չափը

ՎՐԱՍՏԱՆ

<p><i>Առաջացման հավանականությունը</i></p>	Մեծ, > 0,66	<p>6 ՏԱՑ 5, ՏԱՑ 10, ՏԱՑ 13, ՏԱՑ 16, ՏԱՑ 19, ՏԱՑ 20</p>	<p>8 ՏԱՑ 3, ՏԱՑ 6, ՏԱՑ 7, ՏԱՑ 15</p>	<p>9 ՏԱՑ 2, ՏԱՑ 4, ՏԱՑ 8</p>
	Միջին, 0,33<X<0,66	<p>3</p>	<p>5 ՏԱՑ 18</p>	<p>7</p>
	Փոքր, < 0,33	<p>1 ՏԱՑ 11, ՏԱՑ 14</p>	<p>2 ՏԱՑ 9, ՏԱՑ 12, ՏԱՑ 17</p>	<p>4 ՏԱՑ 1</p>
	Փոքր	Միջին		Մեծ

Ազդեցության չափը

SU ցուցանիշների ազդեցության չափը գնահատելու համար վերլուծության արդյունքում ընդունվել են հետևյալ արժեքները. ազդեցությունը գնահատվում է փոքր, եթե միջին արժեք / սահմանային արժեք հարաբերությունը 0.66-ից 1-ի միջակայքում է, միջին՝ եթե այն գտնվում է 1-ից 3-ի միջակայքում և մեծ՝ եթե այն 3-ից ավելի է:

Նկարներ 2.1 և 2.3-ի համադրությունը վկայում է, որ մեր տարածաշրջանի երկրներին բնորոշ են SU ցուցանիշների վտանգավորության ընդհանուր գծեր: Այսպես, ցուցանիշների մեծ մասը կենտրոնացել է ութերորդ և իններորդ վանդակներում:

Թեև մատրիցի ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ երկրի SU ապահովությունը տեղի կունենա առավելագույն թվով ցուցանիշների առաջին վանդակում տեղ գտնելու դեպքում, ցուցանիշների շարժը դեպի նպատակակետը հավանաբար տեղի կունենա ոչ ամենակարճ ճանապարհով՝ 9 → 5 → 1 վանդակների հերթականությամբ: Ըստ էության, հնարավոր են ցուցանիշների բարելավման ուղիների բազմաթիվ տարբերակներ:

Մատրիցը կիրառելի է մեր կողմից ընտրված ՀՀ SU բոլոր

ցուցանիշների համար: Գործնական կիրառության ընթացքում այն թույլ է տալիս գնահատել ՏՄ ցուցանիշի փաստացի վիճակը, բնութագրել ՏՄ տարբեր ցուցանիշների միջև փոխադարձ կապը, ինչպես նաև նպաստում է դրանց ծրագրված և համակարգված բարելավմանը:

Մատրիցի միջոցով գնահատման կարգը հիմնվում է նախկինում տեղի ունեցած զարգացումների վերլուծության, ցուցանիշների փաստացի մակարդակների ձեռքբերման վրա ազդող գործոնների ուսումնասիրության, գործող տնտեսական մեխանիզմների և ձևավորված պայմանների համալիր դիտարկման վրա:

Որպես օրինակ ներկայացնենք առաջին, հինգերորդ և իններորդ վանդակներում ներառվող ցուցանիշների հանդեպ ներկայացվող պահանջները:

Առաջին վանդակում ներառվող ՏՄ ցուցանիշները պետք է երկարաժամկետ հատվածում դրսևորեն որոշված սահմանային արժեքից բավականաչափ հեռու՝ անվտանգ գոտում գտնվող մակարդակ, որը լիովին համապատասխանում է ՀՀ տնտեսական շահերին:

Հինգերորդ վանդակում պետք է ներառվեն տեղի ունենալու հավանականությամբ և ազդեցության չափով միջին ցուցանիշները: Մրանց վարքագիծը կայուն է և գտնվում է որոշված սահմանային արժեքի շուրջը:

Իններորդ վանդակում տեղ գտած ցուցանիշները ՏՄ սպառնալիքներն են: Դրանք երկարաժամկետ հատվածում շեղված են որոշված սահմանային արժեքներից և իրենց ազդեցության չափով ու վտանգի առաջացման հավանականությամբ ՏՄ սպառնալիքներ են հանդիսանում: Այստեղ խաչվում են խոցելիության առավելագույն աստիճանը և սպառնալիքի իրականացման մեծ հավանականությունը, հետևաբար տնտեսական շահերի իրականացումը մեծապես վտանգված է:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ գնահատման միասնական երեք բալային սանդղակը ենթադրում է ցուցանիշի հետևյալ աստիճանավորումը՝

- սպառնալիք, երբ երկարաժամկետ հատվածում ցուցանիշը դրսևորում է այնպիսի մակարդակ, որն էականորեն շեղված է

որոշված սահմանային արժեքից, ընդ որում, հնարավոր չէ դրա մեղմացումը այլ գործոնների հաշվին,

- վտանգ, երբ ցուցանիշի փաստացի արժեքը տատանվում է որոշված սահմանային արժեքին մոտ միջակայքում,
- անվտանգություն, երբ ՏԱ ցուցանիշը երկարաժամկետ հատվածում գտնվում է որոշված սահմանային արժեքից բավականաչափ հեռավորության վրա՝ ապահով գոտում:

Վերոգրյալի տեսանկյունից կարևորվում է ՀՀ ՏԱ սպառնալիքների և դրանց չեզոքացման ուղիների խնդիրը: Նշված խնդրի լուծման համար գործնականում կիրառելով մեր կողմից մշակված և ներկայացված ՏԱ խախտման վտանգների գնահատման մատրիցը՝ բացահայտվում են ՀՀ ՏԱ սպառնալիքները (տե՛ս նկար 2.1): Ցուցանիշների դասակարգումից հետո ներկայացված են ստեղծված վիճակում ՀՀ ՏԱ տեսանկյունից առաջնահերթ խնդիրները, սպառնալիքների չեզոքացման ուղղությամբ ներկայացված են մեր կողմից առաջարկվող լուծումները, որոնցում ներառված են ինչպես ռազմավարական, այնպես էլ ընթացիկ տնտեսական քաղաքականության կոնկրետ միջոցառումներ:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ քսան ցուցանիշներից բաղկացած համակարգում տասնմեկ ցուցանիշների գծով ՀՀ տնտեսությունը սպառնալիքի տակ է, որոնցից երկուսը հնարավոր չէ մեղմացնել որևէ այլ գործոնի հաշվին (տե՛ս աղյուսակ 2.5): Հինգ ցուցանիշների գծով վտանգը գնահատվեց միջին և միայն երկուսի գծով՝ փոքր: Հետևաբար, ՀՀ ՏԱ ապահովմանն ուղղված տնտեսական քաղաքականությունն առաջիկա տարիներին պետք է նպատակաուղղված լինի նաև այս սպառնալիքների վերացմանը:

ՏԱ սպառնալիքների չեզոքացման տեսանկյունից առաջնային խնդիր է տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը: Որպես հիմնական մակրոտնտեսական ցուցանիշ՝ ՀՆԱ մեծությունը և աճի տեմպերը հնարավորություն են ընձեռում միաժամանակ վիճակը բարելավել մի շարք ոլորտներում: Սակայն տնտեսական աճի բարձր տեմպերը սպառնալիքների վերացման անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են: Մյուս կարևոր պայմանը եկամուտների բաշխման հավասարակշռության սկզբունքի պահպանումն է, ինչը

բնակչությանը հնարավորություն կտա զգալ տնտեսական աճի դրական ազդեցությունը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև սպառնալիքների վերացման նպատակով տնտեսությունում առկա ռեսուրսային ներուժի օգտագործման հնարավորությունները և սահմանափակումները: Մասնավորապես, հաշվարկները ցույց են տալիս, որ ներդրումների ձևավորված մակարդակի պահպանման դեպքում տնտեսության ներուժի հաշվին հնարավոր է ապահովել ՀՆԱ տարեկան մինչև 5% աճ առաջիկա 3-5 տարիների ընթացքում: Մա նշանակում է, որ ամենաուշը այս փուլում պետք է մեծապես ակտիվացվի ներդրումների ներգրավման քաղաքականությունը, որպեսզի փոփոխությունները արդեն սպառված ներուժը փոխարինվի նորով:

Առկա ներուժի օգտագործման հիմնական խոչընդոտը վերջնական պահանջարկի փոքր լինելն է և առաջարկի հարմարվողականության ցածր աստիճանը, որի արդյունքում ազգային տնտեսությունը վերարտադրում է մակրոտնտեսական անհավասարակշռություն և գտնվում է ներմուծումից կախվածության մեջ:

Ներկայումս պետության կողմից ամբողջական պահանջարկի կառավարման հնարավորությունները շատ փոքր են և գործնականում սահմանափակվում են հիմնականում պետական գնումներով: Այնինչ ամբողջական պահանջարկի կառավարման հզոր մեխանիզմ է տնային տնտեսությունների վերջնական սպառման և ձեռնարկությունների ներդրումային պահանջարկի վրա ազդեցությունը:

Մակրոտնտեսական վիճակի ընդհանուր բարելավմանն ուղղված միջոցառումներից բացի, կարևոր են նաև ՀՀ ՏԱ յուրաքանչյուր սպառնալիքի չեզոքացման կոնկրետ ուղիները: Նշված միջոցառումների իրականացումը թույլ կտա էականորեն բարելավել ՀՀ ՏԱ-ն:

2.3. ՏԱ արտաքին և ներքին սպառնալիքները

Կարևոր է հատկապես փոքր տնտեսությամբ երկրների ՏԱ ապահովման ռազմավարական ուղղվածության հարցը: Տեսականորեն փոքր երկրների անդամակցությունը տարբեր միջազգային կազմակերպություններին և կառույցներին երաշխավորում է

դրանց ազգային և տնտեսական անվտանգությունը: Սակայն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ.Քոթանյանը եզրակացնում է, որ տարբեր նպատակներով ստեղծված միջազգային կառույցներն իրականում ծառայում են գերտերությունների ռազմավարական շահերին և փոքր երկրների անվտանգության ապահովման երաշխիք չեն: Կոնկրետ ՀՀ համար վերջին 200 տարիների պատմության վերլուծությունը նրան բերում է այն եզրակացության, որ մեր երկրի հիմնական ռազմավարական հակառակորդին՝ Թուրքիային, և՛ տնտեսական, և՛ մնացած բոլոր առումներով դիմակայելու հնարավորություն տվող ուժը Ռուսաստանն է եղել, և ապագայում էլ վերջինիս դերը ժխտել չի կարելի¹:

Մեր կողմից, տվյալ հարցի առնչությամբ, ներկայացվել է համաշխարհային տնտեսական հարաբերությունների եռամակարդակ պարզեցված հիերարխիան, բացահայտվել են դրա տարբեր մակարդակների միջև առկա կապերն ըստ փոխազդեցության ուղղության (տե՛ս *գծանկար 2.1*):

Առաջին մակարդակում դրսևորվում են գերտերությունների՝ մեծ յոթնյակ և Ռուսաստան, աշխարհաքաղաքական և տնտեսական շահերը: Դրանց փոխազդեցության հիման վրա որոշվում են նրանց ներքին (ՆՏ) և արտաքին (ԱՏ) տնտեսական քաղաքականության ուղղությունները, որոնք այնուհետև իրենց ազդեցությունն են ունենում մյուս երկրների վրա: Այստեղ կարևոր է նշել ստորին մակարդակների հետ կապի միակողմանի բնույթը, քանի որ փոքր երկրները հարմարվողական քաղաքականության ավելի փոքր հնարավորություններ ունեն, հետևաբար նրանց կրած ծախսերը մեծանում են, հատկապես եթե հաշվի առնենք տարբեր գերտերությունների շահերի բախվելը տվյալ երկրում:


Երկրորդ մակարդակը տվյալ երկրում ձևավորվող և իրականացվող մակրոտնտեսական քաղաքականությունն է: Այն ձևավորվում է գերտերություններից տարբեր կախվածությունների և ազդեցությունների ներքո, որոնք հնարավորություն չեն տալիս փոքր երկրներին անշեղորեն հետևել սեփական ազգային շահերին և

¹ Մ.Խ.Քոթանյան, Շուկայական էկոնոմիկա, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, էջ 228:

դրանով իսկ ապահովել սեփական SU-ն: Այդ ազդեցությունն ունի երկակի բնույթ: Փոքր երկրների կառավարությունները համապատասխան ճշգրտումներ են մտցնում մակրոտնտեսական քաղաքականության մեջ, իսկ միկրոէկոնոմիկան ուղղակիորեն առնչվում է արտաքին աշխարհի ազդեցություններին:

Գծանկար 2.1

Տնտեսական հարաբերությունների հիերարխիան¹



Երրորդ մակարդակը միկրոէկոնոմիկան է կամ անմիջականորեն տնտեսավարող սուբյեկտները: Նախորդ մակարդակի համեմատ այստեղ հակադարձ կապը համեմատաբար ուժեղ է և երկկողմանի: Տնտեսավարող սուբյեկտները կարող են ավելի գործուն և ազդեցիկ ձևով արտահայտել իրենց դժգոհությունը կառավարությունից, և վերջինս չի կարող հաշվի չնստել դրանց հետ: Ուստի կառավարության վրա է դրվում ազգային տնտեսական շահերի իրականացման խնդիրը՝ հաշվի առնելով գերտերությունների տարաբնույթ ազդեցությունները:

¹ Միջազգային կառույցները ներառված չեն, քանի որ դրանք հիմնականում գտնվում են մի քանի գերտերությունների իրական վերահսկողության ներքո և արտացոլում են նրանց շահերը:

Հետևաբար, տնտեսական քաղաքականության ռազմավարական ուղղվածությունը պետք է նպաստի փոխկախվածության ձևավորմանը գործընկերների միջև, այսինքն՝ ազգային շահերի և գերտերությունների շահերի այնպիսի հարաբերակցության ապահովմանը, որը կբացառի հանրապետության տարածքում ռազմական գործողությունները և կնպաստի տնտեսական զարգացմանը:

ՏԱ հիմնախնդիրը, հատկապես երկրի մակրոտնտեսական զարգացումների հարթությունում, առավել խորացրեց մի շարք նոր և լուրջ սոցիալական հակասություններ, իշխանությունների նկատմամբ հասարակության անվտանգությունը, կարճ ժամանակահատվածում աշխարհի կողմից վարկեր այլևս չստանալու սպասումների չիրականացման մտահոգությունը: Թեև ՀՀ-ում դեռևս անցած դարի 90-ական թթ. սկսվեց տնտեսական վերափոխումների փուլը, շուկայական տնտեսության անցման համար կատարվեցին որոշակի քայլեր, երկրի սոցիալ-տնտեսական դրությունը շարունակում է մնալ ծանր, տնտեսության առանձին ոլորտներում առկա են ճգնաժամային դրսևորումներ, դեռևս ցածր է բնակչության մեծ մասի կենսամակարդակը, լայն տարածում է գտել ստվերային տնտեսությունը: Այդ ամենը նպաստում է կոռուպցիայի զարգացմանը: Հայտնի է, որ եթե ստվերային տնտեսությունը կազմում է երկրի ՀՆԱ կեսը, այդ դեպքում տնտեսական բարեփոխումները ձևախեղված բնույթ են ստանում, և երկիրը հայտնվում է տնտեսական սպառնալիքի առջև:

Արտաքին պարտքի վտանգավոր մեծությունը երկիրը կախվածության մեջ է գցում պարտատեր ազգերից: Կրթամշակութային անկախությունը վտանգված է, որովհետև նույն պարտատերերը, օգտվելով տնտեսական ծանր վիճակից, սեփական չափորոշիչներն են պարտադրում երկրին, միաժամանակ մեծացնում իրենց ռազմաքաղաքական ներկայությունը, որի հետևանքով երկիրը կարող է կորցնել անկախ զարգանալու հնարավորությունն ընդհանրապես: Ամեն դեպքում՝ վտանգ ներկայացնում են այն ազգը կամ ազգերը, որոնց համեմատ տվյալ ազգը հետ է մնում իր զարգացմամբ և որոնք իրենց իրավունքն են համարում պարտադրել այն հարցերում, որոնք տվյալ ազգը տեսնում է իր իրավունքների տիրույթում¹:

¹ Ա.Աղայան, Ազգային անվտանգություն. հասկացությունները, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 39:

Հայաստանը, որպես վարկեր ստացող երկիր, ունի որոշակի խնդիրներ՝ կապված կուտակված արտաքին պարտքի հետ: Թեև այդ պարտքերը դեռևս լուրջ սպառնալիք չեն հանդիսանում ազգային տնտեսության համար, սակայն ՀՆԱ աճի նկատմամբ դրանց հետագա առաջընթաց տեմպը սպառնալի չափերի կարող է հասնել և լուրջ անհանգստությունների տեղիք տալ:

Անցումային գործընթացներին ուղեկցող ներքին առևտրի ազատականացումը չի կարող միանշանակ գնահատվել: Մի կողմից՝ շուկայական համակարգը պահանջում է բաց տնտեսության առկայություն, և այդ տեսանկյունից փակ տնտեսությունից բացին անցումը քայլ առաջ է, սակայն, մյուս կողմից՝ արտահանում-ներմուծման ազգային մոդելը, առևտրի բացասական սալդոն, բնական ռեսուրսների և հումքի արտահանման բարձր աստիճանը, Հայաստանի կախվածությունը ռազմավարական նշանակության ապրանքների արտահանումից և այլն, դրական ազդեցություն չեն գործում երկրի տնտեսության վրա: Իրական վտանգ կա, որ երկիրը կախվածության մեջ կհայտնվի այլ երկրներից:

Տնտեսության մրցակցային հնարավորությունների անբավարար վիճակը, արտաքին օգնության անհրաժեշտությունը, տնտեսական գործունեության մի շարք բնագավառների մենաշնորհացումը, մեկ շնչի հաշվով եկամուտների ցածր մակարդակը թույլ չեն տալիս տնտեսության արագ կենդանացման համար օգտագործել եղած բոլոր հնարավորությունները և ռեզերվները:

Ավելին, երկրի SU-ին դեռևս գերակա նշանակություն չի տրվել, և մշակված չեն SU հայեցակարգերը: Այս պայմաններում SU հիմնախնդիրը Հայաստանում առաջնային է դառնում:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ SU հիմնախնդրի հետազոտությունն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային տնտեսական հարաբերություններում առաջ է բերում թե՛ տեսական, թե՛ հույժ կարևոր իմացաբանական գործնական հետաքրքրություն:

Տնտեսական են համարվում ներքին ու արտաքին այն վտանգները, որոնց թիրախը տնտեսական համակարգն է և/կամ բխում են այլ տնտեսական համակարգ(եր)ից: Ազգային անվտանգության բաղադրամասը, որը կոչված է ապահովելու տնտեսական

համակարգի (արժեքների, ինստիտուտների) սպառնալիքներից ազատ վիճակը, տնտեսական անվտանգությունն է:

Այս խմբի շրջանակներում ազգ-պետություն համակարգի սոցիալական բաղադրիչի հետ կապված ու տնտեսության վրա ազդող սպառնալիքներ են բնակչության աճը կամ հակառակը՝ նվազումը, արտագաղթը, որոնք հանգեցնում են ընչաքաղցության: Զրկանքների կառավարման իրավասությունը, որպես կանոն, տնտեսական, սոցիալական քաղաքականություն իրականացնող գերատեսչություններին է, որոնց խնդիրն է բնակչության տարբեր խմբերի, շերտերի, խավերի ներկայացուցիչների և ընդհանրապես քաղաքացիների սոցիալական-տնտեսական իրավունքների ապահովվածությունը, սոցիալական ապահովությունը:

Տնտեսական վտանգներ են համարվում նաև անլեգալ բիզնեսը, մաֆիան, տնտեսավարող կլանները, կոռուպցիան, թմրաբիզնեսը, արտադրության թափոնների առևտուրը, զանգվածային ոչնչացման զենքի ստեղծմանը նպաստող տեխնոլոգիաների վաճառքը և այլն, որոնք արդեն իսկ ոչ միայն վտանգի ներքին աղբյուրներ են, այլ նաև կարող են լարվածություններ ստեղծել պետությունների միջև՝ դառնալով քաղաքական վտանգներ: Հաճախ միջպետական հարաբերություններին սպառնացող վտանգներ են դառնում նաև շուկաների մատչելիության շուրջ ծագող հիմնախնդիրները:

Ներկա ժամանակաշրջանում համակարգիչների, բարձր տեխնոլոգիաների կիրառումը, ֆինանսական շուկաների գլոբալացումը հանգեցրել են ապրանքադրամային շրջանառության արագացման, կապիտալի ներհոսքի մասշտաբների ավելացման: Նպաստելով տնտեսական աճին՝ այդ գործընթացները միաժամանակ մեծացնում են ռիսկի գործոնների նշանակությունը և ընդլայնում են վտանգի գոտին ոչ միայն բիզնեսում, այլ նաև պետության գործառնության մեջ: Մոլորակի մի տարածաշրջանում ճգնաժամի դեպքում այն արագորեն տեղափոխվում է մյուս տարածաշրջաններ: Ուստի ՏԱ խնդիրը պետք է լինի հասարակության տնտեսական համակարգի ապահովվածությունն այդօրինակ վտանգներից:

Տնտեսական վտանգների խմբում ինքնուրույն խումբ են կազմում կենսական միջավայրի աղտոտվածությունը, բնական ռեսուրսների անխնայողաբար օգտագործումը և այլն, որոնք կրում են էկոլոգիական վտանգներ անվանումը: Վտանգների այս խմբի կա-

ռավարման խնդիրներն է լուծում էկոլոգիական անվտանգությունը ՏԱ շրջանակներում¹:

ՏԱ հնարավոր սպառնալիքների բացահայտումը և դրանց վնասագերծման անհրաժեշտ միջոցառումների մշակումն ու իրականացումն առաջնահերթ նշանակություն ունեն երկրի անվտանգության ապահովմանն ուղղված պետական ռազմավարության համար:

ՏԱ սպառնացող վտանգները կարող են դասակարգվել ըստ մի շարք հատկանիշների: Ըստ աղբյուրների՝ դրանք կարող են լինել ներքին և արտաքին: Հայաստանի տնտեսությունում բարեփոխումների փուլում առաջացած և ՏԱ-ին սպառնացող *ներքին* հիմնական սպառնալիքներն են՝

- տնտեսության կառուցվածքային ձևախախտման ուժեղացումը,
- հայրենական արտադրանքի մրցունակության ցածր մակարդակը,
- ընդլայնված վերարտադրության պայմաններում տնտեսության գործելու անկարողությունը,
- բնակչության պահանջարկի և ապրանքների արտադրության միջև անհավասարակշռությունը,
- տնտեսության տարբեր ճյուղերում մենաշնորհի գոյության բարձր տեսակարար կշիռը,
- արտադրության արդյունավետության բարձրացման խթանիչ շարժառիթների բացակայությունը,
- արհեստականորեն կայունացված փոխարժեքները,
- հանրապետության մարզերի տնտեսական զարգացման անհամաչափության խորացումը,
- հասարակության գույքային անհավասարության և շերտավորման ուժեղացումը,
- տնտեսական հանցագործությունների աճը,
- պետական վերահսկողության համակարգի թուլացումը:

Արտաքին սպառնալիքների թվին են դասվում՝

- երկրի վերածումն այս կամ այն զարգացած պետության կցորդի,

¹ Ս.Սաֆարյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 74-76:

- միջազգային հանրության հետ արտաքին առևտրում խտրականության տարբեր դրսևորումները,
- ներկրումների նկատմամբ որոշակի հակումների ուժեղացումը, կախվածությունը ներմուծումից,
- արտաքին պարտքի ավելացումը,
- արտարժույթի արտահոսքը երկրից,
- տնտեսության դոլարայնացումը և ազգային դրամանիշի ապակայունացումը, վերջինիս դիրքերի թուլացումը:

Ներքին և արտաքին սպառնալիքների համադրումը վկայում է, որ հանրապետության համար առավել վտանգավոր են ներքին սպառնալիքները: Արտաքին սպառնալիքների մի շարք աղբյուրներ (օրինակ՝ արտաքին պարտքի ավելացումը, մերձավոր արտերկրի հետ արտաքին առևտրային շրջանառության կրճատումը) բխում են ներքին պատճառներից. տնտեսության ցածր արդյունավետություն, վերամշակող ճյուղերի ցածր մրցունակություն և մի շարք այլ գործոններ:

Ներկայումս ՀՀ ՏԱ համար ամենաեական սպառնալիքները, թերևս, հետևյալներն են՝ հասարակության գույքային անհավասարության և շերտավորման ուժեղացումը, այդ թվում հասարակության շերտավորումը մի փոքր խումբ հարուստների և աղքատների գերակշռող զանգվածի, սոցիալական տարբեր հակամարտությունների հանգեցնող գործազրկության աճը, աշխատավարձի ցածր մակարդակը, արտադրական կարողությունների օգտագործման ցածր աստիճանը, անօրինական տնտեսական գործունեությունը, որը բխում է այնպիսի գործոններից, ինչպիսիք են ստվերային տնտեսության մեծ ծավալը, գործազրկության բարձր մակարդակը, կոռուպցիայի առկայությունը, պետական վերահսկողության համակարգի թուլությունը և այլն:

Հանրապետությունում վարձու աշխատանքի դիմաց կատարվող վճարումների մակարդակն այնպիսին է, որ դրա կարգավորումը պետք է դառնա պետության գործառնության հիմնական ուղղություններից մեկը: Առկա են դրամական աշխատավարձի նվազեցման բոլոր բացասական հետևանքները: Ըստ էության, ՀՀ-ում աշխատավարձի ցածր մակարդակն անցել է տնտեսական և քաղաքական անվտանգության սահմանները:

Տնտեսության կառուցվածքի ձևախախտման հետագա ուժեղացումը երկրի անվտանգության գլխավոր սպառնալիքներց մեկն է: Տնտեսական նախկին համակարգից մնացած բազմաբնույթ խնդիրները ևս իրենց այսօր զգալ են տալիս: Նախկին համակարգի կառուցվածքային ձևախախտումների էությունը մի կողմից վառելիքաէներգետիկ համակարգի արագընթաց զարգացումն էր, մյուս կողմից՝ դրանց համեմատ այն ճյուղերի և բնագավառների թույլ զարգացումը, որոնք անմիջականորեն կոչված էին բավարարելու մարդկանց հոգևոր, մտավոր և նյութական պահանջները: Նման ժառանգությունն այսօր հնարավորություն չի ընձեռում ամուր հիմքերի վրա դնել թեթև, սննդի և արդյունաբերության այլ հարակից ճյուղերի զարգացումը, ծառայությունների ոլորտը և կենցաղային հիմնահարցերը:

Կառուցվածքային վերակառուցման համար անհրաժեշտ է՝

- տնտեսավարման ներկա համակարգում գործող ձեռնարկությունների պահպանման նպատակահարմարության որոշում,
- կառուցվածքային առաջընթաց տեղաշարժերի իրականացման նպատակով տնտեսության առավել արդյունավետ ճյուղերում և բնագավառներում զգալի արտասահմանյան ներդրումների ներգրավում,
- պաշտպանական համալիրի մաս կազմող ձեռնարկությունների ցանկի հստակեցում, որը ենթակա չէ արդյունաբերության քաղաքացիական կարիքներին ծառայեցնելու նպատակով իրականացվող վերակազմավորման գործընթացին և այլն:

Սոցիալական ոլորտն առանցքային դեր է խաղում ոչ միայն տնտեսական, այլև ազգային անվտանգության ապահովման գործում: Դրանում կարելի է ներառել անհատի, ընտանիքի, հասարակության, դրա առանձին շերտերի, սոցիալական խմբերի և պետության կենսական շահերը: ՀՀ անվտանգության գլխավոր սպառնալիքներից կարելի է առանձնացնել եկամուտների անհավասարաչափ բաշխումը, բնակչության կողմից սննդի պահանջմունքի լիարժեք բավարարման անկումը, թերսնումը, աղքատությունը: Նշված միտումները, ինչպես նաև զբաղվածության կրճատումը, մահացության աճը, ծնունդների թվի կրճատումը հանգեցնում են երկրում կյանքի ընդհանուր որակի անկմանը և արտագաղթի տեմպերի

աճին, ինչն էլ իր հերթին սպառնում է երկրի անվտանգությանն ընդհանրապես:

ՏԱ սպառնալիքների մեջ առանձնանում են ստվերային տնտեսությունը և կոռուպցիան՝ իրենց քաղաքական, սոցիալական և տնտեսական լուրջ հետևանքներով: Ընդ որում, այս երևույթները բնութագրական են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներին, և, բնականաբար, տարբեր երկրներում դրանց յուրահատկությունները, չափերը, պայքարի միջոցները խիստ տարբերվում են միմյանցից: Հայաստանում ևս այդ երևույթները տնտեսական զարգացմանը խոչընդոտող լուրջ գործոններ են: Ստվերային տնտեսության առկայությունը պայմանավորված է ընդհանուր սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակով, պետական կարգավորման ցածր արդյունավետությամբ, կոռուպցիայով: Ընդ որում, վերջինիս հետ ստվերային տնտեսությունը գտնվում է փոխադարձ կապի մեջ: Ամերիկացի տնտեսագետ Գուստմանի առաջարկած փողի պահանջարկի գնահատման մեթոդի հիման վրա 2000թ. համար ՀՀ տնտեսության ստվերային մեծություն/ՀՆԱ հարաբերությունը կազմել է 60,3%: Ինչ վերաբերում է կոռուպցիային, ապա պետք է նշել, որ Համաշխարհային բանկի տվյալներով, Հայաստանը պատկանում է այն երկրների թվին, որտեղ հիմնական խնդիրը վարչական կոռուպցիան է: Վերջինս վերաբերում է գործող օրենքների և իրավական այլ ակտերի կիրարկման նպատակային խախտումներին՝ ի շահ պետական և ոչ պետական անձանց: Կոռուպցիայի այս տեսակի հիմքում ընկած է պետական պաշտոնյաների կողմից իրենց հայեցողությամբ օրենքների և օրենսդրական ակտերի տարբերակված կիրարկումը: ԱՊՀ երկրների համար վարչական կոռուպցիայի «արժեքը» կազմում է ընկերությունների եկամուտների 3,7%-ը, արևելաեվրոպական երկրներում՝ 2,2%-ը, Հայաստանում՝ 4,6%-ը¹:

ՀՀ ՏԱ-ին սպառնացող գործընթացների մեջ առանձնահատուկ կարևորվում է ազգային հարստության բաղկացուցիչ մասի՝ մտավոր կապիտալի արտահոսքը երկրից, որն իր նշանակու-

¹ Anticorruption in Transition: A Contribution to the Policy Debate, WB, Washington, D.C. 2000. Տե՛ս նաև «Կոռուպցիան, նրա գնահատումը և հաղթահարման հիմնական ուղղությունները», էջ 471-548, Ա.Մարկոսյան, Դ.Հախվերդյան, Իրականի և անիրականի միջև. տնտեսագիտական-քաղաքագիտական ուսումնասիրություն, Եր., «Տիգրան Մեծ», 2004:

թյամբ, թերևս, ավելի մեծ մտահոգություն է առաջացնում և կարիք ունի անհետաձգելի քայլերի: Հանրապետության տնտեսությունում ստեղծված վիճակի պատճառով արդեն երկար ժամանակ արտագաղթում են մտավոր կարող ուժերը, ինչը հսկայական վտանգ է ներկայացնում երկրի ներկայի ու ապագայի համար: Զանազան հետազոտությունների տվյալներով, հանրապետությունից արտագաղթել են 600 հազարից մինչև 1,25 մլն մարդ¹: Ցավոք, արտագաղթում են երկրի ստեղծագործական ընտրանու ներկայացուցիչները: Եթե վերցնենք արտագաղթի նվազագույն չափը՝ մոտ 600 հազ. մարդ և ենթադրենք, թե նրանց մեջ ստեղծագործական ընտրանու ներկայացուցիչները կազմում են ընդամենը 1%, ապա նրանց թիվը կկազմի 6000: Տարբեր գնահատականներով, դրա արդյունքում հանրապետությանը հասցված վնասը հաշվարկվում է միլիարդավոր դրամների հասնող գումարի չափով:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ՏԱ սպառնալիքները ներթափանցել են տնտեսության գրեթե բոլոր բնագավառները, էական ազդեցություն են գործել մարդու կենսագործունեության տարբեր ոլորտների վրա:

2.4. Եկամուտների ձևավորումը և օգտագործումը Հարավկովկասյան հանրապետություններում

Հայաստանի Հանրապետությունում 2000թ. զբաղվածների ընդհանուր թիվը կազմել է 1278 հազ. մարդ, որից 338 հազարը (կամ 26,4%-ը) զբաղված են եղել պետական, իսկ 940 հազարը (կամ 73,6%-ը)՝ մասնավոր ձեռնարկություններում²: Համեմատության համար նշենք, որ այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են Ադրբեջանում՝ 3705, 1278 (34,5%) և 2427 հազ. (65,5%), Վրաստանում՝ 1748, 462 (26,4%) և 1286 հազ. (73,6%)³: Նեշտ է նկա-

¹ Վ.Ե.Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստ., Եր., 2001, էջ 308, Յու. Գրիգորյան, Ժողովրդագրական վիճակը Հայաստանում, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», թիվ 2, 2001, էջ 62-65:

² Статистический ежегодник Южно-кавказских стран Армения, Азербайджан, Грузия, 2002, Изд-во «САДА», с. 49.

³ Նույն տեղում:

տել, որ ըստ սեփականության ձևերի զբաղվածների տեսակարար կշիռը Հայաստանում և Վրաստանում ունի նույն պատկերը:

Հայաստանի Հանրապետությունում զբաղվածների զգալի մասն ընդգրկված է գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության ոլորտում (567 հազար մարդ կամ զբաղվածների 44,4%-ը), ըստ որում, 8 հազարը (1,4%) զբաղված է պետական, իսկ 559 հազարը (98,6%)՝ մասնավոր ձեռնարկություններում: Այդ մեծությունները Ադրբեջանում կազմել են համապատասխանաբար 1517 հազար մարդ կամ զբաղվածների 40,9%-ը, 41 (2,7%) և 1476 (97,3%), Վրաստանում՝ 910 հազար մարդ (52,1%), 8 (0,9%) և 902 (99,1%):

Վերամշակող արդյունաբերությունում ՀՀ-ում զբաղված են 156 հազար մարդ (զբաղվածների 12,2%-ը), որից 14 հազարը (9,0%-ը) պետական և 142 հազարը (91%-ը) մասնավոր ձեռնարկություններում: Այդ ցուցանիշները Ադրբեջանում կազմել են համապատասխանաբար՝ 169 հազար մարդ (4,6%), 63 հազար (37,3%) և 106 հազար (62,7%), Վրաստանում՝ 104 հազար (5,9%), 24 հազար (23,1%) և 80 հազար (76,9%):

Մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում ՀՀ-ում զբաղված են 107 հազար մարդ (8,4%), որից 3 հազարը (2,8%-ը)՝ պետական, 104 հազարը (97,2%-ը)՝ մասնավոր ձեռնարկություններում, Ադրբեջանում համապատասխանաբար՝ 626 հազար մարդ (16,9%-ը), 66 հազար (10,5%-ը) և 560 հազար մարդ (89,5%-ը), Վրաստանում՝ 175 հազար մարդ (10,0%-ը), 16 հազար մարդ (9,1%-ը) և 159 հազար մարդ (90,9%-ը)¹: Ուսումնասիրության արդյունքներից հետևում է, որ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Ադրբեջանում և Վրաստանում զբաղվածների մեծ մասը ընդգրկված է մասնավոր հատվածում: Ակնհայտ է նաև, որ ներկայումս այդ թվերն ավելացել են հոգուտ մասնավոր հատվածի:

Հայաստանի Հանրապետությունում 2000թ. պետական կառավարման համակարգում ընդգրկված են եղել 27 հազար մարդ (զբաղվածների ամբողջ թվի 2,1%-ը), Ադրբեջանում՝ 258 հազար

¹ Հաշվարկվել է նույն էջի տվյալների հիման վրա:

մարդ (7,0%-ը), Վրաստանում՝ 106 հազար մարդ (6,1%-ը)¹: Այն ուղորտները, որտեղ դեռևս մեծ բաժին է կազմում պետական հատվածը, շարունակում են մնալ կրթությունը և առողջապահությունը: Այսպես, Հայաստանում կրթության ուղորտում զբաղված են 127 հազար մարդ (զբաղվածների ամբողջ թվի 9,9%-ը), որից 117 հազարը (92,1%-ը) ընդգրկված են պետական և 10 հազարը (7,9%)՝ մասնավոր ձեռնարկություններում, Ադրբեջանում՝ 318 հազար մարդ (7,0%), որից 293 հազարը (92,1%)՝ պետական, 25 հազարը (7,9%)՝ մասնավոր ձեռնարկություններում: Առողջապահության ուղորտում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ Հայաստանում 79 հազար (6,2%), որից 65 հազարը (82,3%)՝ պետական և 14 հազարը (17,7%)՝ մասնավոր ձեռնարկություններում, Ադրբեջանում՝ 169 (4,6%), 165 (97,6%) և (2,4%), Վրաստանում՝ 85 (4,9%), 73 (85,9%) և 12 (14,1%)²:

Միջին ամսական աշխատավարձը (\$-ով) կազմել է ՀՀ-ում՝ 1997թ.՝ 27,7, 1998թ.՝ 35,7, 1999թ.՝ 37,7, 2000թ.՝ 42,1, 2001թ.՝ 43,1, Ադրբեջանում համապատասխանաբար՝ 35,5, 43,5, 44,8, 49,5, 55,8, Վրաստանում՝ 33,4, 39,8, 33,5, 36,6³: Ինչպես տեսնում ենք բերված տվյալներից, 5 տարիների ընթացքում (1997-2001թթ.) միջին ամսական աշխատավարձի տարեկան միջին փոփոխությունը (աճը) կազմել է Հայաստանում՝ 3,1 դոլար $\frac{(43,1 - 27,7)}{5}$, Ադրբեջանում՝ 4,1 $\frac{(55,8 - 35,5)}{5}$, Վրաստանում՝ 0,8 դոլար $\frac{(36,6 - 33,4)}{4}$: Դժվար չէ

տեսնել, որ, օրինակ, ՀՀ-ում, եթե պահպանվի նախորդ 5 տարիների ընթացքում ձևավորված միջին տարեկան աշխատավարձի աճի մեծությունը, ապա 102 դոլար ամսական միջին աշխատավարձի մեծությանը կհասնենք միայն 19 տարի հետո (հաշված 2001-ից), այսինքն՝ 2020թ.: Հասկանալի է, որ նման զարգացումը ձեռնտու չէ

¹ Նույն տեղում, էջ 50:

² Նույն տեղում:

³ Статистический ежегодник Южно-кавказских стран Армения, Азербайджан, Грузия, 2002, Изд-во «САДА», с.57.

ոչ միայն բնակչության մի զգալի մասին՝ զբաղվածներին, այլև հանրապետության ամբողջությամբ վերցրած:

Հանրապետության թոշակատուների թոշակային ապահովության տեսակների թվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2001թ. թոշակատուների 553 հազար մարդուց ըստ տարիքի թոշակ են ստանում 393 հազարը (71,1 %-ը), ըստ հաշմանդամության (բացի Երկրորդ համաշխարհային պատերազմի հաշմանդամները)՝ 98 հազարը (17,7%), ընտանիքի կերակրողին կորցնելու դեպքում՝ 24 հազարը (4,3%), աշխատանքի բարեխիղճ տարիների համար՝ 19 հազարը (3,4%) և սոցիալականը՝ 9 հազարը (1,6%)¹: Պետք է նաև նկատել, որ սոցիալական ապահովության մարմիններում հաշվառված թոշակատուների նշանակված միջին ամսական թոշակի մեծությունը կազմել է \$8,2²:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում բնակչության դրամական եկամուտների կազմը և օգտագործումը: Այսպես, 1999թ. մեկ շնչի ամսական դրամական եկամուտները (\$-ով) ՀՀ-ում կազմել են \$15,1, Ադրբեջանում՝ 36,1, Վրաստանում՝ 18,2, որից ՀՀ-ում՝ 5,3-ը (35%-ը), Ադրբեջանում՝ 12,6-ը (34,9%), Վրաստանում՝ 8,2-ը (45%) կազմել են աշխատանքային եկամուտները, 1,4 դոլարը (9%-ը)՝ սոցիալական տրանսֆերտները, Ադրբեջանում՝ 2,7 (7,5%), Վրաստանում՝ 2,8 (15%), բոլոր տեսակի վաճառքներից ստացված եկամուտները՝ \$4,8 (24%-ը), Ադրբեջանում՝ 6,0 (16,7%), Վրաստանում՝ 4,7 (14%), այլ դրամական մուտքերը՝ \$3,5 (24%), Ադրբեջանում՝ 14,8 (40,9%), Վրաստանում՝ 2,5-ը (4%)³:

Նույն թվականին ՀՀ-ում բնակչության մեկ շնչի հաշվով դրամական ծախսերը կազմել են \$23,7, Ադրբեջանում՝ \$34,6, Վրաստանում՝ \$28,8, որից սպառողական ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 22,3 (94,1%), 31,4 (87,6%) և 25,5 (92%), ոչ պարենային ապրանքների գնումների համար՝ 3,4 (15,0%), 4,4 (17,5%) և 5,2 (20%), մնացածը կազմել են այլ դրամական ծախսերը⁴:

¹ Նույն տեղում, էջ 61:

² Նույն տեղում, էջ 62:

³ Նույն տեղում, էջ 66:

⁴ Նույն տեղում:

Այս համատեքստում հետաքրքիր է նաև նշել դրամական եկամուտների և կենսապահովման նվազագույնի միջև եղած կապը: Վիճակագրական տվյալները վկայում են, որ 2000թ. միջին շնչային կենսապահովման նվազագույնը (\$-ով) կազմել է ՀՀ-ում՝ 22,3¹, Ադրբեջանում՝ 22,5, Վրաստանում 58,3, միջին շնչային դրամական եկամուտը (դոլարով) կազմել է համապատասխանաբար՝ \$19,5, \$38,7 և \$18,2, իսկ դրամական եկամտի հարաբերությունը կենսապահովման նվազագույնին կազմել է, համապատասխանաբար՝ 87,0, 172,0 և 31,2%²:

Հասարակության ներսում հարստության բաշխման համամասնությունների մասին է խոսում եկամուտների ձևավորման հաշիվը (տե՛ս աղյուսակ 2.6):

Աղյուսակ 2.6

Հարավկովկասյան հանրապետություններում եկամուտների ձևավորման հաշիվը, ընթացիկ գներով, մին ԱՄՆ դոլար³

		1998	1999	2000	2001	1998-2001թթ. միջին տարեկանը
1	2	3	4	5	6	7
Ռեսուրսները						
Համախառն ներքին արդյունք	AM	1892	1845	1912	2117	1883
	AZ	4447	4584	5273	5717	5005
	GE	3620	2811	3023	3161	3154
Զուտ ներքին արդյունք	AM	1634	1586	1633	...	1618
	AZ	3703	3870	4613	5031	4304
	GE	3202	2460	2806	2838	2827
Օգտագործումը						
Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	AM	781	792	817	...	797
	AZ	858	961	1141	1147	1027
	GE	815	621	746	730	728
Աշխատավարձ	AM	725	738	754	...	739
	AZ	707	817	895	1054	868
	GE	737	566	679	671	663
Գործատուների կողմից սոցիալական ապահովագրության	AM	56	54	63	...	58
	AZ	151	144	246	93	159

¹ Այդ թվականին ՀՀ-ում նվազագույն սպառողական բյուջե չի հաստատվել:

² Նույն տեղում, էջ 70:

³ Աղյուսակը կազմված է Статистический ежегодник Южно-кавказских стран Армения, Азербайджан, Грузия, 2002, Изд-во «САДА», էջ 145-146-ի տվյալների հիման վրա:

Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները

1	2	3	4	5	6	7
համար կատարված հատկացումներ	GE	78	55	67	59	65
Արտադրության և ներմուծման հարկեր, այդ թվում՝	AM	192	217	217	...	209
	AZ	339	367	383	455	386
	GE	285	258	270	301	279
Արտադրանքի հարկեր, որից	AM	157	168	172	...	166
	AZ	229	249	268	318	266
	GE	216	197	214	241	217
ԱԱՀ ձևի հարկեր	AM ¹	118	128	124	...	123
	AZ	186	192	213	238	207
	GE	171	180	187	214	188
Ներմուծման հարկեր, բացառությամբ ԱԱՀ	AM	21	15	16	...	17
	AZ	76	75	70	93	79
	GE	44	17	27	27	29
Արտադրության այլ հարկեր	AM	14	34	29	...	26
	AZ	35	42	45	43	41
	GE	69	61	56	59	61
Սուբսիդիաներ	AM	-3	-26	-14	...	-14
	AZ	-121	-143	-13	-13	-73
	GE	-43	-35	-28	-26	-33
Համախառն գործառնական շահույթ և համախառն խառը եկամուտներ, այդ թվում՝	AM	922	862	892	...	892
	AZ	3371	3399	3761	4085	3654
	GE	2563	1967	2035	2156	2180
Զուտ գործառնական շահույթ և զուտ խառը եկամուտներ	AM	664	603	613	...	627
	AZ	2626	2686	3102	3399	2953
	GE	2145	1616	1818	1833	1853

¹ Առանց ակցիզային հարկի:

Վերը բերված աղյուսակում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ իմաստը:

Արտադրության փուլում համախառն ներքին արդյունքը բոլոր ճյուղերի համախառն ավելացված արժեքի գումարն է: Համախառն ներքին արդյունքը հաշվարկվում է շուկայական գներով, այսինքն՝ ներառում է արտադրանքի և ներմուծման զուտ հարկերը: «Զուտ» հասկացությունը նշանակում է, որ հարկերի գումարից հանված են համապատասխան լրավճարները: Սա ազգային հաշիվների համակարգի կարևորագույն ցուցանիշներից է, որով բնութագրվում է երկրի տնտեսական գործունեության վերջնական արդյունքը:

Համախառն ավելացված արժեքը հաշվարկվում է ճյուղային կտրվածքով՝ որպես ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման ու միջանկյալ սպառման միջև տարբերություն: «Համախառն» հասկացությունը ցույց է տալիս, որ այս ցուցանիշն ընդգրկում է արտադրության ընթացքում սպառված հիմնական կապիտալի արժեքը:

Հարկեր ապրանքների վրա. ընդգրկում են հարկերը, որոնց մեծությունն ուղղակիորեն կախված է արտադրված արտադրանքի և մատուցված ծառայությունների արժեքից: Այս տիպի հարկերի թվին են դասվում ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկերը, վառելիքի վրա սահմանված հարկերը և այլն: Ներմուծման հարկերը՝ ներմուծվող ապրանքների և ծառայությունների վրա սահմանվող հարկերն են:

Լրավճարները (սուբսիդիաները) պետական բյուջեից ընթացիկ անհատուցելի վճարումներն են ձեռնարկություններին, որոնք կատարվում են որոշակի տեսակի ապրանքների արտադրության կամ ծառայությունների մատուցման համար:

Եկամուտների ձևավորման հաշիվը ցույց է տալիս ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման գործընթացին անմիջականորեն մասնակցող ինստիտուցիոնալ միավորների - ռեզիդենտների կողմից առաջնային հարկերի վճարումը:

Ինստիտուցիոնալ միավորը համարվում է տվյալ երկրի տնտեսության ռեզիդենտ, եթե այն երկրի տարածքում ունի տնտեսական շահի միավոր (կենտրոն), այսինքն՝ եթե զբաղվում է կամ մտադրություն ունի զբաղվելու տնտեսական գործունեության որևէ տեսակով կամ գործառույթով երկարատև ժամանակահատվածում (այդ ժամկետը սովորաբար ընդունվում է մեկ տարի):

Աշխատողների աշխատանքի վարձատրությունը որոշվում է փողային կամ իրային տեսքով արտահայտված բոլոր պարգևավճարների գումարով, որոնք գործատուի կողմից վճարվել են վարձու աշխատողներին հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքի դիմաց: Աշխատողների աշխատանքի վարձատրությունը հաշվարկվում է հաշվեգրված գումարների հիման վրա և ներառում է սոցիալական ապահովագրության հատկացումների,

եկամտահարկի և այլ վճարումների գումարները: Դրանք պետք է կատարվեն աշխատողների կողմից՝ նույնիսկ այն դեպքերում, եթե դրանք փաստացի պահվում են վարչական շահերից ելնելով կամ այլ պատճառներով և վճարվում են անմիջապես սոցիալական ապահովագրության, հարկային մարմիններին կամ այլ ծառայություններին աշխատողի անունից:

Արտադրության այլ հարկերն այն հարկերն են, որոնցով հարկվում են արտադրական միավորները՝ կապված իրենց արտադրության կամ արտադրական գործունեության օգտագործման հետ (բացառությամբ ապրանքների վրա կիրառվող հարկերի): Նման հարկերի մեծությունն ուղղակիորեն կախված չէ արտադրության ծավալներից և շահութաբերությունից: Դրանք չեն ներառում նաև ինստիտուցիոնալ միավորի կողմից ստացվող շահույթի կամ այլ եկամուտների նկատմամբ հարկերը: Արտադրության այլ հարկերն են բնական պաշարների օգտագործման հարկերը (բնապահպանական հարկ), հողի դիմաց վճարումները (հողի հարկ), արտոնագրերի համար վճարները, պետական տուրքը և ձեռնարկություններից ու կազմակերպություններից գանձվող այլ վճարումները, անշարժ գույքի հարկը:

Տնտեսության համախառն (զուտ) շահույթը ավելացված արժեքի այն մասն է, որը մնում է արտադրողների տնօրինությանը՝ աշխատողների աշխատանքի դիմաց վճարումները և արտադրության ու ներմուծման «մաքուր» հարկերը վճարելուց հետո: «Համախառն» կամ «զուտ» հասկացության օգտագործումն այս դեպքում նշում է այն փաստը, թե այս ցուցանիշը ներառում է, թե չի ներառում արտադրության ընթացքում հիմնական կապիտալի օգտագործումը:

Տնային տնտեսությունների սեփականությունը հանդիսացող ձեռնարկությունների արտադրական գործունեության ընթացքում ձևավորվող շահույթն անվանվում է համախառն խառը եկամուտ, քանի որ այն ընդգրկում է ինչպես ձեռնարկության սեփականատիրոջ կողմից կատարված աշխատանքի վարձատրությունը, այնպես էլ ձեռնարկատիրական շահույթը:

Եթե փորձենք Հարավկովկասյան հանրապետությունների եկամուտների ձևավորման 1998, 2000 և 1998-2001թթ. միջին տարե-

կան մեծությունները ներկայացնել տոկոսային հարաբերությամբ, ապա այն կունենա հետևյալ տեսքը (տե՛ս աղյուսակ 2.7):

Աղյուսակ 2.7

Հարավկովկասյան երեք հանրապետությունների եկամուտների ձևավորման հաշվի կառուցվածքը, %

		1998	2000	1998-2000թթ. միջին տարեկան մեծությունը
Համախառն ներքին արդյունք	AM	100	100	100
	AZ	100	100	100
	GE	100	100	100
Օգտագործումը				
1. Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն, այդ թվում	AM	41.3	42.7	42.3
	AZ	19.3	21.6	20.6
	GE	22.5	24.7	23.1
1.1 Աշխատավարձ	AM	38.3	39.4	39.2
	AZ	15.9	17.0	17.4
	GE	20.4	22.5	21.0
1.2. Գործատուների կողմից սոցիալական ապահովության համար կատարված հատկացումներ	AM	3.0	3.3	3.1
	AZ	3.4	4.7	3.2
	GE	2.1	2.2	2.1
2. Արտադրության և ներմուծման հարկեր, այդ թվում	AM	10.1	11.3	11.1
	AZ	7.6	7.3	7.7
	GE	7.9	8.9	8.8
2.1. Արտադրանքի հարկեր	AM	8.3	9.0	8.8
	AZ	5.1	5.1	5.3
	GE	6.0	7.1	6.9
2.2 Ներմուծման հարկեր (բացառությամբ ԱԱՀ-ի)	AM	1.1	0.8	0.9
	AZ	1.7	1.3	1.6
	GE	1.2	0.9	0.9
2.3. Արտադրության այլ հարկեր	AM	0.7	1.5	1.4
	AZ	0.8	0.8	0.8
	GE	1.9	1.8	1.9
3. Սուբսիդիաներ	AM	-0.1	-0.7	-0.7
	AZ	-2.7	-0.2	-1.4
	GE	-1.2	-0.9	-1.0
4. Համախառն գործառնական շահույթ և համախառն եկամուտներ, այդ թվում	AM	48.7	46.7	47.3
	AZ	75.8	71.3	73.1
	GE	70.8	67.3	69.1
Զուտ գործառնական շահույթ և զուտ խառն եկամուտներ	AM	35.1	32.1	33.3
	AZ	59.1	58.8	59.0
	GE	59.3	60.1	58.8

Աղյուսակ 2.7-ի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ի տարբերություն Ադրբեջանի և Վրաստանի, ՀՀ-ում օգտագործվող համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) կազմում վարձու

աշխատողների աշխատանքի վարձատրության բաժինը գրեթե երկու անգամ ավելի բարձր է:

Վերը նշված ցուցանիշն ամենացածրն է Ադրբեջանում:

ՀՆԱ կազմում արտադրության և ներմուծման ամենաբարձր հարկերը ՀՀ-ում են, ապա՝ Ադրբեջանում և հետո՝ Վրաստանում, ըստ որում, արտադրանքի հարկերի բաժնով Վրաստանի ցուցանիշն ավելի բարձր է, քան Ադրբեջանինը, իսկ ներմուծման հարկերի (բացառությամբ ԱԱՀ-ի) ամենաբարձր մակարդակը Ադրբեջանում է (Հայաստանում և Վրաստանում դրանք գտնվել են միևնույն մակարդակի վրա):

Սուբսիդիաների բաժինն Ադրբեջանում երկու անգամ ավելի բարձր է, քան Հայաստանում: Այդ ցուցանիշն ամենացածրը Հայաստանում է:

Համախառն գործառնական շահույթի և համախառն եկամուտների ամենաբարձր ցուցանիշը Ադրբեջանում է, ապա՝ Վրաստանում և հետո միայն Հայաստանում: Այս ցուցանիշը, ըստ էության, բնութագրում է պետություն-ձեռնարկություն փոխհարաբերությունները և ինստիտուցիոնալ նշված երկու ինստիտուտների փոխհարաբերությունները պետության ներսում, ինչպես նաև հասարակության մեջ ստեղծված արդյունքի բաշխումը բնակչության տարբեր շերտերի միջև:

Չուտ գործառնական շահույթի և զուտ խառը եկամուտների ցուցանիշի մակարդակը Ադրբեջանում և Վրաստանում գտնվում են գրեթե նույն մակարդակի վրա (շուրջ 60%), որոնց համեմատ Հայաստանում այդ ցուցանիշը շուրջ երկու անգամ ավելի ցածր է: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Հարավկովկասյան երեք հանրապետություններում ստեղծված 100 միավոր ՀՆԱ-ից շուրջ 60 միավորը Ադրբեջանում և Վրաստանում մնում է ձեռնարկությունների սեփականատերերին և միայն 40 միավորն է տրվում ...«աշխատավոր ժողովրդին», իսկ Հայաստանում պատկերն այլ է. շուրջ 70 միավորն է տրվում աշխատավորներին, իսկ 30 միավորը մնում է ձեռնարկատերերին: Մա, թերևս, հասարակական հարաբերությունների հետագա զարգացման անկյունաքարային կողմերից մեկն է, քանի որ այն բնութագրում է աշխատանքի և կապիտալի փոխհարաբերությունը:

Եթե դիմելու լինենք մարքսիստական տնտեսագիտության տերմինաբանությանը և նրա հիմնական հասկացություններից մեկին՝ հավելյալ արժեքին (որն, ի դեպ, այդ նույն տնտեսագիտության մեկ այլ արտահայտությամբ ցույց է տալիս շահագործման աստիճանը, $P = M/V * 100$, որտեղ՝ P -ն հավելյալ արժեքի նորմն է, M -ը՝ ձեռնարկատերերի կամ կապիտալի ստացած շահույթը, իսկ V -ն աշխատավարձի ֆոնդի մեծությունն է: Հավելյալ արժեքի նորմը Հայաստանում կազմել է 78,7% ($33,3/42,3*100$), Ադրբեջանում՝ 286,4 ($59,0/20,5*100$), Վրաստանում՝ 245,5 ($58,8/23,1*100$): Ասվածից հետևում է, որ «աշխատավոր մարդու» շահագործման նորմը կամ աստիճանը Հայաստանում, Ադրբեջանի համեմատությամբ, 3,6, իսկ Վրաստանի համեմատությամբ՝ 3,2 անգամ ավելի ցածր է:

«Վարձու աշխատող-պետություն-ձեռնարկատեր (գործատու)» եռմիասնական օղակի միջև ստեղծված արդյունքի բաշխման հարաբերությունները բնութագրում են աշխատողների և կապիտալի միջև ձևավորված ուժերի հարաբերությունը և դրանց միջև պայքարի հետագա ինտենսիվությունն ու «դասակարգային» վայրիվերումները, պետության հնարավորությունն իր ձեռքում միջոցներ հավաքելու և դրանց բաշխման մասին, ինչպես նաև արդյունքի չափերը և դրանց փոփոխման հնարավորություններն առաջիկայում: Վարձու աշխատողների աշխատանքային ներդրումների դիմաց վճարի, պետության ստացած վճարի, պետության ստացած հարկերի և կապիտալի տերերի վաստակածի հարաբերությունների մասին են խոսում ստորև բերված տվյալները (անտեսվել է սուբսիդիաների բաժինը, քանի որ այն պետությունից տրվում է ինչպես աշխատանքի, այնպես էլ կապիտալի տերերին և, բացի այդ, դրանց տեսակարար կշիռը մեծ չէ), %-ով.

		Հայաստան	Ադրբեջան	Վրաստան
1.	Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	42,3	20,6	23,1
2.	Արտադրության և ներմուծման հարկեր	11,1	7,7	8,8
	Ընդամենը հարկեր	24,4 (11,1+13,3)	21,4 (7,7+13,7)	17,1 (8,8+9,3)
3.	Կապիտալի շահույթ և գուտ եկամուտներ	33,3	59,0	58,8

Բերված համամասնությունները վկայում են, որ գրեթե բոլոր հանրապետություններում ՀՆԱ-ում պետության «հասանելիքը»

կազմում է շուրջ 20% (այն ամենաբարձրն է Հայաստանում՝ 24,4%, և ամենացածրը՝ Վրաստանում՝ շուրջ 17%): Վարձու աշխատողների բաժինը Վրաստանում և Ադրբեջանում գտնվում է գրեթե նույն մակարդակի վրա, և դրա հաշվին մեծ է կապիտալի բաժինը՝ շուրջ 60%:

2.5. Նվազագույն աշխատավարձի և կենսապահովման նվազագույն բյուջեի մի շարք հիմնախնդիրներ

Ժնևի 54-րդ նստաշրջանի 1970թ. հունիսի 3-ի 131-րդ կոնվենցիան կոչվում է «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին կոնվենցիա՝ հատկապես հաշվի առնելով զարգացող երկրները»:

Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովը Ժնևում, 1970թ. հունիսի 3-ին գումարած 54-րդ նստաշրջանում, հաշվի առնելով, որ՝

ա. կազմակերպության անդամների մեծամասնության կողմից վավերացվել են «Նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի» 1928թ., «Հավասար վարձատրության մասին» 1951թ., ինչպես նաև «Գյուղատնտեսության մեջ նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի մասին» 1951թ. Կոնվենցիաների դրույթները,

բ. նշված կոնվենցիաներն արժեքավոր դեր ունեն վարձու աշխատող անձանց ընչազուրկ խմբերի պաշտպանության համար,

գ. պետք է ընդունել այդ կոնվենցիաները լրացնող և անհիմն ցածր աշխատավարձով աշխատող վարձու աշխատողների պաշտպանությունը նախատեսող նոր ակտ,

դ. պետք է անել մի շարք առաջարկություններ նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի վերաբերյալ՝ այդ առաջարկություններին տալով միջազգային կոնվենցիայի ձև,

1970թ. հունիսի 22-ին ընդունում է ներքոհիշյալ կոնվենցիան, որն անվանվեց «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին» կոնվենցիա¹ (այսուհետ այս մասում՝ Կոնվենցիա):

¹ 54-րդ նստաշրջան, Ժնև, 1970թ. հունիսի 3, Կոնվենցիա 131, «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին կոնվենցիա՝ հատկապես հաշվի առնելով զարգացող երկրները»:

Ըստ Կոնվենցիայի հոդված 1-ի՝ այն վավերացնող Աշխատանքի միջազգային կազմակերպության յուրաքանչյուր անդամ պարտավորվում է սահմանել վարձու աշխատողների բոլոր խմբերն ընդգրկող նվազագույն աշխատավարձի սահմանման համակարգ, որոնց աշխատանքի պայմանները նպատակահարմար են դարձնում այդպիսի համակարգի կիրառումը:

Յուրաքանչյուր երկրի իշխանության իրավասու մարմինը, ձեռնարկատերերի և աշխատավորների շահագրգիռ ներկայացուցչական կազմակերպությունների համաձայնությամբ կամ նրանց հետ սպառիչ խորհրդակցությունից հետո, սահմանում է վարձու աշխատողների խմբերը, որոնց վրա տարածվում է այդ համակարգը:

Կոնվենցիան վավերացնող կազմակերպության յուրաքանչյուր անդամ, Աշխատանքի միջազգային կազմակերպության Կանոնադրության 22-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, Կոնվենցիայի կիրառման մասին ներկայացվող իր առաջին զեկույցում թվում է վարձու աշխատող անձանց բոլոր խմբերը, որոնց վրա չի տարածվում սույն հոդվածի դրույթների գործունեությունը՝ նշելով այդ բացառության պատճառները: Հաջորդող զեկույցներում հայտնվում է բացառիկ խմբերի վերաբերյալ օրենսդրության և փորձի վիճակի մասին, ինչպես նաև այն մասին, թե Կոնվենցիան որքանով է կիրառվում կյանքում:

Կոնվենցիայի հոդված 2-ը սահմանում է, որ նվազագույն աշխատավարձն ունի օրենքի ուժ և նվազեցման ենթակա չէ և որ այս դրույթի չկիրառումը պատասխանատու անձի կամ անձանց նկատմամբ առաջացնում է քրեական կամ այլ պատասխանատվություն:

Հոդված 2-ի 1-ին կետի դրույթների պահպանման դեպքում ամբողջությամբ հարգվում է կոլեկտիվ բանակցությունների վարման ազատությունը:

Նվազագույն աշխատավարձի մակարդակի սահմանման ժամանակ հաշվի առնվող գործոնները, ազգային փորձին և պայմաններին համապատասխան, ներառում են.

ա) աշխատողների և նրանց ընտանիքների պահանջները՝ հաշվի առնելով երկրում ընդունված աշխատավարձի ընդհանուր

մակարդակը, կյանքի արժեքը, սոցիալական նպաստները և այլ սոցիալական խմբերի կյանքի համեմատական մակարդակը,

բ) տնտեսական նկատառումները՝ ներառելով տնտեսական զարգացման պահանջները, արտադրողականության մակարդակը և զբաղվածության բարձր մակարդակի ձեռքբերման և պահպանման ցանկալիությունը:

Նվազագույն աշխատավարձի բոլոր դրույթների արդյունավետ կիրառման ապահովման համար ձեռք են առնվում անհրաժեշտ միջոցներ, օրինակ՝ պատշաճ տեսչական ստուգումը:

Կոնվենցիան վավերացրած կազմակերպության ցանկացած անդամ կարող է դրա ուժի մեջ մտնելու սկզբնական պահից սկսած տասնամյա ժամանակահատվածը լրանալուց հետո այն չեղյալ հայտարարել՝ չեղյալ հայտարարման վերաբերյալ ակտի միջոցով, որն ուղարկվում է Աշխատանքի միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին և գրանցվում նրա կողմից: Չեղյալ հայտարարումը ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարման վերաբերյալ ակտի գրանցումից մեկ տարի հետո:

Կոնվենցիան վավերացրած կազմակերպության յուրաքանչյուր անդամ, որը նշված տասնամյա ժամանակահատվածը լրանալուց հետո միամյա ժամկետում չի օգտվում Կոնվենցիայի 9-րդ հոդվածում նախատեսված չեղյալ հայտարարման իր իրավունքից, ստիպված է լինում հաջորդ տասնամյա ժամանակահատվածում նույնպես կատարել Կոնվենցիայի պահանջները, իսկ Կոնվենցիան չեղյալ հայտարարել կկարողանա յուրաքանչյուր տասնամյա ժամկետը լրանալուց հետո միայն՝ սահմանված կարգով:

Ուշադրության են արժանի նաև Եվրոպական սոցիալական խարտիայում տեղ գտած դրույթները «արժանի աշխատավարձի իրավունքի» մասին:

Համաձայն Եվրոպական սոցիալական խարտիայի 4-րդ հոդվածի 1-ին կետի, պետությունը պարտավոր է «ճանաչել աշխատողների պարզևատրումներ ստանալու իրավունքը, ինչը կապահովի նրանց և նրանց ընտանիքների արժանի կենսամակարդակը»¹:

¹ Տե՛ս Եվրոպական սոցիալական խարտիան:

Երբ ոչինչ կամ գրեթե ոչինչ չի արվում ֆինանսական խթաններով գործազուրկներին աշխատանքի կոչ անելու համար, հարցականի տակ են դրվում հենց խարտիայի հիմնադրույթները: Աշխատանքի վարձատրությունը էականորեն ցածր է միջին ցուցանիշներից և համատեղելի չէ սոցիալական արդարության գաղափարի հետ:

Այդպիսի գնահատական տալը միշտ բավական դժվար է, մասնավորապես՝ յուրաքանչյուր առանձին երկրի սոցիալ-տնտեսական տարբերությունը և եկամուտների ու կյանքի ծախսերի մասին բավական լիարժեք տեղեկատվություն ստանալու համար: Կոմիտեի կողմից ընդունված գնահատման մեթոդիկան նույնպես ժամանակի ընթացքում փոփոխվել է: Ինչպես երևում է խմբագրումից, մեզ հետաքրքրող դրությունը մատնանշում է պարզևատրումը, «աշխատավորների կյանքի և նրանց ընտանիքների արժանի կենսամակարդակի ապահովումը»: Նախ ուշադրություն է գրավում այն, որ խարտիայի հեղինակները նպատակ չեն ունեցել նշել ընդհանուրի համար բնորոշ նորմ: Նրանք գերադասել են որոշել աշխատավարձի արդարության բնույթը աշխատավորների և նրանց ընտանիքների կյանքի համար բավարար միջոցներ ստեղծելու նպատակով: Խոսքը, այսպիսով, հարաբերական գնահատականի մասին է, որը սովորաբար հակադրում է տվյալ աշխատավարձի չափը տրվող պարզևատրումների չափի հետ և համեմատում է այն կյանքի մակարդակը, որը կարող է ապահովել այդպիսի աշխատավարձը, յուրաքանչյուր հասարակության համար բնականոն համարվող կենսամակարդակի հետ: Այդ հարցի շուրջ իր առաջին եզրակացությունների մեջ կոմիտեն նշում է, որ պահանջարկի չափը, որը պետք է համապատասխանի աշխատավարձին, ներառում է ոչ միայն հիմնական պահանջմունքները՝ ունենալ սնունդ, հագուստ և պահել բնակարանը, այլև առավել շատ պահանջներ կրթության, մշակույթի և հասարակական կյանքի բնագավառում: Տվյալ դեպքում յուրաքանչյուր հասարակություն արժանապատիվ կյանք վայելելու համար անհրաժեշտ հիմնական տարրերի մասին իր սեփական գնահատականն ունի: Մակայն քանի որ վերահսկողության մեխանիզմը պահանջում

է պարզ մեթոդներ, կոմիտեն որոշեց ընդունել այդպիսի կանոն, ինչն սկսեցին անվանել 68%-ի կանոն:

68%-ի կանոնը. - Տվյալ կանոնը, մշակված Եվրոպայի խորհրդի փորձագիտական եզրակացությունների հիման վրա, ենթադրում է միջին աշխատավարձի 68%-ոց մակարդակի շեմ: Աշխատավարձը, որը ցածր կլինի տվյալ շեմից, կդիտարկվի որպես 1-ին հոդվածի 4-րդ կետի սկզբունքներին անհամապատասխան՝ նկատի ունենալով յուրաքանչյուր երկրի սոցիալական և հարկային համակարգի առանձնահատկությունները: Կոմիտեն դիտարկում է նաև տարաբնույթ սոցիալական, ընտանեկան նպաստների, ինչպես նաև կրթության, տարբեր հարկային պարտավորությունների ազդեցությունը, մինչև առանձին պետությունների՝ իրենց պարտավորությունների կատարման մասին եզրակացություններ անելը: Քանի որ տվյալ կետի տեքստում պարզ խոսվում է ընտանիքի մասին, անհրաժեշտ է դիտարկել առանձին տնային տնտեսությունների դրությունը եկամտի միակ աղբյուրի (միայնակ աշխատող, որը չունի ընտանիք կամ իր խնամքի տակ ունի երկու երեխա, նաև այն աշխատողը, որը կերակրում է ամուսնուն և երեխաներին) տեսանկյունից: Այդ մեթոդը բավական բարդ է, քանի որ հիմքում չունի վիճակագրական տվյալներ և շեղվում է արդար պարզևատրման գլխավոր խնդրից՝ ներառելով ողջ սոցիալական և հարկային արտոնությունները, որոնք առաջադրվում են չնչին եկամուտ ունեցողներին: Որոշակի մտորումների փուլից հետո, որի ընթացքում կոմիտեն ձեռնպահ մնաց խարտիայի տվյալ դրության մասին եզրակացություններ անելուց, ընդունվեց նոր մեթոդ, ինչն առաջին անգամ կիրառվեց XIV-2 եզրակացության պատրաստությունների ժամանակ, 1998թ.:

Նոր մեթոդաբանություն. - XIV-2 եզրակացության ընդհանուր նախաբանում Կոմիտեն մատնացույց արեց նոր մեթոդը, որը որպես միջին աշխատավարձի արժանի շեմ էր սահմանում 60%-ի մակարդակը: Կարևոր է նկատել, որ այստեղ խոսքը զուտ գումարների մասին է՝ հիմնված սոցիալական ապահովության համակարգի մուտքերի և հարկային պահումների վրա, այլ ոչ թե եկամտի

ընդհանուր գումարի մասին, ինչպես մի ժամանակ էր: Մեթոդի փոփոխությունը չի նշանակում դիրքերի վերանայում: Կոմիտեն ճշտեց, որ ամենացածր աշխատավարձը չպետք է էականորեն ցածր լինի աշխատավարձի միջին մակարդակից. տվյալ սկզբունքն էր բովանդակում նախկին մեթոդաբանությունը: Եթե կենտրոնանաք երկու հիմնական թվերի վրա, հիմնախնդիրները, կապված վիճակագրական տվյալների ստացման հետ, այլևս չպետք է ծագեն: Միջազգային մակարդակում հանդես են եկել երկու կարևոր տեղեկատվական աղբյուրներ՝ Եվրոստատը և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ): Պետությունները պետք է շարունակեն տրամադրել ազգային վիճակագրական տվյալներ, ինչը պահանջում է Կոմիտեն, սակայն առանձին պետությունների իշխանությունների կողմից կազմված տվյալների հաստատման կամ լրացման համար կարող են օգտագործվել նաև այլ աղբյուրներ: Մեթոդաբանության գնահատականների պարզեցման պատճառները վերաբերում են երկու կատեգորիաների: Առաջին, Կոմիտեն ելնում է այն հանգամանքից, որ ընտանեկան եկամուտների համակարգը խարտիան գրելիս բավական փոփոխվել է և հնարավոր չէ առավել հիմնավոր պնդել, որ միակ աշխատավարձը կարող է բավարարել ընտանիքի բոլոր կարիքները: Վերջին երեք տասնամյակում շուկայում կանանց թվի կտրուկ աճը հակադրվում է խարտիայի տեքստի այն թեզիսին, որ յուրաքանչյուր ընտանիքում պետք է լինի ոչ ավելի, քան մեկ վարձու աշխատող: Եվրամիության աշխատողների հիմնական իրավունքների մասին խարտիան (1989թ.), որը որպես աշխատավարձ նկարագրում է արդար պարզևատրումը, թույլ կտա յուրաքանչյուր աշխատողի ունենալ արժանապատիվ կենսամակարդակ: Որպես ապացույց կարելի է բերել այն հանգամանքը, որ եթե վերջին տասնամյակներին պարզևատրման ընդհանուր մակարդակը հաճախ ընդգրկում էր ընտանիքի դրության գործոնը, ապա այժմ դա այլևս չի դիտարկվում: Ներկայումս լրացուցիչ եկամուտը վճարվում է պետության կողմից սոցիալական ապահովության համար, այն դեպքում, երբ աշխատավարձը պարզապես կատարված աշխատանքի համար վարձատրությունն է:

Երկրորդ պատճառը կապված է 4-րդ հոդվածի 1-ին կետի գնահատականի կատարման անհրաժեշտության հետ, որը ծագել է մի շարք երկրներում, մասնավորապես՝ Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի երկրներում, որոնք հիմնականում պատրաստվում են խարտիայի վավերացմանը: Այդ երկրներն ունեն աշխատավարձի տարբեր գամբյուղներ, որոնք տարբերվում են իրենց ծավալներով: Նախկինում 68%-ի կանոնը մշակվել է այն ժամանակ, երբ տնտեսական պայմանների հարաբերական մոտեցման պայմաններում խարտիան վավերացված էր 11 պետությունների կողմից: Նոր մեթոդը կարող է արդարությամբ և ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ կիրառվել բոլոր պետություններում, որոնք ընդունել են 4-րդ հոդվածի 1-ին կետը՝ անկախ նրանց տնտեսական զարգացածության մակարդակից և աշխատավարձի գամբյուղի յուրահատկությունից:

Այլ ենթադրություններ. - Այսպիսով, եթե հաշվարկները ցույց են տալիս, որ աշխատավարձը գերազանցում է նշված սահմանը, ապա անհրաժեշտ է նաև համոզվել, որ այն իրականում բավարար է կյանքի բնականոն մակարդակի ապահովման համար: Այլ խոսքով՝ աշխատավարձը պետք է բարձր լինի տվյալ երկրի աղքատության մակարդակից: Դրա հետ մեկտեղ, պետք է տարբերություն մտցնել այդ իրավունքի և սոցիալական ապահովության իրավունքի միջև, ինչն ամրագրված է խարտիայի 13-րդ հոդվածում: Դրանով նախատեսվում է, որ յուրաքանչյուր մարդ, չունենալով ապրելու միջոցներ, համապատասխան օգնության իրավունք ունի: Այսինքն՝ պետությունը պետք է այդպիսի մարդկանց ցույց տա անհրաժեշտ օգնություն, որպեսզի նրանք կարողանան աղքատության մակարդակից բարձր լինել: Աշխատավարձը, որը չի գերազանցում տվյալ սահմանը, չի կարող դիտվել որպես արդարացի:

Աշխատավարձը 60%-ի մակարդակից ցածր լինելու դեպքում Կոմիտեն ավտոմատ կերպով եզրակացություն չպետք է անի խարտիայի խախտման մասին: Հետաքրքրված պետությանը պետք է առաջարկվի լրացուցիչ տեղեկություններ ներկայացնել այն մասին, որ աշխատանքի նման վարձատրությունն ամեն դեպքում

թույլ կտա աշխատավորներին նորմալ կենսակերպ ունենալ: Ներկայացվելիք փաստերի մեջ պետք է նշված լինեն նաև առողջապահության, տրանսպորտի և կրթության համակարգի գները: Սակայն եթե աշխատողի աշխատավարձի մակարդակը չի գերազանցում տվյալ երկրի միջին աշխատավարձի կեսը, ապա Կոմիտեն անհապաղ եզրակացություն է անում խարտիայի պահանջների խախտման մասին:

Ի տարբերություն նախկին մեթոդիկայի գնահատումների, նոր մեթոդիկան ուշադրության չի արժանացնում սոցիալական ապահովության ֆոնդերից տրվող վճարումները, եթե, իհարկե, դրանք անմիջապես կապված չեն աշխատավարձի հետ: Ուշադրությունը բնեռելով զուտ աշխատավարձի վրա՝ տվյալ մեթոդիկան հաշվի է առնում աշխատավարձից տրվող հարկերի և սոցիալական ապահովության ֆոնդի համար արվող մուծումների հետևանքները: Ելնելով դրանից՝ Կոմիտեն հաշվի է առնում առանձին սոցիալական վճարումները, ինչը նշվում է 4-րդ հոդվածի վերջին կետում: Այն երկրների համար, որտեղ օրենքով սահմանված է նվազագույն աշխատավարձը, իր որոշման մեջ Կոմիտեն կհենվի աշխատավարձի չափի վրա:

«Պարզևատրում» եզրն այստեղ վերաբերում է աշխատավորին աշխատանքի դիմաց տրվող հավելավճարներին և պարզևատրումներին:

Ավարտելով նոր մեթոդիկան ներկայացնելը՝ Կոմիտեն ընդգծել է 4-րդ հոդվածի 1-ին կետի կարևորությունը, որտեղ նշված են խարտիայով պաշտպանվող իրավունքները: Կոմիտեն կոչ է անում առավելագույնս կիրառել դրանք: Որպեսզի լավ վերահսկի դրանց իրագործումը, Կոմիտեն պատրաստակամություն է հայտնում հանդիպումներ անցկացնել կառավարությունների ներկայացուցիչների հետ: Այդպիսի պրակտիկան ամրագրված է Թուրինյան արձանագրությունում և արդեն բազմիցս կիրառվել է:

Նոր մեթոդիկայի գործնական կիրառումը. - Քանի որ նոր մեթոդաբանությունը հրապարակվեց ազգային հաշվետվություններ տալուց հետո, ըստ խարտիայի 4-րդ հոդվածի 1-ին կետի, Կոմիտեն

ստիպված էր հետաձգել դրանց դիտարկումը՝ հավաստի տեղեկատվություն սպասելով միջին և նվազագույն աշխատավարձի մասին:

Այնուհանդերձ, Կոմիտեն վերջնականորեն հանգեց հետևյալին. օրինակ, դրական գնահատվեց դրությունը Մալթայում: Ի տարբերություն մի շարք այլ երկրների, որտեղ բացակայում են հարկային և սոցիալական համակարգի ապահովման հատկացումները, այստեղ դրությունը բավական պարզ էր:

Բնակչության կենսամակարդակի կայունացման և որոշակի պետական երաշխիքների ապահովման տեսանկյունից կարևոր և անհրաժեշտ էր «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքի¹ ընդունումը, որը, մեր կարծիքով, կատարվեց բավական մեծ ուշացումով:

Վերոնշյալ օրենքը սահմանում է ՀՀ-ում կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի հաշվարկման ու հաստատման իրավական հիմքերը, ինչպես նաև կարգավորում է պետական սոցիալական քաղաքականության իրականացման հետ կապված հարաբերությունները:

Ըստ որում, կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին օրենսդրությունը բաղկացած է նշված օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից:

Օրենքում օգտագործվել են հետևյալ հիմնական հասկացությունները.

1. կենսապահովման նվազագույն զամբյուղ՝ մարդու առողջության պահպանման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ՝ միջազգայնորեն ընդունված ֆիզիոլոգիական, առողջապահական և սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործակիցներով հաշվարկված ոչ պարենային ապրանքների և ծառայությունների կազմն ու կառուցվածքը սահմանող նվազագույն քանակ,

¹ «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004թ. մարտի 16-ին (ՀՕ-54, 06.04.2004):

2. կենսապահովման նվազագույն բյուջե՝ միջազգայնորեն ընդունված կենսապահովման նվազագույն գամբյուղի դրամական արժեք,
3. սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբեր՝ աշխատունակ բնակչություն, թոշակատուներ, երեխաներ:

Կենսապահովման նվազագույն գամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի սահմանումը նպատակ ունի՝

1. գնահատել ՀՀ բնակչության կենսամակարդակը,
2. կենսամակարդակի գնահատված ցուցանիշն օգտագործել պետական սոցիալական քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս,
3. հիմնավորել սահմանվող նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերը,
4. որոշել չհարկվող եկամտի չափը:

Օրենքի հոդված 5-ում սահմանված է կենսապահովման նվազագույն գամբյուղի հաշվարկման ու սահմանման կարգը, համաձայն որի՝

1. ՀՀ սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով կենսապահովման նվազագույն գամբյուղի կազմը և կառուցվածքը, սկսած 2004թ., հաշվարկվում են ոչ պակաս, քան երեք տարին մեկ անգամ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով մշակվող և ՀՀ կառավարության հաստատած մեթոդական հանձնարարականների հիման վրա,
2. նվազ մեթոդական հանձնարարականների մշակման աշխատանքներին ՀՀ կառավարության սահմանած կարգով կարող է մասնակցել Արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունը,
3. ՀՀ կենսապահովման նվազագույն գամբյուղի կազմը և կառուցվածքը սահմանվում են օրենքով: Մինչև սույն կետով նախատեսված օրենքի ընդունումը առաջին երեք տարվա

համար կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Օրենքի հոդված 6-ում նախատեսված են կենսապահովման նվազագույն բյուջեի չափը, դրա հաշվարկման պարբերականությունը և հաստատման կարգը, ըստ որի՝

1. ՀՀ սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով կենսապահովման նվազագույն բյուջեի չափը հաշվարկվում է առնվազն տարին մեկ անգամ՝ մինչև հունիսի 30-ը՝ կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմում ներառված պարենային, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպառողական գների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալների հիման վրա, և հրապարակվում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում», ինչպես նաև առնվազն հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներում,
2. ՀՀ սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով կենսապահովման նվազագույն բյուջեի չափը հաստատում է ՀՀ կառավարությունը:

Օրենքով նախատեսված է կենսապահովման նվազագույն բյուջեի մեծության հաշվառումը ՀՀ նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերը սահմանելիս: Այն սահմանում է.

1. ՀՀ կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունը հիմք է նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի սահմանման համար,
2. հանրապետությունում նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների, սոցիալական այլ վճարների չափերի և կենսապահովման նվազագույն բյուջեի մեծության միջև համամասնությունները յուրաքանչյուր տարի արտացոլվում են ՀՀ պետական բյուջեի մասին օրենքում:

1999թ. հունվարից հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել էր 5000 դրամ¹, որը գործում էր մինչև 01.01.2004թ. (դրանից հետո՝ 13 հազար դրամ) և մոտ 5 անգամ ցածր էր ՀՀ առողջապահության նախարարության սահմանած կենսապահովման նվազագույն բյուջեի չափից²: Գործող նվազագույն աշխատավարձն այլևս չի հանդիսանում պետության եկամտային քաղաքականության գործիք և փաստորեն կորցրել է իր գործառույթները (վերարտադրողական, խթանիչ, կարգավորիչ, սոցիալական), ինչի հետևանքով առկա է աշխատանքի մոտիվների, խթանների թույլ համակարգ, ինչպես նաև ազգաբնակչության ցածր կենսամակարդակ:

Նվազագույն ամսական աշխատավարձի չափը սահմանվել է՝ հիմք ընդունելով ԱՄԿ թիվ 131 կոնվենցիան, ԱՄԿ թիվ 135 հանձնարարականը, Եվրոպական սոցիալական խարտիայից (4-րդ հոդվածի 1-ին կետ) բխող կանոնները:

Եվրոպական սոցիալական խարտիայի համաձայն՝ նվազագույն աշխատավարձը սահմանվում է երկրի միջին աշխատավարձի 68%-ի չափով, որը կիրառվում է հոդված 4-ի 1-ին կետը վավերացրած բոլոր երկրներում (ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, 2004թ.³ միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 41976 դրամ ($41976 \times 68\% = 28543$)):

Նվազագույն ամսական աշխատավարձի չափը սահմանելիս հիմք են ընդունվել նաև մեկ անձի համար անհրաժեշտ կենսապա-

¹ Տե՛ս «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998թ. հոկտեմբերի 27-ին), ըստ որի (հոդված 2) գործավարձով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը սահմանել աշխատաժամանակի նորմալ տևողության դեպքում (40-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 30 դրամ, աշխատաժամանակի կրճատ տևողության դեպքում (36-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 33 դրամ, աշխատաժամանակի կրճատ տևողության դեպքում (30-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 40 դրամ:

² 2005թ. մարտի 10-ին անցկացված աշխատանքային խորհրդակցության ժամանակ Հայաստանի Հանրապետության նախագահը հանձնարարել է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը քննարկել պետական բյուջեի պլանավորման գործընթացը մեկ ամիս շուտ ավարտելու, ինչպես նաև 2006 թվականից նվազագույն աշխատավարձի դրույքաչափը բարձրացնելու խնդիրները (տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 11.03.2005, էջ 1):

³ Տե՛ս «Պարենային ապահովություն և աղքատություն. 2004 թվականի հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ, Եր., 2005, էջ 10:

հովման նվազագույն պահանջները ըստ ՀՀ առողջապահության նախարարության տվյալների (ամսական 23790 դրամ): Նպատակ ունենալով նվազագույն ամսական աշխատավարձի չափը փուլ առ փուլ հասցնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված կենսապահովման բյուջեի չափին, հաշվի է առնվել պետության վճարունակությունը՝ հիմք ընդունելով կրթության և մշակույթի ոլորտի բյուջետային ֆինանսավորմամբ կազմակերպությունների վճարունակությունը (ուսումնասիրվել է մասնավոր հատվածի 500 տնտեսավարող սուբյեկտ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների):

Նվազագույն ամսական աշխատավարձը, աստիճանաբար այն հասցնելով կենսապահովման նվազագույն բյուջեին, 15000 դրամ սահմանելու դեպքում գրեթե կվերանա պարենային գծից կամ նվազագույն սպառողական զամբյուղից (ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, 2003թ. այն կազմել է 12629 դրամ) ներքև գտնվողների թիվը:

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի¹ իրականացումը կնպաստի ՀՀ-ում աղքատության հաղթահարմանը, կվերականգնի նվազագույն աշխատավարձի դերը պետության եկամտային քաղաքականության իրականացման ոլորտում, կխթանի աշխատանքի մոտիվների համակարգի զարգացումը:

Ներկայումս խիստ հրատապ է դարձել ՀՀ կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով կենսապահովման նվազագույն բյուջեի չափը սահմանելու մասին» որոշման ընդունումը, ինչը բխում է «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի կատարման անհրաժեշտությունից: Այս որոշմամբ, ելնելով պաշտոնական տվյալներից և համապատասխան մեթոդիկայից, անհրաժեշտ է հաշվարկել կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմում ներառված պարենային,

¹ Տե՛ս «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2003թ. դեկտեմբերի 17-ին), ըստ որի նախորդ օրենքի համանմանությամբ ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը սահմանվել է համապատասխանաբար 78, 86 և 104 դրամ, իսկ ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 13000 դրամ:

ոչ պարենային ապրանքների և ծառայությունների արժեքը և ՀՀ սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի (երեխաներ, աշխատունակ բնակչություն և կենսաթոշակառուներ) համար սահմանել կենսապահովման նվազագույն ամսական բյուջեի չափերը:

Բացի այդ, ի կատարումն «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի, ՀՀ կառավարությունը որոշում պետք է ընդունի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը սահմանելու մասին»: Այս որոշմամբ պետք է սահմանել կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմը (բնափրային ցուցանիշներով) պարենային և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների մասով՝ միաժամանակ սահմանելով նշված բարիքների սպառման ծավալը (տարվա ընթացքում մեկ անձին հասանելիք միջինը) սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի համար: Որպես օրինակ կարող ենք բերել Ռուսաստանի Դաշնության Ֆեդերալ օրենքը սպառողական զամբյուղի մասին, որն այդ երկրի նախագահի կողմից ստորագրվել է դեռևս 1999թ. նոյեմբերի 20-ին¹:

Կարևոր է նաև իմանալ, թե ինչպես կարելի է սանձահարել խոշոր կապիտալը: Թերևս, սա այն հիմնախնդիրներից մեկն է, որի լուծումը կարող է և պետք է, որ ընկած լինի կուսակցությունների գործունեության ծրագրերի կամ էլ նախագահական ընտրությունների ժամանակ նախագահի թեկնածուների նախընտրական ծրագրի հիմքում: Ավելին, այդ հիմնախնդրի լուծման հիմնավորումներից և դրա իրականացման համապատասխան քաղաքական կամքի դրսևորումից կախված՝ շատ բանով պայմանավորված կլինի այս կամ այն կուսակցության կամ նախագահի թեկնածուի հաջողությունը: Այսօր արդեն ակնհայտ է, որ նշված հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնցից կարևորներն են հետևյալները:

¹ Ст' u Федеральный закон Российской Федерации «О потребительской корзине в целом по Российской Федерации», 20 ноября 1995, N 201- Ф 3.

1. Բարձրացնել շահութահարկի դրույքաչափերը: Առաջարկված միջոցառումը ենթադրում է, որ ներկայումս մեզանում ձևախեղված այս ինստիտուտը պետք է իրականացնի գործառույթներ, որոնք կոչված են ձեռնարկություններում (ընկերություններում) կամ բոլոր այն կազմակերպություններում, որոնց գործունեության հիմնական նպատակը շահույթ ստանալն է, կազմակերպության հաշվապահական փաստաթղթերում ճշգրտորեն արտացոլել ստացված շահույթի մեծությունը և ըստ այդմ էլ՝ պետության հասանելիք շահույթի բաժինը: Այստեղ նույնպես, ինչպես մեթոդաբանական, այնպես էլ կազմակերպական (հատկապես հարկային վարչարարության իմաստով) և քաղաքական կամքի դրսևորում է անհրաժեշտ, այլապես, ինչպես արդեն նշել ենք, հանրապետության հիմնական առևտրային կազմակերպությունները արդեն որերորդ տարին է՝ ստանում են միայն վնասներ ու դրանով իսկ դասական տնտեսագիտությանը դնում են «անհարմար» դրության մեջ, այն պարզ բացատրությամբ, որ ձեռնարկատիրական գործունեության նպատակը ոչ թե վնաս, այլ շահույթ ստանալն է: Միջոցառումների այս խմբում, առանց բացառության, պետք է վերացնել բոլոր հարկային արտոնությունները, քանի որ դրանից շահում են, հիմնականում, ձեռնարկատերերը (հասկացիր հարուստները), և բացի այդ, դրանով կվերականգնվի տնտեսագիտության այն դասական կանոնը, համաձայն որի՝ անկախ ներդրման ոլորտից, հավասարամեծ կապիտալները բերում են հավասար մեծության շահույթ: Սա է, թերևս, շուկայական տնտեսության կազմակերպման և իրականացման ամբողջ իմաստը¹:
2. Բարձրացնել նվազագույն աշխատավարձը (40-ժամյա աշխատանքային շաբաթվա դեպքում)՝ սահմանելով ժամում մինչև 100 դրամ (այսօր այն կազմում է 30 դրամ), այնուհետև արա-

¹ Տե՛ս Ա.Մարկոսյան, Ռ.Մաֆարյան, Շուկայական տնտեսության հիմունքները, Եր., «Տիգրան Մեծ», 2002:

գորեն այն հասցնել 200 դրամի¹: Այս միջոցառումը, ի տարբերություն առաջինի, ավելի արագ և հեշտ իրականանալի է, քանի որ դրա իրականացումն ապահովվում է օրենքով: Սա, ի դեպ, ընդունված ձև է ժողովրդավարական գրեթե բոլոր երկրներում, այդ թվում նաև մեր հանրապետությունում:

3. Ստեղծել բժշկական սպասարկման համընդհանուր անվճար կամ գրեթե անվճար (այդ ծառայությունների ամբողջ ծավալի արժեքի առնվազն 80%-ի չափով) համազգային համակարգ (ի դեպ, ԱՄՆ-ը զարգացած երկրներից միակն է, որտեղ այդպիսի համակարգ չկա): Սա, թերևս, վառ ապացույց է, որ որքան էլ հզոր և ուժեղ է կապիտալը, միևնույն է, ազգի և ժողովրդի առողջությունը նրան հետաքրքրում է միայն այնքանով, որքանով այն առևտրային գործունեության ասպարեզ է, որտեղ կարելի է շահույթ ստանալ:

2.6. ՀՀ ՏԱ քարելավման ուղիները

2.6.1. Հարավկովկասյան հանրապետությունների ՏԱ ցուցանիշների ընդհանրությունները, առանձնահատկությունները և վտանգավորության աստիճանը

Հարավկովկասյան երեք հանրապետությունների 1995-2003թթ. ՏԱ ցուցանիշների կազմի, սահմանային արժեքների և ըստ վտանգավորության աստիճանի դրանց դասակարգումը հնարավորություն է տալիս բացահայտել ինչպես մի շարք ընդհանրություններ, այնպես էլ որոշակի առանձնահատկություններ:

Որպես երեք հանրապետություններին բնորոշ ընդհանրություններ կարելի է նշել.

ա) աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակին (ոչ ավելի, քան 9%-ը) բազմակի գերազանցող փաստացի մակարդակ-

¹ Համեմատության համար նշենք, որ, օրինակ, ԱՄՆ-ում ներկայումս 1 ժամվա նվազագույն աշխատավարձի մեծությունը կազմում է \$5,15 և խնդիր է դրվում այն հասցնել, նախ \$8,2 և ապա \$10: Տե՛ս Илья Бараникас, Третьим будешь? Московские новости, N28, 2004, с. 15.

ները: Այդ ցուցանիշներով երեք հանրապետություններն էլ գտնվում են վտանգավորության ամենաբարձր՝ 9-րդ աստիճանում,

բ) վտանգավորության ամենաբարձր՝ 9-րդ աստիճանում է գտնվում նաև ինֆլյացիայի միջին մակարդակը,

գ) Ջինիի գործակցի ցուցանիշով Հայաստանը և Վրաստանը գտնվում են վտանգավորության 9-րդ, Ադրբեջանը՝ 8-րդ աստիճանում,

դ) երեք հանրապետություններն էլ վտանգավորության 8-րդ աստիճանում են գտնվում տնտեսական աճի և ՀՆԱ-ում տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշռով,

ե) կյանքի սպասվելիք տևողության և ներքին սպառման մեջ ներմուծման տեսակարար կշռով Հայաստանը և Ադրբեջանը գտնվում են վտանգավորության 8-րդ, Վրաստանը՝ 6-րդ տեղում,

զ) ՏՄ վտանգավորության բարձր աստիճան ունի ՀՆԱ նկատմամբ արտաքին պարտքի ցուցանիշը Հայաստանում (8-րդ) և Վրաստանում (8-րդ), Ադրբեջանն այդ ցուցանիշով 6-րդ տեղում է,

է) երեք հանրապետություններն էլ վտանգավորության միևնույն՝ 4-րդ աստիճանում են գտնվում մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշով, արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության տեսակարար կշռով (առաջին աստիճան), ինչպես նաև հանցագործության մակարդակի (հանցագործությունների թիվը 100 հազար մարդու հաշվով) ցուցանիշով (առաջին աստիճանով):

Ինչպես տեսնում ենք, ուսումնասիրված 20 ցուցանիշներին ավելի շատ հատկանշական են ընդհանրությունները (11 ցուցանիշների համար), ինչը վկայում է Հարավկովկասյան հանրապետությունների զարգացման ընդհանուր հիմնախնդիրների բնույթի մասին:

ՏՄ մնացած ցուցանիշները վտանգավորության աստիճանով առանձին հանրապետություններում ունեն իրենց առանձնահատկությունները: Օրինակ, ՀՆԱ նկատմամբ ներքին պետական պարտքի ցուցանիշը վտանգավորության աստիճանով Հայաստանի համար գտնվում է ամենաանվտանգ (1-ին) խմբում, մինչդեռ

այդ ցուցանիշը Վրաստանում ամենավտանգավորներից է (8-րդ խումբ): Կամ ՀՆԱ նկատմամբ բյուջեի պակասորդի ցուցանիշը Ադրբեջանում գտնվում է 1-ին խմբում, իսկ Հայաստանում՝ 8-րդ:

Եթե մեր կողմից ուսումնասիրված ՏԱ ցուցանիշները դասակարգենք ըստ այդ ցուցանիշների քանակի վտանգավորության, ապա կունենանք հետևյալ պատկերը (տե՛ս *աղյուսակ 2.8*):

Աղյուսակ 2.8

Հարավկովկասյան հանրապետությունների ՏԱ ցուցանիշների քանակի վտանգավորությունը 1995-2003թթ.

Հարավկովկասյան հանրապետություններ	ՏԱ ցուցանիշների քանակը ըստ վտանգավորության աստիճանի նվազման								
	9	8	7	6	5	4	3	2	1
Հայաստան	3	8	-	2	1	2	1	-	3
Ադրբեջան ¹	2	5	1	5	-	1	-	1	4
Վրաստան	3	4	-	6	1	1	-	3	2

¹ Ադրբեջանի համար ընդգրկված է 19 ցուցանիշ՝ ՀՆԱ նկատմամբ ներքին պետական պարտքի ցուցանիշի բացակայության պատճառով:

2.6.2. ՀՀ ՏԱ առանձին ցուցանիշների բարելավումը

ՀՀ ՏԱ ցուցանիշների դասակարգումից հետևում է, որ 1995-2003թթ. ամենավտանգավոր առաջին երեք ցուցանիշները եղել են Ջինիի գործակիցը, ինֆլյացիայի միջին մակարդակը (այս ցուցանիշի վրա էական ազդեցություն է թողել 1995թ. 175,5%-ոց ինֆլացիայի միջին մակարդակը, այն դեպքում, երբ այդ ցուցանիշը 2003թ. կազմել է ընդամենը 4,7%) և աղքատության ցուցանիշը: Եկամուտների բևեռացման և աղքատության ցուցանիշները Հարավկովկասյան երեք հանրապետություններում էլ գտնվում են վտանգավորության ամենաբարձր աստիճանում և, հետևաբար, դրա վրա պետք է սևեռվի երեք հանրապետություններում իրականացվող, հատկապես սոցիալական քաղաքականությունը: Այս տեսանկյունից զգալի հետաքրքրություն է ներկայացնում նշված հանրապետություններում եկամուտների (արդյունքի) գնահատման և օգտագործման հիմնահարցերի ուսումնասիրությունը: Նշված համատեքստում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում սննդի սպառման չափերի վերաբերյալ տվյալները (տե՛ս *հավելված 5*):

2.6.2.1. Աղքատությունը և դրա հաղթահարումը

Աղքատության կրճատումը երկարատև գործընթաց է և հաղթահարվում է փոքր քայլերով: Բավական է նշել, որ 2002թ. ընթացքում աղքատության մակարդակը տնային տնտեսությունների կտրվածքով նվազել է 0,4 տոկոսային կետով, իսկ բնակչության կտրվածքով՝ 1,2 տոկոսային կետով, 2003թ. համապատասխանաբար՝ 7,7 և 6,8:

Վերջին տարիներին մեծ թափ ստացած մակրոտնտեսական զարգացումներն արդեն սկսել են արտացոլվել նաև բնակչության ընդհանուր կենսամակարդակի փոփոխության վրա: Աղքատության մակարդակն առաջին անգամ նվազման միտում ցույց տվեց 2001թ. հետազոտության արդյունքներով՝ աղքատության մակարդակը կազմեց 50,9%՝ 1998/1999թթ. հետազոտությամբ գնահատված 55,05%-ի համեմատ: 2002թ. հետազոտության արդյունքները ցույց տվեցին աղքատության մակարդակի անկում մինչև 49,7%, իսկ արդեն 2003թ. ընթացքում աղքատության մակարդակը բնակչության կտրվածքով նվազել է 6,8 տոկոսային կետով՝ կազմելով 42,9%: Տնային տնտեսությունների կտրվածքով աղքատության մակարդակը նվազել է 7,7 տոկոսային կետով և կազմել է 36,3 %¹:

Բնակչության եկամուտների և աղքատության ցուցանիշների վրա իր ուղղակի ազդեցությունն է ունեցել հարկաբյուջետային քաղաքականությունը: Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին (ԱՀՌԾ) համընթաց սոցիալական ոլորտին ուղղված ծախսերը 2004թ. ավելացել են առաջանցիկ տեմպերով. 2003թ. համեմատությամբ սոցիալական ոլորտին ուղղված ծախսերն աճել են 23,8%-ով, երբ պետական բյուջեի ընդհանուր ծախսային մասն աճել է 10,2%-ով: 2004թ. աղքատության ցուցանիշը կազմել է 38%, 2003թ. 48%-ի փոխարեն²:

Աղքատության հիմնական ցուցանիշների դինամիկան հանրապետության կտրվածքով ներկայացված է *աղյուսակ 2.9-ում*:

¹ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. վիճակագրական վերլուծական զեկույց», ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 47:

² «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 10.02.2005, էջ 3:

Աղքատության հիմնական ցուցանիշների դինամիկան Հայաստանի Հանրապետությունում¹

%

	1996թ.	1999թ.	2001թ.	2002թ.	2003թ.
Ոչ աղքատ բնակչություն	45.3	44.9	49.1	50.3	57.1
Աղքատ բնակչություն	27.0	32.2	34.9	36.6	35.5
Շատ աղքատ բնակչություն	27.7	22.9	16.0	13.1	7.4
Աղքատության խորություն	21.5	19.0	15.1	13.5	8.9
Աղքատության սրություն	11.1	9.0	6.1	5.2	2.8
Ձինիի գործակից					
ընդհանուր կամուտների կտրվածքով	0.653	0.570	0.528	0.449	0.434
ընթացիկ եկամուտների կտրվածքով	0.602	0.593	0.535	0.451	0.438
ընթացիկ ծախսերի կտրվածքով	0.444	0.372	0.375	0.354	0.334

Ինչպես արդեն նշվել է, ըստ բարեկեցության մակարդակի երկրի բնակչությունը բաժանվել է երեք խմբի.

1. **Ոչ աղքատ է** գնահատվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով բարձր են կենսամակարդակը գնահատող ֆիքսված մեծությունից:

Բնակչության նյութական վիճակն անընդհատ տատանվում է: Տնային տնտեսությունների մի մասն ըստ մեկ շնչի սպառման գտնվում է աղքատության գծից մի փոքր վեր, որոնց մոտ սպառման թեթևակի վատացումը (եկամուտների ցածր մակարդակի պատճառով) կարող է նրանց իջեցնել աղքատության գծից ցած: Ոչ աղքատ բնակչության 11.8%-ը ենթակա է աղքատների ենթախումբ անցնելու ռիսկին:

2. **Աղքատ է** համարվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով ցածր են կենսամակարդակը գնահատող ֆիքսված մեծությունից:

¹ Աղյուսակը կազմված է Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, ըստ 2002թ. տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքների, Եր., 2003, էջ 36-ի և «Պարենային ապահովություն և աղքատություն. 2004 թվականի հունվար-դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ, Եր., 2005, էջ 48-ի տվյալներով:

Տնային տնտեսությունների մի փոքր մասի մոտ սպառման մակարդակի թեթևակի բարելավումը կարող է նրանց բարձրացնել աղքատության գծից վեր: Աղքատ բնակչության 9%-ն անգամ չնչին աջակցության դեպքում կարող է դուրս գալ աղքատների ենթախմբից:

3. **Շատ աղքատ է** գնահատվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով ցածր են աղքատության գծից:

Աղյուսակ 2.10

Ջինիի գործակիցն Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում¹

Երկիրը	Տարեթիվը	Գնահատման հիմքերը	Ջինիի գործակիցը
Հունգարիա	1999թ.	ըստ եկամուտների	0.26
Սլովենիա	1998թ.	ըստ եկամուտների	0.26
Բոսնիա	2001թ.	ըստ սպառման	0.27
Մակեդոնիա	1998թ.	ըստ սպառման	0.29
Բելառուս	1999թ.	ըստ ծախսերի	0.30
Ուկրաինա	1999թ.	ըստ եկամուտների	0.30
Բուլղարիա	1999թ.	ըստ եկամուտների	0.33
Լիտվա	2000թ.	ըստ սպառման	0.33
Սերբիա	2002թ.	ըստ եկամուտների	0.33
Խորվաթիա	1998թ.	ըստ սպառման	0.36
Էստոնիա	2001թ.	ըստ եկամուտների	0.38
Ռուսաստան	2000թ.	ըստ եկամուտների	0.40
Հայաստան	2003թ.	ըստ ամբողջական եկամտի	0.43

Ցուցանիշների դինամիկայից երևում է, որ շատ աղքատ բնակչության մակարդակը նվազում է առավել արագ տեմպերով: Սա կարելի է բացատրել երկու գործոնների ազդեցությամբ՝ դրական և բացասական: Որպես դրական գործոն կարելի է նշել պետության նպատակաուղղված սոցիալական քաղաքականությունը և վերջինիս հասցեականության բարելավումը: Բացասական գործոն է պարենային զանբյուրի ցածր արժեքը, որը չի ապահովում մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ մակարդակը, բայց հաշվարկների ժամանակ հանգեցնում է շատ աղքատ բնակչության առավել արագ տեմպերով կրճատմանը: Սակայն շատ աղքատ բնակչության համամասնության նվազումը կատարվում է աղքատ բնակչության ենթախումբ շատ աղքատ բնակչության մի մասի անցման հաշվին: Դա վկայում է աղքատ բնակչության հա-


¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 51:

մամասնության դինամիկան, որը բարձրանում է՝ շատ աղքատ բնակչության համամասնության նվազման հաշվին¹:

Համեմատության համար *աղյուսակ 2.10-ում* բերված են Ջինիի գործակցի արժեքները մի շարք եվրոպական երկրներում՝ ըստ ամենավերջին առկա տվյալների և գնահատման հիմքի:

Նկար 2.4.

Աղքատությունը 2003թ.



Աղքատության մակարդակը հանրապետության մարզերում բնութագրվում է *աղյուսակ 2.11-ում* բերված տվյալներով²: Ինչպես երևում է աղյուսակից, 2003թ. աղքատության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Շիրակի մարզում (72,2%), ինչպես նաև Գեղարքունիքի (59,9) և Արագածոտնի (57,0) մարզերում: Այդ ցուցանիշն ամենացածրն է Տավուշում (30,7%), ինչը 13 կետով ցածր է հանրապետության միջին ցուցանիշից:

¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, ըստ 2002թ. տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքների, Եր., 2003, էջ 37:

² Տե՛ս նաև «Հայաստանի սոցիալական միտումները. մարդկային աղքատությունը ՀՀ մարզերում», Տեղեկատվական-վերլուծական պարբերական, հունիս 2004, UNDP և «Հայաստանի սոցիալական միտումները. գյուղական աղքատությունը ՀՀ մարզերում», Տեղեկատվական-վերլուծական պարբերական, նոյեմբեր 2004, UNDP:

Աղքատությունն ըստ ՀՀ մարզերի, 1996-2003թթ.¹

%

Մարզերը	Աղքատության մակարդակը		
	1996թ.	2002թ.	2003թ.
Ընդամենը հանրապետությունում, այդ թվում՝ ըստ մարզերի.	54.7	49.7	42.9
1. Երևան	58.2	43.8	29.6
2. Արագածոտն	51.1	72.1 ¹	57.0
3. Արարատ	54.2	45.4	42.8
4. Արմավիր	38.1	51.6	48.3
5. Գեղարքունիք	48.1	47.2 ¹	59.9
6. Լոռի	51.5	44.6 ¹	34.0
7. Կոտայք	62.4	55.9	52.5
8. Շիրակ	63.1	73.6 ¹	72.2
9. Սյունիք	47.1	32.7 ¹	34.6
10. Վայոց ձոր	61.5	53.2	42.9
11. Տավուշ	56.1	42.2 ¹	30.7

¹ Տվյալները ցածր ներկայացուցական են:

Աղյուսակ 2.12-ի տվյալները վկայում են, որ ներկայումս բնակչության դրամական եկամուտների գերակշռող մասը կազմում են աշխատանքի արդյունքում ստացվող եկամուտները: Մինչև նույն ժամանակ 1999-2003թթ. ընթացքում աննշան են աճել սեփականությունից ստացվող եկամուտները, իսկ գյուղմթերքի, անասունների վաճառքից ստացվող եկամուտները կտրուկ նվազել են:

Ստորև ներկայացվող աղյուսակի տվյալներից երևում է, որ դեռևս մեծ է բնակչության կախվածությունը հանրապետությունից դուրս ապրող բարեկամներից, ընդ որում, եթե 1999թ. ընդամենը դրամական եկամուտներում Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացվող եկամուտը կազմում էր 12,8%, ապա 2002թ.՝ 15,2%: Նշված ժամանակահատվածում աճել են նաև ինքնազբաղվածության արդյունքում ապահովվող եկամուտները (տե՛ս *աղյուսակ 2.13*):

¹ Աղյուսակը կազմված է Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, ըստ 2002թ. տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքների, Եր., 2003, էջ 103-104-ի, «Պարենային ապահովություն և աղքատություն. 2004 թվականի հունվար-դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ, Եր., 2005, էջ 49-ի և «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. վիճակագրական վերլուծական զեկույց», ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 57-58-ի տվյալներով:

Տնային տնտեսությունների ամբողջական եկամուտը 1999-2003թթ.
(ամսական միջինը տնային տնտեսության մեկ անդամի հաշվով, դրամ)¹

Ցուցանիշը	Ընդամենը				այդ թվում							
					քաղաքային բնակավայր				գյուղական բնակավայր			
	1999 ¹	2001 ¹	2002 ¹	2003 ¹	1999	2001	2002	2003	1999	2001	2002	2003
1. Դրամական եկամուտներ, այդ թվում՝	7929	11217	9781	13324	7397	10913	11656	15647	8636	11843	7027	9960
Եկամուտներ աշխատանքից, որից	2790	4748	5204	355	3610	5734	7060	10424	1699	2722	2478	2911
աշխատավարձ	1948	3431	3718	5487	2814	4295	4983	7985	796	1655	1860	1870
թոշակ	522	770	865	1024	608	812	832	937	406	686	913	1150
կրթաթոշակ	17	19	16	16	26	26	23	27	5	6	5	1
նպաստներ	183	273	239	263	236	284	275	245	112	252	187	290
արտոնությունների դիմաց փոխատվություններ	-	16	8	18	-	23	8	27	-	-	8	6
Եկամուտներ սեփականությունից (տոկոսներ, շահաբաժիններ և այլն)	7	95	12	25	12	53	10	21	-	182	14	32
Եկամուտներ անշարժ գույքի վաճառքից	284	45	100	36	497	24	164	5	0.0	89	7	81
Եկամուտներ գյուղմթերքի, անասունի և այլնի վաճառքից	2546	1754	626	1691	165	105	147	628	5715	5144	1329	3232
Այլ եկամուտներ	1580	3513	2719	2896	2243	3875	3145	3333	699	2762	2094	2257
2. Ոչ դրամական եկամուտներ, այդ թվում՝	2832	2616	2995	2373	1368	1650	1603	1006	4780	4600	5040	4353
Մենդամթերքի սպառում սեփական տնտեսությունից	2652	2483	2803	2195	1155	1477	1431	755	4643	4551	4819	4281
Անվճար ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ	180	133	192	178	213	173	172	251	137	49	221	72
Ամբողջական եկամուտ	10761	13833	12776	15697	8765	12563	13259	16653	13416	16443	12067	14313

¹ Ներառյալ եկամուտը ցույց չտված տնային տնտեսությունները:

¹ Աղյուսակը կազմված է Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 129-ի և «ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999, 2001 և 2002թթ., Վիճակագրական ժողովածու», ՀՀ ԱՎԾ, Եր., 2003, էջ 51-ի տվյալներով:

Տնային տնտեսությունների ընթացիկ դրամական եկամուտներն ըստ եկամտի հիմնական աղբյուրների՝
 1999-2003թթ. և եկամուտների կառուցվածքում եկամտի հիմնական աղբյուրների մասնաբաժինը
 (ամսական միջին տնային տնտեսության մեկ անդամի հաշվով, դրամ, %)¹

Ցուցանիշը	Ընդամենը				այդ թվում							
					բաղաբային բնակավայր				գյուղական բնակավայր			
	1999 ¹	2001 ¹	2002 ¹	2003 ¹	1999	2001	2002	2003	1999	2001	2002	2003
Ընդամենը դրամական եկամուտը, այդ թվում՝	7929	11217	9781	13324	7397	10913	11656	15647	8636	11843	7027	9960
աշխատավարձ	1948	3431	3718	5487	2814	4295	4983	7985	796	1655	1860	1870
ինքնագրադվածություն	842	1317	1486	1868	796	1439	2077	2439	903	1067	618	1041
գյուղմթերքի և անասունի վաճառք	2546	1754	626	1691	165	105	147	628	5715	5144	1329	3232
սեփականություն (վարձակալում, տոկոսներ, շահաբաժիններ)	7	95	12	25	12	53	10	21	-	182	14	32
պետական թոշակներ և նպաստներ	740	1078	1128	1321	894	1145	1138	1236	532	944	1113	1447
Տրանսֆերտներ, դրանցից՝	1532	2081	1829	2113	2285	2110	1984	2325	529	2020	1601	1807
Հայաստանում ապրող բարեկամներից	477	325	326	267	652	379	384	346	245	213	241	152
Հայաստանից դուրս ապրող	1017	1705	1487	1840	1590	1714	1587	1974	255	1686	1340	1645
Այլ եկամուտներ	314	1461	982	819	431	1766	1317	1013	161	831	492	531
տոկոսներով												
Ընդամենը դրամական եկամուտը, այդ թվում՝	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
վարձու աշխատանք	24.6	30.6	38.0	41.2	38.0	39.4	42.7	51.0	9.2	14.0	26.5	18.8
ինքնագրադվածություն	10.6	11.7	15.2	14.0	10.8	13.2	17.8	15.6	10.4	9.0	8.8	10.5
գյուղմթերքի և անասունի վաճառք	32.1	15.6	6.4	12.7	2.2	1.0	1.3	4.0	66.2	43.4	18.9	32.5
սեփականություն (վարձակալում, տոկոսներ, շահաբաժիններ)	0.1	0.9	0.1	0.2	0.2	0.5	0.1	0.1	-	1.5	0.2	0.3
պետական թոշակներ և նպաստներ	9.3	9.6	11.5	9.9	12.1	10.4	9.8	7.9	6.2	8.0	15.8	14.5
Տրանսֆերտներ, դրանցից՝	19.3	18.5	18.7	15.9	30.9	19.2	17.0	14.9	6.1	17.1	22.8	18.1
Հայաստանում ապրող բարեկամներից	6.0	2.9	3.3	2.0	8.8	3.5	3.3	2.2	2.8	1.8	3.4	1.5
Հայաստանից դուրս ապրող	12.8	15.2	15.2	13.9	21.5	15.7	13.6	12.7	3.0	14.2	19.1	16.6
Այլ եկամուտներ	4.0	13.1	10.1	6.1	5.8	16.3	11.3	6.5	1.9	7.0	7.0	5.3

¹ Ներառյալ եկամուտը ցույց չտված տնային տնտեսությունները:

¹ Աղյուսակը կազմված է Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 33-34-ի, «ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999, 2001 և 2002թթ.», Վիճակագրական ժողովածու», ՀՀ ԱՎԾ, Եր., 2003, էջ 53-54-ի և «Պարենային ապահովություն և աղքատություն. 2004 թվականի հունվար-դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ, Եր., 2005, էջ 39-ի տվյալներով:

Աղյուսակներ 2.14 և 2.15-ում ամփոփված են 2001թ. մարդահամարի տվյալներով հաշվարկված ցուցանիշները, որոնք բնութագրում են քաղաքային և գյուղական բնակչության գոյամիջոցների աղբյուրները: Հատկանշական է, որ Հայաստանի մշտական բնակչության կազմում ամենամեծ տեսակարար կշիռն են կազմում խնամքի տակ գտնվող անձինք՝ 44%: Այդ անձանց մասնաբաժինը նվազում է 15-64 տարիքային խմբերի համար իրականացված հետազոտության արդյունքներով՝ հասնելով 30,1%-ի:

Աղյուսակ 2.14

ՀՀ և Երևանի մշտական բնակչությունն ըստ գոյամիջոցների հիմնական աղբյուրների (տարիքային բոլոր խմբերի համար)¹

Գոյամիջոցների հիմնական աղբյուրը	Ընդամենը ՀՀ		Քաղաքային		որից՝			
					քաղ.Երևան		Գյուղական	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%
ԸՆԴԱՄԵՆԸ	3213011	100	2066153	100	1103488	100	1146858	100
Աշխատանք (բացառությամբ անձնական տնտեսությունում)	695243	21,6	477537	23,1	251515	22,8	217706	19,0
Աշխատանք անձնական տնտեսությունում	247017	7,7	16492	0,8	3930	0,4	230525	20,1
Եկամուտ սեփականությունից	15111	0,5	7418	0,4	3678	0,3	7693	0,7
Կրթաթոշակ	8892	0,3	7994	0,4	5758	0,5	898	0,1
Կենսաթոշակ	423304	13,2	284191	13,8	153649	13,9	139113	12,1
Նպաստ	56364	1,8	41503	2,0	11649	1,1	14861	1,3
Գործազրկության նպաստ	12991	0,4	11914	0,6	3423	0,3	1077	0,1
Պետական ապահովության (պահպանության) ներքո	43762	1,4	28168	1,4	12339	1,1	15594	1,4
Այլ դրամական օգնություն (պետական աղբյուրներից)	30018	0,9	15439	0,7	7032	0,6	14579	1,3
Դրամական օգնություն (ոչ պետական աղբյուրներից)	78071	2,4	57832	2,8	32097	2,9	20239	1,8
Խնամքի տակ	1415300	44,0	966904	46,8	529068	47,9	448396	39,1
Այլ աղբյուր	186938	5,8	150761	7,3	89350	8,1	36177	3,2

¹ Աղյուսակը կազմված է «Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները)», ՀՀ ԱՎԾ, Եր., 2003, էջ 265-270-ի և «Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (ք.Երևանի ցուցանիշները)», ՀՀ ԱՎԾ, Եր., 2003, էջ 111-113-ի տվյալներով:

ՀՀ և Երևանի մշտական բնակչությունն ըստ գոյամիջոցների հիմնական աղբյուրների (15-64 տարեկան տարիքային խմբերի համար)¹

Գոյամիջոցների հիմնական աղբյուրը	Ընդամենը ՀՀ		Քաղաքային		որից քաղ. Երևան		Գյուղական	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%
ԸՆԴԱՄԵՆԸ	2121490	100	1416546	100	764357	100	704944	100
Աշխատանք (բացառությամբ անձնական տնտեսությունում)	672830	31,7	465014	32,8	244406	32,0	207816	29,5
Աշխատանք անձնական տնտեսությունում	233986	11,0	16189	1,1	3869	0,5	217797	30,9
Եկամուտ սեփականությունից	14561	0,7	7244	0,5	3575	0,5	7317	1,0
Կրթաթոշակ	8892	0,4	7994	0,6	5758	0,8	898	0,1
Կենսաթոշակ	158482	7,5	113604	8,0	58943	7,7	44878	6,4
Նպաստ	46911	2,2	35157	2,5	9630	1,3	11754	1,7
Գործազրկության նպաստ	12936	0,6	11876	0,8	3405	0,4	1060	0,2
Պետական ապահովության (պահպանության) ներքո	43176	2,0	27637	2,0	11927	1,6	15539	2,2
Այլ դրամական օգնություն (պետական աղբյուրներից)	28643	1,4	14907	1,1	6734	0,9	13736	1,9
Դրամական օգնություն (ոչ պետական աղբյուրներից)	75942	3,6	56731	4,0	31359	4,1	19211	2,7
Խնամքի տակ	638949	30,1	509987	36,0	295771	38,7	128962	18,3
Այլ աղբյուր	186182	8,8	150206	10,6	88980	11,6	35976	5,1

Անհավասարության կրճատման տեսակետից հիմնական գերակայություններ են հանդիսանում արդյունավետ սոցիալական և եկամտային քաղաքականությունները: Սոցիալական տրանսֆերտները 1999-2001թթ. ապահովել են աղքատ բնակչության եկամուտների աճի 45,8%-ը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աղքատության տեսակետից առավել խոցելի խմբերն են բազմանդամ, անչափահաս երեխա ունեցող և կնոջ գլխավորությամբ ընտանիքները: Հանրապետությունում սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող սոցիալական օգնության պետական ամենամեծ ծրագիրն աղքատ ընտանիքներին տրվող ընտանեկան նպաստն է: Նպաստառու ընտանիքների թիվը հանրապետությունում կազմում է շուրջ 19%:

Պետության մշտական ուշադրության կենտրոնում պետք է լինեն նաև տարեց բնակչության, հաշմանդամների և երեխաների հիմնախնդիրները:

¹ Աղյուսակը կազմված է «Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները)», ՀՀ ԱՎՕ, Եր., 2003, էջ 265-270-ի և «Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (ք.Երևանի ցուցանիշները)», ՀՀ ԱՎՕ, Եր., 2003, էջ 111-113-ի տվյալներով:

2004թ. հունվարի 1-ի դրությամբ 60-65 տարեկան անձինք կազմում են ՀՀ մշտական բնակչության ընդհանուր թվի 4,4 %-ը, իսկ 75-ից բարձր տարիքի անձինք՝ ընդամենը 3,1%-ը: 1989թ. 65 և ավելի բարձր տարիք ունեցող մշտական բնակչության թիվը Հայաստանում կազմել է բնակչության ընդհանուր թվի 5,2%-ը, 1997թ.՝ 8,1%, 2004թ.՝ 10,2%-ը: Բնակչության նման «ծերացումը» հետևանք է ծնելիության նվազման և տնտեսապես ակտիվ բնակչության միգրացիայի, որոնք մեծ մասամբ պայմանավորված են աղքատության բարձր մակարդակով, գործազրկությամբ, ցածր եկամուտներով:

Հանրապետությունում ներկայիս դրությամբ հաշվառված են 543646 կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամները), որոնց կենսաթոշակի միջին չափը կազմում է մոտավորապես 8900 դրամ, այսինքն՝ գերազանցում է պարենային գծի մակարդակը: Նախորդ երեք տարիների ընթացքում հանրապետությունում գրանցվել է կենսաթոշակի միջին չափի բարձրացում՝ 2002թ. 5140 դրամի դիմաց 2004թ. այն կազմել է 8900 դրամ, կամ աճը կազմել է 57,7%:

Հանրապետությունում հաշվառված են 148379 աշխատանք փնտրող քաղաքացիներ, որոնցից 118646 մարդ ստացել է գործազուրկի կարգավիճակ, նրանցից 81600-ը կանայք են:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցությունը, 2004թ. տարեսկզբին կազմել է 9,7%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 9%-ի համեմատ աճելով է 0,7 տոկոսային կետով:

Աղյուսակ 2.16-ում ներկայացված են տարբեր դեցիլային խմբերում գտնվող տնային տնտեսությունների դրամական եկամուտների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2.17-ի տվյալներից երևում է, որ կրիտիկական մակարդակում են գտնվում հատկապես սոցիալական ոլորտին պատկանող ցուցանիշները, սրվել են բնակչության աղքատության և ժողովրդագրական հիմնախնդիրները և վտանգված է բնակչության հետագա բնականոն կենսագործունեությունը: Ինչպես երևում է աղյուսակից, բնակչության 42,9%-ը (2002թ.՝ 49,7%-ը) գտնվում է աղքատության մեջ, որից 7,4%-ը (2002թ.՝ 13,1%-ը)՝ ծայրահեղ աղքատության:

Դրամական եկամուտների հիմնական աղբյուրների մասնաբաժինն ընթացիկ դրամական եկամուտների կազմում ըստ տնային տնտեսությունների դեցիլային խմբերի (ամսական միջինը տնային տնտեսության մեկ անդամի հաշվով), 1999-2003թթ.¹

Դեցիլային խմբեր	Տարիներ	դրամական եկամուտները	այդ թվում՝ եկամուտներ						Այլ եկամուտներ
			աշխատանքից	թոշակ, նպաստներ, կրթաթոշակ	եկամուտներ գյուղմթերքի վաճառքից	տրանսֆերտներ	որից		
							Հայաստանում բարեկամներից	Հայաստանից դուրս բարեկամներից	
1	2	3	4	5	6	7	8	9	10
I	1999թ.	100	14.6	76.0	5.0	2.4	1.6	0.1	2.0
	2001թ.	100	26.0	58.2	5.7	3.3	2.3	-	6.8
	2002թ.	100	19.7	65.1	10.0	3.2	2.3	0.4	2.0
	2003թ.	100	18.6	44.4	31.5	2.8	2.0	0.7	2.7
II	1999թ.	100	23.1	53.8	10.5	5.6	4.1	-	7.0
	2001թ.	100	35.1	41.7	4.6	5.9	3.5	0.6	12.7
	2002թ.	100	37.5	39.1	14.7	3.8	3.0	0.4	4.9
	2003թ.	100	36.2	34.3	19.2	2.9	2.2	0.6	7.3
III	1999թ.	100	35.5	38.8	13.9	5.9	3.8	0.6	5.9
	2001թ.	100	40.1	37.6	7.9	4.3	0.1	1.2	10.1
	2002թ.	100	43.9	31.6	8.5	3.4	3.0	0.4	12.6
	2003թ.	100	50.3	25.4	16.4	2.5	1.2	1.2	5.4
IV	1999թ.	100	37.2	37.3	15.4	6.3	4.7	0.9	3.8
	2001թ.	100	57.0	17.1	8.4	3.8	2.2	0.8	13.7
	2002թ.	100	53.2	26.9	7.2	3.4	1.4	1.5	9.3
	2003թ.	100	56.6	22.5	11.7	4.0	1.3	2.7	5.2
V	1999թ.	100	44.9	19.6	18.3	12.7	9.0	2.8	4.5
	2001թ.	100	61.2	18.5	6.2	4.7	2.4	1.8	9.4
	2002թ.	100	61.5	18.8	4.5	5.6	2.5	3.1	9.6
	2003թ.	100	61.5	15.2	14.3	4.8	2.0	2.8	4.2

¹ Աղյուսակը կազմված է ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999, 2001 և 2002թթ., Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր., 2003, էջ 62-63-ի և Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական գեկույց, ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 134-ի տվյալներով:

1	2	3	4	5	6	7	8	9	10
VI	1999թ.	100	53.7	13.8	15.5	11.5	6.5	4.8	5.5
	2001թ.	100	57.9	16.0	6.0	7.8	3.4	4.1	12.3
	2002թ.	100	65.2	16.7	5.6	5.3	2.6	2.5	7.2
	2003թ.	100	60.6	14.5	13.9	5.4	1.5	3.7	5.6
VII	1999թ.	100	48.8	12.8	21.0	11.0	4.3	0.6	6.4
	2001թ.	100	60.5	9.6	6.2	11.0	2.7	7.9	12.7
	2002թ.	100	67.6	9.7	5.5	7.8	2.1	5.7	9.4
	2003թ.	100	62.3	10.7	10.4	9.9	1.9	8.0	6.7
VIII	1999թ.	100	47.4	7.4	20.3	21.1	8.2	12.5	3.8
	2001թ.	100	60.5	8.5	6.6	11.8	2.8	7.7	12.6
	2002թ.	100	64.8	7.7	5.4	12.6	3.0	9.5	9.5
	2003թ.	100	65.4	6.5	13.2	11.2	2.0	9.2	3.7
IX	1999թ.	100	41.5	4.8	27.7	20.7	6.9	12.7	5.3
	2001թ.	100	46.8	4.5	12.4	23.5	4.4	19.0	12.8
	2002թ.	100	55.5	5.8	6.8	23.6	3.5	20.0	8.3
	2003թ.	100	58.2	5.2	9.0	21.4	2.5	18.8	6.2
X	1999թ.	100	25.5	2.2	45.7	24.3	5.6	18.6	2.3
	2001թ.	100	25.6	1.9	27.3	28.6	2.6	25.9	16.6
	2002թ.	100	42.1	2.3	6.0	36.2	4.7	31.1	13.4
	2003թ.	100	49.4	1.7	12.2	28.3	2.1	26.2	8.4

Աղքատության բացարձակ գիծը ՀՀ-ում¹

Աղքատության խմբերը	Տնային տնտեսություններ							Բնակչություն						
	քանակը			% -ով				քանակը			% -ով			
	1999	2001	2002	1999	2001	2002	2003	1999	2001	2002	1999	2001	2002	2003
Ոչ աղքատ	1812	2243	2593	50.3	55.6	56.0	63.7	6940	7594	9066	45.0	49.1	50.3	57.1
Աղքատ	1099	1289	1550	30.5	31.9	33.4	30.7	4962	5389	6578	32.1	34.9	36.6	35.5
Շատ աղքատ	689	505	491	19.2	12.5	10.6	5.6	3536	2473	2354	22.9	16.0	13.1	7.4
Ընդամենը	3600	4037	4634	100	100	100	100	15438	15456	18007	100	100	100	100

Օտնոթություն. Աղքատներ՝ մեկ շնչի հաշվով ամսական ծախսը (սպառման ագրեգատը) բարձր է պարենային գծից, բայց ցածր է աղքատության գծից:

Շատ աղքատներ՝ մեկ շնչի հաշվով ամսական ծախսը ցածր է պարենային գծից:

Աղքատության գիծը 1996թ. = 10784 դրամ, 1999թ. = 11735 դրամ, 2001թ. = 12019 դրամ, 2002թ. = 12261 դրամ:

Պարենային գիծը 1996թ. = 6612 դրամ, 1999թ. = 7194 դրամ, 2001թ. = 7368 դրամ, 2002թ. = 7516 դրամ:

ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումն ըստ դեցիլային խմբերի²

Դեցիլներ (%-ով)	Մեկ շնչի հաշվով ընթացիկ սպառողական ծախսերը				Մեկ շնչի հաշվով ընթացիկ եկամուտները			
	1999թ.	2001թ.	2002թ.	2003թ.	1999թ.	2001թ.	2002թ.	2003թ.
Ամենաաղքատ 10%	3	3.4	3.7	4.4	0.4	1.5	4.4	5.0
20%	4	5.3	4.9	5.6	1.5	3.0	5.5	5.7
30%	5	6.5	5.8	6.5	2.5	3.4	6.5	7.2
40%	6	7.2	6.6	7.3	3.5	3.1	7.5	7.5
50%	7	7.8	7.4	8.0	4.9	5.9	8.1	7.9
60%	8	9.2	8.4	9.1	6.2	6.5	9.0	9.1
70%	10	10.3	9.6	10.2	8.1	9.0	10.9	10.8
80%	12	11	11.3	11.6	10.7	10.6	12.2	11.2
90%	16	13.8	14.2	14.0	16.0	15.6	15.5	14.6
Ամենահարուստ 10%	29	25.5	28.1	23.3	46.2	39.4	20.4	21.0
Ջինիի գործակիցը	0.372	0.344	0.325	0.271	0.593	0.535	0.451	0.438

Ինչպես երևում է *աղյուսակ 2.18-ից*, 2001թ. մեկ շնչի հաշվով բնակչության ամենահարուստ 10%-ը ստացել է բնակչության եկամուտների 39,4%-ը, որը ամենաաղքատ 10%-ի համանման ցուցանի-

¹ Աղյուսակը կազմված է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004», ՀՀ ԱՎԾ, Եր., 2005, 93-ի և Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 75-ի տվյալներով:

² Աղյուսակը կազմված է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003», ՀՀ ԱՎԾ, էջ 92-93-ի և Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 146-ի տվյալներով:

շը գերազանցում է 26,3 անգամ, իսկ նրանց մեջտեղում գտնվող 10%-ի եկամուտները չի գերազանցում 5%-ը: Իրավիճակը փոքր-ինչ փոփոխվել է 2002-2003թթ. ընթացքում, սակայն ընդհանուր առմամբ այս պատկերը վկայում է, որ Հայաստանում գրեթե բացակայում է միջին խավը, ինչը կարող է հանգեցնել հասարակության հիասթափությանը, դեգրադացմանը և ունենալ ծանր հետևանքներ:

2.6.2.2. Մենդամթերքի սպառման մակարդակը

Թեև հանրապետությունում սննդամթերքի գծով ներմուծման կախվածության ցուցանիշը գտնվում է անվտանգ վիճակում, բայց անհանգստացնող է բնակչության կարևորագույն սննդամթերքների սպառման շեղումը նրանց սահմանված նորմերից: Աղյուսակ 2.19-ից երևում է, որ սննդամթերքների սահմանված նորմերը գերազանցում են միայն հացամթերքը (մեկ շնչի հաշվով միջին տարեկան ֆիզիոլոգիական հիմնավորված նորմը 128կգ է) և կարտոֆիլը (ֆիզիոլոգիական նորմը՝ 58կգ), ինչը վկայում է բնակչության աղքատության մասին:

Աղյուսակ 2.19

Տնային տնտեսությունների կողմից սննդամթերքի հիմնական տեսակների սպառումը¹ (միջինը մեկ շնչի հաշվով տարեկան, կգ)²

	1996թ.	1999թ.	2001թ.	2002թ.	2003թ.
Ցորենի հաց	174.8	150.2	139.0	134.3	138.0
Ցորենի այլուր	7.3	1.91	2.2	2.6	3.2
Բրինձ	6.3	5.3	4.8	4.8	4.8
Մակարոնեղեն	13.2	10.1	10.1	9.1	8.7
Տավարի միս	6.6	6.2	5.8	6.4	6.8
Ոչխարի միս	0.1	0.2	0.5	0.9	0.6
Խոզի միս	0.2	0.6	0.8	1.4	2.2
Թռչնի միս	1.5	2.5	3.4	3.6	4.6
Երշիկեղեն և մսային ապուխտներ	1.3	1.9	2.2	1.5	2.0
Անարատ կաթ, լ	9.9	7.9	6.8	9.1	9.1
Թթվասեր	0.2	0.4	0.7	0.8	1.1
Սերուցքային կարագ	1.3	1.2	1.4	1.5	1.8
Թարմ ձուկ	5.5	4.1	4.5	3.9	5.0
Ձու, հատ	55	70	86	93	89

¹ Ցուցանիշը հաշվարկվել է՝ հաշվի առնելով հետագոտված ամսվա մեջ տնային տնտեսության անդամների ներկա օրերը:

² «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004», ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 91-92:

Տնտեսության զարգացման ներկայիս փուլում, բնակչության կենսամակարդակի որոշակի անկման հետևանքով, բնակչության ստվար զանգվածների համար բավարար չափով մատչելի չեն մի շարք լիարժեք սննդատեսակներ, և փաստացի սնուցման վիճակը չի համապատասխանում հաշվեկշռված սնուցման նորմերին: Այդ են վկայում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից վերջին տարիներին կատարված տնային տնտեսությունների հետազոտության տվյալները:

Հարկ է նշել, որ ըստ ՄԱԿ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տվյալների, 2100 կկալ էներգետիկ արժեք ունեցող զամբյուղները բնորոշ են նվազ զարգացած երկրների համար¹:

Այսպես, սննդային օրաբաժնի էներգետիկ արժեքը դեռևս 1988-1990թթ. կազմել է՝

- ամբողջ աշխարհում (միջինը)՝ 2700 կկալ,
- զարգացած երկրներում՝ 3400 կկալ,
- զարգացող երկրներում՝ 2470 կկալ,
- նվազ զարգացած երկրներում՝ 2070 կկալ:

Հայաստանի Հանրապետությունը, ԱՊՀ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի անցումային տնտեսությամբ մի շարք երկրների հետ մեկտեղ, Համաշխարհային բանկի դասակարգմամբ («Մարդկային զարգացման հաշվետվություն», 1993թ.) դասվում է զարգացող երկրների շարքին, որտեղ բնակչության մեկ շնչի հաշվարկով սննդային օրաբաժնի էներգետիկ արժեքը, համաձայն վերը նշված աղբյուրի, կազմում է 2470 կկալ:

Հայաստանում առկա չէ պաշտոնապես հաստատված նվազագույն սպառողական զամբյուղը: Ըստ ՀՀ ԱՎԾ կողմից 1996թ. իրականացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների, սննդամթերքի փաստացի սպառումը կազմում էր օրական 2040 կկալ մեկ շնչի հաշվով: Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) խորհրդով աղքատ երկրների համար

¹ Սնուցման հարցերին նվիրված միջազգային կոնֆերանս, Հռոմ, 1992թ., «Սնուցում և զարգացում. գլոբալ գնահատում»:

օրական մեկ շնչի հաշվով նվազագույն էներգիան պետք է հասնի 2100 կկալ-ի: Այս նպատակով իրականացվել է հաշվարկ՝ ընտրված սննդամթերքի վերահաշվեկշռման միջոցով և դրա արդյունքում ստացված փաստացի պարենային զամբյուղը (բնեղեն արտահայտությամբ) ընդունվել է որպես նվազագույն պարենային զամբյուղ (*աղյուսակ 2.20*), իսկ դրա արժեքային արտահայտությունը՝ որպես աղքատության պարենային գիծ: Նվազագույն փաստացի սպառողական զամբյուղը հիմնվում է պարենային զամբյուղի վրա, իսկ արդյունաբերական ապրանքների ու ծառայությունների սպառման մակարդակը հետազոտության արդյունքներով մշակվել է՝ որպես զամբյուղի նկատմամբ կառուցվածքային ցուցանիշ (61,3%-ը կազմում է պարենային զամբյուղը, իսկ 38,7%-ը՝ արդյունաբերական ապրանքներն ու ծառայությունները):

Աղյուսակ 2.20

Պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների արժեքները¹

		1996թ.	1999թ.	2001թ.	2002թ.	2003թ.
Պարենային զամբյուղ	դրամ	6612	7194	7368	7516	7742
	ԱՄՆ դոլար	15.2	13.7	13.3	13.1	13.4
Նվազագույն սպառողական զամբյուղ	դրամ	10784	11735	12019	12261	12629
	ԱՄՆ դոլար	24.8	22.4	21.7	21.4	21.8

Վերջին տարիների ընթացքում հանրապետությունում շրջանառության մեջ դրված նվազագույն պարենային զամբյուղների կազմը, կառուցվածքը և էներգետիկ արժեքը չեն բխում բնակչության առողջության պահպանման խնդրի լուծման անհրաժեշտությունից:

Հաշվի առնելով հանրապետությունում առկա խրոնիկ թերսնուցման առկայության հիմնախնդիրը՝ առաջարկվում է առողջապահության նախարարության կողմից հիմնավորված նվազագույն պարենային զամբյուղի հետևյալ կազմը, կառուցվածքը և էներգետիկ արժեքը (*աղյուսակ 2.21*):

¹ Պարենային ապահովություն և աղքատություն. 2004 թվականի հունվար-դեկտեմբեր, վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2005, էջ 48:

Նվազագույն պարենային զամբյուղի կազմը և կառուցվածքը¹

N	Պարենամթերքի անվանումը	Չափի միավորը	Օրական սպառումը մեկ շնչի հաշվով	Օրաբաժնի էներգետիկ արժեքը (կկալ)
1	Հացամթերք այդ թվում՝	գ	355	992.2
1.1	հաց	գ	250	622.5
1.2	ալյուր	գ	20	70.6
1.3	մակարոնեղեն	գ	15	55
1.4	ձավարեղեն (բրինձ)	գ	50	175.5
1.5	րնդեղեն	գ	20	68.6
2	Մսամթերք (տավարի միս)	գ	100	203
3	Կաթնամթերք այդ թվում՝	գ		339.7
3.1	կաթ	մլ	200	122
3.2	կաթնաշոռ	գ	10	7.5
3.3	կենդանական յուղ	գ	20	143.4
3.4	պանիր	գ	25	66.8
4	Կարտոֆիլ	գ	250	167.5
5	Բանջարեղեն այդ թվում՝	գ	300	87
5.1	կաղամբ	գ	250	75
5.2	գլուխ սոխ	գ	50	12
6	Միրգ (խնձոր)	գ	200	96
7	Շաքար	գ	50	193.5
8	Չուլ	հատ	0.5	40
9	Բուսական յուղ	լ	20	176.8
10	Մարգարին	գ	10	72
11	Չուկ	գ	30	44.4
Ընդամենը				2412.1

Թերսնուցման դրսևորումներից է սննդում յոդի պակասով պայմանավորված առողջական վիճակի խանգարումների և հիվանդությունների (մասնավորապես վահանաձև գեղձի գերաճի՝ խպիպի) առկայությունը: Այս բնագավառի նվաճումներից է ՀՀ կառավարության կողմից 2004թ. փետրվարի 12-ին «ՀՀ բնակչության սննդում յոդի անբավարարության հետևանքների դեմ պայքարի և կանխարգելման ազգային ծրագրի» ընդունումը:

Բնակչության մեկ շնչի հաշվով դրամական եկամուտները (2002թ. կազմել են 18721 դրամ) բավական ցածր են նվազագույն սպառողական զամբյուղը բավարարելու համար: Ըստ ՄԱԿ Զարգացման

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության քաղաքականությունը», ընդունվել է ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 25-ի նիստում:

ծրագրի և Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբի-
նի համատեղ ուսումնասիրությունների, հանրապետության բնակ-
չության միայն 13%-ն ունի նվազագույն սպառողական զամբյուղին
հավասար կամ բարձր եկամուտներ: Հաշվի առնելով ՀՀ ներկայիս
բնատնտեսական, արտադրական և սոցիալական պայմանները և ել-
նելով սննդամթերքի ռացիոնալ սպառման կենսաբանական նորմե-
րից՝ բնակչության մեկ շնչի հաշվով անհրաժեշտ սննդամթերքի օրա-
բաժնի էներգետիկական ՀՀ առողջապահության նախարարության կող-
մից հաշվարկվել է 2412 կկալ, մինչդեռ 2000 կկալ-ից բարձր, ըստ վի-
ճակագրական ծառայության ընտրանքային հետազոտությունների
տվյալների, ապահովում է բնակչության միայն 40%-ը, իսկ նվազա-
գույն պարենային զամբյուղը, 2412 կկալ ապահովելու համար, մեկ
շնչի հաշվով ամսական կազմում է մոտ 25000 դրամ:

Այս ամենից հետևում է, որ մեր պետությունը պետք է հետևո-
ղական լինի բնակչության պարենային անվտանգության ապահով-
ման գործում: Ըստ «Պարենային անվտանգության մասին» ՀՀ օրեն-
քի՝ կառավարությունը, միջազգային իրավունքի նորմերին համա-
պատասխան, երաշխավորում է սնվելու ֆիզիոլոգիական նորմերի
մակարդակով քաղաքացիների լիարժեք սնման և սովից զերծ
լինելու իրավունքը:

ՀՀ կառավարությունն ապահովում է պետության պարենային
անվտանգությունը, այդ թվում՝ երկրում սննդամթերքի արտադրու-
թյան անհրաժեշտ ծավալը, պետական պարենային պահուստի
առկայությունը, վերականգնումը և համալրումը՝ անկախ ներքին և
արտաքին անբարենպաստ գործոնների ազդեցությունից, սպառող-
ների և առաքվող սննդամթերքի որակի համապատասխանությունը
ստանդարտների պետական համակարգի պահանջներին:

Պարենային անվտանգությունը համարվում է ապահովված,
եթե կենսապես կարևոր սննդամթերքների տեղական տարեկան
արտադրության ծավալը գերազանցում է սնվելու ֆիզիոլոգիական
նորմերին համապատասխան կազմված նմանատիպ ապրանքնե-
րի՝ բնակչության տարեկան սպառման 2/3-ը: Պարենային ան-
վտանգության ապահովման պատասխանատվությունը կրում է ՀՀ
կառավարությունը:

Պարենային մթերքների արտադրության անհրաժեշտ և փաստացի մակարդակների հաշվեկշիռը կազմվում է յուրաքանչյուր տարի՝ ՀՀ կառավարության կողմից:

Պարենային անվտանգությանն սպառնացող արտաքին վտանգն արտահայտում է արտաքին ուժերի ձգտումը՝ պահպանել ՀՀ կարգավիճակը որպես սննդամթերք ներմուծող երկիր, խոչընդոտել նրա մուտքը համաշխարհային պարենային շուկա և նրա մասնակցությունը միջազգային առևտրային համագործակցությանը, նրա առաջավոր տեխնոլոգիաների կիրառման, օգտագործման արգելակումը:

Պարենային անվտանգությանն սպառնացող ներքին և արտաքին վտանգի քանակական ու որակական որոշման հիմնական մեթոդիկան փորձագետների գնահատականն է, համաշխարհային փորձի օգտագործումը՝ հաշվի առնելով հանրապետության առանձնահատկությունները:

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծության արդյունքում բացահայտվել են ավելի քան 50 տարբեր ինդիկատորներ, որոնք բնութագրում են պարենային անվտանգության վիճակը՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը և երկրի առանձնահատկությունը (աղյուսակ 2.22):

Աղյուսակ 2.22

Երկրի պարենային անվտանգության ցուցանիշների
(ինդիկատորների) համակարգը¹

Ցուցանիշներ	Շեմային ցուցանիշների սահմանային (կրիտիկական) նշանակությունը՝ հաշվի առած համաշխարհային փորձը	Մասնաճանաչային (կրիտիկական) վիճակից դուրս գալու դեպքում սոցիալ-քաղաքական և տնտեսական հավանական հետևանքները
1	2	3
Ներմուծվող սննդամթերքի, պարենամթերքի բաժինը դրա սպառման ընդհանուր ծավալում	Ոչ ավելի, քան 30%	Վճարունակ հաշվեկշռի վատթարացում պարենամթերքի համաշխարհային գների բարձրացման դեպքում, սեփական վերամշակող արդյունաբերության զարգացման տեմպերի դանդաղեցում
Պետական ռեզերվի (սպառման ժամկետի) ծավալը	Ոչ ավելի, քան 1 ամիս	Պարենային հաշվեկշռի խախտում արտակարգ վիճակներում
Ոռոգելի հողագործության	Ոչ ավելի, քան 8%	Ոռոգելի հողերի բերքատվության նվա-

¹ Մ.Գևորգյան, Ագրարային քաղաքականությունը անցումային շրջանում և ՀՀ պարենային անվտանգությունը, «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», N 6 (41), հունիս 2004, էջ 56-60:

1	2	3
ջրապահովումը		զույմ, պարենային անվտանգության վտանգ
Գյուղատնտեսության և արդյունաբերության (սննդամթերք արտադրող) կախվածության աստիճանը արտադրության ներմուծվող գործոններից (տեխնոլոգիա, հումք, մեքենաներ, սարքավորումներ, պահեստամասեր)	Ոչ ավելի, քան 40%	Տեխնոլոգիական կախվածության ուժեղացում, վճարային հաշվեկշռի ուժեղացում
Պարենային ապրանք արտադրող մեքենաների, սարքավորումների մաշվածքի մակարդակը	Ամենաշատը 50%	Պարենային ապրանքի արտադրության ցածր արդյունավետություն և բարձր ծախսեր, հայրենական արտադրության պարենային ապրանքի անմրցունակություն
Անասնապահությունը անասնակերով ապահովելու աստիճանը	Ոչ ավելի, քան 75%	Անասնազլխաքանակի, մթերատվության և կաթնատվության կրճատում, անասնապահական արտադրանքի ծավալների կրճատում
Նվազ բերրի հողերի բաժինն ընդհանուր հողատարածության մեջ (ըստ հողային կադաստրի տվյալների)	Ոչ ավելի, քան 40%	Գյուղատնտեսական օգտագործելի հողատարածքների բերրիության նվազում, հողերի մելիորացիայի համար կատարվող ծախսերի ավելացում
Ցանքատարածությունների ապահովումը պարենային և կերային մշակաբույսերով. ա) հանքային պարարտանյութեր, բ) օրգանական պարարտանյութեր	Ոչ ավելի, քան 53% և ոչ պակաս, քան 57%	Կերային մշակաբույսերի բերքատվության նվազում և անասնապահության մթերատվության անկում
Պարենամթերքի կորուստները արտադրություն-սպառում շղթայի օղակներում	Ոչ ավելի, քան 30%	Մսնդամթերքի ռեսուրսների ծավալների անկում
Մեկ մարդու հաշվով օրական ռացիոնի կալորիականության մակարդակը	Ոչ պակաս, քան 2409 կկալ	Թերսնում, բնակչության շրջանում հիվանդությունների աճ
Անասնապահական մթերքի օրական կալորիականությունը մեկ մարդու սննդի ռացիոնում	Ոչ պակաս, քան 55,1%	Անեմիայով հիվանդների թվի աճ, աշխատանքի արտադրողականության անկում

Բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքատեսակների մասին տվյալները վկայում են, որ սպառման հիմնական ապրանքների գծով դեռևս որոշակի կախվածություն գոյություն ունի ներմուծումից (տե՛ս *աղյուսակներ 2.23 և 2.24*):

Բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակների ռեսուրսները 2003թ.¹

N	Ապրանքատեսակի անվանումը	Չափի միավորը	2003թ. հունվար-դեկտեմբեր				
			ներմուծված ²	արտահանված ³	արտադրված	ընդամենը ռեսուրսներ	մանրածախ միջին գինը, դրամ
1	2	3	4	5	6	7=4-5+6	8
1	Տավարի միս	տոննա	9658.4	593.6	23996.0 ²	33060.8	1211 (կգ)
2	Խոզի միս	-/-	964.5	-	7042.0 ²	8006.5	1282 (կգ)
3	Հավի միս	-/-	12479.4	-	4368.0 ²	16847.7	9033 (կգ) ³
4	Չուլ	-/-	187.8	9.9	-	177.9	169 (հատ)
5	Գարազ	-/-	3604.6	-	47.7	3652.3	1407 (կգ)
6	Պանիր	-/-	253.4	1002.6	5007.0	4257.8	1067 (կգ)
7	Մուրճ	-/-	9976.0	1830.9	-	8145.1	2315 (կգ)
8	Ցորեն	-/-	304036.8	21.0	216677.0	520692.8	147 (կգ)
9	Հաց	-/-	-	-	293051.0	293051.0	տես հաջորդ աղյուսակը
10	Բրինձ	-/-	15685.7	-	-	15685.7	311 (կգ)
11	Այլուր	-/-	6096.7	-	131391.0	137487.7	187 (կգ)
12	Չուլ	մլն հատ	92.2	332.0	502.2	262.4	444 (10 հատ)
13	Չեթ	տոննա	18608.8	433.3	2122.1	20297.6	1103 (կիտր)
14	Մարգարին	-/-	4884.0	-	-	4884.0	786 (կգ)
15	Շաքարավազ	-/-	86963.1	-	-	86963.1	263 (կգ)
16	Մակարոնեղեն	-/-	1996.1	1.1	903.1	2898.1	288 (կգ)
17	Գինի	հազ.լիտր	21.5	217.3	2042.3	1846.5	965 (0.7լ)
18	Էթիլային սպիրտ	-/-	159.7	-	1176.6	1336.3	-
19	Կոնյակ	-/-	1.8 ⁴	7301.8 ⁴	7093.1	-	3690 (0.5լ)
20	Օղի	-/-	1198.2	128.4 ⁴	11105.3	12175.1	1068 (0.5լ)
21	Միսախոտ (սիգարետ) ⁵	հազ. տուփ	98643.0	9682.3	161095.0	250055.7	192 (տուփ)
22	Բենզին	տոննա	192843.9	-	-	192843.9	282 (կիտր)
23	Դիզելային վառելիք	-/-	111388.0	1.3	-	111386.7	196 (կիտր)
24	Էլեկտրաէներգիա	հազ. կվ/ժ	276308.6	677800.7	5500583.0	5099090.9	25 (կվ/ժամ)
25	Պլաստմասե իրեր	տոննա	10981.8	210.4	240.3	11011.7	--

1 կգ հացի մանրածախ միջին գինը (դրամ)

Հացի տեսակի անվանումը	2003թ. հունվար- դեկտեմբեր
Բարձր տեսակի հաց	249
Առաջին տեսակի հաց	215
Լավաշ	326

¹ Ներմուծման և արտահանման ցուցանիշները չեն ներառում քաղաքացիների կողմից կազմակերպվող առևտրի տվյալները:

² Նշված արտադրատեսակների արտադրության ցուցանիշները բերվում են սպանդային քաշով (հիմնականում արտադրվել են գյուղացիական և բնակչության օժանդակ տնտեսություններում):

³ Ցուցանիշը ներառում է նաև հավի բուլը:

⁴ Օղու և կոնյակի քանակական չափի միավորը (հազ. լիտր) հաշվարկված է արտաքին առևտրի բնագավառում ապրանքների դասակարգման 8-նիշ ծածկագրին համապատասխան «լիտր 100% սպիրտ» լրացուցիչ չափի միավորից «40% սպիրտ» չափի միավորին անցման միջոցով: շեռնաբար այն պարունակում է որոշակի մոտավորություն:

⁵ Մեկ տուփի մեջ 20 հատ սիգարետ:

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎՕ, Եր., 2004, էջ 71:

Բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակների ռեսուրսները 2004թ.¹

N	Ապրանքատեսակի անվանումը	Չափի միավորը	2004թ. հունվար-դեկտեմբեր				
			ներմուծված ¹	արտահանված ¹	արտադրված	ընդամենը ռեսուրսներ	մանրածախ միջին գինը, դրամ
1	2	3	4	5	6	7=4-5+6	8
1	Տավարի միս	տոննա	10863.2	370.1	25121.0 ²	35614.1	1380.4 (կգ)
2	Խոզի միս	-/-	2134.9	0.0	8748.0 ²	10882.9	1757.8 (կգ)
3	Հավի միս	-/-	10797.0	25.0	4491.0 ²	15263.0	939.5 ³ (կգ)
4	Չուկ	-/-	188.6	37.0	988.8	1140.4	208.9 (հատ)
5	Կարագ	-/-	5109.5	0.0	44.3	5153.8	1574.6 (կգ)
6	Պանիր	-/-	1005.6	489.3	5160.7	5677.0	1237.4 (կգ)
7	Մուրճ	-/-	11217.2	4935.9	-	6281.3	2256.4 (կգ)
8	Ցորեն	-/-	384597.9	0.0	287840.0	672437.9	190.7 (կգ)
9	Հաց	-/-	-	-	293370.0	293370.0	276.9 (կգ), ըստ տեսակների տես հաջորդ աղյուսակը
10	Բրինձ	-/-	13437.0	0.0	-	13437.0	325.3 (կգ)
11	Այլուր	-/-	14103.4	0.0	145844.0	159947.4	208.7 (կգ)
12	Չու	մլն հատ	0.8	48.5	563.0	515.3	511.9 (10 հատ)
13	Չեթ	տոննա	11890.1	61.7	385.0	12213.4	1160.3 (լիտր)
14	Մարգարին	-/-	3407.8	0.0	-	3407.8	780.2 (կգ)
15	Շաքարավազ	-/-	74873.2	0.0	716.0	75589.2	254.4 (կգ)
16	Մակարոնեղեն	-/-	2696.9	0.02	2322.5	5019.4	397.5 (կգ)
17	Գինի	հազ.լիտր	79.0	226.0	6163.2	6016.2	1182.9 (0.7 լ)
18	Էթիլալի սպիրտ	-/-	229.6	29.5	1287.5	1487.6	-
19	Կոնյակ	-/-	3.4 ⁴	6478.3	7094.7	619.8	4275.6 (0.5 լ)
20	Օղի	-/-	2249.5 ⁴	105.4 ⁴	12983.7	15127.8	1235.7 (0.7 լ)
21	Օխախոտ (սիգարետ) ⁵	հազ. տուփ	105933.3	12969.9	136010.0	228973.4	183.2 (տուփ)
22	Բենզին	տոննա	215574.3	46.1	-	215528.2	311.5 (լիտր)
23	Դիզելային վառելիք	-/-	106127.7	22.9	-	106104.8	224.3 (լիտր)
24	Էլեկտրաէներգիա	հազ.կվ/ժ	259532.0	930087.4	6029781.0	5359225.6	24.9 (կվ/ժամ)
25	Պլաստմասե իրեր	տոննա	23107.4	430.5	1485.1	24162.0	-

1 կգ հացի մանրածախ միջին գինը (դրամ)

Հացի տեսակի անվանումը	2004թ. հունվար-դեկտեմբեր
Բարձր տեսակի հաց	302.9
Առաջին տեսակի հաց	253.7
Լավաշ	407.5

¹ Ներմուծման և արտահանման ցուցանիշները չեն ներառում քաղաքացիների կողմից կազմակերպվող առևտրի տվյալները:

² Նշված արտադրատեսակների արտադրության ցուցանիշները բերվում են սպանդային քաշով (հիմնականում արտադրվել են գյուղացիական և բնակչության օժանդակ տնտեսություններում):

³ Ցուցանիշը ներառում է նաև հավի բուրդը:

⁴ Օղու և կոնյակի քանակական չափի միավորը (հազ. լիտր) հաշվարկված է արտաքին առևտրի բնագավառում ապրանքների դասակարգման 8-նիշ ծածկագրին համապատասխան «լիտր 100% սպիրտ» լրացուցիչ չափի միավորից «40% սպիրտ» չափի միավորին անցման միջոցով: Շեռնաբար այն պարունակում է որոշակի մոտավորություն:

⁵ Մեկ տուփի մեջ 20 հատ սիգարետ:

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎՕ, Եր., 2005, էջ 70:

ՀՀ-ում աղքատության հաղթահարման գործում կարևոր նշանակություն ունի այդ ոլորտում ռազմավարական ծրագրի ընդունումը և իրականացումը կառավարության կողմից: Ինչպես նշվում է ԱՀՌԾ-ում, կանխատեսվող ժամանակաշրջանում կկրճատվի նաև անհավասարությունը: Եկամուտների համակենտրոնացման Ձինիի գործակիցը 2005թ. կկազմի 0,491, 2010թ.՝ 0,466 և 2015թ.՝ 0,446 (2001թ.՝ 0,535)¹:

Ծրագրում նշվում է նաև, որ անհավասարության կրճատումը հիմնականում պայմանավորված կլինի պետության կողմից իրականացվող եկամտային քաղաքականության արդյունքում աշխատանքային եկամուտների անհավասարության կրճատմամբ, ինչպես նաև կենսաթոշակների առաջանցիկ աճով և պետական նպաստների հասցեականության աստիճանի էական բարձրացմամբ: Իսկ պետության կողմից իրականացվող եկամտային քաղաքականությունն ասելով ենթադրվում է «նվազագույն աշխատավարձի համապատասխանեցումը աղքատության պարենային գծին և սոցիալական ենթակառուցվածքներում ու պետական կառավարման ոլորտում զբաղվածների աշխատանքային եկամուտների առաջանցիկ աճի ապահովումը»:

Բնակչության եկամուտների անհավասարության կրճատմանը վերաբերող հիմնական նպատակային ցուցանիշներն ԱՀՌԾ-ում ներկայացված են հետևյալ կտրվածքով (տե՛ս *աղյուսակ 2.25*):

Աղյուսակ 2.25

ԱՀՌԾ անհավասարության կրճատման հիմնական նպատակային ցուցանիշները²

Ցուցանիշներ	2001թ.	2003թ.	2004թ.	2006թ.	2009թ.	2012թ.	2015թ.
1	2	3	4	5	6	7	8
Եկամուտների համակենտրոնացման Ձինիի գործակիցը	0.535	0.510	0.498	0.483	0.469	0.458	0.446
այդ թվում՝ աշխատանքային եկամուտների համար	0.446	0.443	0.441	0.438	0.433	0.428	0.423
սոցիալական տրանսֆերտների համար	0.161	0.074	0.068	0.076	0.086	0.082	0.080
20% ամենաաղքատ բնակչության տարեկան եկամուտները, հազար	55.4	85.0	101.4	140.3	192.3	242.7	311.0

¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, ըստ 2002թ. տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքների, Եր., 2003, էջ 12:

² Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (հաստատված է ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ), *աղյուսակ 3.2*:

1	2	3	4	5	6	7	8
դրամ							
2-րդ 20% բնակչության տարեկան եկամուտները, հազար դրամ	120.1	159.4	184.8	239.7	339.2	453.1	603.5
3-րդ 20% բնակչության տարեկան եկամուտները, հազար դրամ	195.4	242.0	278.5	359.1	510.9	681.1	903.3
4-րդ 20% բնակչության տարեկան եկամուտները, հազար դրամ	318.3	361.9	408.7	526.2	834.6	1102.2	1443.1
Ամենահարուստ 20% բնակչության տարեկան եկամուտները, հազար դրամ	945.5	1235.6	1362.9	1668.7	2207.5	2751.6	3416.9
Ամենաաղքատ բնակչության եկամուտները, %-ով ամենահարուստների եկամուտների նկատմամբ	5.9	6.9	7.4	8.4	8.7	8.8	9.1

2.6.2.3. Բնակչության ժողովրդագրական անվտանգության ցուցանիշները

Բավական անհանգստացնող են բնակչության ժողովրդագրական ցուցանիշները և դրանց բացասական միտումները: Աղյուսակ 2.26-ից երևում է որ տարեցտարի նվազել է բնակչության բնական աճը, 2002թ. այն կազմել է 2,1 (հազար մարդու հաշվով): Գյուղական բնակչության բնական աճը գերազանցում է քաղաքայինը, սակայն եթե հաշվի առնենք, որ արտագաղթի և արտագնա աշխատանքի մեկնողների թիվն առավելապես մեծ է գյուղական վայրերում և գյուղական բնակչությունը կազմում է ողջ բնակչության 33,4%-ը, ապա կհանգենք գյուղերի «ամայացման» և ծերացման հիմնախնդիրներին (հատկապես սահմանամերձ գյուղերում):

Աղյուսակ 2.26

ՀՀ բնակչության բնական շարժի ցուցանիշները ¹
(ծնվածներ, մահացածներ և բնակչության բնական աճը)

Տարիները	Ընդամենը, հազ.մարդ			1000 բնակչի հաշվով		
	Ծնվածներ	Մահացածներ	Բնական աճը	Ծնվածներ	Մահացածներ	Բնական աճը
1	2	3	4	5	6	7
Ամբողջ բնակչությունը						
1999թ.	36.5	24.1	12.4	9.6	6.3	3.3
2000թ.	34.3	24.0	10.3	9.0	6.3	2.7

¹ Աղյուսակը կազմված է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003», ՀՀ ԱՎԾ, էջ 31-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թվականի հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ, էջ 158-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թվականի հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ, Եր., 2005, էջ 156-ի և «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004», ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 31-ի տվյալներով:

1	2	3	4	5	6	7
2001թ.	32.1	24.0	8.1	8.4	6.3	2.1
2002թ.	32.2	25.5	6.7	10.1	8.0	2.1
2003թ.	35.8	26.0	9.8	11.2	8.1	3.0
2004թ.	37.5	25.8	11.7	11.7	8.0	3.7
Քաղաքային բնակչությունը						
1999թ.	22.4	15.8	6.6	8.9	6.2	2.7
2000թ.	21.4	15.7	5.7	8.4	6.2	2.2
2001թ.	20.3	15.6	4.7	8.0	6.2	1.8
2002թ.	20.8	16.7	4.1	10.1	8.1	2.0
2003թ.	22.6	16.9	5.7	11.0	8.2	2.8
Գյուղական բնակչությունը						
1999թ.	14.1	8.3	5.8	11.1	6.5	4.6
2000թ.	12.9	8.3	4.6	10.2	6.6	3.6
2001թ.	11.8	8.4	3.4	9.2	6.6	2.6
2002թ.	11.4	8.8	2.6	10.0	7.7	2.7
2003թ.	13.2	9.1	4.1	11.5	8.0	3.5

ՀՀ ժողովրդագրական անվտանգության նկատմամբ այսօր հիմնական սպառնալիք է բնակչության արտահոսքը, որն առաջացնում է ոչ միայն քանակական, այլև որակական բնույթի փոփոխություններ (պակասում է բնակչության մեջ տարբեր խավերի հարաբերակցությունը, աշխատող և չաշխատող անձանց, ակտիվ և պասիվ մարդկանց, կառավարման հակվածություն ունեցող և չունեցող անհատների հարաբերակցությունը, և որ չափազանց կարևոր է՝ տղամարդկանց ու կանանց տոկոսային հարաբերակցությունը):

Տվյալ հիմնախնդիրը և աշխարհում գլոբալացմանն ուղեկցող համանման երևույթները (որը հատուկ է ոչ միայն մեր երկրին) միաժամանակ պատմամշակութային բնույթ են կրում:

Արտագաղթը՝ որպես ազգային անվտանգության սպառնալիք, Հայաստանի համար առավել հաշվարկելի է դառնում, երբ ուսումնասիրում ենք Հարավային Կովկասի մյուս երկու հանրապետություններից տեղի ունեցած արտագաղթը և Հայաստանում բարիքներ ստեղծող ու պետական օժանդակության կարիք զգացող անձանց հարաբերակցությունը: Արևմտյան և ռուսական մի շարք աղբյուրների տվյալների համաձայն, Ադրբեջանից վերջին տարիներին արտագաղթել են 3-3,5 մլն մարդ, որոնցից միայն 700 հազարն են այլազգի, ուստի կարող ենք համարել, որ հայ-ադրբեջանական հարաբերություններում Հայաստանից տեղի ունեցած արտագաղթը ներկա պահին լրջագույն քանակական սպառնալիք չի ստեղծում Հայաստանի համար: Սակայն կան երկու այլ հիմնախնդիրներ.

1. Հայաստանում և Ադրբեջանում բնակչության վերարտադրության հարաբերակցությունը (որն ի նպաստ Հայաստանի չէ),
2. ապագա տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները (եթե Ադրբեջանը զարգանալու է նավթի և գազի արտահանման ուղղությամբ, ինչը մարդկային խոշոր և բարձր որակավորում ունեցող կադրերի պահանջ չի առաջադրում, ապա Հայաստանի զարգացումը, որը պետք է տեղի ունենա բարձր տեխնոլոգիաների հիման վրա, առաջին հերթին տվյալ պահանջն է առաջադրում: Այլ կերպ ասած՝ եթե Ադրբեջանը զարգանալու է նավթային և գազային ռեսուրսների, ապա Հայաստանը զարգանալու է մարդկային ռեսուրսների հիման վրա)¹:

Ինչպես երևում է *աղյուսակ 2.27-ից*, վերջին տարիներին միգրացիոն աճը բացասական ուղղությամբ անընդհատ աճել է (պաշտոնական տվյալներով 2002թ. միգրացիոն աճը կազմել է 9200 մարդ, սակայն այս ցուցանիշը անհամեմատ բարձր է, քանի որ մեկնողների և եկողների հոսքերը դժվար է վերահսկել): Չի ուսումնասիրվում ժամանակավոր աշխատանքային, պայմանագրային, մշտական բնակության միգրացիայի կառուցվածքը: ՏՄ տեսանկյունից այս հարցն առանցքային է այն պատճառով, որ վերջին տարիներին ձևավորվել են ուղեղների «արտահոսքի» ուղիներ, որի բացասական հետևանքների ազդեցությունն ապագայի վրա չափազանց մեծ կլինի: Բարձրակարգ գիտական կադրերի և գիտնականների արտահոսքը ուղղակի վտանգ է ներկայացնում երկրի մտավոր անվտանգությանը:

Աղյուսակ 2.27

ՀՀ բնակչության միգրացիոն աճը²

Տարիներ	1999թ.	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
1000 բնակչի հաշվով բնակչության միգրացիոն աճը (-,+)	-2.6	-2.7	-2.6	-2.7	-7.9	-8.2

¹ Մ.Շահգեղյան, Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 49-50:

² Աղյուսակը կազմված է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003», ՀՀ ԱՎՕ, էջ 43-ի և «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թվականի հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎՕ, Եր., 2005, էջ 155-ի տվյալներով:

2.6.2.4. Բնակչության դրամական եկամուտների ձևավորումը

Ներկայումս Հայաստանում ՀՆԱ վերաբաշխման գործում ցածր է պետության ունեցած դերը, այսինքն՝ պետական բյուջեի հարկային եկամուտների տեսակարար կշիռը բավական ցածր է՝ ՀՆԱ նկատմամբ. 2003թ. այս ցուցանիշը կազմել է 14,09% (2002թ.՝ 14,63): Հիշեցնենք, որ զարգացած երկրներում այս ցուցանիշը կազմում է 30-35% (որոշ երկրներում՝ Դանիա, Ֆինլանդիա, Շվեդիա, այն գերազանցում է 50%-ը): Առաջին հայացքից կարող է թվալ, թե մեր տնտեսությունը ձգտում է ազատականացված շուկայի մոդելին, որն ուղղված է հարկային բեռի թեթևացման ճանապարհով ձեռնարկատիրական գործունեության խթանմանը: Այս դեպքում պետք է ենթադրել, որ օտարերկրյա կապիտալը կհոսի Հայաստան, քանի որ այստեղ բարձր է նաև տոկոսադրույքը: Այնուամենայնիվ, այս երևույթը տեղի չի ունենում, քանի որ հարկային բեռի իրական մակարդակը և ռիսկայնությունը բավական բարձր են և, հետևաբար, մեծ տեսակարար կշիռ է կազմում «ստվերային» տնտեսությունը (տարբեր աղբյուրների տվյալներով կազմում է ՀՆԱ 35-60%-ը): Որպես սրա հետևանք՝ պետբյուջեի շարունակական ճեղքվածքի պայմաններում մեծանում են արտաքին աշխարհից երկրի կախվածությունը և տնտեսական ակտիվության զգայունությունը արտասահմանից ստացվող ֆինանսական միջոցների նկատմամբ: Պետական բյուջեի պակասուրդը բացարձակ մեծությամբ վերջին տարիներին մնում է գրեթե անփոփոխ, այսպես 1999թ.՝ 4,1%, 2000թ.՝ 4,9%, 2003թ.՝ 4,3%, իսկ բյուջեի եկամտային մասում անուղղակի հարկերը (առանց այն էլ ուղղակի հարկերի համեմատությամբ մեծ տեսակարար կշիռն) աճի միտում են ցուցաբերում:

Բնակչության դրամական եկամուտների ձևավորման գործում մեծ դեր են խաղում մեր հայրենակիցների կողմից Հայաստան ուղարկվող դրամական միջոցները (մոտավոր տվյալներով \$400-600 մլն): Արտաքին միջոցներից կախվածության հանգամանքը ՏՄ տեսանկյունից վտանգավոր է այնքանով, որ արտասահմանյան երկրների կողմից (հատկապես ԱՄՆ, Ռուսաստանի Դաշնություն) խիստ միգրացիոն քաղաքականություն վարելու դեպքում այդ միջոցների կրճատումը մեր երկրում կհանգեցնի ճգնաժամային երևույթների: Դրսից ստացվող միջոցներից կախվածությունն ան-

միջապես երևում է արտաքին տնտեսական գործունեության ֆինանսավորման ժամանակ, քանի որ զուտ արտահանումը գերազանցում է խնայողությունները (2002թ. 1,42 անգամ):

Աղյուսակ 2.28-ում արտացոլված են մեկ շնչի հաշվով տնային տնտեսության դրամական և ամբողջական եկամուտները և դրանց կառուցվածքը:

Աղյուսակ 2.28

Տնային տնտեսությունների եկամտի աղբյուրներն ըստ բնակավայրի տեսակի (մեկ շնչի հաշվով միջին ամսական), 2003թ.¹

Եկամտի տեսակները	Բնակավայրի տեսակը			
	քաղաքային բնակավայր		գյուղական բնակավայր	
	դրամ	%	դրամ	%
1. Դրամական եկամուտը	15647	94.0	9960	69.6
այդ թվում վարձու աշխատանք	7985	48.0	1870	13.1
ինքնագրավածություն	2439	14.6	1041	7.3
գյուղմթերքներ և անասունի վաճառք	628	3.8	3232	22.6
սեփականություն (վարձակալում, տոկոսներ, շահաբաժիններ)	21	0.1	32	0.2
պետական թոշակներ և նպաստներ	1236	7.4	1447	10.1
տրանսֆերտներ, դրանցից	2325	14.0	1807	12.6
Հայաստանում ապրող բարեկամներից	346	2.1	152	1.1
Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	1974	11.9	1645	11.5
Այլ եկամուտներ	1013	6.1	531	3.7
2. Ոչ դրամական եկամուտներ	1006	6.0	4353	30.4
այդ թվում Մենդամթերքի սպառում սեփական տնտեսությունից	755	4.5	4281	29.9
Անվճար ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ	251	1.5	72	0.5
Ամբողջական եկամուտ	16653	100	14313	100

Հայաստանի համար անցանկալի մակարդակում է գտնվում խնայողության նորմը՝ մոտ 14%, որի բարձր և շարունակական աճը միայն կարող է հանգեցնել կապիտալի կուտակման և, հետևաբար, ներդրումների աճին: Վերջին տարիներին վերջնական սպառման ծախսերը մշտապես գերազանցել են ՀՆԱ-ն:

¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբյուրությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Եր., 2004, էջ 36:

2.6.2.5. Արտաքին պարտքը և դրա սահմանային մակարդակները

Թեև ՀՀ արտաքին պարտքի բեռը բավականին գերազանցում է սահմանային ցուցանիշը, բայց Հայաստանը չի դասվում ծանր պարտքի բեռ ունեցող երկրների շարքին:

2002թ. ՀՀ արտաքին պետական պարտքը \$1025,2 մլն էր, որը կազմում է ՀՆԱ մոտ 43,3%-ը: Արտաքին պարտքի այդ մակարդակը, համաձայն միջազգային չափանիշների, ցածր է «կրիտիկական սահմանից» (ՀՆԱ 50%): Արտաքին պարտքը 2002թ. կազմել է արտահանման ծավալի 113% (2000թ.՝ 198%), որը համապատասխանում է միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշներին:

Պարտքի բեռի գնահատման կարևոր ցուցանիշներից է դրա զուտ ներկա արժեքը: Արտաքին պարտքի զուտ ներկա արժեքը (ԶՆԱ) 2002թ. կազմել է ՀՆԱ 22,8%-ը և արտահանման 99,2%-ը: Նախորդ տարիների համեմատ այս ցուցանիշներն ունեն նվազման միտում:

Արտաքին պարտքի սպասարկումը 2002թ. կազմել է \$68,1 մլն, որից 18,5 մլն-ը՝ տոկոսավճար: Պետական պարտքի բեռի գնահատման կարևոր ցուցանիշներից է տարվա ընթացքում պարտքի ընդհանուր սպասարկման հարաբերությունն արտահանման ծավալին, որը ցույց է տալիս երկրի՝ իր արտաքին պարտավորություններն սպասարկելու ունակությունը: 2000թ. և 2002թ. այն համապատասխանաբար կազմել է 14,8 և 13%, որը ցածր է միջին պարտքի բեռ ունեցող երկրների համապատասխան ցուցանիշներից (23,5%): Ընդ որում, միայն տոկոսավճարը կազմել է արտահանման 3,3%-ը, որը համապատասխանում է պարտքի նվազ բեռ ունեցող երկրների ցուցանիշներին: Արտաքին պարտավորություններն սպասարկելու ունակությունը ցույց տվող մեկ այլ ցուցանիշ է նաև պարտքի սպասարկում/բյուջեի եկամուտներ հարաբերությունը, որը 1999թ. կազմել է 17, 2000թ.՝ 15,8, 2001թ.՝ 15,8, 2002թ.՝ 17,1%, 2003թ.՝ 27,9 (15,4): Այս դեպքում միջին ցուցանիշ է համարվում 22,5%-ը (տե՛ս աղյուսակ 2.29):

ՀՀ արտաքին պարտքը բնութագրող ցուցանիշները և դրանց սահմանային մակարդակները ¹

Ցուցանիշները	Ցուցանիշների սահմանային մակարդակները, %			Ցուցանիշը ՀՀ-ում, %					
	արավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ	միջին պարտքի բեռ ունեցող երկրներ	նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ	1999	2000	2001	2002	2003	2004 ³
Պարտքի սպասարկում/ արտահանում	25.9	23.45	7.8	16	11	10	10	15.7 (8.7) ¹	13.4 (9.1) ¹
Պարտքի տոկոսավճար/ արտահանում	11.65	9.85	3.6	5.0	3.0	3.5	2.9	1.3	12.0
Արտաքին պարտք/ արտահանում	387.95	209.0	64.0	227.3	192.3	167.2	146.5	122.8	165.4
Պարտքի սպասարկում/ բյուջեի եկամուտներ	միջին ցուցանիշ 22.5			17	15.8	15.8	17.0	27.9 (15.4) ¹	17.2 (11.6) ¹
Արտաքին պարտք/ ՀՆԱ	սահմանային մեծություն 50			47	45	42.7	43.3	39.3	33.3
Զուտ ներկա արժեք/ ՀՆԱ ²	80 և ավելի	48-80	մինչև 48	30	28	28	28.4	26.1	... ⁴
Զուտ ներկա արժեք/ Արտահանում	220 և ավելի	132-220	մինչև 132	144	119	108	96	81.5	... ⁴

¹Նույն ցուցանիշն առանց «գույք պարտքի դիմաց» բանաձևի շրջանակներում Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական վարկերի մարման (2003թ.՝ \$63 մլն, 2004թ.՝ \$31 մլն չափով):

² ԶՆԱ ցուցանիշը պետական պարտքի սպասարկման գծով բոլոր ապագա վճարումների զեղչված (դիսկոնտավորված) արժեքն է: ԶՆԱ-ն պայմանականորեն կարելի է սահմանել նաև որպես տվյալ պահին ձևավորված պետական պարտքն ապագայում ժամանակին և պատշաճ կերպով սպասարկելու նպատակով անհրաժեշտ գումար:

³ Տվյալները նախնական են:

⁴ Տվյալներ չկան:

Այսպիսով, նշվածից կարելի է դատել, որ 2003թ. արտաքին պարտքը բնութագրող 7 հիմնական ցուցանիշներից 4-ը գտնվում են նվազ պարտքի բեռ ունեցող, իսկ 3-ը՝ միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշների սահմաններում:

¹ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը, տարեկան հաշվետվություն 2003, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Եր., 2004, էջ 19-20:

Հարկ է նշել նաև, որ երկրի արտաքին վարկային պարտավորությունների միջին կշռված տոկոսադրույքը չի գերազանցում 2.4%-ը, որը բավական ցածր ցուցանիշ է (կենտրոնական և արևելաեվրոպական երկրներում այն կազմում է մոտ 10%): Սա պայմանավորված է նրանով, որ ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների ավելի քան 78%-ը արտոնյալ պայմաններ ունի:

2.6.2.6. Ներդրումային պահանջարկը և ներդրումային միջավայրի առողջացումը

ՏԱ ապահովման համար կարևոր է տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը, հատկապես ներդրումային պահանջարկի ավելացումը և ներդրումային միջավայրի առողջացումը, տեխնոլոգիական անվտանգության պահպանումը և մտավոր սեփականության պաշտպանությունը, էկոլոգիական անվտանգության օրգանական կապը ՏԱ հետ և նրա ազդեցությունը տնտեսական աճի վրա:

Ներդրումային ծրագրերի մշակման ժամանակ շատ հաճախ հակասության մեջ են մտնում մի կողմից՝ տնտեսական անհատականացման, մյուս կողմից՝ տնտեսակարգի և տնտեսական աճի վրա հիմնված երկու հակադիր մեթոդաբանական մոտեցումներ: Այս հարցում հատկապես սուր հակասություններ են առաջանում զարգացող երկրներում: Տնտեսության չսահմանափակված անհատականությունը վաղ թե ուշ առաջացնում է մակրոհամակարգի ճգնաժամ: Ընդ որում, տվյալ սկզբունքը ներկայիս տնտեսական համակարգին, շուկայական տնտեսությանը համարժեք չէ: Ժամանակակից պայմաններում կայուն և արդյունավետ տնտեսական ռազմավարության խնդիրների մշակման և որոշման ընթացքում շեշտը դրվում է տնտեսական կարգուկանոնի և տնտեսական աճի վրա:

Ներդրումային ծրագրերի մշակման այդ ուղղվածությունն այսօր պետք է հատուկ հաշվի առնվի Հայաստանում նոր տնտեսական համակարգի կառուցման գործընթացում: 1990-ական թթ. սկզբից ՀՆԱ անկումը ՀՀ-ում, ինչպես նաև նմանատիպ իրավիճակում հայտնված մյուս երկրներում վերաճել է տնտեսությունը ձևա-

փոխող կարևոր գործոնի: Ցածր համախառն պահանջարկն ազդել է ներդրումների պահանջարկի վրա, ինչն առաջ է բերել ներդրումային ակտիվության, արտադրության անկում, դրա որոշ տեսակների իսպառ վերացում և տնտեսության մեջ մենաշնորհների ուժեղացում: Նախկին Խորհրդային Միության հանրապետությունների հետ տնտեսական կապերի խզումը և հարևան հանրապետության կողմից տնտեսական շրջափակումը ձևավորեցին խեղաթյուրված տնտեսության կառուցվածք: Ներկայումս անգործության է մատնված արդյունաբերական ձեռնարկությունների 50%-ը: Ներդրումների բաժինը հիմնական կապիտալում ՀՆԱ նկատմամբ կազմում է միայն 8.4 %, իսկ բոլոր ներդրումները՝ 14.6 %:

Թեև վերջին տարիներին զգացվում է ներդրումների մակարդակի զգալի աճ, այնուամենայնիվ, ՀՆԱ-ում ներդրումների տեսակարար կշիռը բնութագրող փաստացի ցուցանիշը գտնվում է վտանգավոր մակարդակում: Մասնավոր կապիտալ ներդրումների իրական աճի տեմպը, ըստ ՀՀ ԿԲ գնահատականների, 2002թ. ընթացքում զգալիորեն աճել է՝ կազմելով շուրջ 22%: Այնուամենայնիվ, հիմնական միջոցների բարձր մաշվածությունը և արտադրանքի մրցունակության պահպանումը պահանջում են ներդրումային դաշտի բարելավում: Նշենք, որ վերջին տարիներին ներդրումների մեծ մասն իրականացվում է գերազանցապես արտասահմանյան ներդրողների միջոցների հաշվին:

Հանրապետությունում ներդրումային միջավայրի բարելավման կարևոր ուղղություն պետք է դառնա գիտատար և աշխատատար ոլորտների զարգացումը: Որպես այդպիսին կարող է լինել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը: Հայկական տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի 1998-2004թթ. միջին տարեկան աճը կազմել է 30%, իսկ արտադրության ծավալն այս ոլորտում 2004թ. հասել է շուրջ \$50 մլն-ի: Հանրապետության SS արդյունաբերության արտադրանքն արտահանվում է ավելի քան 20 երկրներ, այդ թվում՝ առավելագույն մասը՝ 68%-ը, ԱՄՆ և Կանադա, 16%-ը՝ Ռուսաստանի Դաշնություն և ԱՊՀ երկրներ, 10%-ը՝ Եվրոպա: Հատկանշական է, որ SS տեղական շուկաներում մեծ մասամբ գործում են հայկական ընկերությունները, սակայն արտահանումների

հիմնական ծավալը պատկանում է արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղերին: ՏՏ ոլորտում 2004թ. զբաղվածների թիվը հասել է մոտ 3400-ի, ինչը 1998թ. համեմատ ավելի է 25%-ով: Ըստ որում, աճի տեմպերն ավելի դինամիկ բնույթ կկրեն, եթե գործարար շրջանակները համոզվեն տնտեսության այս ոլորտի իրական շահութաբերության մեջ: ՏՏ զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարի կանխատեսմամբ՝ 2010թ. ոլորտի հատույթը կկազմի \$140 մլն՝ ապահովելով շուրջ 14 հազար աշխատատեղ:

Մտավոր սեփականության արտահանման որակյալ կառուցվածքի բարելավման համար պետք է ստեղծել ներդրումային գործընթացի կայունացման հետևյալ մեխանիզմը. արտասահմանյան արտադրանքի նկատմամբ վերահսկողություն, ցածրորակ ապրանքների մաքսատուրքի էական ավելացում, հայտնագործությունների տեղեկատվական համակարգի ստեղծում, նորագույն արտասահմանյան և հայրենական հայտնագործություններն արտադրությունում օգտագործելու համար պետական երաշխավորության հաստատում:

Գիտատեխնոլոգիական մշակումների (ԳՏՄ) առևտրայնացումը ԳՏՄ որոնումն է, փորձաքննությունը և ընտրությունը, դրանց հետագա փոխանցումը, կիրառումը և ներդրումը արտադրության մեջ: ՀՀ-ում ԳՏՄ առևտրայնացումը գիտատեխնոլոգիական նորությունների ներդրման ընթացակարգ է:

Նորույթ ԳՏՄ ստեղծող երկրներն աշխատում են դրանք գաղտնի պահել այլ երկրներից այնքան ժամանակ, քանի դեռ ապահովում են զգալի շահույթ: Հաճախ զարգացող և երրորդ երկրներին բաժին են ընկնում այն տեխնոլոգիաները, որոնք տարիներ շարունակ կիրառել են զարգացած երկրները: Այդ պատճառով էլ զարգացած երկրների ազգային անվտանգության համակարգերը հարստացած են առաջնակարգ ԳՏՄ-ով: Ազգային անվտանգության տնտեսական համակարգի կայացման, ազգային շահերի պահպանման, սպառնալիքների նվազեցման գործում ԳՏՄ ներդրումը ազգային տարածքներում մեծ նշանակություն ունի և կարևոր դեր է կատարում: Ազգային անվտանգության տնտեսական համակարգը և տնտեսության համար առանձնացված որոշ սպառ-

նալիքների տիրույթի փոփոխականությունները կապված է նաև ԳՏՄ-ով հարուստ տնտեսական համակարգի ստեղծման հետ: ԳՏՄ հարուստ արտադրանքների և արտադրությունների զարգացումը կանխում է տնտեսության կառուցվածքային դեֆորմացիայի հետագա խորացումը, ներդրումային ակտիվության ցածր մակարդակը փոխարինում է առավել ակտիվ ներդրումային ակտիվությամբ, դադարեցնում է գիտատեխնիկական և նորարարական ներուժի քայքայումը, գիտատեխնիկական և նորարարական ներուժի զարգացմանը հաղորդում է նոր թափ, նվազեցնում է արտաքին առևտրաշրջանառության մեջ ներմուծման չափազանց մեծ ծավալները և ավելացնում է արտաքին առևտրաշրջանառության մեջ արտահանման ծավալները, կանխում է արտարժույթային ռեսուրսների արտահոսքը երկրից և ստեղծում արտարժույթային ներհոսքին օժանդակող պայմաններ և այլն:

Ազգային տնտեսության և անվտանգության չափանիշների գնահատականի մեջ ներառվում են գիտատեխնոլոգիական ներուժի և նրա զարգացման հնարավորությունները, գիտատեխնիկական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, գիտատեխնիկական մշակումների զարգացման, կիրառման, ներդրման միջոցով տնտեսության մրցունակության ձևավորումը, բարձր տեխնոլոգիակիր հայրենական արտադրանքներով և արտադրություններով հարուստ լինելը, որի առկայության դեպքում երկիրն արտաքին սպառնալիքներին հակազդելու ավելի մեծ կարողություն է ունենում, ինքնիշխանությունը և անկախությունը պահելու ավելի մեծ ներուժ:

Այս է պատճառներից մեկը, որ յուրաքանչյուր երկիր փորձում է առաջնակարգ ԳՏՄ-ն պահել ազգային սահմաններում՝ արգելելով կամ սահմանափակելով նորագույն ԳՏՄ արտահոսքը, իսկ դրանց արդյունքում ստեղծված արտադրանքով ապահովվում են երկրի մրցակցային առավելությունները համաշխարհային շուկայում: Սա է նաև պատճառը, որ ԳՏՄ միջազգային առևտրայնացման հիմնահարցերի ուսումնասիրությունն այսօր առավել, քան երբևէ դարձել է օբյեկտիվ անհրաժեշտություն, անհրաժեշտ է ու արդիական Հայաստանի տնտեսության հետագա զարգացման համար:

Բնօգտագործման տնտեսական ասպեկտների հետազոտության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում էքստեռնալների (արտաքին տնտեսական էֆեկտներ) հարցը: Սոցիալական և արտադրական ծախսերի միջև տարբերությունները ձևավորում են էքստեռնալները, որոնք խաթարում են հասարակության, տնտեսության և բնության հավասարակշռվածությունը: Գործարարության զարգացմանը հետևում է բացասական էֆեկտների ազդեցության մեծացումը հասարակական զարգացման վրա:

Շուկայական մեխանիզմն անգոր է բնապահպանական (էկոլոգիական) խնդիրների լուծման ժամանակ: Այդ դիլեմայի լուծման երկու ճանապարհ կա. կամ պետությունը պետք է ամբողջությամբ ստանձնի այդ «բեռը», կամ արտաքին բացասական ազդակները ներառի արտադրական ծախսերի մեջ, այսինքն՝ դրանք դարձնի արտադրողի անուղղակի ծախսերի մաս: Վերջին տարբերակը տնտեսագիտական տեսության մեջ հայտնի է «ինտեռնալացում» անվամբ:

Շրջակա միջավայրի պահպանման արդյունավետ տնտեսական մեխանիզմ ստեղծելու համար անհրաժեշտ է, որպեսզի էքստեռնալներն արտահայտվեն արտադրական ծախսերում՝ հիմք ունենալով օրենսդրական դաշտը: Ընդ որում, շեշտը պետք է դրվի այն սկզբունքի վրա, ըստ որի՝ «պետք է վճարի նա, ով աղտոտում է շրջակա միջավայրը»: Այդպիսի մեխանիզմի ներդրումը շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրը կդարձնի ձեռնարկության ներքին հարցը, ինչն արտադրողին կստիպի փնտրել արդյունավետ, տնտեսապես շահավետ մեթոդներ արտաքին տնտեսական ծախսերը կրճատելու համար:

Անհրաժեշտ է, որպեսզի պետությունն օրենսդրորեն սահմանի տնտեսական զարգացման էկոլոգիական սահմանները: Այն հանգամանքը, որ այսօր էքստեռնալները չեն ընդգրկվում արտադրական ծախսերի մեջ, ցույց է տալիս այնպիսի կարևոր մակրոտնտեսական ցուցանիշների անկատարությունը, ինչպիսին են ՀՆԱ-ն, ՀԱԱ-ն (համախառն ազգային արդյունքը): Այդ ցուցանիշներում նախատեսված չեն «կենսաբանական կապիտալի» կորուստները: Իսկ էկոլոգիական աղտոտումները և էկոլոգիական ճգնաժամերը վերացնելու համար նախատեսված ծախսերը չեն

հաշվարկում այդ մակրոտնտեսական ցուցանիշներում, որոնք համարվում են հասարակության բարեկեցության համընդհանուր չափորոշիչներ և, ընդհակառակը, արտահայտվում են նրանցում որպես տնտեսական աճի բաղադրիչներ:

2.6.2.7. Դրամական զանգվածի աճը

Ներկայումս շրջանառության մեջ գտնվող դրամի զանգվածը գների կայունացման հիմնական գործոնն է: Հայաստանում գներն աճում են ավելի արագ, քան դրամական զանգվածը: Արտադրության փոքր ծավալի պայմաններում դրամական միջոցներն արագորեն շրջանառվում են, ինչը գների աճի արդյունք է:

Հայաստանում խախտվում է մոնետարիզմի հիմնական սկզբունքը՝ շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածի աճը 4-5%-ով տնտեսության կայուն զարգացման համար: Պաշտոնական մոնետարացման՝ դրամաշրջանառության մակարդակը 6-7%-ի սահմաններում է, այն ժամանակ, երբ պետք է լիներ 30%: Ջարգացած երկրներում այդ ցուցանիշը հասնում է 70-80%-ի, Ճապոնիայում՝ 91.9-112.7% է, ԱՄՆ-ում՝ ավելի քան 100%, զարգացող երկրներում՝ 40%, Չինաստանում՝ 47.9-96.1%-ի սահմաններում, Ռուսաստանում՝ 12-15%: Ջարգացած երկրներում բնակչության յուրաքանչյուր շնչի հաշվով միջինը շրջանառության մեջ գտնվում է \$8000-10000 դրամական զանգված, իսկ Հայաստանում այդ ցուցանիշը չի գերազանցում 50-ը:

ՀՆԱ նկատմամբ դրամական զանգվածի ցածր տեսակարար կշիռ ունենալը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ մեր երկիրն ընտրել է կայուն զարգացման ուղի՝ ի դեմս կոշտ դրամավարկային քաղաքականության, նպատակ ունենալով ամրապնդել բնակչության վստահությունն ազգային արժույթի նկատմամբ: Բացի այդ, Հայաստանում զարգացած չեն կամ դեռևս վերջնականորեն ձևավորված չեն ֆինանսական համակարգի տարբեր ինստիտուտները, ինչպիսիք են վարկային և ոչ բանկային հաստատությունները, դեպոզիտների ապահովագրման և վերաապահովագրման կազմակերպությունները:

Այս ամենից բացի, ազգային արժույթի շրջանառության և հասկապես կուտակման միջոցի գործառնությունների իրականացման գործում մեծ դեր է խաղում ԱՄՆ դոլարը: Արտարժույթային դեպոզիտների նկատմամբ բնակչության և կազմակերպությունների բարձր հակվածությունը հանգեցնում է դոլարայնացման բարձր մակարդակին և դրա հետագա խորացմանը: Դոլարայնացման երևույթը բնորոշ է անցումային տնտեսություն ունեցող երկրների, այդ թվում՝ ՀՀ համար: Այս ճանապարհով են անցել Իսրայելը և Արգենտինան 1980-ական թթ., Լեհաստանը և Հարավսլավիան՝ 1990-ականներին և այլն: Նշված երկրներում դոլարայնացման առաջացումը պայմանավորված էր նաև նրանով, որ այդ երկրի քաղաքացիների զգալի մասն աշխատում էր արտասահմանում և փողը հայրենիք էր ուղարկում արտարժույթով: Նշենք, որ այս երևույթը հատկանշական է նաև Հայաստանի համար:

ՀՀ-ում դոլարայնացման արմատավորումը սկսվեց դեռևս 1993թ., երբ ներդրվեց ազգային արժույթը: Սկզբնական շրջանում ինֆլյացիայի բարձր մակարդակը, դրամի փոխարժեքի արագ անկումը, պետբյուջեի խոշոր դեֆիցիտը առաջ բերեցին դրամի նկատմամբ անվստահություն, և, որպես հետևանք, հաստատվեց դեպոզիտների և վարկերի դոլարայնացման բարձր մակարդակ: Նույն ձևով 1998թ. Ռուսաստանում ևս ֆինանսական ճգնաժամը հանգեցրեց դրամի նկատմամբ անվստահության խորացմանը և, որպես արդյունք, դոլարայնացման բարձրացմանը:

Պետք է նշել, որ վերջին տարիներին բանկային համակարգի նկատմամբ վստահության մեծացումը ևս նպաստեց դոլարայնացման խորացմանը, քանի որ բնակչության կանխիկ արտարժույթային միջոցների մի մասը հոսեց բանկային համակարգ: Նշենք, որ ՀՀ-ում դոլարայնացման մակարդակը գնահատելիս կանխիկ արտարժույթը հաշվի չի առնվում, քանի որ դրա մեծության ճշգրիտ գնահատումը մեր երկրում գործնականորեն անհնար է: ՀՀ-ում դոլարայնացման մակարդակը գնահատելու համար օգտվում են ընդհանուր դեպոզիտների մեջ արտարժույթային դեպոզիտների տեսակարար կշռի ցուցանիշից և արտարժույթային դեպոզիտների ու դրամական զանգվածի հարաբերության ցուցանիշից: 1999թ. դոլարայնացման

կրճատման նպատակով որոշ քայլեր ձեռնարկվեցին. Մասնավորապես, խստացվեց արտարժույթի տնօրինման նորմատիվը, և պարտադիր պահուստավորումը սկսեց իրականացվել միայն հայկական դրամով: Ենթադրվում էր, որ այս միջոցառումները կհանգեցնեն երկրում արտարժույթային միջոցների առաջարկի աճին և դրամային միջոցների առաջարկի նվազմանը՝ հանգեցնելով առաջինների տոկոսադրույքների նվազմանը և վերջինների տոկոսադրույքների ավելացմանը, ինչն էլ, ի վերջո, առաջ կբերեր դրամային դեպոզիտների ավելացում և, միաժամանակ, դոլարային դեպոզիտների կրճատում: Այս քայլերը կարող էին միայն կարճաժամկետ ազդեցություն ունենալ: Դոլարայնացման խորացումը շարունակվում է՝ մնալով դրամավարկային քաղաքականության հետ կապված հիմնական խնդիրը (մասնավորապես, 2002թ. դոլարայնացման (արժույթային դեպոզիտների տեսակարար կշիռը փողի զանգվածում) մակարդակը կազմել է 41%¹, 2003թ.՝ 43%, իսկ 2004թ.՝ 49%):

Դոլարայնացման մակարդակի իջեցման գլխավոր ճանապարհն այդ երևույթը ծնող պատճառների վերացումն է, որն իր հիմքում ունի ինչպես տնտեսական, այնպես էլ ինստիտուցիոնալ և քաղաքական ուղղվածություն:

Տնտեսության դոլարայնացման բարձր մակարդակը կարող է ունենալ հետևյալ բացասական հետևանքները՝ ա) փոխադարձ պարտքային ճգնաժամի ձևավորումը, բ) միջազգային արտարժույթի կամ վճարամիջոցի փոխարժեքի տատանումները, ինչը դժվարացնում է ինֆլյացիոն, ինչպես նաև արտահանման և ներմուծման գործառույթների կարգավորումը, գ) խոչընդոտում է ինքնուրույն մոնետար քաղաքականության իրականացմանը, դ) նպաստում է կցորդային տնտեսական համակարգի ձևավորմանը, ե) կախվածությունը միջազգային ֆինանսական կազմակերպություններից ավելի գործնական բնույթ է ստանում, զ) թուլացնում է բանկային համակարգի գործունեությունը, է) փոքրացնում է պետության մասնրելու հնարավորությունները:

¹ ՀՀ Կենտրոնական բանկ, տարեկան հաշվետվություն, Եր., 2002, էջ 35:

Դոլարայնացման հաղթահարման միջոցառումները կարող են արդյունավետ լինել միայն իրականացվող տնտեսական քաղաքականության նկատմամբ ունեցած բարձր վստահության պայմաններում: Այս առումով պետք է կարևորել գների կայունության ապահովումը և դրամի նկատմամբ վստահության ամրապնդումը: Վերջին հաշվով, սա կհանգեցնի դրամի և դոլարի փոխարժեքների երկկողմանի տատանումների, որի պայմաններում ներդրողների համար ռիսկային կլինի դեպոզիտներում ներդրումները հիմնականում արտարժույթով կատարելը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում դոլարայնացման կրճատմանն ուղղված բարոյահոգեբանական ազդեցությունն ավելի արդյունավետ կարող է լինել, քան վարչական միջոցառումները: ՀՀ-ում դոլարայնացման մակարդակի փոփոխությունները վերջին տարիներին ցույց են տրված *աղյուսակ 2.30-ում*: Պետք է նշել, որ դոլարայնացման անվտանգության շեմային մակարդակը 25% է¹:

Աղյուսակ 2.30

ՀՀ դոլարայնացման մակարդակը տոկոսներով²

Ցուցանիշը	1999թ.	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Արտարժույթային դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում	49	50	47	41	43	49
Արտարժույթային դեպոզիտների տեսակարար կշիռը ընդհանուր դեպոզիտներում	80	82	81	75	71	75

Ինչպես նշվեց, դոլարայնացման մակարդակը Հայաստանում հաշվարկվում է երկու ցուցանիշով: Առաջինը արտարժույթային դեպոզիտների տեսակարար կշիռն է դրամական զանգվածում (ցույց է տրված առաջին տողում), իսկ արտարժույթային դեպոզիտների տեսակարար կշիռը ընդհանուր դեպոզիտներում երկրորդն է:

Վերջին տարիներին բանկային համակարգը զարգացում ապրեց: Բանկային համակարգի կարգավորման ԿԲ վարչական մեթոդներն աստիճանաբար փոխարինվեցին տնտեսական մեթոդներ-

¹ Տե՛ս «Вопросы экономики», N 10, 1998, էջ 35:

² ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն 2003, էջ 45-ի և ՀՀ Կենտրոնական բանկի տվյալներով:

րով, և այժմ ունենք բավական լիբերալ բանկային օրենսդրական դաշտ: Ցանկացած երկրում դրամավարկային և, մասնավորապես, բանկային համակարգի արդյունավետությունը գնահատելու համար օգտագործում են դրամական զանգվածի մեջ կանխիկ դրամի տեսակարար կշիռը բնութագրող ցուցանիշը: Այդ ցուցանիշը հնարավորություն է տալիս որոշել, թե արդյոք տվյալ երկրում կա վստահություն բանկային համակարգի նկատմամբ և ինչպիսին է բանկային համակարգի արդյունավետության աստիճանը:

2.6.2.8. Ապրանքաշրջանառության կառուցվածքը

2003թ. ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է \$1947,5 մլն, այդ թվում՝ ապրանքների արտահանումը կազմել է \$678,1 մլն, իսկ ներմուծումը՝ \$1269,4 մլն: Առևտրային հաշվեկշիռը բացասական է \$591,4 մլն-ով (իսկ առանց մարդասիրական օգնությամբ ստացված բեռների՝ \$544,2 մլն-ով): *Աղյուսակ 2.31-ի* տվյալներով 2003թ. ՀՀ-ում նվազել են հիմնականում լայն սպառման ապրանքների արտահանման ծավալները, ինչը հայրենական արտադրողների մրցունակության անկման մասին է վկայում:

Աղյուսակ 2.31

2003 և 2004թթ. հունվար-դեկտեմբերի արտահանման և ներմուծման ծավալների համեմատական աղյուսակ ըստ ապրանքախմբերի ¹

հազ. դոլար

	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ		
	2003թ. հունվար-դեկտեմբեր	2004թ. հունվար-դեկտեմբեր	աճի տեմպը, %	2003թ. հունվար-դեկտեմբեր	2004թ. հունվար-դեկտեմբեր	աճի տեմպը, %
1	2	3	4	5	6	7
ԸՆԴԱՄԵՆԸ	685599.2	715033.1	104.3	1279485.7	1350976.9	105.6
այդ թվում՝						
կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	5698.9	6177.4	108.4	32821.8	39676.7	120.9
բուսական ծագման արտադրանք	3116.0	7504.2	240.8	75001.8	106893.8	142.5
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	176.6	91.4	51.7	22673.3	19280.1	85.0

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎՕ, Եր., 2005, էջ 149:

Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները

1	2	3	4	5	6	7
պատրաստի սննդի արտադրանք	72195.7	69443.3	96.2	93306.0	112322.9	120.4
հանքահումքային արտադրանք	50307.8	82844.3	164.7	179483.8	213288.6	118.8
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	2985.8	2031.4	68.0	78381.9	84423.8	107.7
պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	4807.0	10149.1	211.1	28705.6	34944.2	121.7
կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	804.0	1224.0	152.2	1810.4	2105.3	116.3
փայտ և փայտյա իրեր	1746.1	1838.8	105.3	8701.4	9145.1	105.1
թուղթ և թղթից իրեր	1022.9	1497.4	146.4	20441.7	24266.6	118.7
մանածագործական իրեր	31242.4	43499.7	139.2	39753.2	47100.6	118.5
կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	188.9	157.6	83.4	4405.0	5186.2	117.7
իրեր քարից, գիպսից, ցեմենտից	1619.6	2935.7	181.3	22123.3	22038.2	99.6
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	350707.7	299798.0	85.5	333080.1	296783.1	89.1
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	90401.5	137711.4	152.3	76722.7	59707.6	77.8
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	20123.8	21803.3	108.3	133754.6	133152.5	99.5
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	14523.8	8897.7	61.3	78475.5	93270.2	118.9
սարքեր և ապարատներ	31466.0	15987.7	50.8	34201.8	30458.7	89.1
տարբեր արդյունաբերական ապրանքներ	0.0	74.5		0.0	356.4	
արվեստի ստեղծագործություններ	1826.6	1234.2	67.6	15395.2	16553.2	107.5

2.6.2.9. Ապառքների հիմնախնդիրը

Հանրապետության ՏԱ-ն առնչվում է այնպիսի կարևոր հիմնախնդրի, ինչպիսին ապառքների աճն է: Բավական է նշել, որ միայն 2003թ. ընթացքում 1 մլն դրամից ավելի ապառք ունեցող հարկ վճարողների թիվը կազմել է 414, իսկ ապառքի գումարը՝ շուրջ 30 մլրդ դրամ¹: Ըստ որում, այդ ցանկի մեջ են մտնում երկրի «ողնաշարային» այնպիսի ձեռնարկություններ, ինչպիսիք են Հրազդանի ՋԷԿ-ը (8,5 մլրդ դրամ), ՀԱԷԿ-ը (6,2 մլրդ դրամ), «Հայ-

¹ Տե՛ս 2003թ. ընթացքում մեկ մլն դրամից ավելի ապառք ունեցող հարկ վճարողների ցանկը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 2 հունիսի 2004, էջ 5-6:

էներգո»-ն (մոտ 3,0 մլրդ դրամ), Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի համակարգը (մոտ 3,0 մլրդ դրամ), «Հայգազարդ»-ը (ավելի քան 1 մլրդ դրամ), «Ոսկի»-ն (ավելի քան 1 մլրդ դրամ), «Հայջրմուղկոյուղի»-ն (մոտ 97 մլն դրամ) և այլն:

Պատկերն ավելի անմխիթար է, երբ ուսումնասիրում ենք 2003թ. մեկ մլն և ավելի հարկային վնաս հայտարարագրած հարկ վճարողների ցանկը¹: Նշված ցանկում ընդգրկված 597 տնտեսավարող սուբյեկտների կողմից 2003թ. հարկային վնաս հայտարարագրած հարկատուների վնասի չափը ՀՀ-ի համար կազմել է աստղաբաշխական մեծություն... 174,4 մլրդ դրամ: Ըստ որում, այդ ցանկում են մեզ հայտնի գրեթե բոլոր աշխատող ձեռնարկությունները, այդ պատճառով էլ դրանց թվարկումը պարզապես իմաստ չունի: Այն տպավորությունն է ստեղծվում, որ հանրապետության տարածքում տնտեսական գործունեության հիմնական նպատակը ոչ թե շահույթի (ինչպես դա ընդունված է ամբողջ քաղաքակիրթ աշխարհում), այլ վնասի ստացումն է, ինչն ընդհանրապես անհամատեղելի է շուկայական տնտեսության հետ: Այս փաստը լուրջ մտորումների տեղիք է տալիս այն առումով, թե ինչպիսի տնտեսություն ենք կառուցում մենք:

2.7. Եզրահանգումներ և ապագա անելիքներ

SU ապահովումը երկրի անկախության, ինքնիշխանության կարևոր երաշխիքներից է, հասարակության և անձի կայուն և արդյունավետ կենսագործունեության պայմանը: Այդ պատճառով էլ SU ապահովումն ազգային տնտեսության զարգացման հիմնական գերակայություններից է:

Պետության SU-ն բարդ և բազմագործոն հասկացություն է: Լինելով ազգային անվտանգության համակարգի բաղադրիչ մաս՝ այն միաժամանակ հիմք է հանդիսանում ազգային անվտանգության կառուցվածքի մեջ մտնող տարրերի՝ ռազմական, տեղեկատվական, սոցիալ-քաղաքական, պարենային, բնապահպանական

¹ 2003թ. մեկ մլն դրամ և ավելի հարկային վնաս հայտարարագրած հարկ վճարողների ցանկը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 2 հուլիսի 2004, էջ 5:

անվտանգության և այլն ձևավորման համար: Այս բոլոր բաղադրիչները փոխկապված են և լրացնում են մեկը մյուսին: Չի կարելի երկարատև ժամանակահատվածում գերակայություն տալ դրանցից մեկին՝ անտեսելով մյուսները: Նշված բոլոր բաղադրիչների հիմքում ընկած են հիմնականում տնտեսական գործոնները, որոնք պայմանավորում են այս կամ այն բաղադրիչի անվտանգությունը:

SU հասկացությունն Արևմուտքի զարգացած երկրներում դիտարկվում է որպես համաշխարհային շուկայում ազգային տնտեսության և դրա ճյուղերի մրցունակություն, որը համաշխարհային տնտեսության բազմաբնույթ միտումներում և զարգացումներում ապահովում է երկրի ազատ շուկայական տնտեսության կենսունակությունը: Աշխատանքի միջազգային բաժանման մասնակից և շուկայական մրցակից տնտեսությունների համար SU-ն փաստացի հանգում է այդ մրցակցության ընթացիկ ռիսկերին և վտանգներին համապատասխանաբար արձագանքելուն:

ՀՀ-ում SU-ն, որպես հետազոտությունների առարկա, դեռ գտնվում է կայացման փուլում: Հայաստանի պարագայում SU-ն դիտարկվում է որպես անցումային շրջանի քաղաքականությունը բնութագրող առանձնահատկություններից ածանցյալ հասկացություն: Հանրապետությունում SU հիմնախնդրի նկատմամբ չի ցուցաբերվում համակարգված մոտեցում, և բացակայում է դրա՝ որպես միասնական համակարգի պատկերացումը: ՀՀ-ում մշակված չեն SU ամբողջական հայեցակարգը, SU ապահովման իրավական դաշտը և որպես դրա հետևանք՝ պետական ռազմավարությունը:

SU ռազմավարությունը պետք է համապատասխանի ազգային շահերին և դառնա քաղաքական ու տնտեսական կարևորագույն որոշումների ընդունման հիմնական կողմնորոշիչը: Այն պետք է պարունակի ցուցանիշներ (ինդիկատորներ), որոնք կարձանագրեն ներքին և արտաքին սպառնալիքների հայտնվելու փաստը և այդ սպառնալիքների չեզոքացմանն ուղղված միջոցառումները:

ՀՀ-ն դեռևս գտնվում է անցումային վերափոխումների փուլում (իրեն հատուկ դրսևորումներով), և նրա վրա ազդող ներքին ու արտաքին գործոնները դժվարացնում են SU ապահովումը: Նման

պայմաններում առավել սրվում և կարևորվում է ՏԱ ապահովման համակարգի ստեղծման անհրաժեշտությունը:

ՏԱ ապահովման համար պետության գերակայող ուղղություններից են արտադրության ծավալների աճի խթանումը, տնտեսության կառուցվածքային վերափոխությունները, ազգաբնակչության հիմնական մասի կենսամակարդակի բավարար մակարդակի ապահովումը և կյանքի որակի բարձրացումը, հասարակության միջին խավի ձևավորմանն ուղղված միջոցառումները:

Աղքատությունը, որպես սոցիալ-տնտեսական երևույթ, հետևանք է հասարակության ներսում նյութական հարստության բնական ռեսուրսների և աշխատանքի արդյունքների անհավասարաչափ բաշխման և վերաբաշխման: Եկամուտների բաշխումը հասարակության անդամների միջև, որն իրականացվում է՝ ելնելով արտադրության միջոցների (արտադրության գործոնների) նկատմամբ սեփականության իրավունքից, կարող է խորացնել կամ մեղմել աղքատության մակարդակը, ուստի և այն անհավասարության աղբյուր է: Եվ որպեսզի սոցիալական անհավասարությունը գտնվի «բնական» սահմաններում (երբ գոհ են վերևները և չեն դժգոհում ներքևները), անհրաժեշտ է ինչպես սեփականության, այնպես էլ հասարակությունում ստեղծված նյութական և հոգևոր արդյունքների արդարացի բաշխում: Սա է պետության սոցիալական քաղաքականության իմաստը և դրա իրականացման բարդությունը, և այս առումով եկամուտների արդարացի բաշխումը ներդաշնակ զարգացող և կայուն հասարակության գրավականն ու երաշխիքն է: Պետք է նաև նկատել, որ շուկայական ինքնակարգավորման ուժերն ի վիճակի չեն հասարակության ներսում արդարացի բաշխել ռեսուրսները և ստեղծված արդյունքները, ուստի և այս ոլորտում անհրաժեշտ է պետության կարգավորիչ գործառույթը:

Ինչպես հարստության, այնպես էլ եկամուտների արդարացի բաշխման սկզբունքի պահպանումը կարևոր է նաև պետությունների փոխհարաբերություններում, քանի որ շատ հարուստ և շատ աղքատ երկրների համատեղ գոյակցությունը միշտ էլ պարունակում է զարգացման համար առկա վտանգ: Ուստի և պատահական չէ, որ վերջին տարիներին աղքատության դեմ պայքարը դարձել է

պետությունների միջև երկխոսության հիմնական թեման և տարբեր ծրագրերի իրականացման առաջնահերթ ասպարեզը:

Հայաստանի Հանրապետության նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական Վահրամ Ներսիսյանցը, պատասխանելով ո՞րն է Հայաստանի ներկա տնտեսական իրավիճակի ամենալուրջ խնդիրը հարցին, նշել է. «Իմ կարծիքով դա եկամտային աղքատության բարձր մակարդակն է տնտեսության անցումային շրջանում: Աղքատությունը Հայաստանում գնահատվում է մոտ 30%, և, իհարկե, դա բացարձակապես անընդունելի է: Հետևաբար, նախագահի որդեգրած ռազմավարությունն արդարությամբ պայմանավորված տնտեսական աճի միջոցով աղքատության նվազեցումն է: Այն պահանջում է ներդրումներ մարդկային և հիմնական կառուցվածքային միջոցներում և բաց մրցակցային գործարար մթնոլորտի ապահովում, որը կխրախուսի մասնավոր ներդրումները, կստեղծի նոր աշխատատեղեր և կնպաստի կենսամակարդակի բարձրացմանը»¹:

Որոշակի և նպատակաուղղված սոցիալական քաղաքականության իրականացման համար հրատապ է բնակչության աղքատության ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության մշակումը՝ զարգացող և զարգացած երկրների համար: Այդ մեթոդաբանությամբ հաշվարկված մարդկային ներուժի զարգացման ցուցիչով Հայաստանի Հանրապետությունը գտնվում է միջին մակարդակ ունեցող երկրների շարքում և 0,754 միավորով զբաղեցնում է 82-րդ հորիզոնականը՝ առաջ անցնելով Ադրբեջանից (91-րդ տեղ) և Վրաստանից (97-րդ տեղ):

Համայնավարական հասարակարգից անցումը շուկայական հարաբերությունների զգալիորեն վատացրեց հետհամայնավարական պետություններում ապրող բնակչության կենսամակարդակը, որն այն սոցիալական գինն էր, որը վճարեցին այդ պետությունները: Նման վիճակի հիմնական պատճառն արտադրության աննախադեպ անկումն էր, ինչը բնորոշ է միայն խոր ճգնաժամերին: Բավական է նշել, որ Խորհրդային Միության հանրապետություններից 1990-2002թթ. ժամանակահատվածում միայն Ուզբեկստանն է գերազան-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 16.03.2005, էջ 1:

ցել 1989թ. ՀԱԱ մակարդակը և ապահովել է 106,8% (Հայաստանը՝ 77,8%, Ադրբեջանը՝ 63,2, Վրաստանը՝ 37,9): Վրաստանի ցուցանիշը 15 հանրապետություններից ամենացածրն է: Նշված բոլոր հանրապետություններում աղքատության հաղթահարման հիմնական ուղին տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումն է:

Զարգացման և պատմական մի շարք առանձնահատկությունների պատճառով բնակչության աղքատությունը և անհավասարությունն ունեցան յուրահատուկ դրսևորումներ, ինչն էլ արդիական դարձրեց աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մշակումը և ընդունումը ՀՀ կառավարության կողմից: Համաձայն այդ ծրագրի, ակնկալվում է, որ 2015թ. բնակչության թվի նկատմամբ աղքատների թիվը 2004թ. 43,7%-ի փոխարեն կկազմի 19,7%, շատ աղքատներինը, համապատասխանաբար՝ 14,7 և 4,1%: Անհավասարության կրճատման հիմնական նպատակային ցուցանիշի համաձայն, ամենաաղքատ բնակչության եկամուտները ամենահարուստների նկատմամբ 2004թ. 7,4%-ի փոխարեն 2015թ. կկազմեն 9,1%:

Աղքատության հաղթահարման և անհավասարության կրճատման գլխավոր ուղին կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովումն է, ինչը բնորոշ է վերջին տարիներին (2003թ. տնտեսական աճը կազմեց 13,9%, իսկ 2004թ.՝ 10,1%): Թեև տնտեսական աճը պայմանավորել է աղքատ բնակչության եկամուտների աճի շուրջ 60%-ը, սակայն մյուս կողմից այդ աճի արդյունքում էականորեն կրճատվել է վարձու աշխատողների թիվը, ինչը փոխհատուցվել է ինքնազբաղվածության զգալի աճով, ինչպես նաև վարձու աշխատողների և ինքնազբաղվածների եկամուտների առաջանցիկ աճով: Տնտեսական աճի խրախուսման քաղաքականությունը, ինքնազբաղվածության, փոքր և միջին բիզնեսի աջակցումը և գործարար միջավայրի բարելավումը, սոցիալական արդյունավետ քաղաքականության իրականացումը լուրջ նախադրյալներ կստեղծեն աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների առաջանցիկ աճի ապահովման գործում:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա հաշվարկված ցուցանիշները վկայում են, որ հանրապետության ՏԱ մակարդակը բավարար անվտանգ վիճակում է, որի հավաստիությունը կախված է վիճակագրական տվյալների ճշտու-

թյունից: Միննույն ժամանակ, Հարավկովկասյան տարածաշրջանի երեք երկրների շարքում Հայաստանի ցուցանիշը զիջում է հարևան Ադրբեջանին:

SU համակարգի ձևավորման հիմնախնդիրներից է SU ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների վիճակագրության վարումը և մոնիթորինգը: SU շատ ցուցանիշներ հնարավոր չէ հաշվարկել դրանց վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայության և շատ դեպքերում դրանց ոչ հավաստի լինելու պատճառով:

ՀՀ SU ցուցանիշների մեջ առանցքային տեղ է զբաղեցնում ՀՆԱ մեծությունը: Ըստ հաշվարկների, հանրապետությունում ՀՆԱ շեմային մեծությունը պետք է կազմի 3617648,4 մլն դրամ, որի հաշվարկման հիմքում ընկած են ներկայիս գործող օրենսդրությամբ սահմանված հարկային, ամորտիզացիոն և ազգային հաշիվներում արտացոլվող բոլոր պարտադիր ծախսերի դրույքաչափերը: Հանրապետության SU գերակայող հիմնախնդիրներն են եկամուտների տարբերակվածությունը 10% ամենահարուստ և 10% ամենաաղքատ ընտանիքների միջև, աղքատության մակարդակը, եկամուտների կենտրոնացման մակարդակը: SU-ին սպառնացող գործընթացների մեջ ՀՀ-ի համար առանձնահատուկ կարևորվում է երկրի ազգային հարստության բաղկացուցիչ մասի մտավոր կապիտալի շարունակական արտահոսքը երկրից, որն իր նշանակությամբ մեծ մտահոգություն է առաջացնում և կարիք ունի անհետաձգելի միջոցառումների ու քայլերի: Մեկ այլ սպառնալիք է ստվերային տնտեսության և կոռուպցիայի առկայությունը, ինչը լուրջ խոչընդոտ է Հայաստանի տնտեսական շահերի իրականացման և, հետևաբար, SU ապահովման համար:

Մեր հանրապետությունում SU-ն ինքնուրույն ապահովելը շատ բարդ և դժվարությամբ իրականացվող գործընթաց է: Դրա համար ամենաարդյունավետ եղանակը SU ապահովման կոլեկտիվ ձևն է, միջազգային կոլեկտիվ անվտանգության համակարգերի շրջանակներում գործելը, որոնցում առաջատար երկրների շահերը բարենպաստ են մեր երկրի SU ապահովման համար:

Ելնելով կատարված աշխատանքի արդյունքում ստացված հիմնական եզրակացություններից՝ նպատակահարմար է կատարել հետևյալ առաջարկությունները.

1. Հայաստանում՝ անհրաժեշտ է ստեղծել ՏԱ համակարգ, որի հիմքում պետք է դրվի մոնիթորինգի, վերլուծությունների, կանխատեսումների և այլ միջոցառումների մշակումը:
2. ՏԱ ապահովման համակարգի ղեկավարումը հիմնականում պետք է բաղկացած լինի երկու մակարդակներից: Կառավարման առաջին մակարդակում պետք է մշակվի ՏԱ ապահովման ռազմավարությունը ի դեմս Անվտանգության խորհրդի, իսկ երկրորդում՝ այդ ռազմավարության իրականացման մարտավարությունն ու բուն ռազմավարության իրականացումը՝ ի դեմս կառավարության:
3. Անհրաժեշտ է ստեղծել ՏԱ ապահովմանն ուղղված միջոցառումների ընտրության մեխանիզմ, որը հնարավորություն կտա իրականացնել նշված միջոցառումների նախնական ընտրությունը՝ տնտեսական անվտանգության բարդ համակարգում:
4. ՏԱ ապահովման գործում մեծ դեր ունեն պետական պաշարները, որոնք հիմնականում պետք է իրականացնեն տնտեսական համակարգի կայունացուցչի դեր: Պաշարները պետք է հաշվարկվեն բոլոր հնարավոր սպառնալիքներին դիմակայելու համար անհրաժեշտ ժամանակահատվածի համար, ընդ որում, նպատակահարմար է հաշվարկները կատարելիս բացահայտել այն սպառնալիքները, որոնց չեզոքացման համար անհրաժեշտ պաշարները որոշ մասով չեզոքացնում են նաև մեկ այլ սպառնալիք: Նման մոտեցումը հնարավորություն կտա խուսափել պահուստների մեծության կրկնակի հաշվարկից:
5. Անհրաժեշտ է մշակել Հայաստանի ՏԱ հայեցակարգը, որը հստակ կսահմանի յուրաքանչյուր տարվա համար անվտանգության ապահովման ուղղությունները, միջոցները և միջոցառումները:
6. Բոլոր վերը նշված դրույթներն իրագործելու համար պետք է ապահովել նաև ՏԱ իրավական հիմքը: Այդ նպատակով ՏԱ հայեցակարգը մշակելուց հետո անհրաժեշտ է ընդունել «Տնտեսական անվտանգության մասին» օրենք և դրանից բխող իրավական այլ փաստաթղթեր, ինչպես նաև մշակել ու Ազգային ժողովում օրենքների տեսքով հաստատել ամենամյա տնտեսական անվտանգության ծրագրեր՝ հանրապետության ազգային անվտանգությունը բարձրացնելու համար:

Աղբյուրներ և գրականություն

1. Ա.Աղայան, «Ազգային զարգացման ռազմավարության գաղափարախոսությունը», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
2. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (հաստատված է ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ):
3. Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա (ուսումնագիտական ձեռնարկ), Եր., ԱՌՏ, 2004:
4. Ի.Բազիրյան, «Ազգային զարգացման ռազմավարության գաղափարախոսությունը», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
5. Մ.Գաբրիելյան, Ա.Դաբադյան, Ա.Թադևոսյան, Ն.Մարգարյան, «Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
6. Գ.Գազյան, «Տնտեսական զարգացման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
7. Ս.Գևորգյան, «Ագրարային քաղաքականությունը անցումային շրջանում և ՀՀ պարենային անվտանգությունը», «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N 6 (41), հունիս 2004, էջ 56-60:
8. Յու.Գրիգորյան, «Ժողովրդագրական վիճակը Հայաստանում», «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», թիվ 2, 2001, էջ 62-65:
9. Մ.Դավոյան, Ա.Մարկոսյան, Հ.Սարգսյան, «Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում», Երևան, «Տիգրան Մեծ», 2003:
10. Ա.Թադևոսյան, «Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
11. Ա.Թադևոսյան, «Աղքատության հիմնախնդիրները պետականության զարգացման և ամրապնդման դիտանկյունից», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
12. Գ.Խաչիկյան, Թ.Մանասերյան, «Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման տեսագործական մոտեցումներ», «Рынок капитала в Армении», N 7, 8 (65-66), 2001, Եր., էջ 21-26:
13. Գ.Խաչիկյան. «Հայաստանի տնտեսական անվտանգությունը տնտեսության ներքին և արտահանող հատվածների փոխհարաբերությունների համակարգում», «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N3, 2001, Եր., էջ 58-61:

14. Գ.Խաչիկյան, «ՀՀ արտաքին պետական պարտքը որպես տնտեսական անվտանգության գործոն», «Рынок капитала в Армении», N17, 18 (75, 76), 2001, Եր., էջ 34-37:
15. Գ.Խաչիկյան, «Տնտեսական անվտանգության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2001:
16. Վ.Խոջաբեկյան, «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001:
17. Գ.Հարությունյան, «ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
18. Է.Հարությունյան, «Քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրը անցումային հասարակությունում», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
19. Ա.Հովհաննիսյան, «Տնտեսական անվտանգության գաղափարի առաջացումը և զարգացումը», «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N2-3 (9-10), 2002, էջ 122-125:
20. Ա.Հովհաննիսյան, «Տնտեսական անվտանգության հիմնական տարրերը և հասկացությունները», «Рынок капитала в Армении», N9, 10 (91, 92), 2002, էջ 13-16:
21. Ա.Հովհաննիսյան, «Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարական ուղղվածությունը», «Рынок капитала в Армении», N11-12 (93-94), 2002, էջ 28-30:
22. Ա.Հովհաննիսյան, «Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման համակարգը և ապահովման ուղիները», տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002:
23. Հ.Բ.Ղուշյան, «ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը», Բանբեր Երևանի համալսարանի, 2000, N 3:
24. Ա.Մարգարյան, «Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում», «21-րդ ԴԱԸ», 2003, թիվ 1, էջ 115-140:
25. Ա.Մարկոսյան, «Պետությունը և շուկան», գիրք առաջին, Եր., «Տիգրան Մեծ», 2000:
26. Ա.Մարկոսյան, «Տնտեսագիտություն բոլորի համար», Եր., «Տիգրան Մեծ», 2001:

27. Ա.Մարկոսյան, Դ.Հախվերդյան, Գ.Նազարյան, «Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում», Եր., «ԱՌՏ», 2002:
28. Ա.Մարկոսյան, Ռ.Սաֆարյան, «Շուկայական տնտեսության հիմունքները», Եր., «Տիգրան Մեծ», 2002:
29. Ա.Մարկոսյան, Դ.Հախվերդյան, «Իրականի և անիրականի միջև. տնտեսագիտական-քաղաքագիտական ուսումնասիրություն», Եր., «Տիգրան Մեծ», 2004:
30. Ա.Մարկոսյան, «Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրները», «21-րդ ԴԱԸ», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 3 (5), 2004:
31. Ա.Մարկոսյան, «Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության բարելավման ուղիները», «21-րդ ԴԱԸ», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 4 (6), 2004:
32. Մ.Շահգեղյան, «Ազգային անվտանգության հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
33. Ս.Սաֆարյան, «Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
34. Հ.Քոչարյան, «Տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003:
35. Հ.Քոչարյան, «Տեղեկատվական անվտանգությունը արդի պայմաններում», «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N 6, 2004, էջ 22-28:
36. «Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության քաղաքականությունը», ընդունվել է ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 25-ի նիստում:
37. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. վիճակագրական վերլուծական զեկույց», ՀՀ ԱՎԾ, Եր., 2004:
38. «Հայաստանի սոցիալական միտումները. մարդկային աղքատությունը ՀՀ մարզերում», Տեղեկատվական-վերլուծական պարբերական, հունիս 2004, UNDP:
39. «Հայաստանի սոցիալական միտումները. գյուղական աղքատությունը ՀՀ մարզերում», Տեղեկատվական-վերլուծական պարբերական, նոյեմբեր 2004, UNDP:

40. «Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները)», ՀՀ ԱՎԾ, Եր., 2003:
41. «Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (ք.Երևանի ցուցանիշները)», ՀՀ ԱՎԾ, Եր., 2003:
42. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004», ՀՀ ԱՎԾ, Եր., 2004:
43. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թվականի հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ, Եր., 2005:
44. ՀՀ Սահմանադրություն, Եր., «Նաիրի», 1995:
45. ՀՀ օրենքի նախագիծ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնադրությունների մասին» (առաջին ընթերցում):
46. ՀՀ օրենքը «Ազգային անվտանգության մարմինների մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 6 (181), 5 փետրվար 2002:
47. ՀՀ օրենքը «Պարենային անվտանգության մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 19 (194), 19 հունիս 2002:
48. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թվականի հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական-վերլուծական ամսական զեկույց:
49. ՀՀ վիճակագրական տարեգիրք 2002, 2003:
50. Հայաստանը թվերով 2003, ՀՀ ԱՎԾ, Եր., 2003:
51. Հայաստանի Հանրապետության պետական պարտքը, տարեկան հաշվետվություն 2002, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Եր., 2003:
52. Հայաստանի Հանրապետության պետական պարտքը, տարեկան հաշվետվություն 2003, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Եր., 2004:
53. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեն. համառոտ ուղեցույց, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Եր., 2004:
54. ՀՀ ԿԲ վիճակագրական տարեգիրք 2002, 2003:
55. ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն 2002:
56. «Պարենային ապահովություն և աղքատություն. 2004 թվականի հունվար-դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ, Եր., 2005:
57. Մնուցման հարցերին նվիրված միջազգային կոնֆերանս, Հռոմ, 1992, «Մնուցում և զարգացում. զլոբալ գնահատում»:
58. Абалкин Л., «Экономическая безопасность России: угрозы и их отражение», «Вопросы экономики», N2, 1994, с. 3-7.

59. Абалкин Л., «Экономическая безопасность России: угрозы и их отражение», «Вопросы экономики», N12, 1994, с. 4-13.
60. Архипов А., Городецкий А., Михайлов Б., «Экономическая безопасность: оценки, проблемы, способы обеспечения», «Вопросы экономики», N12, 1994, с. 36-44.
61. Богданов И.Я., «Экономическая безопасность: сущность и структура», Москва, 2000.
62. Бухвальд Е., Головацкая Н., Лазуренко С., «Макроаспекты экономической безопасности: факторы, критерии и показатели», «Вопросы экономики», N12, 1994.
63. Бушков А.Ф., «Теневая экономика и экономическая безопасность», Москва, 1998.
64. Ващекин Н.П., Дэлиев М.Т., Урсул А.Д., «Экономическая безопасность: институциональный подход», Москва, 2000.
65. Ващекин Н.П., Дэлиев М.Т., Урсул А.Д., «Экономическая и социальная безопасность в России», Москва, 1999.
66. Ведута Н.И., Плащинский А.А., «Проблемы управления экономикой», Минск, «Право и экономика», 1998.
67. Ведута Н.И., «Государственная экономическая стратегия», Минск, 2001.
68. Видянин В.И., Дуженков И.И. и др., «Основы экономической безопасности», Москва, 1997.
69. Глазьев С.Ю., «Основа обеспечения экономической безопасности России - альтернативный реформационный курс», «Российский экономический журнал», N1, N2, 1997.
70. Дворяков В.А., «Экономическая безопасность: теория и реальность угроз», Москва, 2000.
71. Жуков А.В., «Концепция национальной безопасности», Москва, НИИПБ, 1994.
72. Зубик В.Б., Зубик Д.В., Судегов Р.С., Абдула А., «Экономическая безопасность», Минск, 1998.
73. Иванченко В., «Общность критериев экономической и государственной безопасности», «Экономист», N5, 1996.
74. Илларионов А., «Критерии экономической безопасности», «Вопросы экономики», N10, 1998, с. 12-17.
75. Кларк Дж.Б., «Распределение богатства», М.Л., 1934.
76. Колосов А.В., «Экономическая безопасность», Москва, 1999.
77. Лукашин В.Т., «Экономическая безопасность», Москва, 2000.

78. Маглакелидзе Т.Г., «Стратегия экономической безопасности», диссертация на соискание ученой степени доктора экономических наук, Ер., 2004.
79. Минасян С., «Милитаризация Южного Кавказа и развитие вооруженных сил государств региона», «21 век», Нораванк, N 4, 2004, с. 27-62.
80. Новиков В.П., «Национальная экономическая безопасность», Москва, 1998.
81. «Основы экономической безопасности», под ред. Е.А.Олейникова, Москва, 1997.
82. Сенчагов В., «О сущности и основах стратегии экономической безопасности в России», «Вопросы экономики», N1, 1995, с. 17-20.
83. Сенчагов В., «Экономическая безопасность, состояние фондового рынка и банковской системы», «Вопросы экономики», N 6, 1996.
84. Статистический ежегодник Южно-Кавказских стран: Армения, Азербайджан, Грузия: 2000, Tacis, 2000.
85. Статистический ежегодник Южно-Кавказских стран: Армения, Азербайджан, Грузия: 2002, Изд.-во «САДА», 2002.
86. Anticorruption in Transition: A Contribution to the Policy Debate, WB, Washington, D. C. 2000.
87. Demografic outline Southern Caucasus. 1958-1999, National statistical service of the Republic of Armenia, «Sida», Yerevan, 2002.
88. Enhancing Global Economic Security Address by Alassane D. Quattara, Monaco, 1998.
89. International Politics on the World Stage J. T. Rourke W. DC. 2001.
90. Lost potential in the South Caucasus: Aspects of interstate trade, Yerevan-Baku-Tbilisi, 2003.
91. Marketing Transition Work for Everyone: Poverty and Inequality in Europe and Central Asia. World Bank. Washington, D.C. 2000.
92. Poverty and food security (According to the Results of January – December, 2001), Statistical Bulletin, National Statistical Service of the RoA.
93. [http://: www.armstat.am](http://www.armstat.am)
94. [http://: www.cba.am](http://www.cba.am)
95. [http://: www.gov.am](http://www.gov.am)

Հավելված 1

Մենդամթերքի վրա կատարված ծախսերը տնային տնտեսության մեկ անդամի հաշվով, ըստ մարզերի, քվանտիլային խմբերի, բնակավայրի տեսակի և խոցելի խմբերի (միջին ամսական) ¹

	1996թ. ¹	1999թ.	2001թ.	2002թ.	2003թ.
Միջինը հանրապետությունում	7670	7545	7822	8082	9791
Մարզեր					
ք.Երևան	7975	...	8144	8966	11531
Արագածոտն	9703	...	6300 ¹	5369 ¹	8452
Արարատ	7935	...	7699	7998	9376
Արմավիր	10215	...	6618	6753	8217
Գեղարքունիք	8519	...	6795 ¹	9246 ¹	8616
Լոռի	7253	...	7299	8053	11127
Կոտայք	7197	...	8203	7031	8145
Շիրակ	5913	...	7686	7427	8921
Սյունիք	5834 ²	... ²	7557
Վայոց ձոր	8804	...	7487 ¹	5502 ¹	7630
Տավուշ	5245	...	7010	8833	10508
Քվանտիլային խմբեր ³					
Քվանտիլ 1	2755	2737	3173	3281	4829
Քվանտիլ 2	4816	4593	5302	5595	7292
Քվանտիլ 3	6746	6093	7144	7457	9378
Քվանտիլ 4	8521	8267	9805	10055	12102
Քվանտիլ 5	15513	15318	17448	17375	18433
Բնակավայրի տեսակը					
քաղաք	...	7321	7705	7992	10174
գյուղ	...	7844	8062	8213	9235
խոցելի խմբեր					
գործազուրկի գլխավորությամբ տնային տնտեսություններ	...	6928	6215	7344	8677
բազմանդամ (6 և ավելի) տնային տնտեսություններ	...	6721	6419	6547	7949
կենսաթոշակատուներով տնային տնտեսություններ	...	7727	7301	7690	9167
միայնակ կենսաթոշակատուներ	...	10774	10606	10820	14296
եթեք և ավելի երեխաներ (0-14 տարեկան) ունեցող տնային տնտեսություններ	...	7459	6270	7312	7764
կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններ	...	8053	7540	7918	9887
հինգ տարեկան և ցածր երեխաներ ունեցող տնային տնտեսություններ	...	7148	6928	6935	8847

¹ Տվյալները ցածր ներկայացուցչական են:

² Նվազագույն անհրաժեշտ ներկայացուցչականությունը չի ապահովվել:

³ Քվանտիլային բաշխումը կատարվել է ըստ մեկ շնչի հաշվով սննդամթերքի վրա կատարված ծախսերի:

¹ «Պարենային ապահովություն և աղքատություն. 2004 թվականի հունվար-դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ, 2005, էջ 46-47:

Հավելված 2

Ընթացիկ ծախսերի մեջ սննդամթերքի (առանց ալկոհոլային խմիչքների)
վրա կատարված ծախսերի մասնաբաժինը (%-ով)¹

	I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			2002	2003	2004
	2002	2003	2004	2002	2003	2004	2002	2003	2004	2002	2003	2004			
Հանրապետության միջինը	67.3	70.4	-	69.3	68.1	64.9	68.1	66.5	64.4	68.1	68.5	65.7	68.1	68.3	...

Հավելված 3

Հայաստանի Հանրապետության պարենային հաշվեկշռի կանխատեսումները 2010 և 2015թթ.²

Պարենամթերքի անվանումը	Տարիները	Պահուստ-ներ տարվա սկզբում	Արտադ-րություն	Ներմու-ծում	Ամբող-ջական առաջարկ	Սննդի օգտա-գործում	Անասնա-կեր	Կո-րուստ-ներ	Սերմա-ցու	Արտա-հանում	Պահուստ-ներ տարվա վերջում	Օգտագոր-ծում	Ինքնաբա-վության աստիճան, %	Սպառումը մեկ շնչի հաշվով		
														կգ/տարի	գրամ/օր	կկալ/օր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ցորեն ¹	2010թ.	105.0	307.5	318.5	731.0	465.7	94.8	12.5	35.5	2.5	120.0	731.0	49.3	154.3	422.9	1353.3
	2015թ.	105.0	322.0	310.0	737.0	464.3	115.6	15.0	34.1	3.0	105.0	737.0	51.2	153.4	420.3	1345.2
Հասիկաընդեղենային մշակաբույսեր ²	2010թ.	1.2	7.1	3.6	11.9	8.1	-	0.6	0.6	1.0	1.6	11.9	73.2	2.7	7.4	12.9
	2015թ.	2.0	8.0	3.5	13.5	8.8	-	0.5	0.8	1.4	2.0	13.5	79.2	2.9	8.0	14.0
Կարտոֆիլ	2010թ.	155.0	580.0	5.8	740.8	160.2	120.5	47.4	132.4	125.3	155.0	740.8	126.0	53.1	145.5	109.0
	2015թ.	160.0	682.5	6.0	848.5	164.0	126.5	48.0	133.0	214.0	160.0	845.5	143.8	54.2	148.5	111.3
Բանջարեղեն ³	2010թ.	54.0	807.0	11.0	872.0	693.6	26.5	34.5	1.8	75.1	40.5	872.0	108.6	229.9	629.9	189.0
	2015թ.	60.0	927.0	11.5	998.5	759.5	34.0	35.0	2.0	123.0	45.0	998.5	113.7	251.0	687.7	206.4
Պտուղ և հատապտուղ ⁴	2010թ.	6.3	163.4	9.7	179.4	128.4	-	13.0	-	31.0	7.0	179.4	115.0	42.6	116.6	170.8
	2015թ.	7.0	237.0	9.5	253.5	178.5	-	14.5	-	53.0	7.5	253.5	122.5	59.0	161.6	236.7
Խաղող ⁵	2010թ.	6.0	194.0	5.0	205.0	126.5	-	6.0	-	66.5	6.0	205.0	146.4	3.4	9.3	6.2

¹ «Պարենային ապահովություն և աղբատուրություն. 2004 թվականի հունվար-դեկտեմբեր», ՀՀ ԱՎԾ, 2005, էջ 47:

² Աղբյուրը «Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության քաղաքականությունը», Աղյուսակ 10.1:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
	2015թ.	7.0	264.0	5.0	276.0	146.0	-	6.4	-	117.1	6.5	276.0	173.8	3.5	9.4	6.3
Բուսական յուղ⁶	2010թ.	2.1	4.6	20.4	27.1	23.8	-	0.5	-	0.7	2.1	27.1	18.9	7.9	21.6	142.7
	2015թ.	2.2	9.5	20.8	32.5	26.9	-	0.7	-	1.6	3.3	32.5	33.1	8.9	24.4	160.9
Շաքար	2010թ.	4.3	5.1	99.1	108.5	102.5	-	1.5	-	-	4.5	108.5	4.9	34.0	93.1	359.4
	2015թ.	4.5	8.4	99.4	112.3	106.7	-	1.2	-	-	4.4	112.3	7.8	35.3	96.6	372.8
Չուշ	2010թ.	1.2	63.5	0.1	64.8	40.4	-	2.1	-	20.5	1.8	64.8	147.3			
	2015թ.	1.5	88.0	0.1	89.6	58.7	-	2.2	-	26.7	2.0	89.6	143.3	19.4	53.2	28.2
Կաթ (բացի կարագից)⁸	2010թ.	51.0	755.0	17.4	823.4	645.6	75.6	27.2	-	24.0	51.0	823.4	100.9	214.0	586.3	234.6
	2015թ.	55.0	944.0	18.0	1017.0	774.7	80.5	27.5	-	79.7	55.0	1017.4	107.0	256.0	701.4	280.6
Տավարի միս⁹	2010թ.	2.1	37.5	12.5	52.1	48.0	-	0.5	-	2.0	1.6	52.1	78.1	15.9	43.6	78.5
	2015թ.	4.5	45.0	14.0	63.5	57.2	-	0.4	-	2.7	3.2	63.5	79.9	18.9	51.8	93.2
Խոզի միս⁹	2010թ.	1.0	19.0	7.0	27.0	25.0	-	0.6	-	0.5	0.9	27.0	74.5	8.3	22.7	47.5
	2015թ.	1.5	24.0	7.6	33.1	29.8	-	0.5	-	1.2	1.6	33.1	78.9	9.8	27.0	56.3
Ոչխարի և այծի միս⁹	2010թ.	1.2	11.4	-	12.6	10.6	-	0.3	-	0.7	1.0	12.6	106.5	3.5	9.6	15.2
	2015թ.	2.0	13.6	-	15.6	13.5	-	0.2	-	0.8	1.1	15.6	106.3	4.5	12.2	19.4
Հավի միս⁹	2010թ.	1.5	7.2	14.0	22.7	20.9	-	0.1	-	1.2	0.5	22.7	36.0	6.9	18.9	20.3
	2015թ.	1.5	8.4	14.4	24.3	21.6	-	0.1	-	1.4	1.2	24.3	39.3	7.1	19.6	20.9
ԸՆԴԱՄԵՆԸ	2010թ.															2758.9
	2015թ.															2952.3

¹ Պարենամթերքները ներառում են.

¹ Յորենի, ինչպես նաև այլուրի, մակարոնեղենի, էթիլային սպիրտի և այլ հացամթերքի ծավալները պայմանականորեն վերածած ցորենի:

² Լոբու, ոսպի և այլ լոբազգիների ծավալները:

³ Թարմ, չորացված և պահածոյացված բանջարեղենի (կաղամբ բոլոր տեսակի, վարունգ, լոլիկ, սեղանի ճակնդեղ, գլուխ սոխ, սիսոր և այլն) ծավալները:

⁴ Թարմ, չորացված և պահածոյացված մրգի (հնդավորներ, կորիզավորներ, մերձարևադարձային, արևադարձային և այլն) ծավալները:

⁵ Խաղողի ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված ծավալները:

⁶ Մոլայի, գետնընկույզի, ձիթապտղի, արմավենու, արևածաղկի և այլ ձեթերի ծավալները:

⁷ Կճեպով ձվի, ինչպես նաև ձվի փոշու տվյալները պայմանականորեն վերածած ձվի:

⁸ Թարմ կաթի, ինչպես նաև կաթի փոշու, մածուների, թթվասերի, կաթնաշոռի, պանրի և այլ մսամթերքի ծավալները պայմանականորեն վերածած թարմ կաթի:

⁹ Սպանդային քաշով մսի, ինչպես նաև երշիկեղենի, պահածոյացված մսի և այլ մսամթերքի ծավալները պայմանականորեն վերածած սպանդային քաշով մսի:

Հավելված 4

Հայաստանը ազգային և միջազգային անվտանգության 5-10 տարվա համատեքստում¹

1. Չեր կարծիքով՝ ազգային անվտանգությունը ...					
Փորձագիտական հարցում			Հանրային հարցում		
1. Չեր անձնական անվտանգությունն է	12%		1. Չեր անձնական անվտանգությունն է	12,7%	
2. Պետական գործող համակարգի անվտանգությունն է	18%		2. Պետական գործող համակարգի անվտանգությունն է	17,0%	
3. Բանակաշինությունը և նրա մարտունակությունն է	8%		3. Բանակաշինությունը և նրա մարտունակությունն է	10,5%	
4. Այս բոլորը միասին է	54%		4. Այս բոլորը միասին է	58,4%	
5. Այլ պատասխաններ	8%		5. Այլ պատասխաններ	1,3%	
<ul style="list-style-type: none"> ✓ Ազգի և ժողովրդի հավերժության, հավաքաբար ազատ գործելու ապահովումն է (1-ինը և 2-րդը ԱԱ-ի հետ ոչ մի կապ չունեն, հաճախ ուղղակիորեն հակասում են նրան) ✓ Արտաքին ու ներքին սպառնալիքներից քաղաքացիների, հասարակության և պետության կենսական կարևոր շահերի, ինչպես նաև ազգային արժեքների և ապրելակերպի պաշտպանվածությունն է 			<ul style="list-style-type: none"> ✓ Դժվարանում եմ պատասխանել ✓ Երկրի ներքին և արտաքին անվտանգությունն է 1-ը և 3-ը, ✓ Հայրենասիրության գաղափարախոսության մատուցումն է ✓ Ժողովրդի, ազգի, ողջ Հայաստանի և հայրենիքի միասնությունը, անվտանգությունն է ✓ Պետական հզոր կառույց ունենալն է ✓ Ոչ մեկը 		
			6. Հրաժարվել է պատասխանել	0,1%	
2. Ըստ Ձեզ՝ այսօր Հայաստանի ազգային անվտանգությունը ...					
Փորձագիտական հարցում			Հանրային հարցում		
1. Բավարար չափով ապահովված է	0%		1. Բավարար չափով ապահովված է	18,1%	
2. Մասնակի ապահովված է	24%		2. Մասնակի ապահովված է	45,1%	
3. Ապահովված է	76%		3. Ապահովված է	27,5%	
4. Դժվարանում եմ պատասխանել	0%		4. Դժվարանում եմ պատասխանել	9,1%	
			5. Հրաժարվել է պատասխանել	0,2%	
3. Առաջիկա 5 տարիներին Հայաստանը նախնառաջ պետք է ուժեղացնի իր ...					
Փորձագիտական հարցում			Հանրային հարցում		
1. Բանակի մարտունակությունը	10%		1. Բանակի մարտունակությունը	27,2%	
2. Տնտեսական ներուժը	24%		2. Տնտեսական ներուժը	43,5%	
3. Ժողովրդական ներուժը	58%		3. Ժողովրդական ներուժը	26,8%	

¹ Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի կողմից իրականացված փորձագիտական և հանրային հարցումների արդյունքների ներկայացում (մասնակցել են 50 փորձագետ և 2021 հարցվող Երևանից և ՀՀ բոլոր մարզերից), օգոստոս, 2004:

	4. Այլ պատասխաններ՝ <ul style="list-style-type: none"> ✓ Պետք է ապահովի ազգային անվտանգության բոլոր բաղադրիչների կատարումը ✓ Ազգային որոշումների կայացման, հավաքական նպատակաձևերային մտազործունեության իրականացման իրական համակարգը, այն պետության հիմքում դնելուց և մշտապես գործող դարձնելուց հետո ✓ Պետության ընդհանրական ներուժը՝ ֆիզիկական և հոգևոր բաղադրիչների որակական և քանակական աճի սկզբունքով 	8%			4. Այլ պատասխաններ՝ <ul style="list-style-type: none"> ✓ Դժվարանում եմ պատասխանել ✓ Բոլորը միասին ✓ Արտաքին քաղաքականությունը, դիվանագիտությունը ✓ Արդարության զգացման բարձրացումը ✓ Ներքին սովորաբար իշխանությունից ազատվելը ✓ Օրենսդրական դաշտի բարելավումը ✓ Մարդկանց հոգեբանությունը փոխելը ✓ Որակյալ աշխատուժի ձևավորումը ✓ Ոչ մեկը 	2,3%		
					5. Հրաժարվել է պատասխանել	0,2%		
4. Առաջիկա 5 տարիներին ո՞րն է լինելու Հայաստանին սպառնացող հիմնական ռազմական վտանգը (եղև մեկ պատասխան)								
Փորձագիտական հարցում				Հանրային հարցում				
	1. Ադրբեջանի հետ պատերազմի վերակսումը	44%			1. Ադրբեջանի հետ պատերազմի վերակսումը	47,5%		
	2. Հայաստանում ռուսական ռազմաբազաների ներկայությունը	18%			2. Հայաստանում ռուսական ռազմաբազաների ներկայությունը	3,1%		
	3. Հայաստանից ռուսական ռազմաբազաների դուրսբերումը	4%			3. Հայաստանից ռուսական ռազմաբազաների դուրսբերումը	11,2%		
	4. Վրաստանի հետ ռազմական հնարավոր բախումը	2%			4. Վրաստանի հետ ռազմական հնարավոր բախումը	1,7%		
	5. Հայաստանի անդամակցումը ՆԱՏՕ-ին	2%			5. Հայաստանի անդամակցումը ՆԱՏՕ-ին	2,8%		
	6. Թուրքիայի ռազմական ներխուժումը	8%			6. Թուրքիայի ռազմական ներխուժումը	7,0%		
	7. Քաղաքացիական պատերազմը	4%			7. Քաղաքացիական պատերազմը	11,7%		
	8. Ռազմական բնույթի ոչ մի վտանգ չի սպառնալու	18%			8. Ռազմական բնույթի ոչ մի վտանգ չի սպառնալու	13,6%		
					8. Այլ պատասխաններ <ul style="list-style-type: none"> ✓ Դժվարանում եմ պատասխանել ✓ Տարածքային վերաբաժանման խնդիրը ✓ Նոր «Հոկտեմբերի 27»-ը ✓ Ատոմակայանի վտանգը ✓ Գանգատերական պատերազմները 	1,3%		
					9. Հրաժարվել է պատասխանել	0,1%		
5. Առաջիկա 5 տարիներին ո՞րն է լինելու Հայաստանին սպառնացող հիմնական քաղաքական վտանգը								
Փորձագիտական հարցում				Հանրային հարցում				
	1. Բշխանություն-հասարակություն առճակատումը	10%			1. Բշխանություն-հասարակություն առճակատումը	21,8%		
	2. Հեղաշրջման հնարավոր փորձը	0%			2. Հեղաշրջման հնարավոր փորձը	11,6%		
	3. Քաղաքական ահաբեկությունը	6%			3. Քաղաքական ահաբեկությունը	6,5%		
	4. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների կտրուկ սահմանափակումը	14%			4. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների կտրուկ սահմանափակումը	9,8%		
	5. Ընդդիմության կողմից քաղաքական լարվածության հրահրումը	0%			5. Ընդդիմության կողմից քաղաքական լարվածության հրահրումը	14,2%		

	6. Ընտրությունների արդյունքների կեղծումը	30%			6. Ընտրությունների արդյունքների կեղծումը	20,7%
	7. Հայաստանի մեկուսացումը տարածաշրջանային ծրագրերից	10%			7. Հայաստանի մեկուսացումը տարածաշրջանային ծրագրերից	2,9%
	8. Հայաստանի ինքնիշխանության սահմանափակումը (որևէ երկրից տնտեսական և քաղաքական կախվածության մեծացումը)	24%			8. Հայաստանի ինքնիշխանության սահմանափակումը (որևէ երկրից տնտեսական և քաղաքական կախվածության մեծացումը)	4,0%
	9. Քաղաքական ոչ մի վտանգ չի սպառնալու	0%			9. Քաղաքական ոչ մի վտանգ չի սպառնալու	6,8%
	10. Այլ պատասխաններ՝ ✓ Ազգային-պետական գաղափարախոսական ներկա ճգնաժամի հաղթահարման ուշացումը ✓ Անարդար ընտրությունները և իշխանությունները	6%			10. Այլ պատասխաններ՝ ✓ Դժվարանում եմ պատասխանել քաղաքական գործիչների, կուսակցությունների անհաշտությունը, աթոռակիզիվը ✓ Ընդդիմություն-իշխանություն առճակատումը, բախումը ✓ Իշխանության անփոփոխ լինելը, այլասերումը ✓ Ազգային պառակտումը ✓ 4, 6, 7 կետերը, 6 և 8 կետերը, 1-8 կետերը	1,4%
					11. Հրաժարվել է պատասխանել	0,3%

6. Առաջիկա 5 տարիներին ո՞րն է լինելու Հայաստանին սպառնացող հիմնական տնտեսական վտանգը (եթե մեկ պատասխան)

Փորձագիտական հարցում			Հանրային հարցում		
	1. Կոռուպցիան	42%		1. Կոռուպցիան	41,0%
	2. Արտաքին պարտքը	12%		2. Արտաքին պարտքը	11,2%
	3. Տնտեսական, ֆինանսական ճգնաժամը	14%		3. Տնտեսական, ֆինանսական ճգնաժամը	19,8%
	4. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակման պահպանումը	10%		4. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակման պահպանումը	5,5%
	5. Արտասահմանյան ընկերություններին պատկանող ռազմավարական նշանակության ՀՀ ձեռնարկությունների («ԱրմենՏել», «Զվարթնոց» օդանավակայան, բաշխիչ էլեկտրական զանգեր, «Նաիրիտ» և այլն) գործունեությունը կամ անգործությունը	6%		5. Արտասահմանյան ընկերություններին պատկանող ռազմավարական նշանակության ՀՀ ձեռնարկությունների («ԱրմենՏել», «Զվարթնոց» օդանավակայան, բաշխիչ էլեկտրական զանգեր, «Նաիրիտ» և այլն) գործունեությունը կամ անգործությունը	7,1%
	6. Պետությանը հատկացված օտարերկրյա վարկային միջոցների փոշիացումը, թայանը և այլն	8%		6. Պետությանը հատկացված օտարերկրյա վարկային միջոցների փոշիացումը, թայանը և այլն	11,6%
	7. Տնտեսական ոչ մի վտանգ չի սպառնալու	2%		7. Տնտեսական ոչ մի վտանգ չի սպառնալու	2,4%
	8. Այլ պատասխաններ՝ ✓ Բոլորը միասին՝ համակարգային ճգնաժամի շարունակական խորացումը ✓ Ժողովրդավարության և շուկայական տնտեսության շրջանցումը ✓ Առաջին կարգի ուժային կենտրոնների կողմից (հատկապես ԱՄՆ) տարածքների վերահսկման տնտեսական մեթոդների կիրառումը	6%		8. Այլ պատասխաններ՝ ✓ Դժվարանում եմ պատասխանել ✓ Բնական աղետները ✓ 2 և 6 կետերը, 1,5 և 6 կետերը, 1-6 կետերը	1,3%
				9. Հրաժարվել է պատասխանել	0,1%

7. Առաջիկա 5 տարիներին ո՞րն է լինելու Հայաստանին սպառնացող հիմնական սոցիալական վտանգը (նշել մեկ պատասխան)											
Փորձագիտական հարցում						Հանրային հարցում					
1. Արտագաղթը	12%					1. Արտագաղթը	22,8%				
2. Աղքատությունը	6%					2. Աղքատությունը	19,3%				
3. Գործազրկությունը	0%					3. Գործազրկությունը	8,9%				
4. Բարոյալքումը	30%					4. Բարոյալքումը	2%				
5. Հանցավորությունը	0%					5. Հանցավորությունը	13,4%				
6. Անօրինականությունը	34%					6. Անօրինականությունը	2,2%				
7. Մեղիության նվազումը	12%					7. Մեղիության նվազումը	3,2%				
8. Հիվանդությունների աճը	0%					8. Հիվանդությունների աճը	1,4%				
9. Սոցիալական ոչ մի վտանգ չի սպառնալու	0%					9. Սոցիալական ոչ մի վտանգ չի սպառնալու	2,8%				
10. Այլ պատասխաններ՝ ✓ Բոլոր վտանգները միասին	6%					10. Այլ պատասխաններ՝ ✓ Դժվարանում եմ պատասխանել ✓ Սոցիալական բևեռացումը, ատելությունը, հիասթափությունը ✓ Բոլորը ✓ 1-6 կետերը, 7 և 8 կետերը, 1 և 2 կետերը, 2-6 կետերը	1,3%				
						11. Հրաժարվել է պատասխանել	0,2%				
8. Գտնո՞ւմ եք, որ անվտանգության տեսանկյունից ստորև բերված տերությունների և երկրների հետ Հայաստանի հարաբերությունները պետք է ...											
Փորձագիտական հարցում						Հանրային հարցում					
	ավելի խորացվեն	պահպանվեն ներկայիս մակարդակով	սահմանափակվեն	լիովին խզվեն			ավելի խորացվեն	պահպանվեն ներկայիս մակարդակով	սահմանափակվեն	դժվարացել է պատասխանել	
1. ԱՄՆ-ի հետ	76%	18%	6%	0%		1. ԱՄՆ-ի հետ	35,6%	51%	7,1%	4,4%	
2. Եվրամիության հետ	88%	6%	6%	0%		2. Եվրամիության հետ	51,9%	36,9%	5%	4,7%	
3. Իրանի հետ	48%	52%	0%	0%		3. Իրանի հետ	31,9%	48,5%	11,7%	5,2%	
4. Ռուսաստանի հետ	30%	34%	36%	0%		4. Ռուսաստանի հետ	76,9%	19,1%	2,2%	1,2%	
5. Թուրքիայի հետ	64%	12%	12%	12%		5. Թուրքիայի հետ	16%	33%	28,5%	5,2%	
9. Ի՞նչ եք կարծում, այսօր Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև եռակողմ տարածաշրջանային համագործակցությունը առաջին հերթին ո՞ր ոլորտում է եախրտրելի											
Փորձագիտական հարցում						Հանրային հարցում					
1. Քաղաքական	16%					1. Քաղաքական	26,4%				

	2. Տնտեսական	42%			2. Տնտեսական	36,4%
	3. Ռազմական	2%			3. Ռազմական	12,7%
	4. Մշակութային	4%			4. Մշակութային	6%
	5. Գիտության	4%			5. Գիտության	1,7%
	6. Բնապահպանական	12%			6. Բնապահպանական	2,3%
	7. Բնական և տեխնաձին աղետների կանխարգելման	14%			7. Բնական և տեխնաձին աղետների կանխարգելման	3,0%
	8. Այլ պատասխաններ <ul style="list-style-type: none"> ✓ Բոլոր նշված ոչ քաղաքական ոլորտներում, այն էլ՝ փորձագիտական, մասնավոր հարթության վրա ✓ Ռազմաքաղաքական, տնտեսական և բոլոր մյուս իմաստներով հայկական տարածաշրջանային ծրագրի շուրջ, եթե այդպիսի ծրագիր Հայաստանը որդեգրի, 2-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ ոլորտներում տարածաշրջանը կազմակերպելու 	6%			8. Այլ պատասխաններ <ul style="list-style-type: none"> ✓ Դժվարանում եմ պատասխանել ✓ Ազգայնասիրտության վերացումը ✓ Ժողովուրդների շփումները ✓ Բոլորն էլ կարևոր են ✓ 1,2 և 7 կետերը միասին, քանի որ դրանց հետ կապված ունեն ընդհանուր խնդիրներ, 1-3 կետերը, 5, 6 և 7 կետերը 	1,7%
	9. Ոչ մի ոլորտում	0%			9. Ոչ մի ոլորտում	8,8%
					10. Հրաժարվել է պատասխանել	0,9%

10. Հայ – թուրքական հարաբերությունները համարում...

Փորձագիտական հարցում			Հանրային հարցում		
	1. Առանց որևէ նախապայմանի	18%		1. Առանց որևէ նախապայմանի	7%
	2. Հայաստան – Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների հաստատման միջոցով	28%		2. Հայաստան – Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների հաստատման միջոցով	18,9%
	3. Միայն Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեպքում	30%		3. Միայն Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեպքում	43,7%
	4. Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության գոհերի ժառանգների փոխհատուցման դեպքում	8%		4. Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության գոհերի ժառանգների փոխհատուցման դեպքում	6,3%
	5. Թուրքիայի կողմից պատմական Հայաստանի տարածքների վերադարձման դեպքում	6%		5. Թուրքիայի կողմից պատմական Հայաստանի տարածքների վերադարձման դեպքում	13,5%
	6. Ոչ մի դեպքում	2%		6. Ոչ մի դեպքում	8,7%
	7. Այլ պատասխաններ՝ <ul style="list-style-type: none"> ✓ Երկու երկրների կողմից փոխզիջումների դեպքում ✓ Միայն այն դեպքում, եթե թուրք ժողովուրդը ինքնուրույն գիտակցի իր ժառանգած մեղքը, մեղա գա առանց հայերի և օտարների պարտադրանքի ✓ Առնվազն հրեաների հարցում Գերմանիայի վերաբերմունքը Թուրքիայի կողմից կրկնելու դեպքում 	8%		7. Այլ պատասխաններ՝ <ul style="list-style-type: none"> ✓ Դժվարանում եմ պատասխանել ✓ Առանց նախապայմանի 3-րդ, 4-րդ, 5-րդ կետեր ✓ 2-5 կետերը, 3-5 կետերը, 2 և 3 կետերը 	0,8%
				8. Հրաժարվել է պատասխանել	1,1%

11. Ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքը ժամանակակից թուրքերի և Թուրքիայի նկատմամբ			
Փորձագիտական հարցում		Հանրային հարցում	
1. Թուրքը մնում է թուրք՝ ընդունակ գեղասպանություն կատարելու	40%	1. Թուրքը մնում է թուրք՝ ընդունակ գեղասպանություն կատարելու	56,3%
2. Ժամանակակից թուրքը նախորդ դարասկզբի բարբարոսը չէ	12%	2. Ժամանակակից թուրքը նախորդ դարասկզբի բարբարոսը չէ	11,7%
3. Թուրքիայի արդի պաշտոնական քաղաքականությունը մի բան է, իսկ հասարակ թուրք մարդը՝ այլ	38%	3. Թուրքիայի արդի պաշտոնական քաղաքականությունը մի բան է, իսկ հասարակ թուրք մարդը՝ այլ	29,6%
4. Այլ պատասխաններ	10%	4. Այլ պատասխաններ	1,2%
<ul style="list-style-type: none"> ✓ Անկախ այն բանից, թե հարևանն ով է, պետք է միշտ զգոն լինել ✓ Որևէ վստահություն չեն ներշնչում ✓ Թուրքը այն տոհմացեղային վիճակում է, որ նրան դեռևս կարող են դրդել, նա գեղասպանության և հայերի ապագա դժբախտությունների գործիքն է միայն, իսկ թուրքական պետությունը մի քիչ ավելի պատասխանատու է, բայց ի վերջո նա գործիք է ✓ Բարիորացիական 		<ul style="list-style-type: none"> ✓ Դժվարանում եմ պատասխանել ✓ Դրական, շատ լավ, սովորական ✓ Հակասական ✓ Թուրքիայի Հանրապետությունն ապագա չունի ✓ Հարկավոր է պատմականորեն գնահատել և չսխալվել ✓ Թուրքիային և թուրքերին չճանաչելու պատճառով Թուրքիան աստիճանաբար դառնում է եվրոպական երկիր 	
		5. Հրաժարվել է պատասխանել	1,1%

Հավելված 5

Աղյուսակ 1

Թերսնման գերակայությունը զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում

ԶԱՐԳԱՑՈՂ ԱՇԽԱՐՀ Տարածաշրջան/ենթաշրջան/երկիր (թերսնման կատեգորիա)	Բնակչության թվաքանակը, մլն			Թերսնման ենթարկված մարդկանց թվաքանակը, մլն			Թերսնման ենթարկվածների տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվաքանակում, %		
	1990-1992	1995-1997	1999-2001	1990-1992	1995-1997	1999-2001	1990-1992	1995-1997	1999-2001
1	2	3	4	5	6	7	8	9	10
ԶԱՐԳԱՑՈՂ ԱՇԽԱՐՀ	4050.0	4418.6	4712.2	816.6	779.7	797.9	20	18	17
ԱՄԻՄ ԵՎ ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ	2812.1	3033.0	3204.8	566.8	496.4	505.2	20	16	16
Արևելյան Ասիա	1241.1	1306.7	1353.4	198.3	153.3	144.5	16	12	11
Չինաստան* (3)	1169.5	1231.0	1275.0	193.0	144.6	135.3	17	12	11
Կորեայի Ժող. Դեմ. Հանրապետություն (4)	20.3	21.6	22.3	3.7	6.9	7.5	18	32	34
Հոնկոնգ, Չինաստան (1)	5.8	6.3	6.9	0.0	0.1	0.1	-	-	-
Մոնղոլիա (5)	2.3	2.4	2.5	0.8	1.0	1.0	34	42	38
Կորեայի Հանրապետություն (1)	43.3	45.3	46.7	0.8	0.7	0.7	-	-	-
Օկեանիա	3.9	4.4	4.8	0.9	1.2	1.3	25	27	27
Պապուա Նոր Գվինեա (4)	3.9	4.4	4.8	0.9	1.2	1.3	25	27	27
Հարավարևելյան Ասիա	444.8	486.0	517.0	76.4	65.4	66.3	17	13	13
Կամբոջա (5)	10.0	11.7	13.1	4.3	5.2	5.0	43	45	38
Ինդոնեզիա (3)	185.6	200.6	212.1	16.6	11.4	12.6	9	6	6
Լաոսի Ժող. Դեմ. Հանրապետություն (4)	4.2	4.8	5.3	1.2	1.3	1.2	29	28	22
Մալայզիա (1)	18.3	20.5	22.2	0.6	0.4	0.5	3	-	-
Մյանմա (3)	41.3	45.1	47.7	4.0	3.3	3.2	10	7	7
Ֆիլիպիններ (4)	62.5	69.8	75.7	16.1	16.1	16.8	26	23	22
Թայլանդ (3)	55.5	59.5	62.8	15.6	12.3	11.9	28	21	19
Վիետնամ (3)	67.5	74.0	78.1	18.1	15.3	15.1	27	21	19
Հարավային Ասիա	1122.4	1236.0	1329.6	291.1	276.5	293.1	26	22	22
Բանգլադեշ (4)	112.7	126.3	137.5	39.2	47.9	44.1	35	38	32
Հնդկաստան (4)	861.3	943.5	1008.9	214.5	194.7	213.7	25	21	21
Նեպալ (3)	18.6	20.9	23.0	3.4	5.0	3.8	18	24	17
Պակիստան (3)	112.5	126.9	141.3	29.0	24.1	26.8	26	19	19
Շրի Լանկա (4)	17.2	18.2	18.9	5.0	5.0	4.6	29	27	25
ԼԱՏԻՆԱՄԵՐԻԿԱ ԵՎ ԿԱՐԻԲՆԵՐ	442.2	481.2	512.0	59.0	55.3	53.4	13	11	10
Հյուսիսային Ամերիկա	84.8	92.7	98.9	4.6	5.1	5.2	5	5	5

1	2	3	4	5	6	7	8	9	10
Մերսիկա (3)	84.8	92.7	98.9	4.6	5.1	5.2	5	5	5
Գենտրոնական Ամերիկա	28.7	32.7	36.0	5.0	6.5	7.5	17	20	21
Կոստա Ռիկա (3)	3.1	3.7	4.0	0.2	0.2	0.2	7	6	6
Էլ Սալվադոր (3)	5.2	5.8	6.3	0.6	0.8	0.8	12	14	14
Գվատեմալա (4)	9.0	10.2	11.4	1.4	2.2	2.9	16	21	25
Հոնդուրաս (4)	5.0	5.8	6.4	1.1	1.2	1.3	23	20	20
Նիկարագուա (4)	3.9	4.6	5.1	1.2	1.5	1.5	30	33	29
Պանամա (4)	2.4	2.7	2.9	0.5	0.6	0.7	20	22	26
Գարիբներ	28.5	30.3	31.6	7.9	9.8	7.8	28	32	25
Կուբա (3)	10.7	11.0	11.2	0.9	2.7	1.3	8	24	11
Դոմինիկյան Հանրապետություն (4)	7.2	7.8	8.4	1.9	2.1	2.1	27	26	25
Հայիթի (5)	7.0	7.6	8.1	4.6	4.6	4.0	65	60	49
Ջամայկա (3)	2.4	2.5	2.6	0.3	0.3	0.2	14	11	9
Թրինիդադ և Թոբագո (3)	1.2	1.3	1.3	0.2	0.2	0.2	13	14	12
Հարավային Ամերիկա	300.1	325.5	345.6	41.5	34.0	32.9	14	10	10
Արգենտինա (1)	33.0	35.2	37.0	0.7	0.4	0.4	-	-	-
Բոլիվիա (4)	6.7	7.6	8.3	1.8	1.9	1.8	26	25	22
Բրազիլիա (3)	150.3	161.7	170.4	18.6	16.7	15.6	12	10	9
Չիլի (2)	13.3	14.4	15.2	1.1	0.7	0.6	8	5	4
Կոլումբիա (3)	35.7	39.3	42.1	6.1	5.0	5.7	17	13	13
Էկվադոր (2)	10.5	11.7	12.6	0.9	0.6	0.6	8	5	4
Գայանա (3)	0.7	0.7	0.8	0.2	0.1	0.1	21	12	14
Պարագվայ (3)	4.3	5.0	5.5	0.8	0.7	0.7	18	13	13
Պերու (3)	22.0	23.9	25.7	8.9	4.2	2.9	40	18	11
Սուրինամ (3)	0.4	0.4	0.4	0.1	0.0	0.0	13	11	11
Ուրուգվայ (2)	3.1	3.2	3.3	0.2	0.1	0.1	6	4	3
Վենեսուելա (3)	20.0	22.3	24.2	2.3	3.5	4.4	11	16	18
ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՏՐԻԳԱ	321.3	361.3	392.4	25.3	35.2	40.9	8	10	10
Մերձավոր Արևելք	200.6	228.3	249.6	19.6	29.4	34.8	10	13	14
Աֆղանստան (5)**	14.6	19.7	21.8	8.4	12.7	15.3	58	65	70
Իրանի Իսլամ. Հանրապետություն (3)	59.9	65.8	70.3	2.8	3.0	3.8	5	5	5
Իրաք (4)**	17.8	20.6	23.0	1.2	5.1	6.2	7	25	27
Հորդանան (3)	3.4	4.4	4.9	0.1	0.3	0.3	4	7	6
Քուվեյթ (2)	2.1	1.7	1.9	0.5	0.1	0.1	22	4	4
Լիբանան (2)	2.8	3.2	3.5	0.1	0.1	0.1	3	3	3
Սաուդյան Արաբիա (2)	15.8	17.6	20.3	0.6	0.6	0.6	4	3	3
Սիրիայի Արաբական Հանրապետություն (2)	12.8	14.6	16.2	0.6	0.6	0.6	5	4	4

1	2	3	4	5	6	7	8	9	10
Թուրքիա (2)	57.2	62.6	66.7	1.0	1.5	1.8	-	-	3
Արարական Միացյալ Էմիրություններ (1)	2.1	2.4	2.6	0.1	0.0	0.0	4	-	-
Եմեն (4)	12.2	15.6	18.4	4.2	5.4	6.1	35	35	33
Հյուսիսային Աֆրիկա	120.7	133.0	142.8	5.7	5.8	6.1	5	4	4
Ալժիր (3)	25.4	28.2	30.3	1.3	1.6	1.7	5	6	6
Եգիպտոս (2)	57.4	63.2	67.9	2.7	2.3	2.3	5	4	3
Լիբիայի Արարական Ջամահիրիա (1)	4.4	4.9	5.3	0.0	0.0	0.0	-	-	-
Մարոկո (3)	25.1	27.7	29.9	1.5	1.9	2.1	6	7	7
Թունիս (1)	8.3	9.1	9.5	0.1	0.1	0.1	-	-	-
ԵՆԹԱՄԱՀԱՐԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ	474.5	543.1	603.0	165.5	192.7	198.4	35	35	33
Կենտրոնական Աֆրիկա	62.8	73.8	81.7	22.0	39.5	47.6	35	53	58
Կամերուն (4)	11.9	13.6	14.9	3.9	4.5	4.0	33	33	27
Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն (5)	3.0	3.4	3.7	1.5	1.7	1.6	50	51	44
Չադ (4)	6.0	7.0	7.9	3.5	3.4	2.7	58	49	34
Կոնգո (4)	2.3	2.7	3.0	0.9	1.1	0.9	37	42	30
Կոնգոյի Դեմ. Հանրապետություն (5)	38.5	46.1	51.0	12.1	28.7	38.3	31	62	75
Գաբոն (3)	1.0	1.1	1.2	0.1	0.1	0.1	11	9	7
Արևելյան Աֆրիկա	166.1	188.2	209.5	73.2	84.8	81.3	44	45	39
Բուրունդի (5)	5.7	6.1	6.4	2.8	3.9	4.5	49	64	70
Էրիթրեա (5)	տ՚չ	3.2	3.7	տ՚չ	2.0	2.2	տ՚չ	63	61
Եթովպիա (5)	տ՚չ	56.9	62.9	տ՚չ	32.2	26.4	տ՚չ	57	42
Քենիա (5)	24.3	28.0	30.7	10.6	11.1	11.5	44	40	37
Ռուանդա (5)	6.4	5.3	7.5	2.8	2.7	3.1	43	50	41
Մոնալի (5)	7.2	7.6	8.8	4.9	5.5	6.2	68	73	71
Մուդան (4)	25.4	28.6	31.1	7.9	6.3	7.7	31	22	25
Ուգանդա (3)	17.8	20.7	23.3	4.1	5.3	4.5	23	25	19
Տանզանիայի Միացյալ Հանրապետություն (5)	27.0	31.8	35.1	9.5	15.7	15.2	35	49	43
Հարավային Աֆրիկա	71.0	81.0	89.2	34.2	37.1	36.8	48	46	41
Անգոլա (5)	9.9	11.7	13.1	6.1	6.4	6.4	61	54	49
Բոթսվանա (4)	1.3	1.5	1.5	0.2	0.3	0.4	18	22	24
Լեսոտո (4)	1.7	1.9	2.0	0.5	0.5	0.5	27	26	25
Մադագասկար (5)	12.3	14.2	16.0	4.3	5.6	5.7	35	40	36
Մալավի (4)	9.6	10.2	11.3	4.7	4.0	3.7	49	39	33
Մավրիտանիա (3)	1.1	1.1	1.2	0.1	0.1	0.1	6	6	5
Մոզամբիկ (5)	14.1	16.8	18.3	9.7	10.3	9.7	69	62	53
Նամիբիա (3)	1.4	1.6	1.8	0.3	0.2	0.1	20	12	7
Սվազիլենդ (3)	0.8	0.9	0.9	0.1	0.1	0.1	10	16	12

1	2	3	4	5	6	7	8	9	10
Չամբիա (5)	8.3	9.5	10.4	3.7	4.4	5.2	45	47	50
Զմբարվե (5)	10.5	11.7	12.6	4.5	5.1	4.9	43	44	39
Արևմտյան Աֆրիկա	174.7	200.1	222.6	36.2	31.3	32.7	21	16	15
Բենին (3)	4.8	5.6	6.3	1.0	1.0	1.0	20	17	16
Բուրկինա Ֆասո (3)	9.3	10.5	11.5	2.0	1.9	1.9	22	18	17
Քոթ դ'Իվուար (3)	13.0	14.7	16.0	2.4	2.3	2.4	18	16	15
Գամբիա (4)	1.0	1.2	1.3	0.2	0.4	0.4	22	32	27
Գանա (3)	15.6	17.7	19.3	5.5	2.9	2.4	35	17	12
Գվինեա (4)	6.4	7.5	8.1	2.5	2.4	2.3	40	31	28
Լիբերիա (5)	2.1	2.2	2.9	0.7	0.8	1.2	33	38	42
Մալի (4)	9.0	10.2	11.4	2.2	2.7	2.4	25	27	21
Մավրիտանիա (3)	2.0	2.3	2.7	0.3	0.3	0.3	14	11	10
Նիգեր (4)	8.0	9.4	10.8	3.3	4.0	3.7	42	43	34
Նիգերիա (3)	88.5	102.1	113.9	11.2	7.8	9.1	13	8	8
Սենեգալ (4)	7.5	8.5	9.4	1.7	2.1	2.3	23	25	24
Սիեռա Լեոնե (5)	4.1	4.1	4.4	1.9	1.7	2.2	46	42	50
Տոգո (4)	3.5	4.0	4.5	1.2	1.0	1.1	33	25	25

Աղյուսակ 1.1

Թերսնման գերակայությունը զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում

ԱՆՑՈՒՄԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐ Տարածաշրջան/ենթաշրջան/երկիր (թերսնման կատեգորիա)	Բնակչության թվաքանակը, մլն		Թերսնման ենթարկված մարդկանց թվաքանակը, մլն		Թերսնման ենթարկվածների տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվաքանակում, %	
	1993-1995	1999-2001	1993-1995	1999-2001	1993-1995	1999-2001
1	2	3	4	5	6	7
ԱՆՑՈՒՄԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐ	414.1	411.8	25.2	33.6	6	8
Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ)	284.8	283.4	20.6	28.8	7	10
Հայաստան (5)	3.7	3.8	2.0	1.9	55	51
Ադրբեջան (4)	7.6	8.0	2.8	1.7	37	21
Բելառուս (2)	10.3	10.2	0.1	0.3	-	3
Վրաստան (4)	5.4	5.3	2.4	1.4	45	26
Ղազախստան (4)	16.7	16.2	0.2	3.5	-	22
Ղրղրզստան (3)	4.5	4.9	1.3	0.4	28	7
Մոլդովա (3)	4.3	4.3	0.2	0.5	5	12

1	2	3	4	5	6	7
Ռուսաստանի Դաշնություն (2)	148.4	145.5	6.4	6.2	4	4
Տաջիկստան (5)	5.7	6.1	1.2	4.3	22	71
Թուրքմենստան (3)	4.1	4.7	0.6	0.3	15	7
Ուկրաինա (2)	51.7	49.6	1.2	2.0	-	4
Ուզբեկստան (4)	22.3	24.9	2.1	6.4	10	26
Բայթյան Հանրապետություններ	7.8	7.5	0.4	0.3	5	3
Էստոնիա (2)	1.5	1.4	0.2	0.1	10	4
Լատվիա (3)	2.6	2.4	0.1	0.2	3	6
Լիտվա (1)	3.7	3.7	0.2	0.0	4	-
Արևելյան Եվրոպա	121.5	121.0	4.1	4.5	3	4
Ալբանիա (2)	3.2	3.1	0.2	0.1	5	4
Բոսնիա և Հերցեգովինա (3)	3.6	4.0	0.5	0.3	13	8
Բուլղարիա (3)	8.5	8.0	0.7	1.3	8	16
Խորվաթիա (3)	4.6	4.7	0.8	0.5	18	12
Չեխիա (1)	10.3	10.3	0.2	0.2	-	-
Հունգարիա (1)	10.2	10.0	0.1	0.0	-	-
Մակեդոնիա (3)	2.0	2.0	0.3	0.2	15	10
Լեհաստան (1)	38.5	38.6	0.3	0.3	-	-
Ռումինիա (1)	22.8	22.4	0.4	0.2	-	-
Սերբիա և Մոնտենեգրո (3)	10.5	10.6	0.5	0.9	5	9
Սլովակիա (3)	5.3	5.4	0.2	0.2	4	5
Սլովենիա (1)	2.0	2.0	0.1	0.0	3	-

Նշումներ

Երկրների անվանումներին հետևող փակագծերում նշված թվերը գերակայության կատեգորիաներն են (1999-2001թթ. թերսնման ենթարկված բնակչության տեսակարար կշիռը)

(1) 2.5%-ից քիչ թերսնման ենթարկված բնակչություն,

(2) 2.5-4% թերսնման ենթարկված բնակչություն,

(3) 5-19% թերսնման ենթարկված բնակչություն,

(4) 20-34% թերսնման ենթարկված բնակչություն,

(5) 35%-ից ավելի թերսնման ենթարկված բնակչություն:

Աղյուսակը չի ընդգրկում այն երկրները, որոնց համար բավարար տվյալներ հնարավոր չի եղել ձեռք բերել:

* Ներառյալ Չինաստանի Թայվան նահանգը:

** 1999-2001թթ. թերսնման ենթարկված բնակչության տեսակարար կշռի հաշվարկները հնարավոր չէ կատարել, փոխարենը օգտագործվել են SOFI 2002-ում հրապարակված 1998-2000թթ. հաշվարկները.

«→» թերսնման ենթարկվածների տեսակարար կշիռը 2.5%-ից քիչ է.

«տչ» տվյալներ չկան.

«0.0» գրո կամ գրոյին մոտ

Աղբյուրները

Ընդհանուր բնակչություն՝ UN Population Prospects, 2000 revision
Թերսնմում՝ FAO-ի հաշվարկները

Սննդի մատչելիությունը, սննդի բազմազանությունը, աղքատությունը, մանկամահացությունը, երեխաների սնուցման կարգավիճակը և գյուղատնտեսությանն ուղղված ռեսուրսները զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում՝ դասակարգված ըստ թերսնման գերակայության կատեգորիաների

ԹԵՐՄՍԱՆ ԳԵՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ 1999-2001թթ. բնակչության ընդհանուր թվաքանակում Տարածաշրջան և երկիր	Սննդի մատչելիությունը և բազմազանությունը		Աղքատությունը		Մանկամահացություն	Երեխաների սնուցման կարգավիճակը	Գյուղատնտեսությանն ուղղվող ռեսուրսները
	1999-2001		Աղքատության գծից ցածր գտնվող բնակչությունը 1990-2000թթ. (վերջին հետազոտություն), %-ով		Մինչև հինգ տարեկան երեխաների մահացության թիվը 2001թ.	Մինչև հինգ տարեկան թերքաշ երեխաների տեսակարար կշիռը 1995-2001թթ. (վերջին հետազոտություն), %	Արտաքին օժանդակությունը 1998-2000թթ. Մեկ գյուղատնտեսական աշխատողին ընկնող կայուն 1995թ. ԱՄՆ դոլար
	Մենդարար էներգատարություն, կկա/օր մեկ շնչի հաշվով	Օսլա չպարունակող սննդի կշիռը ընդհանուր կերակրի մեջ, %	Գյուղական բնակչություն	Քաղաքային բնակչություն	1000 ծնվածների հաշվով		
1	2	3	4	5	6	7	8
2,5%-ից քիչ ԹԵՐՄՍԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐ							
ԱՄԻԱ ԵՎ ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ							
Հոնկոնգ, Չինաստան	3100	70	տ՚չ	տ՚չ	տ՚չ	տ՚չ	0
Մայայգիա	2920	54	տ՚չ	տ՚չ	8	20	23
Կորեայի Հանրապետություն	3070	50	տ՚չ	տ՚չ	5	տ՚չ	0
ԼԱՏՎԱԿԱՆ ԱՍԵՐԻԿԱ ԵՎ ԿԱՐԻԲՆԵՐ							
Արգենտինա	3180	65	տ՚չ	30	19	5	70
ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԶ ԵՎ ՀՅՈՒՄԻՍՍՅՈՒՆ ԱՅԵՐԿԱ							
Լիբիայի Արաբական Զամահիրիա	3320	53	տ՚չ	տ՚չ	19	5	98
Թունիս	3340	48	14	4	27	4	212
Արաբական Միացյալ Էմիրություններ	3330	63	տ՚չ	տ՚չ	9	7	1
ԱՆՑՈՒՄԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԸ ԵՐԿՐՆԵՐ							
Չեխիա	3080	69	տ՚չ	տ՚չ	5	1*	3
Հունգարիա	3500	70	տ՚չ	տ՚չ	9	տ՚չ	1
Լիտվա	3260	51	տ՚չ	տ՚չ	9	տ՚չ	1
Լեհաստան	3390	58	տ՚չ	տ՚չ	9	տ՚չ	14
Ռումինիա	3340	47	28	20	21	6*	15
Սլովենիա	3060	60	տ՚չ	տ՚չ	5	տ՚չ	42

1	2	3	4	5	6	7	8
2.5-4% ԹԵՐՄԻՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐ							
ՀԱՏՈՒՄԱՆ ԱՍԵՐԻԿԱ ԵՎ ԿԱՐԻՐՆԵՐ							
Չիլի	2850	57	տՆ	տՆ	12	1	6
Էկվադոր	2740	64	47	25	30	14	58
Ուրուգվայ	2840	61	տՆ	տՆ	16	4*	120
ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ ԵՎ ՉՑՈՒՄԻՍԱՑԻՆ ԱՑՐԻԿԱ							
Եգիպտոս	3370	35	23	23	41	4	47
Քուվեյթ	3150	61	տՆ	տՆ	10	2	0
Լիբանան	3170	62	տՆ	տՆ	32	3	738
Մաուրյան Արաբիա	2840	51	տՆ	տՆ	28	14	1
Սիրիայի Արաբական Հանրապետություն	3040	52	տՆ	տՆ	28	7	28
Թուրքիա	3360	47	տՆ	տՆ	43	8	0
ԱՆՑՈՒՄԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐ							
Ալբանիա	2940	51	տՆ	տՆ	25	14	49
Բելառուս	2960	53	տՆ	տՆ	20	տՆ	0
Էստոնիա	3020	57	15	7	12	տՆ	3
Ռուսաստանի Դաշնություն	2940	53	տՆ	տՆ	21	3	15
Ուկրաինա	2900	50	տՆ	տՆ	20	3	17
5-19% ԹԵՐՄԻՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐ							
ԱՄԻԱ ԵՎ ԽԱՂԱՂ ՕՎԿԻՒՆՈՍ							
Չինաստան*	2970	41	5	2	39	10	3
Ինդոնեզիա	2900	30	տՆ	տՆ	45	25	13
Մյանմա	2810	26	տՆ	տՆ	109	28	0
Նեպալ	2440	23	44	23	91	48	15
Պակիստան	2460	49	36	24	109	38	8
Թայլանդ	2470	48	16	10	28	18	14
Վիետնամ	2500	26	57	26	38	34	16
ՀԱՏՈՒՄԱՆ ԱՍԵՐԻԿԱ ԵՎ ԿԱՐԻՐՆԵՐ							
Բրազիլիա	3000	66	33	13	36	6	34
Կոլումբիա	2570	59	31	8	23	7	26
Կոստա Ռիկա	2760	62	26	19	11	5	82
Կուբա	2610	60	տՆ	տՆ	9	4	7
Էլ Սալվադոր	2460	47	56	43	39	12	35
Գայանա	2540	48	տՆ	տՆ	72	12	67
Ջամայկա	2690	59	25	տՆ	20	4	98
Մեքսիկա	3150	53	տՆ	իã	29	8	54
Պարագվայ	2560	59	29	20	30	4*	108

1	2	3	4	5	6	7	8
Պերու	2600	46	65	40	39	7	42
Սուրիանա	2630	56	տՆ	տՆ	32	տՆ	519
Թրինիդադ և Թոբագո	2710	62	20	24	20	7	108
Վենեսուելա	2330	59	տՆ	տՆ	22	4	23
ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ ԵՎ ՀՅՈՒՄԻՍՄՈՅԻՆ ԱՆՌԻԿԱ							
Ալժիր	2970	40	30	15	49	6	41
Իրանի Իսլամական Հանրապետություն	2930	39	տՆ	տՆ	42	11	0
Հորդանան	2740	48	տՆ	տՆ	33	5	788
Մարոկո	3000	36	27	12	44	10*	24
ԵՆԹԱՍԱՀԱՐԱՑՈՒ ԱՆՌԻԿԱ							
Բենին	2480	27	տՆ	տՆ	158	23	36
Բուրկինա Ֆասո	2460	25	51	17	197	34	19
Քոթ դ'Իվուար	2590	34	տՆ	տՆ	175	21	21
Գարոն	2580	54	տՆ	տՆ	90	12	29
Գանա	2620	29	34	27	100	25	24
Մավրիտանիա	2730	48	61	25	183	32	80
Մաուրիտուս	2980	54	տՆ	տՆ	19	15	144
Նամիբիա	2700	34	տՆ	տՆ	67	26*	72
Նիգերիա	2770	34	36	30	183	31	2
Սվազիլենդ	2570	52	տՆ	տՆ	179	10	93
Ուգանդա	2370	56	տՆ	տՆ	124	23	18
ԱՆՑՈՒՄԱՑՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐ							
Բոսնիա և Հերցեգովինա	2730	48	տՆ	տՆ	18	4	182
Բուլղարիա	2630	65	տՆ	տՆ	16	տՆ	118
Խորվաթիա	2620	63	տՆ	տՆ	8	1	7
Ղրղզստան	2860	32	70	49	61	11	175
Լատվիա	2790	60	տՆ	տՆ	21	տՆ	44
Մակեդոնիա	2660	62	տՆ	տՆ	26	6	110
Մոլդովա	2680	46	27	տՆ	32	3	20
Սերբիա և Մոնտենեգրո	2720	68	տՆ	տՆ	19	2	4
Մլովակիա	2910	63	տՆ	տՆ	9	տՆ	5
Թուրքմենստան	2760	37	տՆ	տՆ	87	12	0
20-34% ԹԵՐՄԻՆԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԲԱՄԿՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐ							
ԱՄԻԱ ԵՎ ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ							
Բանգլադեշ	2160	17	37	19	77	52	13
Կորեայի Ժող. Դեմ. Հանրապետություն	2180	33	տՆ	տՆ	55	28	5

1	2	3	4	5	6	7	8
Հնդկաստան	2490	39	30	25	93	47	3
Լատսի ժող. Դեմ. Հանրապետություն	2280	22	41	27	100	40	36
Պապուա Նոր Գվինեա	2180	45	41	16	94	35	10
Ֆիլիպիններ	2370	44	51	20	38	32	52
Շրի Լանկա	2330	44	27	15	19	33	29
ԼԱՏՈՒԱԿԱՆ ԱՍԵՐԻԿԱ ԵՎ ԿԱՐԻԲՆԵՐ							
Բոլիվիա	2240	49	82	տյ	77	8	82
Դոմինիկյան Հանրապետություն	2320	66	30	11	47	5	116
Գվատեմալա	2160	47	տյ	տյ	58	24	80
Հոնդուրաս	2400	54	51	57	38	17	128
Նիկարագուա	2250	49	69	31	43	10	227
Պանամա	2250	62	65	15	25	8	475
ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ ԵՎ ՆՅՈՒՄԻՍՏՅՈՒՆ ԱՖՐԻԿԱ							
Իրաք***	2150	34	տյ	տյ	133	16	1
Եմեն	2050	32	45	31	107	46	12
ԵՆԹԱՍԱՀԱՐԱՑՈՒՆ ԱՖՐԻԿԱ							
Բոթսվանա	2270	52	տյ	տյ	110	13	24
Կամերուն	2240	42	տյ	տյ	155	22	13
Չադ	2150	41	67	63	200	28	13
Կոնգո	2210	37	տյ	տյ	108	14	2
Գամբիա	2280	48	61	48	126	17	52
Գվինեա	2330	40	տյ	տյ	169	33	18
Լեսոտո	2310	19	54	28	132	18	57
Մալավի	2170	23	67	55	183	25	14
Մալի	2370	29	տյ	տյ	231	33	30
Նիգեր	2130	28	66	52	265	40	10
Սենեգալ	2280	39	40	տյ	138	23	37
Սուդան	2290	46	տյ	տյ	107	34*	4
Տոգո	2310	23	տյ	տյ	141	25	7
ԱՆՑՈՒՄՍՅՈՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՔ ԵՐԿՐՆԵՐ							
Ադրբեջան	2380	32	տյ	տյ	96	17	55
Վրաստան	2290	38	10	12	29	3	31
Ղազախստան	2360	50	39	30	99	4	20
Ուզբեկստան	2270	39	տյ	տյ	68	19	14
35%-ԻՑ ԱՎԵԼԻ ԹԵՐՄԻՄԱՆ ԵՆԹԱԿՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐ							
ՍՄԻԱ ԵՎ ԽՍՂԱՂ ՕՎԿԻԱԼՈՍ							
Կամբոջա	1970	21	40	21	138	45	25

1	2	3	4	5	6	7	8
Մոնղոլիա	2070	57	33	39	76	13	63
ԼԱՏՎԱԿԱՆ ԱՍԵՐԻԿԱ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐ							
Հայիթի	2040	46	66	տՆ	123	17	13
ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՆՐԻԿԱ							
Աֆղանստան***	1630	27	տՆ	տՆ	257	49	1
ԵՆԹԱՄԱՀԱՐԱՅԻՆ ԱՆՐԻԿԱ							
Անգոլա	1900	32	տՆ	տՆ	260	31	4
Բուրունդի	1610	49	տՆ	տՆ	190	45	2
Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն	1960	43	տՆ	տՆ	180	23	6
Կոնգոյի Ժող. Հանրապետություն	1570	23	տՆ	տՆ	205	34	0
Էրիթրեա	1670	24	տՆ	տՆ	111	44	8
Եթովպիա	1910	19	45	37	172	47	4
Քենիա	2040	43	46	29	122	22	5
Լիբերիա	2080	37	տՆ	տՆ	235	27	3
Մադագասկար	2070	25	77	52	136	40	17
Մոզամբիկ	1950	25	71	62	197	26	16
Ռուանդա	2000	49	տՆ	տՆ	183	24	12
Սիեռա Լիոնե	1930	36	տՆ	տՆ	316	27	8
Սոմալի***	1600	65	տՆ	տՆ	225	26	1
Տանզանիայի Միացյալ Հանրապետություն	1970	29	50	24	165	29	7
Չամբիա	1900	23	83	56	202	24	26
Զիմբաբվե	2100	42	48	8	123	13	23
ԱՆՃՈՒՄԱՅԻՆ ՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐ							
Հայաստան	2000	40	տՆ	տՆ	35	3	97
Տաջիկստան	1720	33	տՆ	տՆ	116	տՆ	36

Նշումներ

«տՆ» տվյալներ չկան

«0» զրո կամ զրոյին մոտ

* Տվյալները վերաբերում են մինչև 1995թ. ընկած ժամանակահատվածին

** Ներառում է Չինաստանի Թայվան նահանգը սննդի մատչելիության և բազմազանության համար, ի լրումն ներառում է Չինաստանի Հոնկոնգի տարածքը գյուղատնտեսությանը արտաքին օժանդակության համար.

*** 1999-2001թթ. սննդի մատչելիության և բազմազանության հաշվարկները հնարավոր չէ կատարել, փոխարենը օգտագործվել են SOFI 2002-ում հրատարակված 1998-2000թթ.

Մասնանուններ

Օսլա չպարունակող սնունդ՝ տվյալների ծածկագրման ստանդարտում (DES) ընդգրկված սննդի բոլոր աղբյուրները, բացառությամբ հացահատիկային և արմատային մշակաբույսերի:

Աղքատություն, քաղաքային կամ գյուղական՝ աղքատության գծից ցածր կենսամակարդակ ունեցող քաղաքային կամ գյուղական բնակչության տեսակարար կշիռը: Աղքատության գիծը կենսամակարդակի անկախ ստանդարտ է քաղաքային կամ գյուղական բնակչության համար, որը հիմնված է հիմնական պահանջմունքների բավարարման ուղղված

հաշվարկները:

Աղբյուրները

Մանդի մատչելիություն, սննդի բազմազանություն և գյուղատնտեսություն ուղղվող ռեսուրսներ` FAO-ի հաշվարկները

Երեխաների աղքատությունը և մահացությունը` World Development Indicators 2003, World Bank

Երեխաների սնուցման կարգավիճակը` World Health Organization Global Database on Child Growth and Malnutrition, 2003, բացառությամբ Բոսնիայի և Հերցեգովինայի, Կոնգոյի, Մոլդովայի, Պապուա Նոր Գվինեայի, Սաուդյան Արաբիայի, Սիեռա Լիոնեի, Սվազիլենդի, Թրինիդադ և Թոբագոյի դեպքերի, որոնց տվյալները վերցվել են UNICEF-ի տվյալների բազայից:

ապրանքների ու ծառայությունների սպառման մակարդակի վրա: **Մինչև հինգ տարեկան երեխաների մահացությունը**` ցույց է տալիս հավանականությունն այն բանի, որ նորածին երեխան կմահանա մինչև 5 տարեկան հասակում: Հավանականությունն արտահայտվում է որպես դրույք 1000 նորածնի հաշվով:

Թերքաշություն` վերաբերում է մինչև հինգ տարեկան (0-4.99 տարեկան) հասակում գտնվող երեխաներին, բացառությամբ 0-2.99 տարեկան` Կամերունի, Էրիթրեայի, Հնդկաստանի, Ղրղըզստանի, Մադագասկարի, Մոզամբիկի, Սյանմայի, Տոգոյի և Ուզբեկստանի, 0.5-2.99 տարեկան Աֆղանստանի, 0.25-4.99 տարեկան` Էլ Սալվադորի, Հոնդուրասի և Շրի Լանկայի, 0.5-4.99 տարեկան Բուրունդիի, Գվինեայի և Մակեդոնիայի, 0-5.99 տարեկան` Չիլիի, 1.0-5.99 տարեկան` Խորվաթիայի, 1.0-6.99 տարեկան` Կոստա Ռիկայի դեպքերի:

Արտաքին օժանդակություն գյուղատնտեսությանը` կոնցեսիոն և ոչ կոնցեսիոն համաձայնություններ կնքված դրամական արտահայտությամբ երկկողմանի և բազմակողմանի դոնորների ու երկրների միջև` գյուղատնտեսության զարգացման նպատակով, ներառյալ ագրոարդյունաբերությունը, գյուղատնտեսության հետ կապված բնապահպանական գործունեությունը, գյուղատնտեսական հումքի վերամշակումը, տարածաշրջանային և գետավազանային զարգացումը, հետազոտությունները, վերապատրաստումը և գյուղական զարգացումը:

Օգտագործվող հիմնական հասկացությունները

Անուղղակի հարկերն այն հարկերն են, որոնց դրույքաչափի մեծությունը կախված չէ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց տնտեսական գործունեության արդյունքներից: Անուղղակի հարկերի օրինակներն են՝ հողի հարկը, գույքահարկը, ակցիզային հարկը, ավելացված արժեքի հարկը:

Հարկ՝ պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:

Հարկային բեռ՝ վճարվող հարկի այն գումարը, որը կաշկանդում է գործարարությանը և չի նպաստում ձեռնարկատիրության զարգացմանը՝ ձեռնարկատերերի շահագրգռվածության նվազման պատճառով:

Ուղղակի հարկ՝ այն հարկատեսակներն են, որոնց մեծությունն ուղղակիորեն կախված է իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության արդյունքներից: Ուղղակի հարկերի օրինակներն են՝ շահութահարկը, եկամտահարկը:

Առևտրային հաշվեկշիռը արտահանման և ներմուծման ծավալների տարբերությունն է:

Արտաքին ապրանքաշրջանառության ծավալը (արտաքին առևտրի շրջանառությունը) արտահանման և ներմուծման ծավալների հանրագումարն է:

Արտահանում՝ ապրանքների արտահանումն այլ երկրներ՝ ազատ շրջանառության կամ ակտիվ վերաւշակման համար: **Արտահանման ծավալում** ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները: Արտահանված ապրանքների արժեքները հաշվարկված են ՖՕԲ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ՀՀ սահման:

Չուտ արտահանման դեֆիցիտը՝ որոշակի ժամանակահատվածում ներմուծման ծավալների գերազանցման մեծությունն է նույն ժամանակահատվածի արտահանման ծավալների նկատմամբ:

Ներմուծում՝ ապրանքների ներմուծումն է այլ երկրներից՝ հանրապետության ներսում ազատ շրջանառության, ակտիվ վերամշակման կամ մաքսային հսկողության ներքո վերամշակման համար: Ներմուծման ծավալում ընդգրկված են արտասահմանյան ապրանքները, որոնք ներմուծվել են հանրապետություն սպառման և վերաարտահանման համար: Ներմուծված ապրանքների արժեքները հաշվարկված են ՄԻՖ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ՀՀ սահման, ներառյալ ապահովագրության և տրանսպորտային փոխադրության ծախսերը:

ՄԻՖ՝ արտաքին առևտրի ժամանակ առուվաճառքի պայմանագրի ձև, որը կապված է ծովային ճանապարհով ապրանքի փոխադրման հետ: ՄԻՖ պայմանագրի կիրառման ժամանակ ապրանքի գինը ներառում է դրա ինքնարժեքը, ապահովագրության և փոխադրության ծախսերը՝ առաքման նավահանգստից մինչև ստացման նավահանգիստ:

ՖՕԲ՝ արտաքին առևտրի ժամանակ առուվաճառքի պայմանագրի ձև, որը կապված է ջրային ճանապարհով ապրանքի փոխադրման հետ: ՖՕԲ պայմանագրի պայմաններով առուվաճառքը նախատեսում է, որ վաճառողը պարտավոր է ոչ միայն ապրանքը հասցնել մինչև նավահանգիստ, այլ նաև բեռնել այն նավի վրա: Նավի վարձակալության և նավի վրա ապրանքը տեղադրելու ծախսերը կատարում է գնորդը: Ապրանքի կորստի կամ փչացման ռիսկը կրում է վաճառողը՝ մինչև առաքման նավահանգստում ապրանքի բեռնումը նավի վրա, իսկ այդ պահից հետո՝ գնորդը:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ ամբողջովին և ըստ առանձին ճյուղերի, որոշվում է արժեքային արտահայտությամբ՝ որպես իրավաբանական անձանց և դրանց առանձնացված ստորաբաժանումների թողարկված արտադրանքի և կատարված արդյունաբերական բնույթի աշխատանքների և ծառայությունների ծավալների հանրագումար:

Արտաքին պետական պարտքը ներառում է օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ՀՀ կառավարությանը և ՀՀ Կենտրոնական բանկին տրամադրված վարկերը, ինչպես նաև

վարկեր, որոնք տրամադրված են ՀՀ կառավարության և ՀՀ Կենտրոնական բանկի երաշխիքներով:

Համախառն արտաքին պարտքը ժամանակաշրջանի ցանկացած պահին փաստացի ընթացիկ և ոչնչով չպայմանավորված պարտավորությունների չվճարված գումարն է, որը պահանջում է հիմնական պարտքի և (կամ) տոկոսների վճարումներ հետագայում ժամանակի որևէ պահին և ներկայացնում է ռեզիդենտների պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ:

Արտաքին պարտքը, որպես կանոն, առաջանում է պայմանագրային հարաբերությունների հիման վրա, ըստ որի՝ մեկ կառուցվածքային միավորը (դեբիտորը) պարտավորություններ է ստանձնում մեկ այլ կառուցվածքային միավորի (կրեդիտորի) հանդեպ՝ վերադարձնել հիմնական գումարը տոկոսներով կամ առանց տոկոսների, կամ էլ վճարել տոկոսները՝ առանց վերադարձնելու հիմնական գումարը:

Ներքին պետական պարտքը **պետության պարտքն է իր երկրի բնակչությանը:**

Բնակչության բնական շարժը ծնվածների և մահացածների համակցության ընդհանրացված անվանումն է, այսինքն՝ բնական ճանապարհով բնակչության թվաքանակի փոփոխումը: Բնակչության բնական շարժին վերագրվում են նաև ամուսնություններն ու ամուսնալուծությունները, որոնք բնակչության թվաքանակի ցուցանիշի վրա ազդեցություն չունեն, սակայն հաշվարկվում են նույն եղանակով:

Բնական աճի գործակիցը ծնելիության և մահացության գործակիցների տարբերությունն է:

Մշտական բնակչությունը մշտապես ապրող բնակչությունն է, ներառյալ ժամանակավոր (մինչև 1 տարի ժամկետով) բացակայողները:

Մանկամահացության գործակիցը՝ որոշակի ժամանակահատվածում մինչև մեկ տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նույն ժամանակահատվածում կենդանի ծնվածների թվաքանակին:

Բնակչության դրամական եկամուտները ներառում են վարձու աշխատողների աշխատավարձը, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, կենսաթոշակները, նպաստները, կրթաթոշակները և այլ սոցիալական տրանսֆերտները, արտարժույթի վաճառքից եկամուտները, սեփականությունից եկամուտները՝ ներդրումների, արժեթղթերի, շահաբաժինների տոկոսների տեսքով և այլ եկամուտներ:

Բնակչության դրամական ծախսերը ներառում են ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերը, պարտադիր վճարումները և կամավոր մուծումները (հարկեր և գանձումներ, ապահովագրական վճարներ, հասարակական կազմակերպություններին կատարված մուծումներ, ապառիկ գնված ապրանքների դիմաց վճարված տոկոսներ և այլն), ինչպես նաև խնայողությունների հավելվածը (նվազումը) արժեթղթերում և ավանդներում, տարադրամի գնումը և այլ ծախսերը:

Իրական աշխատավարձը բնութագրում է դիտարկվող ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բերել աշխատավարձով՝ ելնելով բազիսային ժամանակաշրջանի գներից, և հաշվարկվում է տվյալ ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի հարաբերությամբ նույն ժամանակաշրջանի սպառողական գների ինդեքսին:

Միջին ամսական անվանական աշխատավարձը հաշվարկվում է որպես աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների (ներառյալ պարգևավճարները և փոխհատուցումները) ընդհանուր գումարի (ինչպես դրամական, այնպես էլ բնեղեն տեսքով) հարաբերություն աշխատողների միջին ցուցակային թվաքանակին:

Նվազագույն աշխատավարձ՝ **ապրելու նվազագույն մակարդակի ապահովման համար անհրաժեշտ սպառողական բարիքների և ծառայությունների գինը:**

Գործազրկության մակարդակը հաշվարկվում է որպես գործազուրկների թվաքանակի հարաբերություն տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի նկատմամբ:

Թաքնված գործազուրկներ (թաքնված զբաղվածներ)՝ գործատուի հետ բանավոր համաձայնությամբ (առանց պայմանագրի, հրամանի կամ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ փաստաթղթային ձևակերպման) աշխատող վարձու աշխատողները և այն գործատուներն ու ինքնազբաղվածները, ովքեր իրականացնում են չգրանցված տնտեսական գործունեություն:

Պաշտոնապես գրանցված գործազուրկներ համարվում են հանրապետության տարածքում մշտապես բնակվող 16 և բարձր տարիքի աշխատունակ այն քաղաքացիները, ովքեր դիտարկվող ժամանակաշրջանում չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք, աշխատանք են փնտրել «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տարածքային կենտրոնների օգնությամբ, պատրաստ են եղել անցնել աշխատանքի՝ օրենսդրությամբ սահմանված ժամանակաշրջանում կամ անմիջապես:

Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը՝ զբաղված և պաշտոնապես գրանցված գործազուրկ բնակչության թվաքանակների հանրագումարն է:

Ինֆլյացիա՝ փողի գնողունակության նվազում, որը կարող է տեղի ունենալ. 1) ապրանքների և ծառայությունների գների աճի պատճառով կամ 2) փողի քանակության ավելացման հետևանքով:

Ինֆլյացիայի մակարդակը (%)՝ փողի քանակի հավելածի հարաբերությունն է ապրանքների քանակի հավելածին:

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)՝ երկրում՝ տնտեսության բոլոր ճյուղերում արտադրված արտադրանքի և ծառայությունների արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար:

ՀՆԱ-ն հաշվարկվում է երեք եղանակներով՝ արտադրական, եկամուտների ձևավորման և եկամուտների օգտագործման (ծախսային):

Արտադրական եղանակով ՀՆԱ-ն ստացվում է որպես ապրանքների և ծառայությունների ողջ թողարկման և միջանկյալ սպառման տարբե-

րություն կամ որպես տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքի հանրագումար:

Եկամուտների օգտագործման եղանակով հաշվարկված ՀՆԱ-ն ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման ծախսերի, համախառն կուտակման և գուտ արտահանման հանրագումարն է:

Հստ եկամուտների աղբյուրների ՀՆԱ ձևավորումն արտացոլում է անմիջապես արտադրական գործընթացին մասնակցող միավորների, ինչպես նաև պետական հիմնարկների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների ստացած սկզբնական եկամուտները:

ՀՆԱ-ն շուկայական գներով տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքի (ՀՆԱ հիմնական գներով) և ապրանքների (արտադրանքի) ու ծառայությունների արտադրության և ներմուծման գուտ (հասած սուբսիդիաները) հարկերի գումարն է:

ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ **ՀՆԱ տարեկան մեծության հարաբերությունն է բնակչության թվին:**

Միջազգային կորպորացիա՝ խոշոր ընկերության կազմակերպական ձև է, որն ուղղակի ներդրումներ է կատարում աշխարհի տարբեր երկրներում: Առանձնացվում են միջազգային կորպորացիաների երկու ձև՝

1. Բազմազգային կորպորացիա (ԲԱԿ)՝ գլխամասային ընկերությունը պատկանում է երկու և ավելի երկրների, իսկ ուղղակի ներդրումներն իրականացվում են ամբողջ աշխարհի մասշտաբով:

2. Վերազգային կորպորացիա (ՎԱԿ)՝ գլխամասային ընկերությունը պատկանում է մի պետությանը, իսկ ուղղակի ներդրումներն իրականացվում են աշխարհի բազմաթիվ երկրներում:

Ներդրում (օտարերկրյա)՝ գույքի ցանկացած տեսակ (այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ՝ ոչ նյութական ակտիվներ), որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ղրորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով:

Պետական բյուջեն պետությանը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի (մեկ օրացուցային տարվա) ֆինանսական ծրագիրն է:

Պետական բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) ծախսերի գերազանցման մեծությունն է եկամուտների նկատմամբ: **Բյուջեի հավելուրդը**՝ եկամուտների գերազանցման մեծությունն է ծախսերի նկատմամբ:

Ջինիի գործակիցը ցույց է տալիս, թե որքան անհավասարաչափ են բաշխված եկամուտները բնակչության առանձին խմբերի միջև և որը թույլ է տալիս դատել տվյալ երկրում տնտեսական անհավասարության մակարդակի մասին: Ընդ որում, որքան գործակիցը մոտ է 1-ի, այնքան բարձր է հասարակության բևեռացվածության աստիճանը:

Ղեցիլային խմբեր՝ ըստ բնակչության եկամուտների մակարդակի տոկոսային հավասարաչափ բաշխված 10 խմբեր, որոնց համար հաշվարկվում է Ջինիի գործակիցը:

Փողի բազան ներառում է ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի պարտադիր պահուստները և ՀՀ ԿԲ-ում ոչ բանկային կազմակերպությունների ավանդները (բացառությամբ կառավարության ավանդների): Փողի բազան հավասար է նաև ՀՀ ԿԲ զուտ արտաքին և զուտ ներքին ակտիվների հանրագումարին:

Փողի զանգվածը (դրամական զանգվածը) ներառում է շրջանառությունում կանխիկ դրամը և ռեզիդենտ տնտեսության (բնակչության, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների) դրամով և արտարժույթով բոլոր ավանդները բանկային համակարգում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ I. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԴԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ	11
1.1. Անվտանգության հասկացությունը, դրա սահմանումները, օբյեկտներն ու սուբյեկտները, նպատակներն ու գործառնությունները	11
1.2. Տնտեսական անվտանգությունը ազգային անվտանգության համակարգում	36
1.3. Տնտեսական անվտանգության հայեցակարգային հիմնադրույթները, բնորոշումը և կառուցվածքը	68
ԳԼՈՒԽ II. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	93
2.1. ՏԱ ցուցանիշների շեմային մեծությունները	93
2.2. ՏԱ մակարդակի գնահատումը	108
2.3. ՏԱ արտաքին և ներքին սպառնալիքները	129
2.4. Եկամուտների ձևավորումը և օգտագործումը Հարավկովկասյան հանրապետություններում	139
2.5. Նվազագույն աշխատավարձի և կենսապահովման նվազագույն բյուջեի մի շարք հիմնախնդիրներ	150
2.6.2.2 ՏԱ բարելավման ուղիները	165
2.7. Եզրահանգումներ և ապագա անելիքներ	209
ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	216
ՀԱՎԵԼՎԱԾ	222
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	242

Աշոտ Մարկոսյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Տեխնիկական խմբագիր՝ Խ.Քարատուղանյան
Շարվածքի պատասխանատու՝ Լ.Բաղդամյան

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 375106 Երևան, Գարեգին Նժդեհի 23
Կայք՝ www.noravank.am
Էլ-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 60X84 1/16:
Տպաքանակը՝ 400: Տառատեսակը՝ Sylfaen:
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: